ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան

Арцахский государственный университет

Artsakh State University

Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

ՊՐԱԿ 2 **ТОМ** 2 VOLUME 2
2021
Ստեփանակերտ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Հրատարակվում է 1998թ-*ից.*
Պարբերականությունը՝ տարեկան երկու անգամ
Издается с 1998г. *Периодичность – дважды в год*
Issued since 1998. Frequency – twice a year
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.
Խմբագրական խորհրդի նախագահ՝ *բ.գ.թ. Սարգսյան Ա.Յու.*
Председатель редакционного совета: *к.ф.н. СаргсянА.Ю.*
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.
Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Ավանեսյան Վ.Մ.
Главный редактор: *д.и.н. Аванесян В.М.*
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board
Հասարակական գիտություններ
1. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
2. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA
3. Մանասերյան Թ.Ն., տ.գ.դ., պրոֆեսոր – Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
4. Մանգասարյան Ռ.Յա, տ.գ.թ. – Мангасярян Р.Я., к.э.н. –Mangasaryan R.Ya., Ph.D. in Economics
5.Բալայան Վ.Ռ., պ.գ.դ.- Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
6. Ղազարյան Հ.Ս., բ.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
7. Ենգոյան Ա.Փ., ք.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
8. Հարությունյան Վ.Ն., բ.գ.դ., Арутюнян В.Н., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
9. Խանյան Ս.Ա., բ.գ.դ.- Ханян С.А., д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
10. Տեր-Մաթոսյան Պ., բ.գ.դ. (ԱՄՆ) –Тер-Матосян П. д.ф.н. (США) -Ter-Matosyan P., Doctor of Science (USA)
11. Տեր-Մկրտչյան Բ., բ.գ.դ. (ԱՄՆ) – Тер-Мкртчян Б. д.ф.н. (США) - Ter-Mkrtchyan B., Doctor of Science (USA)
12. Տանշինա Ն.Պ., պ.գ.դ. (ՌԴ) – Таньшина Н.П. д.и.н. (РФ) – Tanshina N.P., Doctor of History (RF)
13. Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
14. Կարապետյան Վ.Ս., հ.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology , Professor
15. Հովհաննիսյան Լ.Ծ., բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.
16. Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences

17. Մարգարյան Լ.Գ., բ.գ.թ.– Маргарян Л. Г., к.ф.н.– Margaryan L.G., Ph. D. in Philology, Scientific Secretary of ASU
18. Մխիթարյան Ա.Մ., հ.գ.թ. – Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psycology
19. Յարամիշյան Վ.Բ., հ.գ.թ. – Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psycology
20. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia
21. Հակոբյան Ե.Ս., մ.գ.դ. – Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics
22. Թադևոսյան Ա.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ, Շ. ՄԻՆԱՍՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԱՒՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ..... 9

Կ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԵՐԿԱՐԺՈՒՅԹ ԲԱՅԵՐԻ ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁՆԱՆԻՇ ԳՈՅԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ..... 18

Մ.ԲԱԼԱՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ 2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱՁԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ..... 25

Ն.ԴԱՎԹՅԱՆ
Կ. ԶԱՐՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՆԱՎԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ..... 31

Ա.ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «REGNUM» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ղարաբաղյան 44-օրյա պատերազմի օրինակով)..... 41

Ա.ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, Մ.ԱԴԱՄՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ..... 46

Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.... 53

Ն. ՄԱՐՈՅԱՆ
ԲԱՌԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ ՈՒԹՆՅԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՐԻՈԼԵՏՆԵՐՈՒՄ..... 63

Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Շ. ՇԱՀՆՈՒՐԻ «ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ » ՎԵՊՈՒՄ..... *72*
Ա.ՄԻՐԶՈՅԱՆ
ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԸ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԵՋ..... *89*
ՕՏԱՐ Լ.ԵԶՈՒ
Հ. ՂԱԶՈՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ..... *100*
Ի.ՀԱԿՈԲՅԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍԼԵՆԳՈՒՄ ՓՈԽԱՌՅԱԼ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱԿՏԻՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ..... 108
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՖՐԱՆԿՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ..... 115
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ/1918-1920թթ/: ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՄՆԵՐԸ..... *127*
Վ.ԲԱԼԱՅԱՆ
ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ (1991-2021թթ.)..... *144*
Ի. ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԿԻՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ..... 156
Ռ. ԳԱԼՉՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ ՕՏԱՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԵՎ 1918-2021 թթ. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 168
Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... *186*

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆՈՐ ՄԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (2020 Թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)..... 213
Հ.ՓԱՇԱՅԱՆ, Լ.ԲԱԼԱՅԱՆ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ՊՐԱՀՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (2005-2006ԹԹ.) ԵՎ ՌԱՄԲՈՒՅԵՈՒՄ ՉԲԱՅՎԱԾ ՇԱՄՊԱՅՆԸ..... 225

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Մ.ՂԱԼԱՅԱՆՑ
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ..... 238

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 249
Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ..... 263
Ռ. ԺԱՄԿՈՅՅԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՈՏ..... 270
Մ. ՓԻԼՈՍՅԱՆ, Ռ. ԺԱՄԿՈՅՅԱՆ
ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 278
Զ.ՔԷՇԻՇԵԱՆ
ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՒՈՅԹԸ՝ ՄԻՆՉԵԻ ԿՈՄԻՏԱՍ..... 286

Ն.ՇԱԼՈՒՆՑ
ՀՈՄԵՈՍՏԱՋԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԵՂՈՒՄԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ..... *293*
Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ <<ՀԵՐՈՆՏՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԹԵՄԱՅՈՎ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ..... 301
Վ. ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ՎԱԽԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ... 309
Լ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, (METRIS BV)
ԱՈՒՏԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՆԸՆԴՀԱՏ ՌԵԺԻՄՈՒՄ ԿՐԾՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՑ ՍԹՐԵՍԻ ԳԵՐԶԱՅՆԱՅԻՆ ՎՈԿԱԼԻԶԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ԱՈՒՏԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՉԱՓ ԵՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ..... 317
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ..... *335*
Տ. ԳԵՎՈՐԳԱՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ԸՍՏ ԱՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ..... *345*
Մ.ԶԱՔԱՐՅԱՆ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՆԱՀՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԽԱԽՏՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆ..... 351
Լ.ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ..... 360
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՄՊԻՐԻԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿԱՆՈՆԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՌԱՋԱԴԵՄ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ 376

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ԵՎ ԴՐԱ ՄՈԴԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.....

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ..... *386*

Ա. ՂԱՋԱՐՅԱՆ

ՎԱՐԿԱՅԻՆ ՍՔՈՐԻՆԳԻ ԵՎ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ..... *398*

Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, Մ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ..... *404*

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԵՆՍԱՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՀ-ՈՒՄ *419*

Հ. ՍԱՅԱԴՅԱՆ

ՀՀ - ՈՒՄ ԲՈՒԺԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... *436*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մ. ԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԾՐԱՐՎԱԾ ԳԱԼԻՔԻՆ.... *445*

Զ.ՍԱՌԱՋՅԱՆ

«ՀՆՉՈՂ ՁԱՅՆԵՐ» ԳՐՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊՈԼԻՖՈՆԻԱՆ..... *452*

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԱՍՈՒՆՈՒՄ ԵՎ ՍԱՍՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ. ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆԻ «ԷՐԳՐԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ» ԳԻՐՔԸ *460*

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ
ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: ghazarian.hasmik @gmail.com

Շողեր ՄԻՆԱՍՅԱՆ
ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: Shoger. minasjan@mail.ru

ԺԱՄԱՆԱԿԱԿԱՒՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում առկա այն անկանոնություններն ու շեղումները, որոնք կապված են նախադասության անդամների կապակցման եղանակների՝ առդրության, համաձայնության, խնդրառության հետ, պայմանավորված են շարադասությամբ, նախադասության անդամների դրսևորման առանձնահատկություններով:

Բանալի բառեր՝ անկանոնություն, բացառություն, շեղում, նորմ, համաձայնություն, խնդրառություն, առդրություն, շարադասություն, նախադասության անդամ, նախադասություն, հնչերանգ, կապակցման եղանակներ

А. Газарян Ш. Минасян

НАРУШЕНИЯ СИНТАКСИЧЕСКИХ НОРМ В ПРОСТОМ ПРЕДЛОЖЕНИИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

В статье представлены неправильные виды синтаксической связи – согласования, управления и примыкания, в современном армянском, которые обусловлены синтаксисом и отличительными особенностями членов предложения.

Ключевые слова: неправильные, исключения, отклонение, норма, соглсование, управление, примыкание, предложение, член, предложение, интонация, виды связи

H.Ghazaryan Sh. Minasjan

SYNTACTIC IRREGULARITIES IN SIMPLE SENTENCE OF MODERN ARMENIAN

This article outlines the irregularities and deviations in sentence member binding, namely collocation, verb government and agreement in Modern Armenian. This is accounted for by syntactic and functional features of sentence members.

Key words:irregularity, exception, deviation, norm, agreement, verbal government, collocation, syntax, sentence member, sentence, intonation, binding

Յուրաքանչյուր գրական լեզու, այն կրող ժողովրդի լեզվամտածողությամբ պայմանավորված, ունի իր որոշակի կանոններն ու օրինաչափությունները, որոնցով էլ ուրվագծվում են լեզվական նորմի սահմանները: Լեզվական նորմը լեզվի զարգացման տվյալ փուլում սահմանված, հասարակայնորեն ընդունված և գործող լեզվական միջոցների համակարգն է, որը պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար: Այն պատմական է, ավանդական, հարաբերականորեն կայուն և անփոփոխ՝ ամրապնդված տրամաբանական գործոններով, ավանդությամբ, ճշտությամբ և բարեհնչությամբ:

Լեզվական նորմը, ի տարբերություն համակարգի, իր մեջ կարող է ընդգրկել անկանոնություններ ու բացառություններ: Համակարգային կանոնական ձևերի կողքին գրական լեզվի նորմով կարող են հաստատվել այնպիսի ձևեր, որոնք հակասում են լեզվական համակարգին, այսինքն՝ հակահամակարգային են:

Հայ լեզվաբանության մեջ առաջիններից մեկը Է. Աղայանն էր, որ լեզվի՝ որպես համակարգի բնութագրման մեջ պատշաճ տեղ հատկացրեց հակահամակարգերին: Նա լեզուն համարում է համակարգերի և հակահամակարգերի մի ամբողջություն և նշում. <<Գործածելով հակահամակարգային տերմինը լեզվի նկատմամբ՝ մենք դրանով հասկանում ենք այն բոլոր ենթահամակարգերը, մասնահամակարգերը և առանձնակի իրողությունները, որոնք <<հակասում >> կամ հակադրվում են լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, առավել ընդհանուր և միասնական բնույթ ունեցող համակարգերին, ենթահամակարգերին ու մասնահամակարգերին>>:[1] Լեզվական հակահամակարգային իրողությունների պատճառները տարբեր են լինում՝ լեզվի նախորդ շրջաններից պատմականորեն փոխանցումն ու պահպանումը, բարբառներից ու այլ լեզուներից՝ երկարատև շփման ու ազդեցությունների հետևանքով մուտք գործելը, լեզվի տվյալ փուլում առաջացող, բայց դեռևս կանոնական մակարդակի չհասած և համընդհանուր չդարձած իրողությունների առկայությունը, քերականական համաբանությունը և այլն:

---

[1] ***Աղայան Է.***, *Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ192:*

Լեզվական նորմից դուրս գտնվող լեզվաձևը, եթե անգամ համակարգային է, չի կարող ընդունելի լինել, և ընդհակառակը, նույնիսկ լեզվի համակարգին հակասող լեզվաձևը ի վերջո ընդունելի կարող է դառնալ, եթե լեզվում նրա գոյությունն արդեն իսկ անժխտելի փաստ է դարձել համատարած կիրառության պատճառով: Լեզվական անկանոնություններն ու բացառությունները վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ հնչյունական, բառային, քերականական:

Սույն ուսումնասիրության սահմաններում մեզ հետաքրքրում են ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում առկա օրինաչափ ձևերից շեղվող, բայց լեզվական նորմով ընդունված անկանոնությունները, որոնք կապված են նախադասության անդամների կապակցման եղանակների՝ առդրության, համաձայնության, խնդրառության հետ, պայմանավորված են շարադասությամբ, նախադասության անդամների դրսևորման առանձնահատկություններով: Ստորև կփորձենք դրանց քննությունը կատարել առանձին-առանձին:

1.<<**Առդրությունը նախադասության անդամների կապակցման եղանակներից մեկն է, որի դեպքում կապակցվող անդամներից որևէ մեկը չի պայմանավորում մյուսի քերականական ձևը>>:**[1] Այդպես են կապակցվում որոշիչն ու որոշյալը, մակբայական պարագան ու ստորոգյալը, համադասական հարաբերությամբ միացած բազմակի անդամները: Բայց կա առդրության մի տարատեսակ, որի դեպքում լրացումն իր լրացյալին պարտադրում է որոշակի թիվ: Դա կոչվում է **թվային կախում**: Այսպես՝ հոգնակի որոշյալներ են պահանջվում՝

ա) երբ ածականով կամ գոյականով արտահայտված որոշիչները կրկնվում են՝ **մեծ-մեծ խոստումներ** , **մանր-մունր հարցեր** , **սուտ ու մուտ բաներ** , **լայն-լայն փողոցներ**, **շարան-շարան մարգարիտներ**, **թել-թել նյարդեր** և այլն:

բ) երբ որոշիչները բազմազանություն են ցույց տալիս՝ **անթիվ մարդիկ**, **բազմաթիվ երեխաներ**, **անհամար առաջադրանքներ**, **այլազան հարցեր**, **բազում ծաղիկներ** և այլն:

գ) երբ բազմակի որոշիչները վերաբերում են տարբեր որոշյալների՝ **կարմիր ու սպիտակ մեխակներ**, **լայն ու ընդարձակ սենյակներ**, **խելոք ու բանիմաց ուսանողներ**, **կարճ ու երկար խողովակներ** և այլն:

Ցանկացած ածականը և մի շարք դերանուններ էլ՝ **յուրաքանչյուր**, **ամբողջ**, **որևէ**, **որևիցե**, **ամեն**, **ամեն մի**, **մի,** պահանջում են եզակի թվով որոշյալ՝ **ցանկացած գործ**, **յուրաքանչյուր մասնակից**, **ամբողջ աշխարհը**, **որևէ մեկը**, **մի մարդ** և այլն:

2.<<**Համաձայնությունը կապակցման եղանակ է, որի դեպքում կապակցվող անդամները փոխադարձաբար պայմանավորում են միմյանց քերականական**

[1] *Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Երևան, 2009, էջ 11:*

ձևը>>[1]: Այդպես են կապակցվում նախադասության անդամներից ենթական և ստորոգյալը, բացահայտիչը և բացահայտյալը:

Ենթական և **ստորոգյալը** համաձայնում են թվով և դեմքով: Համաձայն օրինաչափության՝ եզակի ենթական պահանջում է եզակի ստորոգյալ, հոգնակի կամ բազմակի ենթական՝ հոգնակի ստորոգյալ, օր.՝ **Ծառը ծաղկեց: Ծառերը ծաղկեցին: Ծառ ու ծաղիկ ծաղկեցին:** Դիմանիշ դերանուններով արտահայտված ենթակաների դեպքում համաձայնում են նաև դեմքով, օր.՝ Մի հավք **զարկի ես** մի օր: Մի հավք **զարկեցիր դու** մի օր: Մի հավք **զարկեց նա** մի օր:

Օրինաչափությունից կան շեղումներ՝

ա)եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և հոգնակի թվով (Փողոցով **սլանում էին երկու մեքենա**: Գետնին **ընկած էին** մի քանի գերան), և եզակի (Ընդամենը **հինգ զորամաս է մասնակցում** զորավարժություններին: Քո աշխատանքում **հայտնաբերվել է մի երկու թերություն**):

բ)եթե բազմակի ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով, օր.՝ Գարնանային **վար ու ցանքը եռուզեռի մեջ է:**

գ)եթե բազմակի ենթականերն ունեն **յուրաքանչյուր**, **ամեն**, **ամեն մի**, **ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ, ստորոգյալը դրվում է եզակի թվով, օր.՝ **Յուրաքանչյուր փողոց ու նրբանցք պետք է բարեկարգվի ու մաքրվի**:

դ)եթե նույն դեմքով բազմակի ենթականները կապված են **կամ**, **կա՛մ...կա՛մ** շաղկապով, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝**Կասմունքի Անուշը կամ Արմինեն:**

ե)եթե բազմակի ենթականերից մեկը նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին, այն դրվում է եզակի թվով, օրինակ՝Այդ ամենից ջինջ **հիշողություն է մնացել** և մի- մի **կսկիծ:**

զ) եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել նաև հոգնակի թվով (Փողոցով **սլանում էին երկու մեքենա**: Գետնին **ընկած էին մի քանի գերան):**

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով, օր.՝ **Արամն ու Անուշը** մեր դասարանի **առաջավորներն են**: Բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝

ա) ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է, օր.՝ **Դուք** մեր առաջին **ուսուցիչն եք եղել**:

---

[1] *Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Եր., 2009, էջ 11:*

բ)ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է, օր.՝ **Երեխաները** մեր երկրի **ապագան են**:

գ)ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով, օր.՝ **Սրանք** դեռ **երեխա են**:

Յուրաքանչյուրը, ամեն մեկը, ոչ մեկը դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի երրորդ դեմքով, օր.՝ **Յուրաքանչյուրն** իր գործն **է անում**: Զարդաքանդակներից **ոչ մեկը** մյուսին **չի կրկնում**: Դիմային անհամաձայնությամբ՝ **յուրաքանչյուրս, ամեն մեկս, ոչ մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ, ոչ մեկդ** դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը դրվում է երրորդ դեմքով, օր.՝ **Ոչ մեկս** դա չպետք **է մոռանա**: **Ամեն մեկդ** մի բան **է ասում**: Նշված դերանունների դեպքում ստորոգյալը կարող է դրվել առաջին կամ երկրորդ դեմքով, եթե հոգնակի թվով է, օր.՝ **Յուրաքանչյուրս** մի առանձին գործ **ենք անում**: **Ամեն մեկդ** ձեր անելիքն **իմացեք**:

Համաձայնությամբ կապակցվում են նաև բացահայտիչն ու բացահայտյալը: Համաձայնությունը սովորաբար լինում է դեմքով, թվով, հոլովով և առումով: Անձնական դերանուններով արտահայտված բացահայտյալի դեպքում համաձայնությունը կատարվում է դիմորոշ հոդերով, օրինակ՝ **Ձեզ՝ այլախոհներիդ**, շատերը հանդուրժել չեն կարող: **Ես՝** երկրի **զինվորս,** պատրաստ եմ պայքարել հանուն Արցախի անվտանգության:

Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

ա)թվով, օրինակ՝ Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք **երեխաներին**՝ մեր երկրի **ապագային**: Զրկվեցինք մեր ամենամեծ **արժեքից**՝ մեր նախնիների ժառանգած **տարածքներից**: Ահա մեր **գերազանցիկները՝ Աննան** ու **Արամը**:

բ)հոլովով, օրինակ՝ Հյուրասենյակները կահավորված են թանկարժեք **կահկարասիով՝ բազմոցներ, սեղաններ, սպասքապահարան, գրապահարան:** Մեր ընտանիքը բաղկացած է **չորս հոգուց՝ ես, մայրս, հայրս ու եղբայրս**, և ապրում է երկսենյականոց բնակարանում: Առաջարկեցի երեք **թատերախաղերից՝ «Վենետիկի վաճառականը», «Տիմոն Աթենացի» և «Օթելլո»,** որևէ մեկն ընտրել:

գ)դեմքով, օրինակ՝ **Ես՝** իմ ընտանիքի **գլխավորը**, չէի կարող անտարբեր մնալ՝ տեսնելով այդ ամենը: **Գերազանցիկներդ՝** մեր **հույս ու ապավենը**, հանկարծ մեզ խայտառակ չանեք:

դ)առումով, օրինակ՝ Ադամ, ահա քեզ **ընկեր՝** գեղեցիկ **Լիլիթը:** Դաշտ էր գնացել ամբողջ **գյուղը՝ տղամարդ ու կին, ծեր ու ջահել, աշխատող ու թոշակառու**: Այցելեցինք Սյունիքի **քաղաքները՝ Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսիան:**

4. <<Շարադասությունը բառերի, նախադասության անդամների, բառակապակցության անդամների, բարդ նախադասության բաղադրիչների շարակարգային՝ գծային որոշակի հաջորդականություն է, որը հնարավորություն է տալիս ձևավորելու խոսքը, նրա միավորների դիրքը և հաջորդականությունը>>:[1] Նախադասության անդամների շարադասությունը կարող է լինել սովորական և շրջուն:

Ա)Սովորական շարադասության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին, օր.՝ **Արևը մայր է մտել: Դու հետաքրքիր մտքեր ունես:** Կան կառույցներ սակայն, որոնցում ուղիղ շարադասությամբ ենթական հաջորդում է ստորոգյալին: Դա բնորոշ է հատկապես անորոշ առումով ենթակա պարունակող նախադասությանը, օր.՝ Սրտիս վրա **իջնում է անդորր**:

Այսպիսի դեպքերում ենթակայի նախադաս դիրքն է շրջուն, օր.՝ **Անդորր է իջնում** սրտիս վրա:

Բ) Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է՝ գոյական որոշիչ - դերբայ որոշիչ- ածականական դերանուն որոշիչ-հարաբերական ածական որոշիչ - թվական(կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ - որակական ածական որոշիչ-որոշյալ: Սովորական շարադասության դեպքում այս որոշիչները չեն տրոհվում: Օր.՝ **Սուրճի ջարդված այս բյուրեղապակե երկու գեղեցիկ բաժակները** գցեցի աղբարկղ:

Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝

ա/ հետադաս բազմակի որոշիչի դեպքում: Օրինակ՝ Դա **մի փոքրամարմին կին էր՝ տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր տեսքով և շատախոս:** Այսպիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով:

բ/ այն դեպքում, երբ առկա է որոշիչ-որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով՝ **ելից մատյան, մարած փոխաբերություն, խոսքի մաս, սեղանի թենիս** և այլն, որին ընդունված կարգով նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչները, օրինակ՝ Վերլուծենք **մի քանի հետաքրքիր մարած փոխաբերություն: Այս բոլոր սպասարկու խոսքի մասերն** արդեն ուսումնասիրել ենք:

գ/ այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայտությունից, նախորդում է մյուս բոլորին: Օրինակ՝ Գրքում տեղ են գտել **բազմաթիվ դաշնամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր:**

---

[1] *Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 491:*

5.Ներգործական սեռի բայերի՝ ուղիղ խնդիր պահանջելը ընդհանուր կանոն է: Ուղիղ խնդիրը ժամանակակից հայերենում արտահայտվում է ուղղական հոլովով՝ իրի դեպքում, տրական հոլովով՝ անձի դեպքում: Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են **հաղթել, խաբել** և **ունեմ, ունենալ** բայերը: **Հաղթել** և **խաբել** բայերի մոտ ուղիղ խնդիրը թե՛ անձի, թե՛ իրի դեպքում դրվում է միայն տրական հոլովով՝ **հաղթել թշնամուն** և **հաղթել ցավին**, **խաբել ընկերոջը** և **խաբել կազմակերպությանը**: **Ունեմ** և **ունենալ** բայերը անձ ցույց տվող գոյականների դեպքում պահանջում են ուղղականաձև ուղիղ խնդիր, ինչպես՝ **Ես ունեմ հայր, մայր, եղբայր:** Սրանց կողքին անձնանիշ դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրը լինում է տրականաձև, ինչպես՝ **Ես քեզ** իմ սրտում **ունեմ: Մայրս ինձ ունեցել է** քսան տարեկանում:

6. Հանգման խնդիրը սովորաբար լրացնում է չեզոք սեռի բայերին, մի շարք բաղադրյալ ստորոգյալների: Երբեմն, որպես անկանոնություն, լրացնում է զգացական ձայնարկություններին (**ամոթ**, **վայ**, **թու** և այլն), որոշ վերաբերականների (**երանի**, **ափսոս**, **ավաղ**). **Ամոթ** քեզ նման գոված **իգիթին**: **Երանի** հոգով **աղքատներին**:

Անկանոնություն պետք է համարել նաև հանգման խնդրի՝ բացառական հոլովով արտահայտվելը **կառչել, կպչել, դիպչել** բայերի դեպքում, օրինակ՝ Նա **կառչեց** այդ **մտքին/մտքից**:

7.Ներգործող խնդիր ունեցող նախադասության ստորոգյալը արտահայտվում է կրավորական սեռի բայով: Սակավ դեպքերում սակայն, ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, այն, որպես անկանոնություն, կարող է արտահայտվել չեզոք սեռի բայով: Այդպիսի բայերից են՝ **ամաչել, գոհանալ, վախենալ, նեղանալ, սարսափել, սոսկալ** և այլն: Օրինակ՝ Նա **վախեցավ օձից**: Նա **սարսափեց թշնամուց**: Ըստ Ս. Աբրահամյանի՝ կրավորական և չեզոք սեռերի բայերի ներգործող խնդիրների հարաբերակցության և ընդհանրության մասին է խոսում այն իրողությունը, որ հաճախ միևնույն ներգործող խնդիրը կարող է գործածվել թե՛ կրավորական, թե՛ չեզոք բայերի հետ՝ պահպանելով միևնույն քերականական իմաստը: Հմմտ. Զեկուցողի **ելույթը** միահամուռ հավանության արժանացավ նիստի բոլոր **մասնակիցների կողմից**: Զեկուցողի ելույթը հավանությամբ ընդունվեց նիստի բոլոր **մասնակիցների կողմից**: [1]

8. Բազմակի տարադաս որոշիչները նախադաս դիրքում չեն կապվում **և**, **ու**, **կամ**, **թե** շաղկապներով և ստորակետով չեն տրոհվում: Այս օրինաչափությանը չեն ենթարկվում բազմակի հետադաս որոշիչները, որոնք, անկախ իրենց արտահայտության ձևից, միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով, օրինակ՝ Հեծյալները՝ **կիսամերկ**, **կմախքացած**, **դեմքի մշուշոտ արտահայտությամբ և լուռումունջ**, օրորվում էին թամբերի վրա:

---

[1] *Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 2004, էջ 44:*

9. Անվանական է այն անդեմ նախադասությունը, որի գերադաս անդամը, որպես կանոն, արտահայտված է գոյականով կամ գոյականական դերանունով, երբեմն՝ ածականով, թվականով, մակբայով:[1]

Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամը արտահայտված է վերաբերականով կամ ձայնարկությամբ, օրինակ՝ **Վայ** մեզ՝ մոլորյալներիս: **Ո՛չ** ինքնակոչ նախագահին: **Երանի** հոգով աղքատներին: **Ա՛յ** քեզ բան... **Ահա** և ես: **Ահավասիկ** իմ ներդրումը: **Ափսո՜ս**, **հազա՜ր ափսոս** մեր Թլոլ Դավթին:

10. Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի համակարգում որպես յուրահատկություն կարելի նշել **երանի, երնեկ**, **ափսոս** վերաբերականների՝ գլխավոր նախադասության դերով հանդես գալը: Օրինակ՝ **Երանի** նրան, ում հոգին խաղաղ է ընդմիշտ: **Ափսոս,** որ մենք երբևէ լավ իշխանություն չենք ունեցել:

11.Նախադասության անդամների կապակցման տեսանկյունից անկանոնություն պետք է համարել բուն բացահայտիչ-բացահայտյալի կապակցումը **այսինքն, այն է** շաղկապներով: Օրինակ՝ Նա որոշեց շարունակել հոր մասնագիտությունը, **այն է՝** դարբնություն: Այստեղ **դարբնություն** բառով բացահայտվում է, թե որն է մասնագիտությունը: Նույնպիսի յուրահատկությամբ բնորոշվում են նաև զուգադրական կազմությամբ ստորադասական մի շարք շաղկապներ, ինչպես՝**չնայած...բայց, թեկուզ ...սակայն, թեպետ... այնուամենայնիվ** և այլն: Կապակցելով նախադասության անդամներ՝ նրանք արտահայտում են այնպիսի հարաբերություն, որն ավելի մոտ է համադասությանը, քան ստորադասությանը: Օրինակ՝ **Թեպետ ընդունակ, բայց ծույլ** այդ մարդուց ոչինչ չէր ակնկալում:

12.Հնչերանգով պայմանավորված՝ որոշ կառույցներում դրական խոնարհման ստորոգյալը արտահայտում է ժխտական իմաստ, իսկ ժխտականը՝ դրական իմաստ: Այսպես՝

-Տղադ ի՞նչ արեց, աշխատանք ճարե՞ց:

-Բա ի՞նչ արեց, ճարեց (այսինքն՝ չճարեց):

Ու՞ր է այստեղ ծաղիկ, որ հավաքենք (այսինքն՝ ծաղիկ չկա):

Ո՞վ է դաս սովորել, որ ես սովորեմ (Ոչ ոք չի սովորել, ես էլ չեմ սովորել):

Բա ես քո մայրը չե՞մ (այսինքն՝ մայրն եմ):

13. Բայական ստորոգյալներին տրվում են հետևյալ հարցերը՝ **ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ է անելու (լինելու), ի՞նչ է արել (եղել), ի՞նչ արեց(ինչ եղավ), ի՞նչ պիտի անի (լինի)** և այլն: Անվանաբայական ստորոգյալներին տրվող հարցը վերաբերում է ստորոգելիին՝ **ո՞վ է, ի՞նչ է, ովքե՞ր են, ինչե՞ր են, ովքե՞ր կլինեն, ի՞նչ դարձավ, ի՞նչ եղավ, որտե՞ղ է, ե՞րբ էր, ո՞րերորդն է, որքա՞ն է, ինչպիսի՞ն է** և այլն:

---

[1] *Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Ե., 2009, էջ 111:*

Կամ, գիտեմ, ունեմ պակասավոր բայերով արտահայտված ստորոգյալները ոչ մի հարց չեն ընդունում, օրինակ՝ Այդ գործում ես **չկամ**, պարոն: Այն կինն էլ **ուներ** խշխշան մորեր...քորոցը նարնջագույն գլուխ ուներ: Մայրս **ուներ** ձեռքեր բարակ: Անտառը ծանոթ եր նրան, **գիտեր,** թե որտեղ է սիրում բույն դնել միրհավը:

Այսպիսով՝ ժամանակակից գրական հայերենի շարահյուսական համակարգում՝ պարզ նախադասության սահմաններում, առկա լեզվական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, անկանոնություններն ու բացառությունները, որոնք կենդանի լեզվի փոփոխականության, զարգացման ու կատարելագործման գործընթացի արդյունք են, համակարգային կանոնական ձևերի կողքին գործում են որպես հակահամակարգային ձևեր:

Գրականություն

1. **Աբրահամյան Ս**. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974:

2. **Աբրահամյան Ս**. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976:

6.**Աբրահամյան Ս. Գ.** Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975

7.**Աղայան Է.Բ.,** Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:

8. **Աղաջանյան Զ.**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:

9.**Առաքելյան Վ.**, Հայերենի շարահյուսություն, հատոր բ, Եր., 1964:

10.**Ասատրյան Մ. Ե.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989:

12.**Ավետիսյան Յու., Զաքարյան Հ.**, Հայոց լեզու. Շարահյուսություն, Եր., 2009:

13.**Խաչատրյան Լ.Մ.**, Լեզվաբանության ներածություն, Եր.,2008:

14.**Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ., Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 81՝36

Հայոց լեզու

Կարինե ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Լոռու մարզ, Թեղուտի հիմնական դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
Էլ. փոստ՝ karine.amirkhanyan.63@mail.ru

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԵՐԿԱՐԺՈՒՅԹ ԲԱՅԵՐԻ ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁՆԱՆԻՇ ԳՈՅԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Հոդվածում քննվել են «բայ-գոյական» կապակցության մասնակի դրսևորումներից մեկի՝ «անձնանիշ գոյական ուղիղ խնդիր + ներգործական սեռի երկարժույթ բայ» կաղապարի որոշ յուրահատկություններ: Մասնավորապես, խոսքային միջավայրում որոշ դեպքերում առաջանում են կապակցման սահմանափակումներ՝ պայմանավորված բայի կազմությամբ, գոյականի ցույց տված անձի սեռով, տարիքային խմբով և այլն:

Բանալի բառեր՝ *անձնանիշ գոյական, երկարժույթ բայ, կապակցություն, ուղիղ խնդիր*

К. Амирханян

ВОЗМОЖНОСТИ СВЯЗИ ДВУВАЛЕНТНЫХ ГЛАГОЛОВ ДЕЙСТВИТЕЛЬНОГО ЗАЛОГА С СУЩЕСТВИТЕЛЬНЫМИ ОБОЗНАЧАЮЩИМИ «ПЕРСОНА» В РОЛИ ПРЯМОГО ДОПОЛНЕНИЯ

В статье рассматривается частичное явление синтаксической связи между глаголом и существительном в моделе «существительный в прямом дополнении обозначающий «персона» + двувалентный глагол действительного залога». В речевой деятельности в некоторых случаях происходят ограничения, которые связяны с структурой глагола, с семантическими особенностями существительного, в частности- это слова, обозначающие пол, возрастная группа человека .

Ключевые слова: *двувалентный глагол, действительный залог, прямое дополнение, существительное обозначающий «персона»*

K. Amirkhanyan

POSSIBILITIES OF RELATIONSHIP OF BIVALENT VERBS OF ACTUAL VERB WITH NOUNS DESIGNATING «PERSON» IN THE ROLE OF DIRECT OBJECT

The article deals with the partial phenomenon of the syntactic connection between a verb and a noun in the model «a noun in a direct object denoting «person» + a bivalent verb of the active voice». In speech activity, in some cases, restrictions occur that are associated with the structure of the verb, with the semantic features of the noun, in particular, these are words denoting gender, age group of a person.

Key words: bivalent verb, active voice, direct object, noun meaning "person"

Հայերենում խոսքի մասերն աչքի են ընկնում կապակցելիական հնարավորությունների տարբեր աստիճաններով: Բայը, լինելով խոսքակազմիչ գլխավոր միավոր, աչքի է ընկնում կապակցական հնարավորությունների բազմազան դրսևորումներով, ընդ որում՝ դրանում կարևորվում է կապակցվող միավորների ներքին իմաստային հնարավորությունների դաշտը, այն է՝ դասային պատկանելությունը:

Նախադասությունը ճիշտ կառուցելու տեսանկյունից էապես կարևորվում է բայերի և գոյականների կապակցական հնարավորությունների ուսումնասիրումը. ի վերջո, դրանք պայմանավորված են տվյալ ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկություններով: Հովի. Բարսեղյանը «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքում նշում է, թե առարկայի ամեն մի գործողություն, շարժում տեղի է ունենում այլ առարկաների հետ նրա ունեցած փոխադարձ կապի ու ներգործության պայմաններում և արտացոլվում է մարդկանց լեզվամտածողության մեջ համապատասխան լեզվական ձևերով[1]:

Բայերի և գոյականների կապակցելիության հարցին առաջին անգամ անդրադարձ կատարել է Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ՝ «Բայերի կապակցելիական դասակարգումը» գլխում, որտեղ նշում է, որ *բայերի կապակցելիական դասակարգում* ասելով պետք է հասկանալ վերջիններիս դասակարգումը՝ ըստ նախադասությունը կազմող բառերի ու բառախմբերի հետ նրանց ունեցած կապակցելիության, որն ի վերջո հանգում է բայերի իմաստային դասակարգմանը՝ ըստ նրանց բաշխման տիպերի: Գիտնականն առանձնացնում է բայերի կապակցելիական դասակարգման երեք տիպ՝ դասանշային, արժութային և ընտրութային: Դասանշային դասակարգումը բայերի խմբավորումն է՝ ըստ ենթակայի դասային տարբեր խմբերի հետ կապակցվելու կամ չկապակցվելու, արժութային դասակարգումը դրանց

[1]*Տե՛ս **Բարսեղյան Հ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 119:*

խմբավորումն է՝ ըստ առարկայանիշ բառերի ու բառակապակցությունների (գոյականների ու գոյականական բառակապակցությունների, այսինքն՝ ենթակայի, գոյականական ստորոգելիի, խնդիրների և գոյականական պարագաների) հետ նրանց ունեցած կապակցելիության, իսկ ընտրութայինը խմբավորումն է՝ ըստ մակբայների հետ ունեցած կապակցելիության: Շեշտվում է, որ դասանշային, արժութային և ընտրութային դասակարգումները փոխկապակցված են, պայմանավորված մեկը մյուսով[1]: Հեղինակը նշում է. «....Բայական յուրաքանչյուր կարգի (տիպի) համար բերենք համապատասխան օրինակներ՝ ապագային թողնելով բայերի դասանշային հանգամանալից դասակարգումը»[2]: Մեզ հետաքրքրող հարցի մշակվածության տեսանկյունից հատկանշական է նաև Լ. Մաքսուդյանի դիտարկումը, ըստ որի՝ գործողության անուն բայանունների մեջ առկա բայիմաստը կամ որոշակի կապը այդ բայիմաստի հետ պայմանավորում է դրանց յուրահատուկ խնդրառությունը[3]:

Հաշվի առնելով բայերի կապակցական հնարավորությունների բազմազանությունը և հարցի ոչ լիարժեք մշակվածությունը՝ մենք որոշեցինք անդրադառնալ ներգործական սեռի բայերի կապակցական հնարավորություններին՝ մի նոր, չուսումնասիրված դիտակետից, այն է՝ քննել վերջիններիս կապակցելիությունը անձնանիշ գոյական ուղիղ խնդիրների հետ:

Անձնանիշ գոյական ուղիղ խնդիրների հետ կապակցվող բայերն աչքի են ընկնում կապակցելիության էական առանձնահատկություններով, ինչը պայմանավորված է և՛ բայասեռով (ներգործական սեռ), և՛ կազմությամբ, և՛ բայիմաստով:

Ընդհանուր առմամբ՝ նկատել ենք, որ բայերի՝ գոյական ուղիղ խնդիրների հետ կապակցելիության պայմաններում երբեմն պահանջվում է գործողությունը կրող օբյեկտների՝ մեկից ավելի քանակ (առնվազն երկու), օրինակ՝ *ամուսնալուծել* բայը: Անձնանիշ գոյականուղիղ խնդիրներին կապակցվող բայերի մեծ մասը կարող է կապակցվել ցանկացած անձնանիշ ուղիղ խնդրի հետ, սակայն դրանք իրենց ներքին համակարգում երբեմն կապակցելիության սահմանափակություններ են դրսևորում, որոնք կարող են պայմանավորված լինել տվյալ անձի սեռային պատկանելությամբ, տարիքային որոշակի խմբի պատկանելու հանգամանքով և այլն:

Բնականաբար, վերոհիշյալ բայերին լրացնող ուղիղ խնդիրները պատասխանում են միայն *ո՞ւմ* հարցին և սովորաբար ձևավորվում են տրական հոլովով (հատկապես՝ որոշյալ առման դեպքում), թեև երբեմն (անորոշ առմամբ գործածվելիս) ուղիղ խնդիրը կարող է հանդիպել ուղղական հոլովով, օրինակ՝

---

[1] *Տե՛ս* ***Ջահուկյան Գ.****, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 461-487:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս* ***Մաքսուդյան Լ.****, Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 63:*

Եթե աղջիկ էին ամուսնացնում, նորահարսին վարդ թաշկինակ ընծայելն անհրաժեշտ էր (ԱԲ):

Միայն անձնանիշ գոյականուղիղ խնդիրներին կապակցվող բայերը փորձել ենք իմաստային խմբավորումների ենթարկել, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Ամուսնական հարաբերություններին առնչակից հատկանիշներն արտացոլող բայեր, ինչպես՝ *ամուսնացնել, ամուսնալուծել, ապահարզանել,այրիացնել,զուգավորել* (*ամուսնացնել*)և այլն, օրինակ՝ *Բարեգործությունը նրա համար կենսաձև դարձավ տասներկու տարի առաջ, երբ Նահանգներում ամուսնացնում էր միջնեկ որդուն* (Մամուլ), *Արգելես այն կոտորածը, որ կանայք ու հարսունք պիտի այրիացնե* (Մ): Նշված բայերից առաջին երեքի և նման այլ բայերի ցույց տված գործողության կրողները սովորաբար երկուսն են, թեև դրանցից մեկը կարող է պասիվ կրողի դերում լինել: Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել բայի կազմությամբ. օրինակ՝ *ամուսնացնել, ամուսնալուծել* բայերի *ամուսին* բաղադրիչը՝ *ամուսնություն* իմաստով, երկուստեք կրող օբյեկտի գաղափար է արտահայտում, որոնցից մեկը կարող է անուղղակի խնդրի դերով հանդես գալ, իսկ *ապահարզանել*-ը պայմանավորված է *հարսն* արմատի՝ հնչյունափոխության ենթարկված *հարզան* բաղադրիչով:

Սրանցից *զուգավորել* բայը՝ *սեռական հարաբերություններ կատարել* իմաստով, առավելապես կենդանանիշ գոյական ուղիղ խնդիր է պահանջում, օրինակ՝ *Սերունդ ստանալու համար զուգավորում են տարբեր ցեղերի կենդանիների* (ՀՍՀ), ուստի կապակցելիությունը քննելիս կարևորվում է այն համատեքստը, որտեղ հանդես է գալիս տվյալ բայը:

Բառարանում *դավաճանել* բայը՝ *ամուսնական հավատարմությունը խախտել* իմաստով, դիտվել է իբրև չեզոք բայ, մինչդեռ մենք գտնում ենք, որ վերոհիշյալ իմաստով գործածվելիս այն պիտի դիտել ներգործական սեռի բայերի շարքում, օրինակ՝ *Նա դեռ հավատարիմ էր իր մարդուն, մի ամուսնու, որ ամեն քայլում դավաճանում էր նրան* (Ծ):

Հիշյալ բայերից *այրիացնել*-ը կապակցելության սահմանափակություն է դրսևորում, ընդ որում՝ թե՛ սեռով պայմանավորված, թե՛ տարիքով, քանի որ սույն բային լրացնող ուղիղ խնդրի դերում պարտադիր ենթադրվում է իգական սեռի ներկայացուցիչ, սովորաբար՝ հասուն տարիքի անձ:

2. Անձի ապրումի, զգացումի, հոգեվիճակի կամ հուզազգայական դաշտի փոփոխություն ցույց տվող բայեր, ինչպես՝ *ամաչեցնել, անասնացնել, ապուշացնել, անգթացնել, բարոյականացնել, անբարոյականացնել, անզգամացնել, զզվեցնել, արիացնել, գոտեպնդել, բարկացնել, զազանեցնել,ապշեցնել, զարմացնել, լացացնել, ծիծաղեցնել, խնդացնել* և այլն, օրինակ՝ *Դա Խանդութին օգնող ու յուրայիններին ամաչեցնող...գեղջկուհին էր* (ԴԴ), *Ինքներդ եք ձեզ անասնացնում ու ծաղրելի դարձնում* (Ա), *Գիշերային մի*

ճանճ բզզալով իջնում էր մասրենու տերևներին, հետո ցատկում Մանուշի մազերի վրա ու իր տզզոցով բարկացնում նրան (ՍԽ), *Այս այն դևն է, որ...մտնում է մարդու արյունը, վառում, բորբոքում, գազանեցնում է նրան* (Ն):

3. Անձի կամ անձանց միացում, միավորում ցույց տվող բայեր, ինչպես՝ *ախպերացնել*(բրբ.), *եղբայրացնել, անդամագրել, անդամակցել («անդամակից դարձնել»,բարեկամացնել* և այլն, օրինակ՝ *Չնայելով, որ նրանք երկու միմյանց հակառակ ազգությունների էին պատկանում, բայց գիտության գաղափարը եղբայրացրել էր նրանց* (Ր), *Միքայելն ու Եղիշեն սովորելու մեկնելուց առաջ բարեկամացրին իրենց կանանց* (ՎԽ):

4. Անձի նկատմամբ բարոյական կամ ֆիզիկական ճնշում, հալածանք, հարված ցույց տվող բայեր, ինչպես՝ *աղախնացնել, անիրավել* (*անիրավությամբ զրկել*), *առևանգել, բռնաբարել, բռնավարել, արտաքսել, աքսորել, գաղթեցնել, անդամալուծել, անդամախեղել, գնդակել, գնդակահարել, ապտակել* և այլն, օրինակ՝ «*Անիրավեցինք շինականին, կեղեքեցինք*»(ԴԴ), «[*Գրիբոյեդովը նրանց*]*փրկել էր պարսկական գերությունից՝ Պարսկաստանից գաղթեցնելով Արարատյան դաշտավայրը*»(ՀՔ), *Մեզանից ոչ ոք չէր տեսել քեռի Եգորին, որին տարիներ առաջ աքսորել էին*»(ԱԲ),«*Հարվածը սաստիկ էր, և կարող էր միանգամից անդամալուծել ողորմելի ծերունուն* (Ր), *Թույլ չտալով հակառակորդին սթափվելու, բոլոր ուժով ապտակեց նրան* (Շ):

5. Ռազմական ոլորտին վերաբերող բայեր, ինչպես՝ *ապազինել* (*զինաթափ անել*), *ասպազինել* (*ասպազեն հագցնել*), *ասպարավորել, զինաթափել, զինակոչել, զորակոչել, զրահավորել* (*մեկին զրահ հագցնել*)և այլն, օրինակ՝ *1914թ., երբ Հովհաննեսին զորակոչեցին, Տիգրանը նորածին էր* (ՀՔ):

6. Պաշտոն, կոչում, աստիճան ստանալուն կամ դրանից զրկվելուն վերաբերող բայեր, ինչպես՝ *եպիսկոպոսացնել, քահանայացնել, գահազրկել, թագադրել, թագազերծել, թագազրկել, թագաժառանգել, թագակապել, իշխանազրկել, իշխանացնել, աստիճանավորել* (*աստիճան շնորհել*), *աստիճանազրկել* և այլն, օրինակ՝ *Պարթևաց Խոսրով Առաջին թագավորը 113-ին Ա-ին գահազրկում է և փոխարենը նշանակում նրա եղբայր Պարթամասիրին* (ՀՍՀ):

Այս բայերի մեծ մասը, հատկապես՝ *զրկել* բաղադրիչով կազմավորված բայերը, կապակցելիության ակնհայտ սահմանափակությամբ են օժտված, քանի որ պահանջում են որոշակի պաշտոնի, աստիճանի առկայություն տվյալ անձի մոտ, ընդ որում՝ վերոհիշյալ օրինակներից առաջին երկուսը, բացի այն, որ բնութագրվում են սեռային սահմանափակությամբ(ակնհայտ է, որ եպիսկոպոսի կամ քահանայի աստիճան ստանալուն կարող են հավակնել միայն արական սեռի ներկայացուցիչները), պահանջում են նաև, որ ուղիղ խնդիրը *որոշակի աստիճանի, կոչման հասած անձ նշանակող բառ լինի*, քանի որ արական սեռի ոչ բոլոր ներկայացուցիչները կարող են հավակնել քահանայության կամ եպիսկոպոսության:

7. Անձի ազգային էության փոփոխություն ցույց տվող բայեր, ինչպես՝ *թյուրքացնել, թուրքացնել* (*մահմեդական կրոնը ընդունել տալով՝ այլազգի անձի թուրք դարձնել*), *ռուսացնել, լատինացնել* (1. *ուրիշ ցեղեր ձուլել՝ լատին դարձնել*, 2. *կաթոլիկ դարձնել*), օրինակ՝ *Աղջիկներիդ կտանեմ կթուրքացնեմ* (Ր):

Վերը բերված բայերն այլ իմաստներով գործածվելիս կարող են կապակցվել մյուս դասերի ուղիղ խնդիրների հետ, օրինակ՝ *լատինացնել* բայը՝ *գրերը լատինականգրերով փոխել* իմաստով, կապակցվում է իրանիշ թանձրացական ուղիղ խնդրի հետ, օրինակ՝ *Թուրքերն իրենց արաբական այբուբենը լատինացրին*, մինչդեռ *լատիներենի ու լատինական մշակույթի ազդեցությանը ենթարկել* իմաստով գործածվելիս վերոհիշյալ բայը կարող է կապակցվել նաև իրանիշ վերացական ուղիղ խնդրի հետ, օրինակ՝ *Եվրոպայի այդ մասում ժողովուրդների մի մասը լատինացրել էր իր սովորույթները* (Մամուլ):

8. Մանկահասակ անձանց վերաբերող գործողություն ցույց տվող բայեր, ինչպես՝ *բարուրել, խանձարուրել, դիել* (*կուրծք տալ*), *կերակրել* (*կուրծք տալ*), *դաստիարակել* (*երեխաներին կիրթ դարձնել*), *զռացնել, զռզռացնել* (*երեխային շատ լացացնել*), օրինակ՝ *Մինչև այդ օրը Սահրատի եղբոր կինն էր Սուսամբարին յուր զավակի հետ երբեմնապես դիել, պահպանել* (ՊՊ), *Այդ ժամանակ դիրեկտորն զգաց, որ սխալվել է, որ սպառնալիքը երբեք մարդ չի դաստիարակել, ու հիշեց, որ մանկատանը վարիչ եղած ժամանակ այդ մեթոդով չէր դաստիարակում անկարգ տղաներին* (ՍԶ):Թվարկված բայերի մեջ *բարուրել*-ը, *խանձարուրել*-ը,*դիել*-ը և *կերակրել*-ը իրենց հերթին կապակցելիական որոշակի սահմանափակություն են ապահովում՝ պայմանավորված բայիմաստով, քանի որ ենթադրում են նորածին անձ մատնանշող ուղիղ խնդրի հետ կապակցելիություն:

Վերոհիշյալ բայերն այլ իմաստներով գործածվելիս կապակցելիության սահմաններն ընդլայնում են՝ կապակցվելով այլ դասերի ուղիղ խնդիրների հետ. օրինակ՝ *զռզռացնել* բայը՝ *էշին շատ անգամ զռացնել* իմաստով, կապակցվում է կենդանանիշ ուղիղ խնդիրներին, նույն կերպ՝ *զռացնել*-ը՝ «*այնպես անել, որ էշը զռա*»իմաստով: *Դաստիարակել*-ը՝ *մշտական ներգործման միջոցով ազդել անհատի մտքի, կամքի, զգացումների, գեղարվեստական ճաշակի վրա* իմաստով, կարող է կապակցվել իրանիշ վերացական ուղիղ խնդրի հետ, օրինակ՝ *Ասպատակություններ, որ պատանու մեջ միայն համարձակություն ու արագաձեռնություն են դաստիարակում* (ՍԹ):*Կերակրել* բայը՝ «1. *կերակուր՝ կեր տալ*, 2. *խնամել*, 3. *սնունդ հայթայթել*» իմաստներով կարող է կապակցվել տարբեր դասերի գոյական-ուղիղ խնդիրների հետ, օրինակ՝ *Ինչո՞ւ պատճառ դառնալ ընտանիքների դժբախտության, զրկել նրանց կերակրող ձեռքերից* (Մ):

Իհարկե, այսօրինակ բայերը անձի առմամբ գործածված այլ դասերի գոյական ուղիղ խնդիրների հետ ևս կարող են կապակցվել, օրինակ՝ *ավանսավորել*

(*ավանս տալ*) *ժողովրդին*, սակայն դա մեր խնդրո առարկայից դուրս է և չի նպաստում մեր քննության խնդիրների բացահայտմանը:

Անձնանիշ ուղիղ խնդիրների հետ կապակցական հնարավորություններով օժտված բայերը հայերենում ամենից տարածվածն են: Դրանց մեջ գերակշռում են պատճառական ածանց ունեցող բայերը, ինչը, թերևս, պայմանավորված է դրանցով արտահայտված գործողության՝ միջնորդավորված լինելու հանգամանքով:

Անձնանիշ սեռի խնդրառու բայերը մի դեպքում կապակցվում են անձնանիշ բոլոր ուղիղ խնդիրներին, իսկ մյուս դեպքում կապակցելիության սահմանափակություններ են դրսևորում, որոնք պայմանավորված են անձի սեռով, տարիքային խմբով և այլն: Երբեմն էլ կապակցական հնարավորությունների սահմանափակությունը կարող է պայմանավորված լինել բայի կազմությամբ կամ իմաստով, ինչպես նաև խոսքային միջավայրով:

Կարևորվում է այն համատեքստը, որում հանդես է գալիս տվյալ բայը. եթե մի իմաստով գործածվելիս կապակցվում է միայն անձնանիշ գոյականուղիղ խնդրի հետ, ապա մեկ այլ իմաստ արտահայտելիս կարող է կապակցվել նաև այլ դասերի գոյական ուղիղ խնդիրների հետ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

ՀՏԴ 82-9

Լրագրություն

Սամվել ԲԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի ասիստենտ
Էլ.փոստ՝ samvel.artv@gmail.com

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ 2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Հոդվածում կարևորվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմից հետո տեղեկատվական անվտանգության ոլորտին պատշաճ ուշադրություն դարձնելը: Հատկապես նշվում է հակահայկական հրապարակումներով առանձնացող ադրբեջանական տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրության կարևորությունը՝ որպես ԱՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների բացահայտման, անհրաժեշտ պաշտպանական միջոցների ներդրման, Արցախում ապրող հայ հասարակության տեղեկատվության ընկալման հմտությունների զարգացման, ադրբեջանական տեղեկատվական ահաբեկչությանը դիմակայելու անհրաժեշտ միջոց:

Այս նպատակով դիտարկվում է Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականությունը 2020 թվականի արցախյան պատերազմից հետո՝ Արցախում լայն տարածում գտնող սոցիալական մեդիայի որոշ ռեսուրսների միջոցով: Հոդվածում ներկայացվում են տեսական ու գործնական մակարդակները՝ բացահայտելով հակահայկական տեղեկատվական քաղաքականության օրինակներն ու զարգացումները:

Բանալի բառեր՝ տեղեկատվական, պատերազմ, ագրեսիա, սոցիալական, մեդիա, մանիպուլյացիա, քարոզչություն, ատելություն, ինֆոգեն, անվտանգություն:

С. Балаян

ИНФОРМАЦИОННАЯ АГРЕССИЯ АЗЕРБАЙДЖАНА В СОЦИАЛЬНЫХ МЕДИА ПОСЛЕ ВОЙНЫ, РАЗВЯЗАННОЙ

ИМ ПРОТИВ РЕСПУБЛИКИ АРЦАХ 27 СЕНТЯБРЯ 2020 ГОДА

В данной статье подчеркивается важность уделения должного внимания сфере информационной безопасности после войны, развязанного Азербайджаном против Республики Арцах 27 сентября 2020 года.

В особенности, отмечается важность изучения азербайджанских информационных источников, которые отличаются своими антиармянскими публикациями, как необходимое средство обнаружения угроз информационной безопасности Республики Арцах, внедрения необходимых защитных мер, развития навыков восприятия информации армянским обществом, противодействия азербайджанскому информационному терроризму.

С этой целью рассматривается антиармянская информационная политика Азербайджана после арцахской войны 2020 года, посредством некоторых ресурсов социальной медии, широко распространяющийся в Арцахе. В статье представлены теоретические и практические уровни, раскрывая примеры и развития антиармянской информационной политики.

Ключевые слова: информационный, война, агрессия, социальный, медиа, манипуляция, пропаганда, ненависть, инфоген, безопасность.

S. Balayan

THE INFORMATION AGGRESSION OF AZERBAIJAN IN SOCIAL MEDIA AFTER THE WAR UNLEASHED AGAINST THE REPUBLIC OF ARTSAKH ON 27 SEPTEMBER 2020

This article emphasizes the importance of paying due attention to the sphere of information security after the war unleashed by Azerbaijan against the Republic of Artsakh on 27 September 2020.

In particular, mention is made of the importance of studying Azerbaijani information sources, which are distinguished by their anti-Armenian publications, as a necessary means of detecting threats to the information security of the Artsakh Republic, and of introducing the necessary protective measures, developing the skills of Armenian society in perceiving information and countering Azerbaijani information terrorism.

To this end, the anti-Armenian information policy of Azerbaijan after the Artsakh war of 2020, through some resources of social media, which is widely disseminated in Artsakh, is being considered. The article presents theoretical and practical levels, revealing examples and development of anti-Armenian information policy.

Key words: information, war, aggression, social, media, manipulation, propaganda, hatred, infogen, security.

Արցախի ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից շարունակվող տեղեկատվական, քարոզչական հարձակումները, հատկապես 2020թ. արցախյան վերջին

պատերազմից հետո նոր, աննախադեպ ծավալների է հասնում՝ մեծ ընդգրկվածություն ապահովելով սոցիալական ու ավանդական մեդիատիրույթներում: Մարդկային ռեսուրսներ ու տեխնիկական նոր ու արդիական միջոցներ կիրառելով՝ Ադրբեջանը հետևողականորեն տեղեկատվական ահաբեկչությամբ հոգեբանական ճնշման տարբեր գործողությունների համախումբ է փորձարկում Արցախում ապրող մարդկանց վրա՝ տեղեկատվական պատերազմում հետապնդելով Արցախի հայաթափման նպատակը: Արցախի բնակչության շրջանում տագնապի ու խուճապի մթնոլորտ ստեղծելու փորձերը պետական մակարդակով արտոնեց այդ երկրի նախագահը պատերազմից հետո իր ուղերձներից մեկում, իսկ 2021թ հոկտեմբերի 18-ին «Ազերթաջ» պետական լրատվական գործակալության փոխանցմամբ, հանդիպումներից մեկում ընդգծեց, որ Ադրբեջանը հաղթել է Հայաստանին նաև տեղեկատվական ճակատում[1]:

Համաձայն Ա. Վ. Մանոյլոյի տեսության՝ յուրաքանչյուր տեղեկատվական-հոգեբանական գործողություն հասարակության ինքնակամ հպատակության նպատակ ունի, որն ապահովվում է հասարակության գիտակցության վրա հոգեբանական ազդեցության տեխնոլոգիաների կիրառմամբ[2]: Տեղեկատվական ագրեսիան իրենից ներկայացնում է մարդկանց գիտակցության մանիպուլյացիայի և հասարակության բարոյալքմանն ուղղված ժամանակակից ձևը:

Պետք է փաստել և խորությամբ ընկալել այն իրողությունը, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը ծառայում է այդ երկրում նոր ձևավորվող հանրության յուրովի ինքնահաստատման գործին և սերմանում է ազգային բնույթի ագրեսիվ՝ հայատյաց գաղափարախոսություն, ինչը համաշխարհային տեղեկատվական հարթակում լուրջ մարտահրավեր է հայկական զույգ պետությունների և, ընդհանրապես, հայության համար: Առհասարակ, Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության մեջ զանգվածային լրատվամիջոցների՝ հասարակական կարծիք ձևավորելու հնարավորությունը օգտագործվում է բավականին ճկուն: Ընդգծեմ միայն սոցիալական և քաղաքական հզոր նշանակությունը՝ սոցիալական ինտեգրման և ազգային գիտակցության ձևավորման տեսանկյունից: Ադրբեջանն իր անկախության 30-ամյա գոյության ընթացքում թշնամու կերպարը ձևավորեց մեդիառեսուրսների լայն կիրառության ու դրա բովանդակության մանրազնին

---

[1] *Տե՛ս https://azertag.az/ru/xeber/Prezident_Ilham_Aliev_i_pervaya_ledi_Mehriban_Alieva_vstretilis_s_predstavitelyami_obshchestvennosti_Fizulinskogo_raiona_zalozhili_fundament_Memorialnogo_kompleksa_i_vosstanovleniya_goroda_VIDEO-1902410:*

[2] *Տե՛ս* ***Манойло А.В.*** *«Информационно-психологическая война: факторы, определяющие формат современного вооруженного конфликта». Киев: psyfactor.org (2005), Материалы V Международной научно-практической конференции «Информационные технологии и безопасность», вып. №8, 2005 г., с. 73-80.. Дата обращения: 29 мая 2020.*

կառուցումով, ինչպես նաև արտադրանքի վերահսկումով՝ ապահովելով տոտալ գրաքննությունը երկրում:

Ադրբեջանական պետական գերատեսչությունների կողմից ստեղծվում են հակահայկական քարոզչություն իրականացնող տեղեկատվական տարբեր հարթակներ՝ զուգահեռ կատարելագործելով գոյություն ունեցող նմանատիպ բովանդակությամբ այլ հարթակներ ևս: Արցախյան վերջին՝ 2020թ. պատերազմից հետո հայկական լսարանին ուղղված քարոզչական ու հոգեբանական ազդեցության միջոցները տեղեկատվական դաշտում նորովի դրսևորվեցին: Մասնավորապես, 2021թ. ամռանը Ադրբեջանի առաջին փոխնախագահ ու առաջին տիկին Մեհրիբան Ալիևայի նախաձեռնությամբ ստեղծվեց Karabakh.Center ադբեջաներեն, անգլերեն ու ռուսերեն լեզուներով կայքէջը[1]: Այն ստեղծվել է աշխարհին Ղարաբաղի պատկանելության հարցի հանրայնացման և «հայերի վայրագությունների» մասին շինծու բովանդակությամբ նյութեր տարածելու համար: «Ուրբիցիդ» բաժնում տեղադրված են արցախյան գոյամարտի տարիներին պատերազմական գործողությունների հետևանքները, որոնք բնութագրվում են որպես «հայկական ագրեսիայի հետևանք»՝ կցելով ավերածությունների ու այդ տարածքների նախկին տեսքը բնութագրող 10.000 լուսանկարներ ու տեսանյութեր: «Հակամարտություն» և «Հանցագործություն» բաժիններում ներկայացվում են «պատմական փաստաթղթեր ու վերլուծական նյութեր»: Հակահայ բովանդակությամբ նյութեր տարածելու և թշնամություն քարոզելու համար ստեղծված այս հարթակը ակտիվ է նաև սոցիական մեդիայում, հատկապես Ֆեյսբուք, Թվիթեր, Ինստագրամ սոցիալական ցանցերում:

Շահնուրի նահանջող հերոսների դեպքում երկու ազգային ինքնության մշակութային որակների բախումը հանգուցալուծվում է հայկականի պարտությամբ: Ազգային բնութագրից նահանջն ու ձուլումը օտար ինքնությանը դառնում են նաև սոցիալական լինելության նախահանգամանք պոլսահայ երիտասարդների համար. «Ժամանակը զանոնք բաժնեց իրարմե: Աղետին առաջին ամիսները անսահման սերով ու գորովով իրարու սեղմված, իրարու կապված էին Փարիզի մայթերը նետված երիտասարդները, մեծ մասամբ տակավին մանուկ: Ծննդավայրե, ընտանիքե, ապագայե խլված հայ տղաքը այդ օրերուն մեկզմեկու կառչեցան ուղեկորույս, մինչ որ ատեն անցավ. . . Դժվարին կենսաշահությունը, կյանքի պահանջքները, մանավանդ սա եռուզեռ կյանքը փչեցին այդ տկար խումբին վրա, ու ցրվեցին. փետուրներ թռան: Մարիանն իր անդիմադրելի հմայքով մոտեցավ անոնցմե յուրաքանչյուրին և քաշելով տարավ հոն, տարավ հոս: Հոն թե հոս, հաղթանակը միշտ նույնը մնաց. միշտ նույն Նենեթը. Մանոններու, Նինոններու, Նանաներու թոռնուհին: Ոմանք ամուսնացան, շատերը ապրեցան բարեկամուհիներով, պարպվեցավ հայոց եկեղեցին, մեկնող նամակներուն թիվը նվազեցավ, և, անշուշտ, հեռուն մայրեր լացին» (130):

Սոցիալական խնդիրներով հանդերձ՝ սիրո զգացմունքն է Շահնուրի վեպում դառնում ինքնության նահանջի գլխավոր գործոն: Պիեր-Նենեթ խորապես մարդկային սիրո ողբերգականության մեջ Շահնուրը դնում է նախևառաջ ազգային խնդիր. Պետրոսը Պիեր է դառնում Նենեթի հետ ունեցած հարաբերությունների արդյունքում: Այդ սերը, ազգային ինքնության ուրացումից բացի, Պիերին պատճառում է տառապանքի և, նվաստացման բազմաթիվ պահեր, և, այնուամենայնիվ, հաղթում է: Պիերը ներում է Նենեթի անբարո անցյալի բոլոր դրսևորումները, ներում է արևելցու սիրով և քրիստոնյա հոգեբանությամբ: Շահնուրը Պետրոս-Պիերի ինքնամաքառումների հոգեբանական պատկերներում հասնում է բացառիկ նրբության, բացահայտում սիրո հոգևոր տրամադրությունների ներքին հակասականությունը, սիրո

---

[1] *Նույն տեղում, էջ 40:*

[2] ***Ե. Ազատյան**, Գրական գեղարուեստական սեւեռումներ, Լա Վեռն, 1988, էջ 108:*

հաղթանակից ու ազգային ինքնության պարտությունից ծնված հոգեբանական դրաման։

Պետրոսի շարունակական հոգևոր ինքնամաքառումները դարձնում են նրան հոգեբանորեն երկփեղկված կերպար, որի մեջ պայքարում են իմացական անհատն ու ֆիզիկական անձը, որն ինչքան էլ հոգով ուզում է բարձրանալ միջավայրի հոսանքից, մարմնով գամված է այդ միջավայրին։ Ինքնակեղեքման պահերը երբեմն հասնում են ինքնաժխտումի. Պիերն ատում է իրեն, որ չի կարողանում ազատագրվել Նենեթից, որ Նենեթի տեսքով այլասերումը սպառնում է իրեն, որ մարմինների ձուլումը տանում է հոգիների ձուլման։ Նենեթի հանդեպ ունեցած անդիմադրելի զգացմունքն աննկատ է դարձնում ֆրանսուհի փոքրիկ Լիզի հայտնությունը, որի բարոյական կերպարն ու անձնուրաց սերը Պետրոսին թերևս կարող էին ետ պահել անկումների ճանապարհից, բայց նա ճակատագրականորեն սիրում է միայն Նենեթին, չնայած հոգեկան ընդվզման պահերին սթափության ներքին ճիգեր է գործադրում, փորձում Նենեթի կերպարի ճանաչողությամբ հասնել հոգեկան խզման ու անտարբերության։ Նենեթի անբարո արարքների, որ նա իր մերկ լուսանկարներով մասնակցել է Լեսքյուռի բիզնեսին և նրա սիրուհին է, որ պատահական կապեր է ունեցել ու լքել երեխային, որ շարունակում է կապված մնալ Լեսքյուռի հետ և այլն, գիտակցական բարձր մակարդակի հոգեբանական պահերը ևս անհետևանք են մնում ետդարձի առումով։ Պետրոսի իմացականությունը նրան չի դարձնում գաղափարի հերոս, նրան պակասում է կամքի ուժը։

Նահանջի ճանապարհն ուղեկցվում է հոգեբանական մի շարք անկումներով։ Նախ՝ Պիերը կորցնում է ծնողների հետ հոգեկան կապը, մոր ուղարկած նամակը բացում է ուշացած, երբ պատահաբար նշմարում է սեղանի վրա։ Նահանջի գիտակցական մակարդակն ու ընկճումի հոգեբանական վայրկյանը Շահնուրը չի դարձնում ինքնության փրկության ելք։ «Եվ հակառակ անոր, որ հեկեկանքը առաջին բառերեն իսկ կուրծքը ուռեցուց. . .» (119), Պիերը անգամ մինչև վերջ չի ընթերցում նամակը։ Հայրենի տան հիշատակների վերարթնացումի կանչն անարձագանք է մնում։ Հայրենական հիշողությունները այլևս խորթ են հերոսի համար, քաղցր հուզումներ չի պարգևում նրան նաև ծննդավայրից ուղարկված «չեվիրմեի անուշը», իսկ մոր կարած բաղնիքի քիսայում, որով Պիերը պիտի ինքնամաքրվեր հոգևոր ապականությունից ու այլասիրությունից, ամփոփվում է Նենեթի խարտյաշ մազերի մի փունջ։ Այդպես իմաստազրկվում են հայրենի մասունքները՝ դառնալով առօրեական իրեր։ Խորհրդանշական այս պատկերը անդրադարձնում է Պետրոսի ինքնության կորստի անշրջանցելի իրողությունը, որից հետո հնչում է նահանջի ահազանգը։ «Եսի այս երկու մասերը,- նկատում է Գ. Շահինյանը,- մատնանշուած են բացայայտօրէն. մէկ կէսը արիւնի կողմն է, այսինքն՝ նախնական ինքնութեանը,

միւսը՝ փոխառեալ ինքնութեանը: Երկուքն ալ թաղուած են խաւարին մէջ… Նախնական ինքնութեան խաւարը թանձր է. անո՛ր համար, թերեւս, որ մութ ճակատագիր մը կը յատկանշէ եւ կը կապուի խորութեան եւ հնութեան գաղափարի մը: Երկրորդ ինքնութեան խաւարը թեթեւ է, աւելի նօսր, որովհետեւ, հաւանօրէն, զերծ է դժբախտութեան բեռէն» [1]:

Թվում է՝ Նենեթի հանդեպ ունեցած Պիերի զգացմունքի մեջ իշխում են մարմնական կիրքը, ֆիզիկական կապվածությունը, արտաքին հմայքը, բայց ոչ միայն. Շահնուրը Պիեր-Նենեթ հարաբերությունների մեջ ընդգծում է և՛ մարմինը, և՛ հոգին: Պիերի զգացմունքը չի վերափոխվում, երբ Նենեթը հաշմանդամ է, չունի նախկին արտաքին վայելչությունը: Ավտովթարի հետևանքով Նենեթի թևը կտրել են,այտի վրա «լայն ու խորունկ պատռվածք մը կար, որ կիջներ մինչև վիզին» (177), այլևս նախկին հմայքն ու ազդեցությունը չունի, «բարեկամները» մերժել են նրան, և Պիերի սերը Շահնուրը դարձնում է խորտակվող հոգու հոգեբանական հենարան:

Վեպում Շահնուրը հոգեբանորեն նախապատրաստում է Պիերի քրիստոնյա ներման ու Նենեթին վերստին ընդունելու հոգեբանական պահը: Նենեթի հեռանալուց հետո Պիերը որոնում է ինքնավերագտնման ուղիներ, փորձում գտնել գործունեության դաշտ, առօրյա «պզտիկություններեն» վեր ուղի՝ մոռանալու հոգու ցավն ու ինքնությունը կեղեքող սիրո հիշողությունը: Բայց ինքավերագտնումի բոլոր ճանապարհները մտովի վերափակվում են նրա դեմ: Պետրոսը հրաժարվում է ազգային գործին նվիրվելու ճանապարհից՝ անխուսափելի համարելով ձուլումը, գտնելով, որ «դարման չկա ատոր» (167), իրեն չի վերագտնում նաև կուսակցական գործունեության մեջ, և այս հանգամանքը Շահնուրը հիմնավորում է օբյեկտիվ պատճառներով՝ նկատելով, որ «Իր վիճակը ունեցող երիտասարդ մը շատ ավելի սիրով ու կամեցողությամբ կնետվի անծանոթին մեջ, քան ծանոթ ուղին: Շատ ավելի հրճվանքով կերթա նույնիսկ երբեմն իր խառնվածքին, իր արյունին հակոտնյա գործունեության մը, որ նոր է, քան թե ճանապարհի մը, որուն կրցեր է ծանոթանալ գիտակցության գալեն ի վեր, որուն վրա շատ անգամ քայլ առ քայլ հետևեր է ուրիշներու հառաջխաղացումին, և ուր կխորհի, թե ավելի տիղմ կա, քան ուրիշ բան» (168):

Ազգային ճանապարհի խարիսխ չեն դառնում նաև կրոնն ու գրականությունը, որովհետև Պիերը նախընտրում է կյանքը, քան կյանքի հանդեպ հայտնված բոլոր մտքերը: Պիերի ինքնավերագտնումի դեգերումները չեն հասցնում նրան ինքնափրկության ափ, իսկ մտային պատճառաբանությունները բացահայտում են ընդամենը իդեալին նվիրվելու անվճռականությունը. «Վերասլաց շարժումով մըն է որ պէտք է ստեղծուի եսի միութիւնը՝ հարկադրաբար վերէն վար բաժնող շարժումին,- գտնում է Գ. Շահինյանը:- Միութիւնը մարդու վերին վայրերուն մէջ կրնայ իրագործիլ եւ

[1] ***Գ. Շահինյան****, Շահան Շահնուր: Աքսոր եւ արուեստ, էջ 41:*

յարատեւ ճիգ կը պահանջէ: Ճիգ, որուն արդիւնքը կասկածելի է, քանի բանաստեղծը կ՝ ըսէ թէ ուր եւ ինչպէս պէտք է տեղի ունենայ գործողութիւնը, բայց չի յայտնէր անոր ելքը: Միւս կողմէ, շեշտը կը դնէ կրկնակի կործանումին վրայ, փոխանակ՝ միացեալ ու նոր եսի մը կառուցումին» [1]: Կենտրոնական հերոսի այս վարքագիծը Շահնուրին վերագրելով՝ նահանջականների ընդդիմախոսները քննադատում էին նրան իդեալ չունենալու համար, իսկ Վ. Շուշանյանը որակեց Շահնուրին «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը»:

Այսպես՝ Պիերի դատողությունների միջոցով Շահնուրը թերագնահատում է կուսակցությունների, կրոնի ու ազգային գրականության դերը նահանջի հիմնախնդրում: Ազգային արժեքներրի վերագնահատության այս միտումը ավելի է ընդգծվում վեպի գաղափարական հերոսի՝ Սուրենի դատողությունների միջոցով:

Փարիզյան միջավայրից հեռացումը՝ որպես հորձանքից մեկուսանալու եղանակ, վերստին ինքնափրկություն չի դառնում և՛ ազգային, և՛ մարդկային առումով, բայց Շահնուրի շեշտադրումներն այստեղ ավելի շատ մարդկային համատեքստում են: Փարիզից հեռու էլ Նենեթի անցյալը պիտի հետապնդի Պիերին, շրջապատի կողմից իր անբարո անցյալին ուղղված ակնարկները պիտի խոցեն նաև վերափոխված Նենեթին, թեև Նենեթի հոգեկան անկումային վիճակը Շահնուրը առավելապես հիմնավորում է ինքնավստահության կորուստով և փոխադարձ սիրո կասկածամտությամբ: Ինչ-որ չափով թերևս հարցական է դառնում Պիերի պահվածքը, երբ հոգեբանորեն չի հակազդում Նենեթի հոգեվիճակին՝ թողնելով, որ նա ինքնուրույն վերագտնի նախկին դյուրակեցությունը: Նենեթին սիրելով հանդերձ, Պիերն ընթացք է տալիս ֆրանսուհի Գաբիի գայթակղության փորձերին, չի փորձում տարհամոզել Նենեթին: Պիեր-Գաբի հարաբերությունների միջոցով Շահնուրը մի կողմից վերստուգում է Պիերի զգացմունքը Նենեթի հանդեպ, մյուս կողմից՝ հաստատում Պիերի հոգևոր շրջադարձը փարիզյան նախկին միջավայրից: Գաբին հրաժեշտից առաջ Պիերին խնդրում է լուսանկարել իրեն. Գաբին ընդունել է ճիշտ այն դիրքը՝ ամբողջությամբ մերկ, ինչպես Նենեթը առաջին անգամ, ու Պիերը մերժում է ցանկահարույց ակնարկը. « -Կաղաչեմ, օրիո՛րդ, հագվեցեք, և անմիջապես: Ասիկա իմ մասնագիտությունս չէ բնավ»(197): Իսկ ֆիզիկապես ու հոգեպես վիրավոր Նենեթն այդ վիճակում անգամ շարունակում է կտրել Պիերի հիշողության թելերն իր անցյալի հետ, պատռում է նրան հասցեագրված նամակը, որովհետև «Ամեն անգամուն արտաքին պատճառներ կուգան կոր մեր հանգիստը խռովել» (192), և որովհետև Պիերն էր նաև այդպես կամեցել. «Իմ հոգսերը ինծի կբավեն» (191):

---

[1] *Նույն տեղում, էջ 41:*

Պիեր-Նենեթ սիրո պատմության ավարտը Նենեթի ինքնասպանությունն է և Պետրոսի նահանջի վերջին սահմանագիծը, որից այն կողմ ինքնության կորուստն է:

Նենեթի հոգեկան անկումներն ավելի են խորանում Պիերի՝ Փարիզ արձակուրդ մեկնելու հետ կապված: Հիվանդագին լարված հոգեվիճակների մեջ Պիերի սիրուն անվերջ կասկածող Նենեթը որոշում է հեռանալ՝ նրա երջանկությունը չխորտակելու համար: Նենեթի հրաժեշտի նամակը՝ սիրո և ինքնազոհության դրամատիկ խոստովանությամբ, հոգեբանական ինքնակեղեքման ու ինքնաքննության է դատապարտում Պիերին: Շահնուրը վերստին սիրո վարդապետության մեջ Պիերին հասցնում է քրիստոնեական ինքնամոռացման: Պիերի հոգևոր դարձի աստվածը Նենեթն է, որին ուղղված աղոթքը «Նարեկի»՝ ի խորոց սրտի սրբագրված խոսքն է. «Ընկա՛լ քաղցրությամբ, Նենեթդ իմ հզոր, զդառնացողիս զաղաչանս. մատի՛ր գթությամբ առ պատկառյալս դիմոք. փարատյա՛ ամենապարգև զամոթական տխրությանս: Տյառնագրյա՛ քո անվամբը զլուսանցուց երդ հարկիս, պարփակյա՛ քո ձեռամբը զառաստաղ տաճարիս. զծագրյաքո արյամբդ զմուտ սեմոց սենեկիս...» (216):

Վերադարձին Պիերը Նենեթին գտնում է մահամերձ: Սիրո մեջ դժբախտ զգացող կինը հույս ուներ, որ որդին՝ Բիբին, կներեր իրեն, դեռ մտածում էր, որ կարելի էր որդուն նվիրվելով խաղաղություն գտնել, բայց Բիբիի հոր վերաբերմունքը խորտակում է նրա կյանքի վերջին հենարանը, վերջնականապես կործանում հոգեբանորեն: Նենեթը ինքնասպանություն է գործում նախկին սիրեցյալի բարոյական հարվածից: Հանգամանքների անկախատեսելի բացահայտումից ցնցված՝ հոգեկան շփոթի մեջ Պիերը լսում է Նենեթի վերջին, կցկտուր թախանձանքը. «Պիերո՛, ազատե զիս, ազատե զիս... այս անգամ, հավատա...հիմա բժիշկը ըսավ, հավատա, ես...իրապես հղի...» (220):

Նենեթի մահը ևս Պիերի համար դարձակետ չի դառնում, կործանվում է ինքնության վերագտնման վերջին հույսը: Պիերը ջանում է հիշողության խորքից արտաբերել «Հայր մեր»-ի հայերենը, բայց չի կարողանում. «-Չեմ հիշեր կոր, Կոստան, մեղքցիր ինձի, ես իմ «Հայր մերս» չեմ հիշեր կոր...»: Կոստանը հուշում է ֆրանսերենը, և նա կրկնում է:

Այսպես, Շահնուրը ցույց է տալիս, որ Պետրոսի երկփեղկվածության և ինքնության նահանջի խնդիրը Նենեթի հետ ունեցած պատճառական կապն է, և ճշգրիտ է գրաքննադատ Գ. Շահինյանի այն դիտարկումը, որ «Պետրոսը ներքին հարցերով տարուող անձն է, մինչ Փիէռը՝ Ժաննի եւ ուրիշ օտար կիներու սիրականը... Յատկանշական է որ Շահնուր ալ Փիէռ կը կոչէ իր հերոսը, ամէն անգամ որ կը խօսի Ժաննի հետ անոր կապի մասին կամ կը նկարագրէ երկուքի սիրաբանութիւնը: Հերոսի մենութեան մասին խօսելու ատէն միայն, կամ հայրենակիցներու հետ ունեցած անոր յարաբերութեան, կը վերադառնայ

հայկական անունին» [1]: Ինքնության կորստի ազգային դրամային համընթաց Շահնուրը ներկայացնում է նաև սիրո կորստի համամարդկային դրաման՝ Նենեթի ինքնասպանության պահը հասունացնելով հոգեբանական տրամադրությունների հետևողական զարգացմամբ:

Պիերի և Սուրենի դատողությունների միջոցով Շահնուրը վեպում մեկնաբանում է ազգային հիմնախնդիրների պատմահոգեբանական նախադրյալները: Փաստորեն, կարելի է ասել, Պիերն ու Սուրենը Շահնուրի ներքին ես-երն են, իմացական ու գաղափարական կերպավորումները, ներքին վերաքննության դրսևորումները, ներքին բանավեճերը ազգային պատմաքաղաքական ճանապարհի հետ: Այս առումով Շահնուրի խորհրդածությունները մերթ առնչակցվում են Չարենցի «անանցյալ անցյալ» պատմափիլիսոփայության, մերթ՝ Մահարու ողբերգաերգիծական պատմահայեցողության հետ:

Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի նման Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը ևս արտասովոր գաղափարների տեսանկյունից դարձավ բուռն քննադատության թիրախ՝ հոգեբանական անհաշտություն առաջ բերելով երիտասարդ գրողի և գրական հանրության միջև, որի արդյունքում Շահնուրը հեռացավ հայ գրականությունից՝ այդուհետ հանդես գալով ֆրանսագիր գրականությամբ. «Որքան ալ տարօրինակ թվի ազգի մը տկարության պատճառները բացատրելու այս եղանակս,- գրում է Շահնուրը,- պետք չէ ուրանալ հոն ծածկված ճշմարտությունը: Նարեկացին սկզբնապատճառ նկատվի թե ոչ, իրողություն է, որ շատ մը բաներ կուգան լիովին կարդարացնեն իմ հախուռն մտածումս, որ իր ազգասերի տառապանքին մեջ կուզե անպայման մեկը նետել ամբաստանյալի աթոռին վրա» (155):

Շահնուրի ծայրահեղական դատողությունները Նարեկացու վերաբերյալ քրիստոնեության անդիմադիր ոգու ժխտումին միտված, ազգային կրավորական հոգեբանությունը բեկելուն ուղղված հիմնագաղափարներ են, որոնք դառնում են նահանջի գրական շարժման սկզբունքային ուղղվածություններից: Շահնուրի ծայրահեղական մտայնությունները հոգեբանորեն պայմանավորված են ազգային ողբերգության ուժեղ վերապրումներով և ազգային կորուստների խոր գիտակցումով. «Հայերը գիրք մը ունին, անոնց ամենագեշ, զզվելի,ամենասխալ, վատառողջ և ամենեն ավելի անբարոյական գիրքն է ան Նարեկը: Կամբաստանեմ զայն իբրև ամենամեծ թշնամին հայության, կամբաստանեմ այն թշվառականը, որ անոր տողերը թքավ... Հայերը զայն ընդունեցին, յուրացուցին, ընդգրկեցին: Ոչ մեկ սերունդ չխորհեցավ զայն ջնջել, որովհետև անոր լեզվական և բանաստեղծական ինչ-ինչ հատկություններեն խաբվելով ծածկված թույնը չնշմարեց: Ընդհակառակը, փոխանցեցին որդիե որդի, արյունե արյուն, ու ան եկավ մինչև մեզ... Ահա թե ինչու պարտվածներ ենք:

[1] *Նույն տեղում, էջ 96-97:*

Պարտվածներ ենք, որովհետև այն վանականին հաշմանդամ հոգիին պես արհամարհեցինք և անգիտացանք գոյությունը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականության. - չկռվեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնեական վարդապետության անոր սխալ ու թերի մեկնությունը ընդունելով եղանք անմտորեն կրավորական, համակերպվող, աղերսարկու, անգիտակից. . .» (154-155):

Ազգային գոյության անկումների ճանապարհին Շահնուրը ընդգծում է հավաքական նպատակի և գործնական ռազմավարության բացակայության հիմնախնդիրը: Ճշմարտության բացահայտումը, որքան էլ այն դժվարընդունելի լինի, դառնում է Շահնուրի վեպի սկզբունքներից առանցքայինը: Շահնուրի ժխտողական հայեցակետերը, սակայն, միանշանակ չեն տարածվում ազգային պատմության ամբողջ ճանապարհի վրա: Ըստ Շահնուրի՝ պատմության ընթացքում մենք ունեցել ենք նաև փոքրաթիվ բացառություններ, բայց նարեկյան ոգին, ընդհանուր առմամբ, տիրական է եղել ազգային կյանքում:

Շահնուրի հոռետեսությունը հավասարապես տարածվում է նաև ներկա սերունդների վրա, որոնք, ըստ նրա, նախնիների նման անզաղափար են, անկիրք,անուժ. «Հավատքը չունի այն. հավատքը՝ կրքին կարմիր մոլեգնությամբը գրված. հավատքը, որ մեծ հոգիներ կկերտե. . . Այս հայը բան մը իր իտեալը չըներ և չի պայքարիր անոր համար. . . Խելացի, ուշիմ և գործունյա ցեղի մը զավակ ըլլալուն հակառակ այդ հատկությունները ի սպաս կդնե միայն իր կաշիին շահերուն: Հավաքականության հանդեպ պահած իր անտարբերությունը թանձր ու անթափանց կեղևի մը պես կուգա իր հոգին կչեզոքացնե, կբթացնե» (156):

«Խելացի, ուշիմ և գործունյա ցեղին» ինքնըստինքյան դիմադարձելով քրիստոնյա ազգի հոգևոր ու մարմնական տկարությունները՝ Շահնուրը հարում է 20-րդ դարասկզբին արևմտահայ գրական կյանքում սկզբնավորված հեթանոսական գրական շարժման գաղափարաբանությանը:Շարունակելով ժամանակակից սերնդի ոգու տեսական քննությունները՝ Շահնուրը գրում է, թե «ամբողջ հայությունը հիմնովին սարսող դեպքերե վերջ երկու գիծով միայն կտարբերի նախորդ սերունդներեն: Ավելի քիչ կը հավատա անկախության և նվազ կատե թուրքը: Նվազ կատե, որովհետև կճանչնա անոր առաջադիմութունը». . .(156):

Շահնուրը քննադատում է ներկա հայ սերնդի և՛ ազգային, և՛ բարոյական ըմբռնումները, և այդ քննադատությունը բխում է ազգային տեսլականի հարցականներից, մարտահրավերներին դիմակայելու ճիշտ ուղեգծերի սահմանման անհրաժեշտությունից: Բոլոր իմաստություններն ու վարդապետությունները յուրացրած այդ սերունդը թյուր ըմբռնում ունի նաև հայրենիքի հանդեպ. «Գիտե, թե հայրենիքը ներկա օրերու միջազգայնական գաղափարներուն առջև գեշ արգելք մըն է, իսկ իր հայրենիքը,- նկատում է Շահնուրը,- գորդյան հանգույց մը անլուծելի» (157):

Ոգու տեսության իր դատողություններում Շահնուրը կողք կողքի է դնում ազգային և մարդկային հոգևոր արժեքները. մեկի անկումը ենթադրում է նաև մյուսի անկում: Ներկա սերնդի աշխարհայեցողության մեջ հարաբերական են բարու և չարի, գեղեցիկի և տգեղի, բարոյականի և անբարոյականի ըմբռնումները: Սերը հոգեբանորեն ընկալվում է փորձանք, կինը՝ դրամ, դրամը՝ ամեն ինչ: Օտարամոլությունը, ազգային արժեքների հանդեպ թերահավատությունը, եսակենտրոնությունը, ըստ Շահնուրի, ժամանակակից սերնդի հոգեբանության տիրական հատկություններն են: Ինքնատեսությամբ վեր հանելով ազգային ոգու տկարությունները՝ Շահնուրը միմիայն միտված է բուժելու դրանք, որովհետև պատմական պահը, նրա համոզմամբ, ավելի ճակատագրական է, ավելի «աններող», «ահեղ», «անդիմադրելի»: Շահնուրի համոզմամբ՝ ինքնության կորուստի աղետը ավելի զորեղ է, քան կռիվը կամ ճակատամարտը, որոնցից «ազգ մը դուրս կուգա պարտված կամ հաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կուգա: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտույտ տվող զառիթափին վրա սա նահանջը կջնջե, կձուլե, կանհետացնե ամեն բան. . .

Կնահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռնում բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ» (158):

Շահնուրի ողբերգական տագնապը ոչ միայն հայության ներկայի, այլև առավելապես ապագայի համար է, որովհետև ուրացող, սպիտակ ջարդին զոհ դարձող սերունդն իր հետ սպանում է նաև ապագա հայ սերնդին. «Իսկ մե՛նք, կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա, իբրև վերջին փրկագին մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ և գործով, կամա և ակամա, գիտութամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին» (158):

Շահնուրի այս գաղափարները մարմնավորվում են վիպական գործողությունների ընթացքում: Այսպես, Հրաչի որդին կրում է ֆրանսիացի պապի անունը՝ Ռընե, ֆրանսուհի մոր մշակութային դաստիարակությունը: Հրաչը չի գիտակցում ֆրանսուհի Սյուզանի բարոյատիպը. «Հավատա՛, որ այս անգամվանը բոնիշ չէ, ընդհակառակն, անուշիկ, զմայլելի, պատվական պուպրիկ մը. և շատ շնորհքով ընտանիքի աղջիկ: Զավակն ալ ես ուզեցի, որ ունենանք, որպեսզի իր ծնողքը մեր ամուսնությանը հավանի: Հավատա՛, Պետրոս, բնավ ան քու կարծած թեթևսոլիկներեդ չէ, շատ դժվարմատչելի. ամիսներով ետևեն եմ վազել, որպեսզի զինքը համոզեմ: Բայց հիմա ա՛լ երջանի՛կ եմ, երջանի՛կ»(199): Քիչ հետո Պետրոսը պիտի սառը ցնցում ապրի՝ ճանաչելով Սյուզանին՝ «քանատացիին ստերլիններուն» նախկին սիրուհուն, «որ նույնիսկ

անգամ մը իր հրավերն ալ չէր մերժած ու եկած իր սենյակ, թող տալով, որ Պետրոս ուզածին պես. . .» (201)։ Հրաչի խառնվածքին հակոտնյա, հաշվենկատ, սառնարյուն, խորամանկ Սյուզանը սովորական կեցվածքով ու ինքնավստահությամբ պիտի դիմավորի Պետրոսին և ժպտալով կանխի ճշմարտության բացահայտումը. «-Վստահ էի, որ բարեկամդ զիս պիտի ճանչնա. քանի մը անգամներ իր պանդոկին սանդուղներուն վրա հանդիպած ենք իրարու. . .» (200)։ Եվ Հրաչի ու Սյուզանի պսակադրությանը ներկա Պետրոսը, իմացական մակարդակում զգալով ուծացման դրաման, իր սրտահույզ ճառը նվիրում է «դժբախտ անձերու»՝ Հրաչի ծնողներին. «Ես այս գավաթը կխմեմ կենացը անոնց, զորս մոռցեր եք այս պահուս. անոնց, որոնց համար մեծագույն օր մը պիտի ըլլար այս օրը։ Ես կխմեմ յազմաջի Քրիսին, Աղավնի հանըմին կենացը։

Շատերը ցած ձայնով իրարու հարցուցին. «ո՞վ են, ո՞վ են»։

-Հայրիկս. . .մայրիկս. . .-կակազեց Հրաչը մեկեն հեկեկալով, մինչ Սյուզան թաշկինակը կերկարեր անոր արցունքներեն անգամ առնելու համար» (202-203)։

Այսպես՝ Սյուզանի թաշկինակը խնամքով սրբում է ողբերգության հետքերը, ջնջում հիշողության վերականգնման վերջին նշույլները։

Շահնուրը վեպում առաջադրում է հայության ինքնության ոչ միայն երկատված, այլև եռատված հիմնախնդիրը. հայը դառնում է պոլսահայ, այնուհետև՝ ֆրանսահայ։ Շահնուրի վեպի հերոսները՝ պոլսահայ երիտասարդները, հայության եռատված ինքնության կերպարներ են. նրանք երբևէ չէին տեսել իրենց հայրենիքը՝ Հայաստանը։ Փարիզը Հայաստանին չի փոխարինում նրանց կյանքում, այլ՝ ընդամենը Պոլսին, ծննդավայրը նրանց համար սոսկ տարածք է, հայրենիքի հանդեպ հավաքական պատկերացում չունեն, ազգային արժեհամակարգն արդեն խարխլված է նրանց մեջ մինչև ֆրանսիացի դառնալը։ Ինքնությունների ու մշակույթների բախման հանգուցակետերում տեղի են ունենում կորուստներ, աստիճանաբար ուրանալով ինքնությունը, օտար մշակույթի հորձանքի մեջ ներառվելով՝ ֆրանսահայը դառնում ֆրանսիացի, և այսպես ամենուրեք։ Իսլամական երկրներում կրոնի տարբերությունը ներքուստ խթան է դառնում, որ հայությունը զգոն լինի սպիտակ ջարդի հանդեպ, մինչդեռ քրիստոնյա երկրներում գրեթե առանց դիմադրության կուլ է գնում ձուլման հոսանքին։

Ահա այս երկատված ու եռատված ինքության հարցադրումներով Շահնուրը քննադատական հայացք է ուղղում անցյալին, նախնիների ոչնչատեսիլ քաղաքականությանը, թագավորների անիմաստասեր վարքին։ Ազգային գոյության ճանապարհին միասնական գաղափարաբանության և ապագայատեսիլ ռազմավարության բացակայության խնդիրը Շահնուրի վեպում դառնում է բոլոր ողբերգությունների պատմաքաղաքական հիմքը. «Հավաքական ճիգին տեղ դրել ենք հայդուկներ- մեր բոլոր վանքերը ապացույց։

Աղիքներու ճիչին տեղ դրեր ենք արցունքներ-մեր բոլոր բանաստեղծները ապացույց...

Գաղափարականին տեղ դրեր ենք կաղապարներ- մեր բոլոր գրքերը ապացույց։ Պայքարին տեղ դրեր ենք կռվազանություն- մեր բոլոր կուսակցությունները ապացույց»(135)։

Շահնուրի գաղափարակիր հերոսը՝ Սուրենը, մատնացույց է անում ոչ միայն մեր քաղաքական պատմության բացթողումները, այլև հոգևոր կյանքի անկատարությունը։ Սուրենի դատողությունները երբեմն հասնում են ծայրահեղության, հոռետեսական մտահայեցողության, բայց դա ունի իր կենսահոգեբանական նախադրյալները։ Նահանջի ողբերգության հոգեբանական դրսևորումները Շահնուրի մեջ բևեռացված էին ծայրահեղ աստիճանի. «Խոցված առյուծի տառապանքը ապրեցավ այդ գրողը, իր գրիչը թաթախեց մեր ժողովրդին տառապանքին մեջ ու գրեց, գրեց անիծելով, բայց ոչ ուրանալով, ինչպես ոմանք հետևցուցին, գրեց՝ արյունելով իր և ուրիշներուն հոգին, մտածելով, թե այդ է ձևը տառապանքեն թմրած հոգիները արթնացնելու... - նկատում է գրաքննադատ Թ. Թորանյանը,- Շահնուր անդադար կմտածե իր ժողովուրդին մասին, գրողը ուր ալ կգտնվի, ինչ պատմություններու տակ ալ ըլլա, չի խզվիր իր ժողովուրդեն, իր ցավի մեջ ալ չի մոռանար իր ժողովուրդը»[1]։

Ազգային կյանքի հիմնախնդիրները, Շահնուրի համոզմամբ, նախևառաջ անկախ պետականություն չունենալու հետևանք են։ Ազգային գոյության հարցում Շահնուրը պատմականորեն կարևորում է պետականության, լեզվի, ուժեղ կրոնի, ամուր միաբանությամբ ստեղծված ընտանիքի երաշխիքները։ Պետականությունից ու սեփական հողից զուրկ սփյուռքահայությունը կարող է գոյատևել լեզվով, ազգային մշակույթով, «աստվածային կիրքով» միակցված հայեցի ընտանիքով։ Բայց նահանջում է լեզուն, նահանջում են բարքերը, խառնածին ամուսնությունները հարվածում են ազգային ինքնության պահպանման հիմնասյուներին. դրա համար է, որ Շահնուրն այնքան սուր է հնչեցնում տագնապի կոչնակները, հոգեբույժի պես վեր հանում ազգային հոգեբանության չսպիացած վերքերն ու շարունակվող խնդիրները՝ ինքնաճանաչողության հասնելու և իրական վիճակից վեր բարձրանալու ձգտումով.«Կը պատահի որ մերժողական կեցուածք որդեգրէ հայկական իրականութեան հանդէպ, բայց չի կրնար կտրուիլ անկէ» [2],- նկատում է Գ. Շահինյանը :

Հայ ստեղծագործ ու մտավոր ներուժի վերաբերյալ Շահնուրի գաղափարական հերոսի դատողությունները ուղղված են ազգային հավաքական մշակույթի գաղափարին և հեռու են հայկական մշակութային ժառանգության ժխտողական միտվածությունից, ինչպես հակված են քննադատներից ոմանք.

---

[1] *Թ. Թորանյան, Վերստին կարդալով Շահան Շահնուրը, 1971, Հալէպ, էջ 11, 52:*

[2] *Գ. Շահինյան, Շահան Շահնուր: Աքսոր եւ արուեստ, էջ 52:*

«Հայը ունի լավ նկարիչներ, բայց ոչ՛ նկարչություն. հայը ունի լավ դերասաններ, բայց ո՛չ թատերգություն. հոգնիլ չգիտցող ճամփորդներ՝ բնա՛վ նավապետ. հայը ունի զմայլելի բանաստեղծներ, բայց ո՛չ գրականություն. աստվածներ՝ ո՛չ դիցաբանություն. խնկելի հեղափոխականներ, բայց ոչ հեղափոխություն. հայը ունեցած է ազատություններ, երբեք՝ անկախություն» (133)։

Սփյուռքահայության ազգային ինքնության պահպանման անհուսալիությունը Շահնուրի գաղափարական հերոսին ինչ-որ տեղ հասցնում է ինքնաժխտումի չափազանց սուր դատողությունների, որոնք բացահայտում են նրա հոգևոր պատմության տրամադրությունները՝ պայմանավորված նախնառաջ սպիտակ ջարդի սպառնալիքով. «Հայը ամուլ է, անծին, անպտուղ։ Հայը դատարկ է, փուճ, ունայն, սնոտի» (133)։

Շահնուրի հերոսի այս մռայլ դատողությունները տարածվում են ոչ միայն ներկա,այլև անցյալ սերունդների վրա։ Հայության հոգեփոխության խնդիրը, ըստ Շահնուրի,փոխանցվել է սերնդեսերունդ՝ այդ համատեքստում խնդիրը դիտարկելով որպեսազգային ներկա իրավիճակի նախահանգամանք. «Որքան որ մտածումս ետև տանիմ, հայերը կտեսնեմ միշտ այնպես, ինչպես որ են այսօր։ Պզտիկ, գաճաճ, տխեղծ։ Յուրաքանչյուրը անդիմադրելի պաշտմունքը ունի ի՛ր կաշիին, ի՛ր մորթիին։ Եսամոլ, անձնասեր, անմիաբան, նպարավաճառ...» (136)։ Այսպիսի խորհրդածություններով ինքնակեղեքվող հերոսը բնական է, թերահավատ է ազգային ինքնության պահպանման ճանապարհի հանդեպ։ Այս է ողբերգությունը, և այդ ողբերգության կանխագիտակցումն է Շահնուրին մղում հոգեբանական սուր տագնապների, արմատական, անհաշտ մտայնությունների. «Պիտի այլասերինք ամենքս ալ, պիտի կորսվինք բոլորս ալ» (134)։ Ազգային հարցադրումների ու խորհրդածությունների բնույթով «Նահանջը առանց երգի» վեպը, հիրավի, ինչպես Շահնուրն է կոչել, «Պատկերազարդ հայոց պատմություն» է։

Ազգային ինքնության այլասերման շարժընթացում Շահնուրը առանձնացնում է նաև ընտանիքի խնդիրը։ Ավանդական ընտանիքի պատկերացումների սրբագրումից մինչև խառնածին ամուսնությամբ հայ ընտանիքի փլուզում և ապագա հայ սերնդի օտարացում. ահա հիմնական խնդիրները, որոնց առանցքում Շահնուրը տեսնում է նահանջի գլխավոր գործոնը։ Կորուստներից հետո հոգեբանորեն հավատը կորցրած, հայրենազրկված սփյուռքահայության ազգային ինքնության պահպանման գործում հայ ընտանիքը պիտի լինի խարիսխ, միչդեռ կործանման վտանգը սպառնում է նրան՝ հարցականի տակ դնելով ապագայի բոլոր հույսերը. «Ուրիշներու պես մենք ալ մեր կրոնքը ու հավատը թաղեցինք պատերազմի ընթացքին։ Անկախության մը հույսը հալեցավ, կորսվեցավ հանձնված բերդաքաղաքին հետ։ Ու հիմա կհարվածի մեզ վեր բռնող մեծագույն և հիմնական սյունը, ընտանիքը։ Հայ աղջիկը մնաց հեռուն, մնաց լքված, ան, որ

անհրաժեշտ էր մեր արյունին, հակառակ իր տգեղության, իր չոր հպարտության և անմիջապես մայրանալու ու ծերանալու հակամիտության» (134)։

Հայ ընտանիքի փլուզման հարցում Շահնուրը տեսնում է նաև ներքին դրդապատճառներ. «Աստվածային կիրքին տեղ դրեր ենք հարսներ-մեր բոլոր արարիչները ապացույց»(135)։ Սիրո մշակութային և կենցաղավարական հակադրությամբ Շահնուրը հիմնավորում է հայ երիտասարդների հրապուրանքը օտար գեղեցկուհիների հանդեպ. «Այժմ հայուհին իր հիշողությանը կներկայանար միայն երկու հաստ սրունքով ու քիչ մը բեղով» (134)։

Այնուամենայնիվ, գաղափարական հերոս լինելով հանդերձ, Սուրենը ևս համալրում է նահանջողների շարքերը՝ իր առաջին գիրքը հրատարակելով ֆրանսերեն, և իմացական մակարդակում նահանջի ազգային դրաման վերապրող Պիերը հանդիմանում է նրան՝ հիշեցնելով.«- Գրածներդ ոչ մեկ հայու կրնան խոսիլ, որքան ատեն, որ անոնց մեջ «կարոտ» բառը չկա...Այո, մի՛ խնդար, որովհետև միայն այդ չէ, որ թերի է. դուն արդեն գիտես, բայց թող որ հիշեցնեմ, թե ֆրանսերենը գոյություն չունի նաև «մա՛յր» բառին, «հա՛յ» բառին, «աքսոր» բառին...Ֆրանսերենը չկա՛ մե՛ր «զաղթականին», մե՛ր «որբերին»...» (205)։

Շահնուրի վեպում բացառիկ հերոսը, որ չի նահանջում, Լոխումն է։ Լոխումի կերպարի մասին դատելիս Պիերը խոստովանում է, որ «ցավեր կան, որոնց չենք ուզեր անդրադառնալ. կփախչինք անոնցմե, որովհետև իրապես մեծ են»(165)։ Պետրոսը շատ խորն է ընկալում Լոխումի դրաման, Լոխումի պատմությունն ասես Պետրոսի իմացական ես-ի հաղթանակի հեռապատկերն է։ Լոխումը անհույս սիրահարված է ֆրանսուհի մարմնավաճառի, բայց չի նահանջում, հակառակ Պետրոսի, հիվանդագին լարումով պայքարում է ուծացումի և ձուլումի դեմ. «-Ի՞նչ, ի՞նչ,- կգոռար ան,- նորեն ֆրանսերե՞ն թերթ, նորեն ֆրանսիակա՞ն թատրոն. ատոնց հայերենը չկա՞։ Չպիտի՞ ըլլա, որ դուք սանկ մեյ մը ցնցվիք, գիտակցիք մեր վիճակին. չպիտի՞ ըլլա, որ կռվիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ... Մենք ալ հայրենիք մը ունինք. պետք է պատրաստ կենանք հոն երթալու։ Զբաղեցեք անով, պետք է, որ ճահիճները չորցնենք, պետք է, որ ջրանցքները բանանք...» (163)։

Ինչպե՞ս է լուծվում Լոխումի դիմադրության խնդիրը համընդհանուր ապամշակութայնացման մեջ։ Նա չի կորցնում ինքնությունը, բայց հոգեբանորեն զոհ է դառնում մաքառման ճանապարհին։Հայրենիք մեկնելու համար Լոխումը դիմում է ռուսական դեսպանատուն՝ անցագիր ստանալու. մերժում են։ Դիմում է թուրքական դեսպանատուն՝ ծննդավայր վերադառնալու, դարձյալ արգելում են։ Ազգային տագնապներից հյուծված՝ Լոխումը տրվում է թմրամոլության, հայտնվում կյանքի հատակում։ Հոգեբանորեն և ֆիզիկապես կործանվում է անհատը դիմադրության ճանապարհին, բայց չի ձուլվում միջավայրին, չի

խառնվում հոսանքին: Շահնուրը չի արդարացնում նաև Լոխումի կործանումը. «Ի՞նչ կարժենք մենք,- ասում է Պետրոսը,- երբ մեր ցավը մեղմելու համար այսպիսի միջոցներու պիտի դիմենք. ու՞ր կմնա մեր կորովը, մեր կամքը, մեր ուսումն ու դաստիարակությունը, երբ չպիտի կարենանք տառապագին օրերու դեմ դնել: Պետք է մաքառինք և երբեք չարհամարհենք ցավը,որովհետև ան է որ մեզ պիտի կռե, ճկե ու կազմե»(172): Թմրամոլության միջավայրում իրեն ամոքելու եկած Պետրոսը, Լոխումի անկումը տեսնելով, սթափվում է՝ հրաժարվելով այդ միջավայրից: Լոխումն ի վերջո մեռնում է՝ զառանցանքի մեջ կրկնելով՝ «չորցնենք ճահիճները, ջրանցքներ բանանք» (174):

Ի պատասխան վեպի դեմ սկսված քննադատական գրոհի՝ Շահնուրը գրում է, որ «մեծագույն փափագս այն է, որ այդ գիրքը հիննա և կորսնցնե գոյության ամեն իրավունք: Հեղինակի մը համար, որ ընկերային ախտ մը մատնանիշ ըրած է, ոչինչ այնքան բերկրալի է, որքան իր գրքին անհետացումը, իբրև ուղղակի հետևանք ախտին բժշկումին»:

Այս հայեցակետում է ամփոփվում նաև «Նահանջը առանց երգի» վեպի գրապատմական ու գաղափարական հսկայական արժեքն ու նշանակությունը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 82.09

Գրականագիտություն

Արթուր ՄԻՐԶՈՅԱՆ
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրանտ
էլ. հասցե՝ mirzoianarthur@gmail.com

ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԸ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԵՋ

1990-ական թվականների սկզբին՝ ԽՍՀՄ կազմաքանդմանը և Հայաստանի անկախացմանը զուգընթաց, հայ պոեզիայի մեջ ի հայտ են գալիս պոստմոդեռնիզմի արտահայտություններ: Հետագա տարիներին այն վերաճում է հետխորհրդային իրականության գերիշխող մշակութային տրամաբանության՝ արձագանքելով Արևմուտքում ավելի վաղ տեղի ունեցած համանման գործընթացներին: Սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել պոստմոդեռնիզմի դրսևորումները հայ պոեզիայի մեջ:

Բանալի բառեր՝ ժամանակակից պոեզիա, պոստմոդեռնիզմ, ուշ մոդեռնիզմ, ուշ կապիտալիզմ, նեոլիբերալիզմ, կոնցեպտուալիզմ, հիստերիկ վեհ, խոստովանական պոեզիա, պոստպոստմոդեռնիզմ, ավանգարդ:

А. Мирзоян

ПОСТМОДЕРНИЗМ В АРМЯНСКОЙ ПОЭЗИИ

В начале 1990-х годов, с распадом СССР и обретением Арменией независимости, в армянской поэзии появились выражения постмодернизма. В последующие годы постмодернизм превратился в доминирующую культурную логику постсоветской реальности, отражая аналогичные процессы, которые имели место ранее на Западе. В этой статье мы попытались представить проявления постмодернизма в армянской поэзии.

Ключевые слова: современная поэзия, постмодернизм, поздний модернизм, поздний капитализм, неолиберализм, концептуализм, истерическое возвышенное, исповедальная поэзия, пост-постмодернизм, авангард.

A. Mirzoyan

POSTMODERNISM IN ARMENIAN POETRY

In the early 1990s, with the collapse of the USSR and the independence of Armenia, expressions of postmodernism appeared in Armenian poetry. In the following years, postmodernism evolved into the dominant cultural logic of post-Soviet reality, reflecting similar processes that had taken place earlier in the West. In this article we have tried to present the manifestations of postmodernism in Armenian poetry.

Key words: contemporary poetry, postmodernism, late modernism, late capitalism, neoliberalism, conceptualism, hysterical sublime, confessional poetry, post-postmodernism, avant-garde.

Ժամանակակից արևմտյան հումանիտար միտքն ընդհանուր առմամբ միակարծիք է, որ 20-րդ դարի երկրորդ կեսերից սկսած մոդեռնիզմը՝ իբրև արևմտյան աշխարհի մշակութային գերիշխող վիճակ, ավարտվել է: Նկարագրելու համար բուն արդիականությանը հաջորդող շրջանը՝ որոշ տեսաբաններ խոսում են ուշ արդիականության (late modernity) մասին՝ շեշտադրելով 20-րդ դարասկզբի արդիականացման գործընթացների և ժամանակակից աշխարհի զարգացումների միջև շարունակականությունը[1]: Այս հեղինակներից շատերը «դասական» արդիականության և ուշ արդիականության մշակութային տրամաբանության տարբերությունը տեսնում են երկրորդի՝ արդիական ավանդույթին հղվելու հատկության մեջ՝ այս երևույթն անվանելով «ռեֆլեքսիվ արդիականություն»[2]: Տեսաբանների մյուս խումբը խոսում է հետարդիականության (postmodernity) մասին՝ ընդգծելով մշակութային խզումը նախորդող արդիական դարաշրջանի հետ[3]: Համապատասխանաբար՝ գրականագետների, արվեստի տեսաբանների և մշակութաբանների առաջ ծառանում է այս դարաշրջանի արվեստը հղացական մակարդակում վերլուծելու խնդիրը: Գրականագետ, փիլիսոփա Ֆ. Ջեյմիսոնը, անդրադառնալով այս խնդրին՝ գրում է. «Օրինակ, հաշվի առնենք այն զորեղ այլընտրանքային դիրքորոշումը, որ պոստմոդեռնիզմն ինքնին մոդեռնիզմի (եթե ոչ, իրոք, նույնիսկ ավելի հին ռոմանտիզմի) ընդամենը մի նոր փուլ է: Իրոք, կարելի է ընդունել, որ պոստմոդեռնիզմի հատկանիշները…. կարելի է ամբողջովին այս կամ այն չափով հայտնաբերել մոդեռնիզմի մեջ (ներառյալ այնպիսի զարմանալի նախորդների, ինչպիսիք են Գերտրուդ Սթայնը, Ռայմոնդ Ռասելը կամ Մարսել Դյուշանը, որոնք կարող են պարզապես համարվել պոստմոդեռնիստներ, avant la lettre): Այնուամենայնիվ, այն, ինչ հաշվի չի առնվել այս տեսակետի մեջ, հին մոդեռնիզմի սոցիալական[4] դիրքն է, կամ ավելի լավ՝ դրա կրքոտ մերժումը հին վիկտորիանական և հետվիկտորիական բուրժուազիայի կողմից, որոնց համար դրա ձևերն ու էթիկան ընդունվում են որպես տգեղ, անհարիր, անհասկանալի, սկանդալային, անբարոյական, ավերիչ և ընդհանրապես «հակահասարակական»: Այստեղ կվիճարկվի, որ մշակույթի ոլորտում տեղի ունեցած մուտացիան հնացած

---

[1] *Տե՛ս* ***Van den Herrewegen, E.****'Safety: Everybody's Concern, Everybody's Duty"? Questioning the Significance of 'Active Citizenship' and 'Social Cohesion' for People's Perception of Safety. Safety, Societal Problems and Citizens' Perceptions: New Empirical Data, Theories and Analyses. Antwerp, Belgium: Maklu. 2010, p. 88*

[2] ***Giddens A.****, Modernity and Self-identity: Self and Society in the Late Modern Age. Stanford, California: Stanford University Press, 1991*

[3] ***Jameson, F.****, Postmodernism, or The Cultural Logic of Late Capitalism, Durham, N.C., Duke University Press, 1991*

[4] *Նույն տեղում:*

է դարձրել նման վերաբերմունքը: Պիկասոն և Ջոյսը ոչ միայն այլևս տգեղ չեն. նրանք այժմ մեզ, ընդհանուր առմամբ, բավականին «ռեալիստական» են թվում, և սա, ընդհանուր առմամբ, մոդեռնիստական շարժման սրբադասման և ակադեմիական հաստատութենականացման արդյունք է, որը կարելի է տեսնել 1950-ականների վերջից»: Այսպիսով, մոդեռնիզմ-պոստմոդեռնիզմ բաժանումը մեծապես հիմնվում է արվեստի, մեր դեպքում՝ պոեզիայի ֆունկցիոնալ նշանակության վրա: Այս բաժանման համար մեկ այլ, ոչ պակաս կարևոր հիմք են հանդիսանում տնտեսական-քաղաքական փոփոխությունները: Մի շարք տնտեսագետներ, փիլիսոփաներ ու կապիտալիզմի պատմաբաններ՝ ներառյալ Կլաուս Օֆֆեն[1], Միշել Այյետան[2], Էռնեստ Մանդելը[3] և Հերբերտ Մարկուզեն[4], մատնանշում են ուշ կապիտալիզմը՝ իբրև 20-րդ դարի երկրորդ կեսից սկսվող՝ կապիտալիզմի նոր դարաշրջան, որը բնորոշվում է գլոբալիզացիայով և շուկայի աննախընթաց ընդլայնմամբ, և որը հաջորդում է արդյունաբերականացման դարաշրջանին:

Նախկին ԽՍՀՄ տարածքում, հետևապես, խորհրդային պլանային տնտեսությունից անցումը դեպի նեոլիբերալ, շուկայական համակարգ կարելի է համարել այն պատմական պահը, երբ խորհրդային մոդեռնիզմը սկսում է կորցնել իր ֆունկցիոնալ նշանակությունն այն իմաստով, որ նկարագրում է Ջեյմիսոնը: 80-ականների երկրորդ կեսերից հայ պոեզիայի մեջ ի հայտ եկած ինչ-ինչ գործընթացներ ի վերջո բերում են անկախության շրջանի ամենամեծ բանաստեղծական երևույթներից մեկի՝ անտիպոեզիայի ծննդին, որի գլխավոր դեմքերն էին Արմեն Շեկոյանն ու Վիոլետ Գրիգորյանը[5]: Հատկապես այս երկու բանաստեղծների ստեղծագործությունն է, կարծում ենք, լիարժեքորեն ցույց տալիս հայ պոեզիայի մեջ պոստմոդեռնիզմի դրսևորման ներքին առանձնահատկությունները դրա հաստատման շրջանում:

Ա. Շեկոյանը սկսած 1990 թ-ի «Թուղթ ու գիր» ժողովածուից մինչև 2003թ-ի «Երևան հյուրանոցը», հայ պոեզիայի մեջ բանաստեղծական կոնցեպտուալիզմի գլխավոր ներկայացուցիչն է: Նրա պոեզիան, անշուշտ, առնչություններ ունի մոսկովյան կոնցեպտուալիստների հետ և, ինչպես վերջիններս, ապրոպրիացիայի, ինտերտեքստային առատ հղումների շնորհիվ հեգնականորեն վերանայում է նախորդող շրջանի թողած բանաստեղծական ավանդները: Ինչպես նշում է գրականագետ Սեյրան Գրիգորյանը. «Եթե այլոց արձակունակ տողերում դժվար չէ որսալ Հովի. Գրիգորյանի ոճի անմիջական հետքերը, ապա Շեկոյանը խոսքի շրջումն իրականացնում է սեփական տեսությամբ և բխեցնում է իր

---

[1] *Տե՛ս* ***Offe, C.,*** *Strukturprobleme ds kapitalistischen Staates. Frankfurt: Suhrkamp, 1972, pp. 7–25.*

[2] *Տե՛ս* ***Aglietta M.,*** *Régulation et crises du capitalisme, Kalmann-Lévy, Paris, 1976*

[3] *Տե՛ս* ***Mandel E.,*** *The Industrial Cycle in Late Capitalism, New Left Review, New Left Review I (90), 1995*

[4] *Տե՛ս* ***Marcue H.,*** *Protosocialism and Late Capitalism: Toward a Theoretical Synthesis Based on Bahro's Analysis. International Journal of Politics, Vol. 10 No. 2/3, 1980, pp. 25–48*

[5] *Տե՛ս* ***Գրիգորյան Ս.****,Բանաստիրություն և բանավեճ, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002:*

ստեղծագործական փորձի նախորդ շրջանից»[1]: Կարևոր է հաշվի առնել, որ Ա. Շեկոյանի պոեզիան առաջին շրջանում լիարժեքորեն տեղավորվում էր 70-80-ականների «ոգեղեն», մետաֆորային բանաստեղծության նորմերի մեջ[2], ուստի պոեզիայի նորմերի խնդրականացման աշխատանքը բանաստեղծի համար նաև ինքնահաղթահարման աշխատանք է դառնում: Եվ հենց այստեղ է առաջանում այս պոեզիայի տեղորոշման խնդիրը: Մի կողմից՝ նախընթաց շրջանների մոդեռնիստական պոեզիան խորհրդային իրականության մեջ ընդմիջվել է սոցիալիստական ռեալիզմով և նրանով, ինչ Ի.Գոլոմշտոկն[3] անվանում է «տոտալիտար արվեստ», և հետագայում էլ, ըստ էության, չի հաստատութենականացվել, ուստի չի կարելի խոսել ուղիղ իմաստով մոդեռնիզմին արձագանքող պոստմոդեռնիզմի մասին, ինչպես, օրինակ, ամերիկյան պոեզիայի դեպքում է: Մյուս կողմից՝ ավանդույթի, ընդունված նորմերի հաղթահարման խնդիրը, որ Ա. Շեկոյանը դնում է իր առաջ, առաջին հայացքից նրա պոեզիան դնում է մոդեռնիստական պարադիգմի մեջ: Սակայն այստեղ կարևոր է պատմության հանդեպ բանաստեղծի դիրքավորման խնդիրը, որը կենտրոնական է *մոդեռնիզմ-պոստմոդեռնիզմ* հարցը քննելիս: Ինչպես նկատում է ռուսաստանցի արվեստաբան Նադյա Պլունգյանը[4]՝ սոց-արտի ներկայացուցիչներն և առհասարակ ռուս կոնցեպտուալիստները սկզբունքային տարբերություն չեն դնում սոցիալիստական ռեալիզմի և դրան հակադրվող մոդեռնիզմի միջև, ավելին՝ այս ներհատուկ տարբերություններն անգիտանալն իսկ նրանց արվեստային քաղաքականության կարևոր մասն է կազմում և, ըստ էության, սահմանում է նրանց իբրև պոստմոդեռնիստներ: Անցյալի արմատական մերժման այս արարքը, անշուշտ, հատուկ է նաև արևմտյան պոստմոդեռնիզմին, սակայն եթե վերջինի մեջ այն տեղի է ունենում մոդեռնիզմի ուղղակի մերժմամբ և, որպես այդպիսին, անթաքույց կերպով դիրքավորվում է ընդդեմ անցյալի մոդեռնիստական ժառանգության, ապա ուշ խորհրդային շրջանում երևան եկող կոնցեպտուալիզմը նման ակնհայտ ներհակություն չի դրսևորում, սակայն, ըստ էության, էլ ավելի արմատական կերպով է մերժում անցյալը. ինչպես նկատում է նշանավոր գրականագետ Միխայիլ Էպշտեյնը. «Արևմուտքում կոնցեպտուալիզմը փոխարինում է «մի բանը մեկ այլ բանով»՝ իրական օբյեկտը դրա խոսքային նկարագրությամբ: Բայց Ռուսաստանում այն օբյեկտը, որ պիտի փոխարինվի, պարզապես բացակայում է»[5]: Նույն կերպ,Շեկոյանի պոեզիայում ապրոպրիացվում

---

[1] *Նույն տեղում, էջ 218*

[2] *Տե՛ս* ***Հակոբյան Հ.****, Ժամանակակից հայ պոեզիան (1990-2014), 2014, էջ 44:*

[3] *Տե՛ս* **Golomstock I.,** *Totalitarian art in the Soviet Union, the Third Reich, Fascist Italy, and the People's Republic of China. London: CollinsHarvill, 1990.*

[4] ***Плунгян Н.,*** *«Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре», Gesamtkunstwerk Гройс , 2018, 122 (6), стр. 214-225.*

[5] **Epstein, M.**, *After the Future: The Paradoxes of Postmodernism and Contemporary Russian Culture, Amherst: The University of Massachusetts Press, 1995:*

և հեգնականորեն վերաիմաստավորվում են ոչ միայն 40-50-ականների սերնդի պոեզիան, այլև նախորդող շրջանի մոդեռնիստների և հայ դասականների երկերը, և դրանով իսկ նույնանում. Շեկոյանի հեգնանքի ճնշման տակ դրանց հակասություններն անհետանում են. դիալեկտիկական շղթայի այս արմատական կոտրմամբ էլ Ա. Շեկոյանի պոեզիան միարժեքորեն հաստատում է իրեն իբրև պոստմոդեռնիստական: Շեկոյանի բանաստեղծական գործունեությունն իր մեծ մասով համընկնում է վերափոխումների շրջանի հետ, երբ գրական նախկին՝ խորհրդային դաշտը քանդվել էր, իսկ նորը՝ հիմնված շուկայական հարաբերությունների վրա, դեռ նոր պիտի ձևավորվեր: Սակայն միանշանակ է բանաստեղծի դիրքավորումն ու պոստմոդեռնիստական զգայնությունը:

Այլ է Վ. Գրիգորյանի պարագան: Ի սկզբանե գրական ասպարեզում հայտնվելով իբրև թարմ շունչ բերող նոր սերնդի կարևորագույն ներկայացուցիչ՝ նրա վաղ շրջանի ստեղծագործությունն, իհարկե, առանձնանում է թեմատիկ ու լեզվական համարձակությամբ, բանաստեղծական անսովոր պատկերներով և թաքուն կամ ակնհայտ հեգնանքով[1], սակայն այս բոլոր հատկանիշները՝ ինտերտեքստային առատ հղումների հետ միասին, ինչպես նշել ենք, պոստմոդեռնիզմի մենաշնորհը չեն ու թեև ընդհանրություններ ունեն պոստոդեռնիզմի գեղագիտության առանձին կողմերի հետ, կարծում ենք, դեռևս չեն դրսևորում պոստմոդեռնիստական այն զգայնությունը, որ պիտի հատուկ դառնա նրա 2000-ականների գործերի համար: Վ. Գրիգորյանի «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում» և «Այս ինչ դժվար ձմեռ է» հատորներում զետեղված բանաստեղծություններն ընդհանուր առմամբ դուրս են մնում պոստմոդեռնիզմի պարադիգմից: Հետաքրքիր է, որ բուն պոստմոդեռնիզմին անցումը Գրիգորյանի մոտ տեղի է ունենում սեփական պոեզիայի ձևերի նույնպիսի հաղթահարում-վերաիմաստավորմամբ, ինչպես Շեկոյանի դեպքում էր: Արդեն 1995 թ-ի «Կեսգիշեր» երկար բանաստեղծության մեջ ընդվզումը հայրիշխանական ավանդույթի դեմ տեղի է ունենում բանահյուսական նյութի կիրառման միջոցով, ուր ավանդական բանահյուսության լեզուն անջատվում է համատեքստից և արմատապես վերաիմաստավորվում: Վ. Գրիգորյանի՝ բանահյուսության և դասական պոեզիայի այս կիրարկումը պետք է չշփոթել մոդեռնիստական պարոդիկ կրկնօրինակումների հետ. այն սկզբունքորեն պաստիշ է՝ զերծ որևէ արժեքային գնահատականից: Եթե պարոդիան ծաղրանմանակում է ինչ-որ երևույթ՝ հաստատելու համար մեկ այլ, ենթադրաբար հակադիր երևույթ, ապա պաստիշը ջնջում է որևէ այլ բան հաստատելու հնարավորությունը: Վ. Գրիգորյանը հետևողականորեն ապակառուցում է սեփական բանաստեղծական լեզուն, սակայն, որ մեզ համար ավելի կարևոր է, ապակառուցվում է հենց այն մոդեռնիստական զգայնությունը, որ բնորոշում է բանաստեղծուհու վաղ շրջանի

[1] *Տե՛ս **Գրիգորյան Ս.**, Բանասիրություն և բանավեճ, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002:*

պոեզիան: 1998 թ-ին լույս տեսած «Քաղաքը» գրքում լեզվի ապակառուցումն ու մոդեռնիստական զգայնության դիմադրությունն են, որ կազմում են ստեղծագործության հիմնական կոնֆլիկտը, և քաղաքի երկդիմի բնույթի նկարագրությունները մեկնաբանելի են իբրև բանաստեղծության մեջ առկա երկվությունների փոխաբերություն: Արդեն այստեղ գործ ունենք պոստմոդեռնիստական պոեզիայի հետ, որը պիտի իր ամենաարմատական տեսքին հասնի արդեն 2000-ականներին՝ «Հարեմի վարդ» պոեմի մեջ:

2003 թ-ին լույս է տեսնում Ա. Շեկոյանի «Երևան հյուրանոց» ժողովածուն, որի մեջ մտնում են «Երևան-հյուրանոց» և «Poker.am» պոեմները: Երկու տարի անց՝ 2005 թ-ին, լույս է տեսնում Վ. Գրիգորյանի «Հարեմի վարդ» պոեմը: Այս երկերը կարելի է համարել հայ պոեզիայի մեջ պոստմոդեռնիզմի վերջնական կայացման օրինակներ: Նշանակալի է, որ այս գործերի լույս տեսնելուց հետո երկու հեղինակներն էլ տևական ժամանակ դադարում են բանաստեղծություններ գրել: Պոստմոդեռնիզմի գեղագիտությունն առհասարակ կարոտ է ընդարձակ ուսումնասիրության, որն, անշուշտ, այստեղ մեր առաջ դրված խնդիրների մեջ չի մտնում, սակայն վերը նշված երկերի բնույթը ստիպում է անդրադառնալ պոստմոդեռնիզմի գեղագիտության համար թերևս ամենաառանցքային երևույթներից մեկին, որն է հիստերիկ վեհը (the hysterical sublime): Գեղեցիկի կատեգորիան, որը կենտրոնական նշանակություն ունի մոդեռնիստական էսթետիկայի մեջ, իհարկե, ամբողջովին զուրկ չէ ուտիլիտար օգուտից, երբ քննարկում ենք պոստմոդեռնիզմի պոեզիան, բայց իր կենտրոնական նշանակությունն այն միանշանակորեն զիջում է վեհին՝ մի կատեգորիայի, որ մենք առավելապես ասոցացնում ենք դասական արվեստի հետ: Վեհի ավանդական ըմբռնումը չի կարող աշխատել ուշ կապիտալիզմի դարաշրջանի արվեստի դեպքում այն պարզ պատճառով, որ այն պայմանավորող իրականությունը վաղուց չկա: Ինչպես գրում է Ֆ. Ջեյմիսոնը. «Բուրկի համար վեհը սարսափի փորձառություն էր, ապշահարության և ակնածանքի սարսափելի հայացք՝ այն ամենի հանդեպ, ինչն այնքան հսկայական էր, որ կարող էր ընդհանրապես ջախջախել մարդկային կյանքը. նկարագրություն, որ հետո ճշգրտեց Կանտը՝ ներառելու ներկայացման հարցը, այնպես որ վեհի առարկան այժմ ոչ միայն ուժի, ինչպես նաև մարդու օրգանիզմի ֆիզիկական անհամեմատելիության խնդիրն է Բնության հետ, այլև պատկերացման սահմանները, և մարդկային մտքի՝ նման հսկայական ուժերը ներկայացնելու անկարողությունը: Այդպիսի ուժեր Բուրկը իր պատմական պահին՝ ժամանակակից բուրժուական պետության արշալույսին, կարողացավ հասկանալ միայն աստվածային իմաստով, մինչդեռ նույնիսկ Հայդեգերը շարունակում է ֆանտազմատիկ հարաբերություն պահպանել որոշ օրգանական նախապիտալիստական գյուղացիական լանդշաֆտի և գյուղական հասարակության հետ, որը մեր ժամանակներում Բնության կերպարի վերջին ձևն է: Սակայն հնարավոր է այս ամենն այլ կերպ պատկերացնել այսօր՝ հենց Բնության արմատական խավարման պահին. նորագաղութատիրությունը և մեգապոլիսը,

որն իր մայրուղիներն անցկացնում է հին դաշտերով ու դատարկ տարածքներով, և Հայդեգերի «գոյի տունը» վերածում է համատիրությունների, եթե ոչ առնետներով լի, չջեռուցվող բնակելի շենքերի: Մեր հասարակության «այլը», այդ իմաստով, այլևս բնությունը չէ, ինչպես նախակապիտալիստական հասարակություններում էր, այլ մեկ ուրիշ բան»[1]: Խոսքն, իհարկե, ժամանակակից տեխնոլոգիաների մասին է, որոնց աննախընթաց զարգացումը վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եկել է արմատապես փոխելու մարդկային հասարակության գոյության ամենահիմնարար ձևերը:Ժամանակակից համակարգիչներն ավելի մեծ հեղափոխություն են բերում, քան նախորդ դարասկզբի արդյունաբերական տեխնոլոգիաները, սակայն ի տարբերություն վերջինների՝ արտաքնապես տպավորիչ չեն, քանի որ միջին մարդու համար դրանց տեսքի և գործառույթի միջև ակնհայտ խզում կա: Սա, ինչպես նաև համացանցի բերած տեղեկատվական անկառավարելի հոսքերը ժամանակակից մարդուն կանգնեցնում են դեմ հանդիման մի ուժի, որը նա վերապրում է իբրև տարերային: Այստեղ, սակայն, պետք է է հաշվի առնել, որ տեխնոլոգիաները, հատկապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաները՝ իրենց բարդ փոխկապակցվածությամբ, ժամանակակից աշխարհում հանդես են գալիս նաև իբրև ուժային-իշխանական հարաբերությունների մոդելներ, որոնք օգնում են մեզ մտածել ու պատկերացնել այն քաղաքական, տնտեսական ու մշակութային մեծ կառույցներն ու գործընթացները, որ մեծապես սահմանում են մեր կյանքը: Սա կարևոր տարբերակում է, որ թույլ է տալիս ոչ թե պարզապես բացատրել հետարդիական աշխարհում վեհի ընկալումը իբրև տեխնոլոգիական հեղափոխության ուղղակի հետևանք, այլ ընկալել այն առավել բարդ մշակութային գործընթացների մեջ: Ֆ. Ջեյմիսոնն այս նոր՝ հիստերիկ կամ պոստմոդեռն վեհը առաջին հերթին վերագրում է ճարտարապետությանը, որն արվեստներից ամենահանրայինն է և ամենաուղիղ կերպով է ազդում մեր աշխարհընկալման վրա: Այս առումով ուշադրության է արժանի այն փաստը, որ Ա. Շեկոյանի «Երևան հյուրանոցն» ու «Poker.am»-ը, ինչպես և Վ. Գրիգորյանի «Քաղաքը» անդրադառնում են քաղաքային միջավայրին, ընդ որում՝ դա անում են ընդգծված ծրագրային կերպով. եթե նախորդ դարասկզբին Ե. Չարենցը «Պոեզոզուռնայի» էջերին արևելյան քաղաքի հետամնացության տեսարաններին հակադրում էր արևմտյան արդյունաբերական քաղաքների լուսավոր ու լայն փողոցները և ստանձնում «երգերի տեղ երկրներ շինելու» մոդեռնիստական հանձնառությունը, ապա Ա. Շեկոյանի և Վ. Գրիգորյանի մոտ քաղաքը բանաստեղծություն է բերվում խնդրականացվելու նպատակով. քաղաքային իրականությունը ձևակերպվում է գլխավորապես իբրև նշանների բարդ համակարգ, որի առաջ մենք մանր ու անկարևոր ենք: Իր «Աշխարաքաղաքական գեղագիտությունը» գրքում Ֆ. Ջեյմիսոնը խոսում է

[1]***Jameson, F.**, Postmodernism, or The Cultural Logic of Late Capitalism, Durham, N.C., Duke University Press, 1991, pp. 76-77*

ժամանակակից արվեստի մեջ տոտալության ձգտման մասին՝ իբրև տեխնոլոգիական հեղափոխությամբ ստեղծված նոր աշխարհը մտածելի դարձնելու փորձ[1]: Շեկոյանի՝ հայտնի ու անհայտ անունների երկար թվարկումները հենց այսպիսի փորձի ակնհայտ օրինակ են. մի կողմից՝ այս նշանները մեզ օգնում են մտածելի դարձնել սոցիալական հարաբերությունների այն բարդ սարդոստայնը, որ իրենից ներկայացնում է ժամանակակից քաղաքային իրականությունը, մյուս կողմից՝ հենց դրանք են նպաստում մեզ շրջապատող իրականությունն իբրև նման մի սարդոստայն պատկերացնելուն: Վ. Գրիգորյանի «Հարեմի վարդ» պոեմում մաքուր պաստիշային ձևով խաղարկվում են արևելյան բանաստեղծական ձևերն ու բանահյուսական նյութը, բայց նաև, որ ավելի կարևոր է, խաղային է պոեմի բովանդակությունը ևս, որտեղ քնարական հերոսուհին հանդես է գալիս իբրև մի արևելյան բռնակալի բազմաթիվ կանանցից մեկը, որ նախապատրաստվում է սիրելի ամուսնու հետ բաղձալի հանդիպմանը: Պոեմի վերջում դրված հանելուկի պատասխանը, որ պիտի ծառայի հենց այս հիստերիկ վեհի էֆեկտը կոտրելուն, իր հերթին ևս ծաղրականի ու վեհի զարմանալի խառնուրդ է, ուր բանաստեղծուհին հայտարարում է, որ կին է ստեղծում ոչ թե Ադամի կողից, այլ մի լրիվ ուրիշ նյութից՝ կարծես ակնարկելով ավանդական կանացիությունը ապակառուցող իր պոեմի նպատակին: Կարևոր է նկատել, որ «Poker.am»-ի վերնագրում և «Հարեմի վարդի» տեքստի ներսում հղում է արվում այն ժամանակ դեռ բավականին երիտասարդ համացանցին՝ ակնարկելով ցանցային իրականության և պոեմների միջև կառուցվածքային նմանություններին: Հիշատակելի է նաև, որ թե՛ «Երևան հյուրանոցի»-ի, թե՛ «Հարեմի վարդի» մեջ կենտրոնական, տոտալացնող տարրը սերն է. առաջինի մեջ խոսքը համընդհանուր, համայնական սիրո մասին է, որ միավորում է այս բոլոր՝ առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող մարդկանց, մի տեսակ ծանրության կենտրոն դառնում այս ստեղծագործության համար, երկրորդի դեպքում խոսքը, իհարկե, ռոմանտիկ ու սեռական սիրո մասին է, որը կարծես հավաքվում է բազմաթիվ կտորներից՝ ընդհուպ մինչև սիրելիի մարմնի մասերն իրար միացնելով նրան «ստեղծելը»: Երկու դեպքում էլ սերն այն տարրն է, որ բերում է ստեղծագործությունը մի տոտալ ամբողջության, և զուգահեռվելով բացարձակ, աստվածային սիրո գաղափարին՝ նպաստում վեհի էֆեկտի ստեղծմանը:Այս կետի վրա կարծես ամփոփելով անտիպոեզիայի ընթացքը՝ երկու բանաստեղծներն էլ հեռանում են պոեզիայից հենց այն շրջանում, երբ արևմտյան պոստմոդեռնիզմը պայմանավորած մի շարք հասարակական երևույթներ սկսում են հաստատվել հայաստանյան իրականության մեջ: Հատկանշական է, որ այս բնույթի որևէ նշանավոր գործ հետագայում ևս չի ստեղծվում:

Պոստմոդեռնիզմի ինչ-ինչ տարրեր կարելի է նկատել նաև 90-ականներին երևան եկած մեկ այլ խումբ բանաստեղծների մոտ Հ. Թամրազյան, Վ. Աթաբեկյան,

---

[1] *Տե՛ս* ***Jameson, F.,*** *The Geopolitical Aesthetics, London, Indiana University Press, 1995*

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դ.Է. Մուրադյանը։

ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Ն.ՇԱԼՈՒՆՑ
ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանող

ՀՈՄԵՈՍՏԱԶԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԵՂՈՒՄԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Այսօր բուռն զարգացում են ապրում հոգեթերապիան, հոգեսոմատիկ հիվանդությունների ուսումնասիրումը, և արժևորվում է հիվանդությունների հոգեբանական ասպեկտների բացահայտումը: Անհրաժեշտ է, որ մարդիկ, ապրելով ճգնաժամային ժամանակաշրջանում, կարողանան պահպանել ներքին կայունությունը՝ հոմեոստազը, որի անբաժան մասն է հոգեբանական հավասարակշռությունը: Հոմեոստազի պահպանման մեխանիզմներն ազդում են նաև հոգեկան բարեկեցության վրա: Հոմեոստազի պահպանման մեխանիզմների՝ իմուն և նյարդահումորալ ախտաբանություններ բազմաթիվ ու բազմազան են, և դրանց հոգեբանական բաղադրիչի մասին փաստերը անքակտելի են: Այսինքն՝ բացահայտելով հիվանդությունների հոգեբանական առանձնահատկությունները, կարելի է նոր թափ հաղորդել դրանց բուժման ընթացքին:

Բանալի բառեր՝ հոմեոստազ, վեգետատիվ նյարդային համակարգ, էնդոկրին համակարգ, իմունային համակարգ, հոգեբանական սթրես, փրիք-թեստ:

Н.Шалунц

МЕХАНИЗМЫ СОХРАНЕНИЯ ГОМЕОСТАЗА И ИХ НАРУШЕНИЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПСИХОЛОГИИ

Сегодня бурно развивается психотерапия, исследование психосоматических заболеваний, и становится необходимым раскрытие психологических аспектов заболеваний. Живя в период кризисов, необходимо, чтобы люди умели сохранять внутреннюю стабильность – гомеостаз, неотъемлемой частью которого является психологическое равновесие. Механизмы сохранения гомеостаза влияют также на психологическое благосостояние. Иммунные и нейрогуморальные патологии механизмов сохранения гомеостаза многочисленны и многообразны, а факты, говорящие о наличии в них психологического составляющего, неоспоримы.

Таким образом, выявляя психологические особенности заболеваний, можно дать новый оборот процессу лечения.

Ключевые слова: гомеостаз, вегетативная нервная система, эндокринная система, иммунная система, психологический стресс, укол тест.

N.Shalounts

THE MECHANISMS OF HOMEOSTASIS AND THEIR PSYCHOLOGICAL DEVIATIONS

In our days,the psychotherapy and the study of psychosomatic diseases are developing rapidly and the discovery of psychological aspects of diseases is valued. Living in a period of crisis, people need to be able to maintain internal stability, in other words homeostasis, of which inseparable part is a psychological balance. The mechanisms of homeostasis maintenance also affect the mental well-being. Immune and neurohumoral pathologies of the mechanisms of homeostasis maintenance are numerous and varied and the facts about their psychological components are inseparable. So, discovering the psychological features of diseases, we can give a new impetus to their treatment.

Key words: Homeostasis, vegetative nervous system, endocrine system, immune system, psychological stress, prick test.

Հայաստանում բժշկությունը քայլ առ քայլ առաջընթաց է ապրում, կիրառվում են հիվանդությունների ախտորոշման և բուժման ժամանակակից մոտեցումներ, բայց դրանով հանդերձ շատ հաճախ անտեսվում կամ մոռացության են մատնվում հիվանդությունների առաջացման կամ դրանցից բխող հոգեբանական գործոնները: Այնինչ պետք է նշել, որ հիվանդությունների գերակշիռ մասը, բացի սոմատիկ-կենսաբանական հիմքից, ունի նաև հոգեբանական պատճառներ, կամ իրենք են դառնում հոգեբանական խնդիրների առաջացման պատճառ: Եվ այս ամենը կարևորելով հիվանդությունների կանխարգելման և բուժման համար պետք է հաշվի առնել հիվանդի (հիվանդության) հոգեբանական առանձնահատկությունները և ճիշտ բժշկահոգեբանական մոտեցում ցուցաբերել:

Սրա հետ պետք է շեշտել, որ աշխարհում բուռն զարգացում է ապրում մարմնահոգեկան և հոգեմարմնական ուղղությունների ուսումնասիրությունը: Վերջինս մի շարք հիվանդությունների վրա հոգեբանական գործոնների ազդեցությունն է: Այդպիսի հիվանդություններ են բրոնխիալ ասթման, նյարդամաշկաբորբը, ռևմատոիդ արթրիտը, շաքարային դիաբետը և այլն [1] :

Հոգեսոմատիկ խնդիրը՝ որպես այդպիսին, ծագել է հին ժամանակներում, երբ գիտական բժշկության ակունքներում կանգնած էին երկու դպրոցներ, որոնք արտացոլում էին հիվանդությունների ընդհանուր հայեցակարգի մեկնաբանման երկու մոտեցում. առաջինը՝ Կոսսի հիպոկրատական դպրոցը, երկրորդը՝ Կնիդոսի առաջին անատոմների դպրոցը: Առաջինը մեկնաբանում էր հիվանդությունը, որպես սուբյեկտի և իրականության միջև փոխհարաբերությունների խախտում

(դինամիկ, հումորալ-հոգևոր, <<հոգեսոմատիկ>> կոնցեպցիա), երկրորդը դիտարկում էր հիվանդությունը, որպես ինչ-որ նյութական կառուցվածքի պարտություն (մեխանիկական, օրգանների կողմնորոշում): Հիվանդության և հիվանդի գնահատման վերջնական բանաձևերը տարբեր են: Առաջին դեպքում՝ <<մարդը հիվանդ է >>, երկրորդ դեպքում՝ <<մարդու մոտ կա հիվանդություն>>: Այս համեմատումը (օրգանների պաթոլոգիայի կամ հարաբերությունների պաթոլոգիայի) անցնում է բժշկության ողջ պատմության ընթացքում [3] :

Հոդվածում ցանկանում ենք անդրադառնալ օրգանիզմի կարևորագույն երևույթներից մեկին՝ հոմեոստազին, և ցույց տալ, թե ինչ դեր ունի մարդու հոգեկանը դրա պահպանման գործում, և թե ինչպես են փոխկապակցված հոմեոստազի պահպանման մեխանիզմների խանգարումները մարդու հոգեբանական առանձնահատկությունների հետ, և հակառակը:

Ինչ-որ բան գալիս է, ինչ-որ բան գնում, ամեն ինչ փոխվում է, բայց արդյունքում ամենը մնում է այնպես, ինչպես կար: Ահա այսպես կարելի է նկարագրել հոմեոստազը: Հոմեոստազը մի գործընթաց է, որի ընթացքում օրգանիզմը պահպանում է իր հավասարակշռությունը, հետևաբար նաև առողջ վիճակը՝ անընդհատ փոփոխվող պայմաններում: Անձը՝ որպես մեկ ամբողջություն, ստաբիլ գործունեություն կծավալի միայն այն ժամանակ, երբ պահպանվում է հավասարակշռությունը միաժամանակ և՛ մարմնում, և՛ հոգեկանում:

Այլ կերպ ասած, հոմեոստազը օրգանիզմի ներքին միջավայրի հիմնական հաստատուն ցուցանիշների պահպանման գործընթացն է (զարկերակային ճնշում, օսմոտիկ ճնշում, շաքարի մակարդակ արյան մեջ, ջերմաստիճան և այլն) ՝ արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններում:

Հոմեոստազը ինչ-որ համակարգի (կենսաբանական, հոգեբանական) շարժուն, բայց կայուն հավասարակշռությունն է իր հակազդեցությամբ այն արտաքին և ներքին գործոնների նկատմամբ, որոնք փորձում են խախտել այդ հավասարակշռությունը [2] :

Շատերը տեղյակ էլ չեն այս հասկացության մասին, բայց այն մեր կյանքի կարևորագույն մասն է, որը ներդաշնակ է դարձնում իրար միջև գործող հակադիր պայմանները՝ ապահովելով կյանքի շարունակականությունը: Հոմեոստազը կարելի է համարել ինքնակարգավորման գործընթաց, որը տեղի է ունենում ենթագիտակցական մակարդակում:

Օրգանիզմի ներքին միջավայրի կարգավորման գաղափարը նկարագրել է ֆրանսիացի ֆիզիոլոգ Կլոդ Բեռնարդը 1849թ., իսկ *հոմեոստազ* բառը կիրառել է Ուոլտեր Բրեդֆորդ Քեննոնը 1929թ. [5] :

Օրգանիզմն անընդհատ կարգավորում է իրեն, և հոմեոստազի պահպանման մեխանիզմները միշտ ակտիվ են: Սակայն այդ մեխանիզմները կարող են խանգարվել, ինչն ընկած է տարբեր հիվանդությունների առաջացման հիմքում:

Հոմեոստազը պահպանվում է դրական և բացասական հետադարձ կապերի շնորհիվ, և նրա պահպանման մեխանիզմներն են.

- նյարդային,
- ներզատիչ,
- իմունային:

Այս երեք համակարգերը սերտորեն կապված են միմյանց հետ, հորմոններն ու նյարդամիջնորդանյութերն ազդում են իմուն համակարգի վրա, ցիտոկինները ազդեցություն ունեն նյարդաէնդոկրին համակարգի վրա: Այս համակարգերը գործում են ներդաշնակության սկզբունքով, և այս կապերի խախտումը բերում է հոմեոստազի խաթարման:

Ինչպես նշեցինք, հոմեոստազը օրգանիզմի կայուն հավասարակշիռ վիճակն է, որը ենթադրում է նաև հոգեբանական հավասարակշռություն: Հետևաբար, հոմեոստազի պահպանման մեխանիզմերը և առավել ևս այն հիվանդությունները, որոնց հիմքում այդ մեխանիզմների խանգարումներն են կամ ֆիզիոլոգիական պայմաններում չափից առավել ակտիվությունը, ամենահաճախն են պարունակում հոգեբանական ասպեկտներ, և դրանց ուսումնասիրումը, այսօր էլ այժմեական է:

Հերթով անդրադառնանք հոմեոստազի պահպանման համակարգերի հիմքում ընկած հիվանդությունների և դրանց հոգեբանական ասպեկտների միջև կապերին:

Ի. Պավլովը նկարագրել է ռեֆլեքսները՝ որպես օրգանիզմի պատասխան ռեակցիա արտաքին գրգռիչին: Ռեֆլեքսային աղեղը, որը կազմված է նյարդային համակարգի կառուցվածքային տարրերից, ապահովում է նաև գիտակցության, հույզերի, ապրումների արտահայտումը: Սա հոգեկան և նյարդային միասնության առաջին ապացույցներից է: Հոմեոստազի կարգավորման մեջ նյարդային համակարգի կառուցվածքներից էական դեր է խաղում վեգետատիվ նյարդային համակարգը: Վեգետատիվ նյարդային համակարգը ինքնավար է, դուրս է գիտակցության հսկողությունից, բայց պետք է նշել, որ հոգեբանական վիճակները կարող են ազդել այդ համակարգի վրա: Այս համակարգը կազմված է սիմպաթիկ և պարասիմպաթիկ բաժիններից, որոնց համաձայնեցված գործունեության շնորհիվ պահպանվում է օրգանիզմի կայունությունը: Սիմպաթիկ վեգետատիվ նյարդային համակարգն, ակտիվանում է սթրեսի ժամանակ, որն արտահայտվում է սրտի աշխատանքի հաճախացմամբ, պահեստային ուժերի մոբիլիզացմամբ: Այսինքն՝ սիմպաթիկ նյարդային համակարգի աշխատանքը տագնապի, ագրեսիայի, փախուստի, պաշտպանության հիմքում ընկած նյարդային գործընթացն է: Սթրեսը նվազեցնող հոգեթերապիան կարող է ազդել վեգետատիվ նյարդային համակարգի վրա և բարելավել առողջությունը: Որոշ հոգեակտիվ դեղամիջոցներ ազդեցություն ունեն վեգետատիվ նյարդային համակարգի ֆունկցիայի վրա: Հոգեկան և նյարդային գործընթացները անքակտելի կապի մեջ են,որը դեռ վաղ ժամանակներից բժիշկների և հոգեբանների ուսումնասիրության կենտրոնում է:

Անդրադառնանք ներզատիչ մեխանիզմին: Էնդոկրին ֆունկցիաների նկատմամբ ենթատեսաթումբ- մակուղեղ վերահսկողությունը մեծ ուշադրության է արժանանում: Քիչ ուշադրություն է դարձվում էնդոկրին հիվանդությունների սոցիալ – հոգեբանական ասպեկտներին: Ցույց է տրված, որ հոգեբանական սթեսի շատ տեսակների ժամանակ, վերջիններս ենթարկվում են ենթատեսաթումբ-մակուղեղ-մակերիկամ առանցքին: Հոգեբանական գործոնները կարող են բարձրացնել կամ իջեցնել մակուղեղ- մակերիկամ ակտիվությունը: Հոգեբանական գործոնների՝ հուզական արձագանքի որակը, հոգեբանական պաշտպանության տեսակը և արդյունավետությունը դեր ունեն սթրեսի զարգացման աստիճանի մեջ՝ որոշելով այն սուր է թե քրոնիկ [10] :

Մի շարք էնդոկրին հիվանդությունների առաջացման մեջ ուսումնասիրված են հոգեբանական ասպեկտների դերը: Այսպես օրինակ, Քուշինգի համախտանիշի[1] և Գրեյվսի հիվանդության[2] ժամանակ կատարված ուսումնասիրությունները պարզել են հոգեբանական սթրեսի և դեպրեսիայի դերը հիվանդությունների զարգացման պաթոգենեզում [9] :

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ էնդոկրին հիվանդությունները շատ հաճախ հոգեբանական խնդիրների առաջ են կանգնեցնում, քանի որ դրանց ժամանակ տեղի է ունենում մարմնի տեսանելի մասերի անհամաչափ խախտումներ ու ձևափոխումներ, ինչը հոգեբանական սթրեսի, դեպրեսիայի պատճառ է դառնում:

Էնդոկրին համակարգին է պատկանում նաև օպիատային համակարգը՝ էնդորֆին, էնկեֆալին, դինորֆին, որոնք կարևոր դեր ունեն ցավի և սթրեսի առաջացման մեխանիզմում: Իսկ ցավը, որպես հոգեբանական երևույթ կարող է ուղեկցվել բացասական հուզական երևույթներով և վեգետատիվ փոփոխություններով: Ցավը լոկ զգայություն չէ, քանի որ օրգանական վնասվածքին հաճախ ուղեկցում է հուզական բաղադրիչը: Օպիատային համակարգը ազդում է մարդու տրամադրության, ախորժակի, ուսուցման պրոցեսի , հիշողության և այլ իմացական երևույթների վրա, և պատահական չէ, որ այդ հորմոններն անվանում են <<երջանկության>>, <<տրամադրության>>, <<հաճույքի>> հորմոններ:

Խոսելով էնդոկրին համակարգի մասին չպետք է մոռանալ ֆիզիոլոգիական այնպիսի ճգնաժամային շրջանների մասին, ինչպիսք են դեռահասության տարիքը և մենոպաուզան՝ կանանց մոտ: Այս դեպքերում օրգանիզմն ապրում է հորմոնալ հեղեղի շրջափուլ, ինչը անպայմանորեն անդրադառնում է օրգանիզմի հոգեկան հավասարակշռությանն ու վարքին: Նրանց մոտ տարածված հոգեբանական երևույթներ են տագնապայնությունը, ագրեսիան, սթրեսը:

---

[1] *Օրգանիզմում գլյուկոկորտիկոիդների ավելցուկ՝ հիմնականում մակերիկամի կամ մակուղեղի (Քուշինգի հիվանդություն) ուռուցքով պայմանավորված:*

[2] *Դիֆուզ տոքսիկ խպիպ՝ աուտոհակամարմինների ձևավորում վահանագեղձի բջիջների նկատմամբ:*

Իմունային համակարգը կարևոր դեր է խաղում հոմեոստազի պահպանման գործում՝ պատրաստելով օրգանիզմը վարակի դեմ պայքարին և բուժման գործընթացին օգնելուն: Գրականության մեջ կան հաստատված տվյալներ, որ հոգեբանական բարեկեցությունն կարող է մեծացնել մարդու իմուն պատասխանի ուժգնությունը: Ինֆեկցիոն հիվանդությունները խաթարում են կյանքի որակը և առաջացնում հիվանդացություն, որը հաճախ հանգեցնում է մահացության: Հայտնի է, որ ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ անհատական պատասխանը կախված է տիրոջ իմուն համակարգից: Վերջինիս բաղադրիչը կազմող բջիջների ու ձերբազատված նյութերի շնորհիվ պաշտպանություն է տեղի ունենում օտար ճանաչված մարմնի հանդեպ: Ենթադրվում է, որ իմունային պատասխանի ունակությունը վարակիչ հիվանդության դեմ կախված է օրգանիզմի հոգեբանական կարգավիճակից [6] :

Հոգեբանական սթրեսը ևս ի վիճակի է փոխել կենդանիների և մարդու զգայունությունը վարակիչ օրգանիզմների նկատմամբ՝ ազդելով որոշ ինֆեկցիոն հիվանդությունների առաջացման, ընթացքի և արդյունավետության վրա: Մի շարք հետազոտողներ փորձարկել են հոգեբանական միջամտության և հոգեիմունոթերապիայի դերը այնպիսի հարուցիչների հարուցած հիվանդությունների պաթոգենեզում, ինչպիսիք են տուբերկուլյոզը, հասարակ հերպես վիրուսը, մարդու իմուն անբավարարության վիրուսը: Այս ուսումնասիրությունները այսօր լայն թափ են ստացել [4] : Վարակի դեմ պայքարի, իմուն պատասխանի որակի բարելավման համար առաջարկվում է ամրապնդել հոգեբանական հավասարակշռությունը և ստեղծել հոգեկան բարեկեցություն: Այս համատեքստում պետք է նշել, որ համավարակներն իրենց հերթին հոգեբանական խնդիրներ են առաջ բերում, օրինակ՝ կորոնավիրուսային համավարակը, ըստ ԱՀԿ-ի, առաջ է բերել հոգեկան առողջության վատթարացում, ինչը բերել է ինքնասպանության դեպքերի ավելացման և դեպրեսիվ իրավիճակների:

Արդի ժամանակաշրջանի մարտահրավեր են հանդիսանում օնկոլոգիական հիվանդությունները, որոնց ախտածագման մեջ ապացուցված է իմուն համակարգի դերը, և ուսումնասիրությունները շարունակվում են՝ քաղցկեղների հոգեբանական շերտերը բացահայտելու համար: Ֆանկուրտը և ուրիշներ ուսումնասիրել են թերապևտիկ երաժշտության ազդեցությունը քաղցկեղով հիվանդ երեխաների վրա: Նրանք ուսումնասիրել են երաժշտության ազդեցությունը հիվանդների, նրանց ծնողների, բուժքույրերի սթրեսի աստիճանի և իմուն արձագանքի վրա: Ուսումնասիրվել է իմուն համակարգի տարբեր բաղադրիչների (10 ցիտոկին) արձագանքը երաժշտությանը: Ուսումնասիրությունը ցույց է տվել երաժշտության դերը հոգեբանական ներուժի ամրապնդման և բուժական արդյունքի բարելավման գործում [8] :

Իմուն համակարգի խանգարումներից ամենահաճախ հանդիպողը ալերգիաներն են, որոնց ժամանակ իմունային համակարգի կողմից արտադրվում են որոշակի նյութեր՝ ուղղված ալերգենի (ալերգիայի հարուցչի) դեմ: Բայց որոշ

դեպքերում ալերգենի ֆիզիկական առկայությունը պարտադիր չէ ալերգիայի առաջացման համար: Ալերգիկ ռեակցիա կարող է զարգանալ պարզապես ալերգենի մասին մտածելիս կամ այն պատկերացնելիս: Այսինքն՝ իմուն պատասխան առաջանում է առանց ալերգենի հետ կոնտակտի: Սա հոգեբանական ներշնչման ձև է: Այսպես, հետազոտության ենթարկված պացիենտներից մեկը համոզված էր, որ ինքը ալերգիկ է ընկույզի նկատմամբ: Ընկույզ օգտագործելուց հետո նրա մոտ առաջանում էին ալերգիային բնորոշ ախտանշաններ՝ մաշկային ցան և շնչառության հետ կապված խնդիրներ: Մաշկային փրիք-թեստերը[1] բացասական էին: Այս արդյունքից հետո կատարվում է կրկնակի-կույր փորձ, որի ընթացքում ո՛չ պացիենտը, ո՛չ բժիշկը տեղյակ չեն, թե ինչ է ստանում պացիենտը: Այս փորձի ժամանակ հիվանդը ոչ մի ախտանշան ցույց չի տալիս, և սա ապացուցում է, որ արձագանքը հոգեսոմատիկ է: Այսինքն՝ ռեակցիան առաջանում էր միայն այն մտքից, որ ինքն ալերգիկ է ընկույզի նկատմամբ: Ալերգիայից հետո ևս շատ հիվանդներ կանգնում են հոգեբանական խնդիրների առաջ: Օրինակ, կենդանիներից ալերգիայի դեպքում որոշ հիվանդներ դժվարությամբ են ազատվում կենդանիներից, որոշները նույնիսկ հրաժարվում են ազատվել կենդանուց անգամ նրանց՝ ալերգիայի պատճառ լինելը ապացուցվելուց հետո:

Կան նաև հոգեբանական հիվանդություններ, որոնց պաթոգենեզում նկարագրված են ինչպես իմունաբանական, այնպես էլ նյարդաէնդոկրին անոմալիաներ: Այդպիսին է օրինակ քրոնիկ հոգնածության համախտանիշը, որը կյանքի որակի վրա էականորեն ազդող հիվանդություն է [7] :

Այսպիսով, հոմեոստազի պահպանման նյարդաէնդոկրին և իմունային համակարգերի անբավարարությունը կամ չափից դուրս ակտիվությունն առաջացնում են բազմաթիվ հիվանդություններ, որոնք ունեն իրենց հոգեբանական առանձնահատկությունները: Դրանք այսօր վերջնականապես բացահայտված չեն, բայց դրանց ուսումնասիրումը շատ կարևոր է հիվանդությունների կանխարգելման, բուժման, բարդությունների կանխարգելման առումով: Բայց և այնպես, պետք է անպայման նշել, որ բժշկական միջամտություններն անփոխարինելի են, և հոգեբանական մոտեցումները լրացնում են դրանց ու ավելի արդյունավետ դարձնում:

Գրականություն

1. **Александр Ф.**, Психосоматическая медицина, Эксмо, Москва, (2002).

[1] *Ալերգիաների ախտորոշման մաշկային փորձ:*

2. **Блейхер В.М., Крук И.В.,** Толковый словарь психиатрических терминов, Воронеж: НПО "МОДЭК", 1995, 640 с .

3. **Тухтарова И.В., Биктимиров Т.З.**, Соматопсихология: Ульяновск: УлГУ, 2005., с.5.

4. **Biondi M., & Zannino L.G.**, Psychological stress, neuroimmunomodulation, and susepitibility to infectious diseases in animals and man. Psychotherapy and psychosomatics, 1997, p. 3-26.

5. **Cannon W.B.**, The wisdom of the Body. New York. W.W.Norton. p.177-201

6. **Cohen S., Herbert T.B.,** Health psychology: Psychological factors and physical disease from the perspective of human psychoneuroimmunology. Annual review of psychology. 1996, 47(1), 113-114.

7. **Demitrack M.A., Dale J.K., Straus S.E., Laue L., Listwak S.J., Kruesi M.J.P., Chrousos G.P. & Gold P.W.**, Evidence for impaired activation of the hypothalamic pituitary-adrenal axis in patients with chronic fatigue syndrome. Journal of Clinical Endocrinology and Metabolism, 1991, 1224-1234.

8. **Fancourt D, Williamon A, Carvalho LA, Steptoe A, Dow R, Lewis I.**, Singing modulates mood, stress, cortisol, cytokine and neuropeptide activity in cancer patients and carers. Ecancermedicalscience, 2016a, 10.

9. **Sonino N., Fava G.A. & Bosarco M.,** A role for life events in the pathogenesis of Cushing's disease. Clinical Endocrinology, 38, 261-264.

10. **Vingerhoets, A.J.J.M. & Assies, J.,** Psychoneuroendocrinology of stress and emotions. Psychotherapy and Psychosomatics, 1991, 69-75.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Անի ԱՎԱԳՅԱՆ
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու
ք.Իջևան, Հայաստանի Հանրապետություն
animavagyan@yahoo.com

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ <<ՀԵՐՈՆՏՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԹԵՄԱՅՈՎ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Հոդվածում հեղինակն անդրադառնում է <<Զարգացման հոգեբանություն>> առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայով ուսումնական տեսագործնական պարապմունքների իրականացման մեթոդիկային: Նշվում է, որ հասարակության զարգացման արդի փուլում զգալիորեն փոխվել է վերաբերմունքը հատկապես ուշ հասունության տարիքում գտնվող անձանց նկատմամբ: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ ուշ հասունացման տարիքում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխության տեսանկյունից չափազանց կարևոր է այն, թե ապագա մասնագետներին ինչ շեշտադրումներով է դասավանդվում <<Հերոնտոհոգեբանություն>> թեման: Հոդվածում սահմանվում են <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայի ուսուցման նպատակը, կրթական ելքային արդյունքները, առանձնացվել են <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայով տեսագործնական պարապմունքին դասախոսի նախապատրաստման հիմնական փուլերը, ներկայացված են կոնկրետ պարապմունքի պլանավորման և իրականացման հիմնական փուլերը, սովորողներին հանձարարվող ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջները և մեթոդական մի շարք այլ հարցեր: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ ուշ հասունության տարիքի անձանց նկատմամբ երիտասարդ մասնագետների վերաբերմունքը մեծապես կախված է

<<Հորոնտոհոգեբանություն>> առարկայի շրջանակներում կատարված շեշտադրումներից։

Բանալի բառեր՝ հերոնտոհոգեբանություն, ուշ հասունություն, ծերություն, մոտիվացիա, տեսագործնական պարապմունք, դասին նախապատրաստման փուլեր, պարապմունքի իրականացման փուլեր։

A.Avagyan

METHODOLOGICAL APPROACH TO ORGANIZING THEORETICAL AND PRACTICAL TRAININGS ON "HERONTOPSYCHOLOGY" WITHIN THE FRAMEWORK OF DEVELOPMENT PSYCHOLOGY

In the article, the author refers to the methodology of conducting educational theoretical and practical lessons on "Herontopsychology" within the framework of the subject "Developmental Psychology". It is noted that at the current stage of development of society, the attitude towards people, especially those of late adulthood, has changed significantly. It is extremely important what accents the topic of "Herontopsychology" is taught to future professionals. The article defines the purpose of teaching the topic "Herontopsychology", and the educational outcomes. The main stages of the lecturer's preparation for the theoretical and practical lesson on "Herontopsychology" were separated, the main stages of planning and implementation of a specific lesson are presented, and a number of other methodological issues. The author concludes that the attitude of young professionals towards people of late adulthood largely depends on the emphasis placed on the subject of "Horontopsychology".

Ключевые слова: herontopsychology, late maturity, old age, motivation, theoretical and practical trainings, stages of lesson preparation, stages of training.

А. Авагян

МЕТОДИЧЕСКИЙ ПОДХОД К ОРГАНИЗАЦИИ ТЕОРЕТИКО-ПРАКТИЧЕСКИХ ЗАНЯТИЙ ПО «ГЕРОНТОПСИХОЛОГИИ» ПО ПРЕДМЕТУ «ПСИХОЛОГИЯ РАЗВИТИЯ»

В статье автор пишет о методике проведения учебно-практических занятий по <<Геронтопсихологии>> в рамках <<Психологии развития>>. Отмечается, что на современном этапе развития общества отношение к людям, особенно позднему взрослому возрасту, существенно изменилось. Выдвигается гипотеза, что с точки зрения изменения отношения к людям позднего взросления чрезвычайно важно, на что делается акцент в теме <<Геронтопсихология>>. В статье определяется цель преподавания темы <<Геронтопсихология>> и образовательные результаты, были выделены основные этапы подготовки преподавателя к теоретико-практическим занятиям по <<Геронтопсихологии>>, представлены основные этапы планирования и проведения конкретного урока, требования к самостоятельной работе и ряд других методических вопросов.

Автор приходит к выводу, что отношение молодых специалистов к людям позднего взросления во многом зависит от того, какой акцент делается на предмете <<Геронтопсихология>>.
Key words: геронтопсихология, поздняя зрелость, старость, мотивация, теоретико-практическое занятие, этапы подготовки к уроку, этапы обучения.

Ժամանակակից հասարակությանը ներկայացվող մարտահրավերներին զուգընթաց՝ առանձնահատուկ նշանակություն է ստանում ընդհանրապես հասարակության և հասարակության առանձին անդամների վերաբերմունքը ուշ հասունության տարիքում գտնվող անձանց նկատմամբ: Ըստ մեզ, խնդիրը առանձնահատուկ կարևորություն է ստացել հատկապես աշխարհում կորոնավիրուսային (COVID 19) համավարակի տարածման և Արցախյան քառասունչորսօրյա պատերազմի ֆոնին: Մի կողմից համավարակի ընթացքում անընդհատ ընդգծվում է, որ կորոնավիրուսային վարակը առավել վտանգավոր է հատկապես ուշ հասունության տարիքում գտնվող անձանց համար, մյուս կողմից որպես մխիթարիչ հանգամանք է դիտվում այն, որ COVID 19-ով վարակման դեպքում առավել երիտասարդ տարիքի անձանց մահացության տոկոսը ցածր է: Ստացվում է, որ աստիճանաբար այնպիսի մոտեցում է ձևավորվում, որ եթե ուշ հասունության տարիքում գտնվող մարդ է մահանում, ապա հասարակության մակարդակում (խոսքը հասարակության մասին է, քանի որ անհատական մակարդակում յուրաքանչյուր մարդ իր կորուստը, վիշտը յուրովի է ապրում՝ անկախ մահացած հարազատի տարիքից) դա համեմտաբար առավել տանելի է և այնքան ցավալի չէ:

Այս ամենին գումարվեց նաև Արցախյան քառասունչորսօրյա պատերազմի անասելի ցավը, երբ հազարավոր զոհված երիտասարդների կորստի ֆոնին, ուշ հասունության տարիքում գտնվող անձանց կորուստը կարծես արժեզրկվել է, և շատ հաճախ կարող ենք լսել, որ <<մարդն արդեն իրենն ապրել էր>>, <<թող բոլորն էլ այդ տարիքում մահանան>> և նմանատիպ այլ արտահայտություններ:

<<ՈՒշ հասունության տարիքը հաճախ անվանում են նաև ծերացման տարիք: Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ այս տարիքն անձի մոտ սկսվում է 60 տարեկանից>>[1]: Տարիքի հոգեբանական առանձնահատկություններով զբաղվում է հերոնտոհոգեբանությունը: Իհարկե, <<այս տարիքի հիմնական առանձնահատկություններից մեկը ծերացման պրոցեսն է, որն օրգանիզմում տեղի ունեցող որոշակի տարիքային փոփոխություններով ուղեկցվող, ժառանգաբար պլանավորված գործընթաց է>>[2]:

Այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ ուշ հասունության տարիքի մարդկանց պոտենցիալը պետք է առանձնահատուկ կարևորվի, քանի որ այս

---

[1] *"Психология человека от рождения до смерти" Коллектив авторов. Под общей редакцией **А. А. Реана**, ООО «Издательство АСТ», М., 2015, стр. 495*

[2] *"Психология человека от рождения до смерти" Коллектив авторов. Под общей редакцией **А. А. Реана**, ООО «Издательство АСТ», М., 2015, стр. 496*

տարիքի մարդիկ հասարակության համեմատաբար առավել փորձառու խավն են, մյուս կողմից, այս տարիքի մարդկանցից շատերը իրենց ֆիզիկական տարիքն առանձնապես չեն զգում, լի են մտահղացումներով և դրանք իրականություն դարձնելու բավարար ներուժով: Պատահական չէ, որ արտասահմանյան ժամանակակից հետազոտողներից շատերը բավականին մեծ ուշադրություն են դարձնում ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող մարդկանց մտածողության առանձնահատկությունների ուսումնասիրմանը: <<Այսօր հետազոտողներից շատերի մոտ կասկած չի հարուցում այն փաստը, որ չնայած հիշողության առավելություններին, երիտասարդները մտածողության որոշակի ոլորտներում զիջում են ուշ հասունության տարիքում գտնվող անձանց և դա ակնհայտ է հատկապես իմաստության դրսևորման մեջ>>[1]:

Բնական է, որ ուշ հասունության տարիքում գտնվող մարդիկ իրենց ծերացման, կենսաթոշակային տարիքի հասնելու, սոցիալական որոշ դիրքեր զիջելու հանգամանքին տարբեր կերպ են վերաբերվում, սակայն ակնհայտ է մի բան, որ նրանցից շատերը դեռևս շարունակում են բավականին մեծ պոտեցիալ ունենալ և պատրաստակամ են իրենց ներուժը ներդնել այն ոլորտներում, որտեղ բավականաչափ բանիմաց են և կարող են մեծապես օգտակար լինել: Նրանցից շատերը, կենսաթոշակի անցնելուն զուգընթաց, աշխատելու կամ շրջապատին որևէ այլ կերպ օգտակար լինելու մեծ ցանկություն ունեն:

Մեր կարծիքով, հասարակության մեջ ուշ հասունության տարիքում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի և նրանց ներուժի օգտագործման, արժևորման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ստանում բարձնագույն ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում <<Զարգացման հոգեբանություն>> ուսումնական առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայով տեսագործնական պարապմունքների կազմակերպման նկատմամբ մեթոդական մոտեցումը, քանի որ ուշ հասունության տարիքի մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, նրանց ունեցած ներուժի օգտագործման հնարավորությունների դիտարկումը, մեծապես կարող է կախված լինել այս տարիքի նկատմամբ երիտասարդ մասնագետների մոտեցումից, նրանց աշխարհայացքից, ուշ հասունության տարիքում գտնվող անձանց պոտենցիալ հնարավորությունների գնահատման դիտակետից:

<<Զարգացման հոգեբանություն>> առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայի ուսուցումը գիտական համապատասխան ոլորտի դիդակտիկ արտացոլումն է, սակայն <<ուսումնական առարկան ներառում է ինչպես ուսումնասիրվող գիտական ոլորտի վերաբերյալ գիտելիքներ, որոնք կուտակված են գիտության տարբեր բնագավառներում, այնպես էլ արդյունավետ դասավանդման ձևեր, հետևաբար

[1] *"Психология человека от рождения до смерти" Коллектив авторов. Под общей редакцией* ***А. А. Реана,*** *ООО «Издательство АСТ», М., 2015, стр. 502*

բովանդակությամբ այն ավելի լայն հասկացություն է, քան գիտական դիսցիպլինը>>[1]:

<<Զարգացման հոգեբանություն>> առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին ապահովել ուշ հասունության և ծերության բովանդակությունը կազմող համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, ընդլայնել ուսանողների մասնագիտական առարկայական ոլորտին սերտ առնչվող հոգեբանական գիտելիքների շրջանակը, նպաստել ուսանողների մոտ աշխատանքային կոմպետենցիաների ձևավորմանը:

Ըստ մեզ, թեմայի ուսուցման ավարտին ուսանողը պետք է արձանագրի կրթական ելքային հետևյալ արդյունքները.

- ուսումնամանկավարժական գործունեության մեջ հոգեբանական գիտելիքը կիրառելու կարողություն,
- ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող անձի հոգեբանական բնութագիրը կազմելու, նրա անձը հոգեբանական մեթոդներով հետազոտելու կարողություն,
- համապատասխան տարիքի անձանց կոլեկտիվի հոգեբանության, միջանձնային հարաբերությունների ոչ բարդ հետազոտություններ անելու ընդունակություններ,
- ուշ հասունության տարիքում գտնվող անձանց մոտ գործունեության տարբեր ձևերի նկատմամբ ներքին մոտիվացիա ձևավորելու և մարդկանց մտահոգացումները, նախաձեռնությունները խրախուսելու կարողություն:

Թեմայի ուսուցման ավարտին ուսանողը կիմանա՝

- Ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող անձի հոգեկանի զարգացման և անձի դրսևորման հիմնական օրենքներն ու օրինաչափությունները,
- Ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող անձի հոգեկան զարգացման հիմնական հիմնահարցերն ու տեսությունները:

Թեմայի ուսուցման ավարտին ուսանողը ունակ կլինի՝

- ուսումնական գործընթացում և հետագա աշխատանքային պրակտիկայում տեղին և ըստ նշանակության կիրառել ուշ հասունության և ծերության տարիքի վերաբերյալ ստացած հոգեբանական գիտելիքները,
- հետազոտել ուշ հասունության և ծերության տարիքի մարդկանց անձի, իմացական և հուզակամային, դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները, դրա համապատասխանությունը հոգեկան զարգացման տարիքային նորմատիվներին,
- Բացահայտել հոգեկան զարգացման դժվարությունները, տարիքով պայմանավորված փոփոխություններն ու ի հայտ եկած խնդիրները, որի հիման

[1] ***Գևորգյան Ս., Վարդանյան Կ., Դալլաքյան Ա.*** *<<Հոգեբանության դասավանդման մեթոդիկա>>, ՈՒսումնամեթոդական ձեռնարկ, <<Զանգակ-97>> հրատարակչություն, Երևան, 2011, էջ26.*

վրա հնարավոր կդառնա նմանատիպ անձանց հոգեբանական ճիշտ աջակցության և ուղեկցման կազմակերպումը:

- Հոգեբանական մեթոդների կիրառությամբ իրականացնել հոգեբանական ոչ շատ բարդ, փոքրածավալ հետազոտություններ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում <<Հերոնտոհոգե-բանություն>> թեմայով տեսագործնական պարապմունքին դասախոսի նախապատրաստական աշխատանքները ընթանում են որոշակի հաջորդական փուլերով:

Պարապմունքի նախապատրաստման առաջին փուլը այս թեմայով նախատեսվող բոլոր պարապմունքների թեմաների որոշակիացումն է: Հերոնտոհոգեբանությանը հատկացված ժամերը կառուցվում են տեսական նյութի ուսումնասիրման, գործնական առաջադրանքների կատարման և թեմայի շրջանակներում վերջնարդյունքի գնահատման սկզբունքով:

Երկրորդ փուլը թեմայի վերաբերյալ գիտամեթոդական գրականության ուսումնասիրումն է: Պետք է առանձնացնել այն աղբյուրները, որոնք ուսումնասիրվելու են դասախոսությունների և գործնական պարապմունքների ընթացքում:

Երրորդ փուլը դասախոսական և գործնական նյութի նախապատրաստումն է կիրառության: Այս փուլի կարևոր խնդիրներից է դասախոսի կողմից դասավանդման սեփական մակարդակի և ուսանողների զարգացածության մակարդակի ռեֆլեքսիան, ուսանողների զարգացածության մակարդակի համադրումը մատուցման համար նախատեսվող նյութի բարդության աստիճանի և որակի հետ[1]:

Չորրորդ փուլում իրականացվում է մեթոդական օժանդակ նյութերի՝ աղյուսակներ, նկարներ, տեսասահիկ, նախապատրաստումը, տեսաֆիլմի և այլ ցուցադրական նյութերի ընտրությունը, անհրաժեշտության դեպքում փորձարարական մասի նախապատրաստումը, կիրառվելիք թեստային և այլ մեթոդիկաների ընտրությունը և նախապատրաստումը[2]:

Հինգերորդ փուլում իրականացվում է կոնկրետ դասի պլանի մշակումը: Այս փուլի պլանավորման ընթացքում պետք է հաշվի առնել սովորողների անհատական առանձնահատկությունները, նրանց առաջադիմությունը, առարկայի և հատկապես թեմայի նկատմամբ սովորողների հետաքրքրության դրսևորման մակարդակը, առաջարկվող մեթոդիկաների հետ աշխատելու հմտությունները, աշխատանքի տեմպը և այլն: Դասախոսը պետք է հաշվի առնի նաև իր դասավանդման ոճը, ուսումնական նյութի մատուցման որակը, տեխնիկական սարքերի առկայությունը և դրանցից օգտվելու հմտությունները,

---

[1] ***Самородский П.С., Симоненко В.Д.*** *Методика профессионального обучения: Учебно-методическое пособие для преподавателя специальности "Профессиональное обучение" / Под ред.* ***В. Д. Симоненко*** *- Брянск: Издательство БГУ, 2009. - С. 22.*

[2] ***Эрганова Н.Е.*** *Методика профессионального обучения учеб. пособие для студентов вузов /* ***Н. Е.Эрганова****. - 2-е изд. стереотип. - М.: Академия, 2008. - С. 34.*

սովորողների ճանաչողական հետաքրքրությունները կառավարելու կարողությունը և այլն:

Հաճախ առավել նպատակահարմար է իրականացնել խառը տիպի պարապմունքներ, որոնք ներառում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական տարրեր. տեսական գիտելիքների յուրացում, հասկացում և ընդհանրացում, ստացած տեսական գիտելիքների ամրապնդում և համակարգում, ստացած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները գործնականում կիրառելու հմտության ձևավորում, այնպիսի ինտելեկտուալ հմտությունների զարգացում, ինչպիսիք են վերլուծությունը, համադրությունը, մակածումը, արտածումը և այլն:

Կարևոր է նաև դասապրոցեսի ընթացքում սովորողների մոտ այնպիսի մասնագիտական նշանակալի որակների ձևավորումը, ինչպիսիք են պատասխանատվությունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը, ճշտապահությունը, ինքնուրույնությունը և այլն:

Մեր կարծիքով, հերոնտոհոգեբանության շրջանակներում թեմայի ընտրության և դրա բովանդակության մշակման ընթացքում դասախոսը պետք է առաջնորդվի սովորողների տեսական գիտելիքների առկա մակարդակով, հաշվի առնի մասնագիտական հմտությունների այն ամբողջությունը, որը պետք է սովորողների մոտ ձևավորված լինի տվյալ առարկայի ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև միջառարկայական կապերի ընկալման ու վերլուծման կարողության զարգացածության մակարդակով, որոնք սովորողին հնարավորություն կտան դիտումներ իրականացնել, բացահայտել երևույթների միջև առկա կապերը, համեմատել երևույթները, վերլուծել դրանք և այլն: Իրականացվող աշխատանքների ամբողջական բովանդակությունը հիմնվում է մասնագետին ներկայացվող մասնագիտական պահանջների վրա, որոնք արտացոլվում են բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան ծրագրում:

Կոնկրետ պարապմունքը պլանավորվում և իրականացվում է հետևյալ փուլերով.

- թեմայի ընտրություն և աշխատանքի նպատակի ձևակերպում,
- տեսական գիտելիքների մատուցում,
- գործնական մասի իրականացման համար անհրաժեշտ տեսական գիտելիքների վերհանում,
- գործնական մասի իրականացում,
- ստացված արդյունքների համակարգում և ընդհանրացում՝ աղյուսակների, գրաֆիկների և այլնի տեսքով,
- պարապմունքի ամփոփում, վերջնարդյունքների ընդհանրացում:

Նոր նյութի ուսուցման ընթացքում կարևոր է նաև զուգահեռ տարվող այլ առարկաների հետ առկա կապերի բացահայտումն ու նոր նյութի հետազոտման, սովորողների մոտ նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման ընթացքում այդ կապերի օգտագործումը:

Գիտելիքների որակական և քանակական աճին զուգընթաց՝ սովորողների ինքնուրույնության նկատմամբ ավելի մեծ պահանջներ են դրվում[1]: Այս տեսանկյունից կարևոր է ուսանողների ինքնուրույն աշխատանքների ձևի, ծավալների և թեմաների նախնական ընտրությունն ու պլանավորումը: *Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Շատ կարևոր է նաև սովորողի ակադեմիական ազնվությունը, ըստ որի ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:*

Դասապրոցեսի ընթացքում նաև սովորողների ձեռք բերած գիտելիքների գնահատում է իրականացվում, ինչը ենթադրում է կոնկրետ դասի կամ տվյալ բաժնի վերաբերյալ իրականացված դասերի արդյունքների վերջնարդյունքների ստուգման, գնահատման ձևերի մշակում:

Սովորողներին, որպես կանոն, դասընթացի սկզբում տրամադրվում է ուսուցանվող առարկայի նկարագիրը և թեմատիկ տրոհումը որտեղ պետք է արտացոլված լինեն առարկայի նպատակը, կրթական ելքային արդյունքները, կրթական ծրագրի վերջնարդյունքները, հիմնական և լրացուցիչ գրականությունը, գնահատման չափանիշներն ու սանդղակները, առարկայի վերջնարդյունքների ստուգման ձևերը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

[1] *Основные этапы планирования урока, подготовки к нему учителя и написание методического плана урока* ***Виленский М., Образцов П., Уман Н****. Технологии профессионально-ориентированного обучения в высшей школе. – М.: Педагогическое общество России, 2009. – С. 91*

ՀՏԴ 159.942

Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ԱրՊՀ հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.

ՎԱԽԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հոդվածում, վերլուծելով վախի՝ որպես հոգեկանի ամենատարածված հուզական վիճակներից մեկի, աստիճանների, ինչպես նաև առաջացման, ձևավորման և ապրման հոգեբանական մեխանիզմների վերաբերյալ արդի մոտեցումները, քննվում է դժվար իրավիճակներում հայտնված անձանց կողմից դրա հաղթահարմանն ուղղված ձևերի ու հնարքների տիրապետման խնդիրը: Եզրակացությունների և երաշխավորությունների մշակման համար կիրառված է հոգեկանի ձևավորման ու գործունեության կենսաբանական-ֆիզիոլոգիական մոտեցումը:

Բանալի բառեր՝ վախվորածություն, զգուշություն, տագնապ, հուզական վախ, սարսափ, խուճապ, վախի վերահսկում, ինքնակարգավորում, հոգեբանական պատրաստություն, հոգեբանական գործոն, «խփիր կամ փախիր ռեֆլեքս»:

В.Ярамишян

ПСИХОЛОГИЧЕСКАЯ РАБОТА ПО ПРЕОДОЛЕНИЮ НЕГАТИВНОГО ВОЗДЕЙСТВИЯ СТРАХА

В статье, на основе анализа современных представлений о психологических механизмах возникновения, формирования и переживания, обсуждается проблема овладения приемами и формами преодоления страха, как одного из самых распространенных эмоциональных состояний психики, лицами, попавших в сложные жизненные ситуации. Для разработки рекомендаций и выводов применен биолого-физиологический подход.

Ключевые слова: испуг, осторожность, тревога, эмоциональный страх, ужас, паника, управление страхом, саморегуляция, психологическая подготовка, психологический фактор, рефлекс «бей или беги».

V.Yaramishyan

PSYCHOLOGICAL WORK ON OVERCOMING THE NEGATIVE IMPACTS OF FEAR

The article discusses the problem of managing the ways and strategies of fear by those in difficult life situations based on analysis of current approaches to the psychological mechanisms of the levels, as well as the emergence and formation of fear as one of the emotional states of mind. To develop the conclusions and recommendations the biological and physiological approach to mental formation and activity is used.
Key words: timorousness, caution, alarm, emotional fear, horror, panic, fear management, self-regulation, psychological preparation, psychological factor, «hit or run» reflex.

Վախի զգացումը բնորոշ է բոլոր մարդկանց: Անտարբերությունը սեփական կյանքի նկատմամբ երբեք չի համարվել խիզախություն: Անվախությունը, քաջությունը, անվեհերությունը, հանդգնությունը, համարձակությունը, արիությունը և նմանատիպ այլ որակները մարդու մոտ ոչ թե վախ չունենալու, այլ վախը վերահսկելու, կառավարելու որակներ են: Մասնագետները նույնպես միակարծիք են այն հարցում, որ որոշ դեպքերում բնական, առողջ վախը, որին կարելի է ***զգուշություն*** անվանել, որոշ իմաստով նույնիսկ կառուցողական դեր է կատարում և թույլ է տալիս խուսափել վտանգավոր իրավիճակներից: Պարզապես հարկավոր է սովորել վերահսկել և կառավարել վախը:

Հատկապես փոքր տարիքում վախը երեխայի կյանքի անբաժանելի մասն է կազմում և հայտնվում է այն ժամանակ, երբ երեխան, օրինակ, հանդիպում է անծանոթ մարդու կամ երբ իր կյանքին սպառնացող վտանգ է զգում ու չի իմանում, թե ինչպես պետք է վերականգնել անվտանգության զգացումը: Տարիքի հետ, ծանոթանալով ըստ էության ավելի սարսափելի օբյեկտների և երևույթների հետ, մարդիկ հիմնականում դադարում են վախենալուց, սովորում են տիրապետել հույզերին ու հաճախ դադարում են վախը հուզականորեն վերապրելուց: Մենք սովորում ենք հաղթահարել մեր կյանքի տհաճ պահերը՝ ընտրելով այն վարքագիծը, որը կարող է վերացնել անհարմարությունը կամ գոնե նվազեցնել այն: Կյանքը սովորեցնում է մեզանից շատերին, գրեթե բոլորին: Անշուշտ, վախի հետևանք հանդիսացող մնացորդային որոշ երևույթներ մնում են՝ տեղ տալով տարաբնույթ չհաղթահարված վախերի ու ֆոբիաների:

Վախի ինքնապաշտպանական գործառույթը դժվար չէ կռահել, քանի որ ակնհայտ է, որ այն բնականորեն է տրված՝ կյանքի ու առողջության համար վտանգավոր իրավիճակները հաղթահարելու և կենդանի օրգանիզմի ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար՝ որպես մեր կամքից անկախ գործող արդյունավետ մեխանիզմ: Ահա թե ինչու, տեղեկացված լինելով այս մասին, վախի գործոնը երբեմն հաջողությամբ օգտագործում են նաև մարզիկները: Այսպես, վազորդներից շատերը մտովի պատկերացնում են, որ իրենց հետապնդում է կատաղած շների ոհմակը: Արդյունքում նրանք ունենում են անհամեմատ բարձր ցուցանիշներ, քան սովորական հոգեվիճակներում: Սակայն վախը միանշանակ չէ և ունի տարբեր աստիճաններ: Օրինակ,

սոսկումի ու սարսափի մակարդակի հասած վախն ի վիճակի է կաթվածահար անելու մարդու հոգեկան և ֆիզիկական ակտիվությունը: Մասնագետները վաղուց նկատել են, որ վախի վնասակար ազդեցությունը գեներացնելու գործում մեծ դերակատարություն ունեն հանկարծակիության ու անսպասելիության գործոնները, ուստի վախի դեստրուկտիվ (ապակառուցողական, քայքայիչ) ազդեցությունը նվազեցնելու համար առաջին հերթին պետք է չեզոքացնել այդ գործոնների ազդեցությունը: Նկատված է նաև, որ վախին առավել հեշտությամբ են դիմակայում նրանք, ովքեր հոգեբանական համապատասխան պատրաստություն են անցել և սովորել են ներքուստ «սանձել» վախը:

Վախի պարզագույն տեսակը ***հուզական վախն*** է, որն առաջ է գալիս վտանգի հետ անմիջական շփման հետևանքով՝ օրգանիզմի ինքնապաշտպանական հակազդեցությունների գործարկման հիման վրա: Չնայած հուզական վախը պարզագույն տեսակ է համարվում, այնուամենայնիվ, խիստ որոշակի իրավիճակներում այն կարող է համակել մարդու ողջ հոգեկանը և խանգարել նրա նորմալ գործունեությանը, հոգեկան պրոցեսների բնականոն ընթացքին:

Երկյուղը, վախվորածությունը մարդու կողմից գիտակցված, հասկացված վախն է, որը վտանգավոր գործողություն կատարելուց առաջ համակում է մարդու հոգեկանին: Վախվորածություն կարելի է անվանել առաջիկա վտանգի մասին տևական մտորումները, դրանց հետ կապված տագնապախռովությունը: Վախվորածությունը և անձնավորության մոտ առկա հոգեբանական այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ կասկածամտությունը, անինքնավստահությունը, ցածր ինքնագնահատականը, հստակ կոռելյացիայի (փոխկապակցվածության) մեջ են:

Վախն ունի նաև դրսևորման բարձրագույն աստիճաններ: Վախի դրսևորման բարձրագույն աստիճաններն են ***սարսափը*** (սոսկումը, զարհուրանքը), ***աֆեկտիվ սարսափը, խուճապը:*** Սարսափը կարող է հետևանք լինել ոչ միայն վտանգի հետ անմիջական շփման, այլ նաև առաջ գալ դրա երևակայման արդյունքում: Վախի ծայրահեղ դրսևորումները վտանգավոր են այն աստիճան, որ կարող են հիվանդագին ազդեցություն ունենալ մարդու առողջության ու հոգեկանի վրա՝ պատճառ դառնալով նևրոտիկ խանգարումների:

Ժամանակակից հոգեբանությունը տիրապետում է մարդկանց բացասական հոգեվիճակների կարգավորման ու հաղթահարման բազմազան ու արդյունավետ մեթոդների, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս մեծ մասամբ խուսափել անցանկալի հետևանքներից: Շատ մարդիկ իրենց կյանքում բազմաթիվ անգամ վախի զգացում են ունեցել և ստիպված են եղել այս կամ այն եղանակով հաղթահարել՝ ի վերջո հասկանալով, որ վախի ու տագնապի զգացումը պարզապես հիմնարար ու նաև պաշտպանական նշանակություն ունեցող հույզեր են, որոնց դեմ պետք չէ պայքարել, որոնց գոյության հետ պետք է հաշտվել ու սովորել ապրել դրանց հետ:

Շատ ուսումնասիրություններում[1] նկարագրված է այսպես կոչվող ***«Ջոնսի ֆենոմենը»:*** Ջոնսը հավաքական կերպար է: Նա ամերիկյան իրականության տիպիկ ներկայացուցիչ է և անցած դարի 60-ական թվականներին դարձել էր պատանիների կուռքը, որովհետև խիզախ էր, վտանգի առջև՝ անվեր ու հակված չէր քննարկելու իր զգացմունքները: Նա անգամ կարող էր արհամարհել տագնապներն ու անխռով մնալ բարդ իրավիճակներում: Արդարության համար պայքարը Ջոնսի համար ավելի կարևոր էր, քան անհանգստությունն ու վախը՝ սեփական կյանքի համար: Հերոսը համարձակ քայլում է վտանգին ընդառաջ՝ միայնակ գործելով դարանակալ հանցախմբի դեմ: Բնական է, որ երեխաների համար նա դարձել էր նմանակման օբյեկտ՝ գերմարդու (supermen) նման: Հանուն այդ նմանության, երեխաները փորձում են, ինչպես Ջոնսը, հաղթահարել վախը, կամ, առնվազն, ձևացնել, թե կարող են այդ անել: Այս նկարագրությունից պարզ է դառնում, թե ինչպես է հասարակությունը խրախուսում երեխաների մոտ վախը թաքցնելու և «խիզախությունը» քարոզելու դիրքորոշումների ձևավորումը:

Բոլոր հասարակություններում էլ վախկոտությունը չի խրախուսվում, ուստի վախեցած մարդը քննադատությունից խուսափելու համար ստիպված է լինում ինչ-որ կերպ թաքցնել վախի զգացումը, ընդ որում, ոչ միայն ուրիշներից, այլև հաճախ ինքն իրենից: Ահա թե ինչու երեխաները մեծանում են ու սովորում կեղծել, ձևացնել, դիմակ հագնել ու իրենց հոգեկանում խեղդել վախի զգացումը: Մարդկանց մեծամասնությունը կենսափորձի հիման վրա մշակել է սեփական խորքային վախերի ժխտման վարքային յուրահատուկ մեխանիզմ:

Հատկանշական է, որ վախի կոնկրետ պատճառները տարբեր մարդկանց մոտ տարբեր են: Երբ մարդիկ լրջորեն վախենում են, ապա չեն ցանկանում խոստովանել: Նրանք հրաժարվում են *վախ* անվանել իրենց համակած տարօրինակ հույզը ու հորինում են ճշմարտանման ինչ-որ բացատրություններ: Այս ամենը ինքնակառավարման խաբեություն է, քանի որ մոլորված մարդիկ հաշվի չեն առնում, որ վախի զգացման մեջ արտառոց ոչինչ չկա, վախը բնորոշ է

---

[1] *Սույն հոդվածը նախապատրաստելու համար մեր կողմից ուսում, նասիրվել են ամերիկյան հոգեբան-հոգեբույժ Բենջամին Կոլոռինի աշխատությունները: Կոլոռինը ոչ այնքան տեսաբան, որքան պրակտիկ մասնագետ է և ունի աշխատանքի մեծ փորձ: Նա նաև բարեգործական ծրագրերով զբաղվող ամերիկյան կազմակերպության՝ «Օլիմպիա» ինստիտուտի հիմնադիր տնօրենն է: «Օլիմպիա» կազմակերպությունը ժամանակին զբաղվել է վիետնամական պատերազմի վետերաններին, հանցագործությունների զոհերին և հոգեկան խեղում ստացած անձանց խորհրդատվական օգնություն ցուցաբերելու հարցերով: Արդյունքում Բ.Կոլոռինը մասնագիտացել է արտակարգ իրավիճակներում հետվնասվածքային սթրեսային խանգարումներ ունեցող անձանց հետ տարվող վերականգնողական աշխատանքերի կազմակերպման ու իրականացման մեջ:*

բոլորին՝ առանց բացառության[1]: Խոսելով սթրեսածին իրադարձությունների մասին, պետք է հիշել, որ դրանք, գրեթե անխուսափելիորեն, ի վիճակի են առաջացնել ինտենսիվ վախ և հոգեկան տառապանքներ: Թաքցնելն անիմաստ է, ավելին՝ վտանգավոր է, քանի որ մերժված, չընդունված, ճնշված ու արտամղված վախը հոգեբանական ինքնապաշտպանական մեխանիզմների գործարկման արդյունքում կարող է մղվել ենթագիտակցության մակարդակ ու այնտեղից ամենաանպատեհ պահերին ակտուալանալ ու կատարել իր դեստրուկտիվ գործառույթը:

Եթե պատահել է այնպես, որ դուք հայտնվել եք ձեր կյանքում տեղի ունեցած որևէ հոգեցունց իրադարձության ազդեցության տակ, ապա հաղթահարման ճանապարհին պետք է առաջին հերթին, առանց ինքնախաբեության, փորձեք խոստովանել, որ դուք իրապես վախեցած եք: Միայն յուրահատուկ ինքնախոստովանությունից հետո դուք կարող եք կառուցողական փոփոխություններ կատարել ձեր հոգեկանում, որպեսզի այն ավելի արդյունավետ պայքարի վախի վնասակար ազդեցությունների դեմ:

Առաջին հերթին հարկավոր է սովորել ***ճանաչել վախը***: Առաջին հայացքից թվում է, թե սովորելու ոչինչ չկա, քանի որ ամեն ինչ պարզ է: Ցավոք, վախի նկատմամբ մեր անհատական վերաբերմունքը պայմանավորված է նույն երևույթի նկատմամբ հանրության բացասական վերաբերմունքով, որի ազդեցությամբ էլ մեզնից շատերը սովորում են ոչ թե ճանաչել վախը, այլ կեղծել ու թաքցնել այն՝ խաբելով բոլորին: Ուստի օգտակար է նախապես ծանոթանալ մի շարք օբյեկտիվ նշանների հետ, որոնք օգտակար կարող են լինել վախը ճանաչելու համար: Նախ քննարկենք, թե ինչպես է վախի զգացումը ազդում մեր մարմնի վրա, ինչը կօգնի հասկանալ, թե ինչու են թաքնված վախերը վնասակար ազդեցություն ունենում մարդու առողջության վրա:

Կենտրոնական նյարդային համակարգը, որը գլխուղեղից բացի ներառում է բազմաթիվ նյարդեր, նման է ժամանակակից համակարգչի, որի օպերացիոն համակարգը կառավարում է ծայրամասերի աշխատանքը՝ նրանցից ստանալով տարաբնույթ ազդակներ և մկանային համակարգին տալով համապատասխան հրամաններ, որպեսզի գործեն իրավիճակի համաձայն: Չխորանալով մանրամասների մեջ՝ նկարագրենք նյարդային համակարգի միայն մեկ տեսակի հրաման, որը վախի օբյեկտի հետ առերեսվելու դեպքում անմիջականորեն տրվում է մկանային համակարգին: ***Այդ ռեֆլեքսը կոչվում է «խփիր կամ փախիր»:*** Ռեֆլեքսը տեղ ունի այն դեպքերում, այսինքն՝ մեր օրգանիզմն առանց վարանելու օգտագործում է այն, երբ մենք վախենում ենք ինչ-որ բանից կամ անմիջականորեն զգում ենք մոտալուտ վտանգը: Վտանգի ազդանշանով

---

[1] *Խոսքը հոգեպես առողջ մարդկանց մասին է, ուստի բացառություն պետք է համարել որոշ հոգեկան խանգարումներ ունեցող մարդկանց մոտ վախի նկատմամբ բացարձակ անընկալությունը:*

գործարկվում է ֆիզիոլոգիական և կենսաքիմիական փոփոխությունների մի ամբողջ շղթա՝ արագանում են սրտի զարկերը և շնչառությունը, մեծանում է մկանային լարվածության մակարդակը, ադրենալին և այլ հորմոններ են արտադրվում և կայծակնային արագությամբ ներակրկվում արյան մեջ՝ փոխելով նրա կազմը, բարձրանում է զարկերակային ճնշումը և այլն: Ռեակցիաների այս ամբողջ համալիրն է համատեղ կոչվում «խփիր կամ փախիր» ռեֆլեքս: Հետևանքը լինում է այն, որ մարմինը կամ մղվում է առաջ՝ հարվածելու, ոչնչացնելու, տիրապետելու վախի օբյեկտին, եթե այն թվացել է թույլ և հաղթահարելի, կամ էլ, առանց հստակ ուղղվածություն ունենալու, փախուստի է դիմում: Փախուստի ձևեր են նաև շփոթվելը, կարկամելը, արգելակվելը:

Բոլոր արագորեն տեղի ունեցող գործընթացների հիմնական արդյունքն այն է լինում, որ ակտիվության կտրուկ բարձրացումը և էներգիայի ներհոսը կարողանա ապահովել առավել արդյունավետ գործելը, երբ հանդիպել ենք վտանգի: Որքան մեծ է սպառնալիքը, որքան մեծ է վախի հուզական ընկալումը, այնքան ավելի շատ էներգիա է տրվում: Անկախ նրանից՝ մենք գիտակցում ենք, թե ոչ, միևնույն է, մեր նյարդային համակարգը և ֆիզիոլոգիան իրենց գործն անում են: Մարմինը ակնթարթորեն մոբիլիզացվում է, դառնում զգոն՝ օգնելով մեզ գոյատևել: Այս ռեֆլեքսը ձևավորվել է մարդու երկարատև էվոլյուցիայի ընթացքում և մեկ անգամ չէ, որ հավատարմորեն ծառայել է մեր անվտանգության ապահովման գործին:

Ամեն անգամ, երբ մենք որևէ առնչություն ենք ունենում թվացյալ թե իրական վախի օբյեկտի հետ (նույնիսկ եթե իրավիճակը ընկալվում է սխալ, խեղաթյուրված), ուղեղը հրաման է տալիս համապատասխան կենտրոններին, և ամեն ինչ տեղի է ունենում ճիշտ նույն մեխանիզմով, կարծես իրական վտանգ է սպառնում:

Current trends in the Pharmaceutical industry require new translational approaches for pre-clinical test. Those aspects can be achieved by animal experiments in which not only one variable (e.g. one behavior) at the time is analyzed but rather a multidimensional approach (physiology +several behaviors + Ultra Sounds Vocalization + different parameters from study) is applied. Therefore, automation and integration of different measuring technologies become the crucial aspects in this process. The behavioral tests that are used in the ASD animal models studies, are not always of procedural standard.

Furthermore, contradictive results have been found. Standardizing procedures is important in this field of research. However, these experiments should be designed in a way that the animal is minimally restricted in performing its natural behavior, therefore Stress-free collection of continuous rodent behaviors and constant environmental conditions are crucial.

Currently, there is lack of a gold standard in behavioral phenotyping research. This is illustrated by the observation that many behavioral tests are used to measure the same parameter on basis of different definitions. In the case of ASD, stereotypies are most often measured in duration of self-grooming, although some studies think of a different way to quantify this behavior (duration or frequency in time bins). Furthermore, the fact that a different parameter is used here, makes it difficult to compare the results of this experiment to quantifications of Grooming behavior in other studies. For USV vocalization study there is no standard measuring parameters, often not standard and constant environmental conditions and not standard ultrasounds call classification model. By critically reviewing and investigating all USV rodents call models that are currently used, Metris BV has developed definitions and powerful algorithm: Sonotrack automated ultrasonic call classification for mice.

Validated gold standard phenotyping testes for quantifying behavioral parameters is essential for behavioral research.

We have proceeded far along the road towards an ideal measuring method of ASD with Laboras and Sonotrack system. By critically reviewing all ASD animal models that are currently used, and the behavioral phenotyping assays that are applied, future directions are pointed out. Animal models are always a compromise between mimicking the complexity of the actual disorder and designing practical experiments. Combining knowledge, we narrow down the funnel towards not only a gold standard model, but also a gold standard behavioral phenotyping strategy, thereby increasing the translational capacity of the animal model.

References

Etiology of infantile autism: a review of recent
Trottier G, Srivastava L, Walker CD., 24-03-1999
Global Prevalence of Autism and Other Pervasive Developmental Disorders
Elsabbagh M, Divan G, Yun-Joo Koh YJ , 5-06-2012
Time trends in reported autistic spectrum disorders in Israel, 1972-2004.
Senecky Y, Chodick G, Diamond G, Lobel D, Drachman R, Inbar D., 16-07-2011
Autisme Grande Cause
Wayback Machine; 04-04-2012
Prevalence of Autism Spectrum Disorders in a Total Population Sample
Young Shin Kim, Bennett L. Leventhal, 1-09-2011

Translational animal models of autism and neurodevelopmental disorders
Jacqueline N. Crawley, 14-09-2012
Behavioural methods used in rodent models of autism spectrum disorders: Current standards and new developments
Wöhr, M.; Scattoni, M. L; 15-08-2013
Finding an Animal Model for Language Development
Stephanie A. White; 23-04-2007
Enhanced synapse remodelling as a common phenotype in mouse models of autism
Masaaki Isshiki, Shinji Tanaka, Toshihiko Kuriu, 21-08-2014
Behavioral Alterations in Rats Prenatally Exposed to Valproic Acid: Animal Model of Autism
Tomasz Schneider & Ryszard Przewłocki, 7-07-2004
LABORAS™: Initial pharmacological validation of a system allowing continuous monitoring of laboratory rodent behaviour
Neil Upton, Leann P Quinn, Brenda Trail, 12- 2003 Journal of Neuroscience Methods
THE IMPORTANCE OF THE ENERGY PARAMETER IN BEHAVIORAL PHARMACOLOGY
L. Bachdasarian, October 2008
Enhanced technologies and integration parameters of pre-clinical studies
Levon Bachdasarian, Ronald Bulthuis, E Molewijk, January 2013
Stress-free monitoring of development in rats using the litter [dam + pups] as measuring unit - ScienceDirect
Didimade Groot, Roderick Slieker, Anna Beker van Woudenberg, Andre Wolterbeek, Marlies Otto, Ronald Bulthuis, Levon Bachdasarian, 15-08-2015

Publications asbout Laboras system
A TBR1-K228E Mutation Induces Tbr1 Upregulation, Altered Cortical Distribution of Interneurons, Increased Inhibitory Synaptic Transmission, and Autistic-Like Behavioral Deficits in Mice
Yook, C.; Kim, K.; Kim, D.; Kang, H.; Kim, S-G.; Kim, E.; Kim, S.Y., Frontiers in Molecular Neuroscience, 9 October 2019
NGL-2 Deletion Leads to Autistic-like Behaviors Responsive to NMDAR Modulation
Um, S.M.; Ha. S.; Lee, H.; Kim, J.; Kim, K.; Shin, W.; Sul, Y.S.; Roh. J.D.; Kang, J.; Yoo, T.; Noh, Y.W.; Choi, Y.; Bae, Y.C.; Kim, E., 26-06-2018
Striatopallidal dysfunction underlies repetitive behavior in Shank3-deficient model of autism
Wang, W.; Li, C.; Chen, Q.; Van der Goes, M.; Hawrot, J.; Yao, A.Y.; Gao, X.; Lu, C.; Zang, Y.; Zhang, Q.; Lyman, K.; Wang, D.; Guo, B.;

Wu, S.; Gerfen, C.R.; Fu, Z.; Feng, G., 1-05-2017
Development of an autism severity score for mice using Nlgn4 null mutants as a construct-valid model of heritable monogenic autism
El-Kordi, A.; Winler, D.; Hammersmidt, K.; Kästner, A,; Krueger, D.; Ronnenberg, A.; Ritter, C.; Jatho, J.; Radyushkin, K.; Bourgerone, T.; Fischer, J. Brose, N.; Ehrenreich, H., 23-11-2012
Lrig1 expression prospectively identifies stem cells in the ventricular-subventricular zone that are neurogenic throughout adult life
Nam, H-s.; Capecchi, M.R., March 2020
Corticostriatal circuit defects in Hoxb8 mutant mice
Nagarajan, N.; Jones, B.W.; West, P.J.; Marc, R.E.; Capecchi, M.R., 26-09-2017
Striatopallidal dysfunction underlies repetitive behavior in Shank3-deficient model of Autism
Capecchi, M.R.;Nagarajan, N.; Jones, B.W.; West, P.J.; Marc, R.E., 5-08-2017
Hematopoietic Origin of Pathological Grooming in Hoxb8 Mutant Mice
Hematopoietic Origin of Pathological Grooming in Hoxb8 Mutant Mice
Chen, S.K., Tvrdik, P., Peden, E. Cho, S.; Wu, S.; Spangrude, G.; Capecchi, M.R., 28-05-2010

Publications asbout Sonotrack system
Developmental disruption of amygdala transcriptome and socioemotional behavior in rats exposed to valproic acid prenatally
Barret, C.E.; Hennessey, T.M.; Gordon, K.M.; Ryan, S.J.; McNair, M.L.; Ressler, K.J.; 1-08-2017
A sexually dichotomous, autistic-like phenotype is induced by Group B Streptococcus maternofetal immune activation; Autism Research
Allard, M.; Bergeron, J.D.; Baharnoori, M.; Srivastava, L.K.; Fortier, L.; Poyart, C, 25-05-2016

Publication about SmartChamber sytem
Prenatal minocycline treatment alters synaptic protein expression, and rescues reduced mother call rate in oxytocin receptor-knockout mice - PubMed (nih.gov)
Shinji Miyazaki, Yuichi Hiraoka, Shizu Hidema, Katsuhiko Nishimori ; 27-02-2016

Basic information
Definition of Autism - Autism Awareness (autismawarenesscentre.com)

Autism study suggests connection between repetitive behaviors, gut problems: Severity of GI symptoms, other autism symptoms also associated -- ScienceDaily
Gastrointestinal Disorders and Autism | SpringerLink
Data and Statistics on Autism Spectrum Disorder

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը։

ՀՏԴ 347

Դատավարական իրավունք

Գրետա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ., ԱՀ վաստակավոր իրավաբան
E-mail: arzumanyan.greta@mail.ru

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում դատական քննության հրապարակայնության սկզբունքի իրավական բնույթը և գործողության շրջանակները բացահայտվել են Արցախի Հանրապետության դատավարական իրավունքի բոլոր ճյուղերի հաշվառմամբ, համալիր կերպով: Պարզաբանվել է այդ սկզբունքի կարևոր նշանակությունը արդարադատության իրականացման գործում: Ընդգծվել է հրապարակայնության սկզբունքի կոնվենցիոն և սահմանադրաիրավական կարգավիճակը, հիմնավորվել, որ այդ սկզբունքն իրացվում ու դինամիկ զարգացում է ապրում նորանկախ և ժողովրդավարական պետություն հանդիսացող Արցախի Հանրապետությունում: Ցույց են տրվել տեսական և կիրառական բնույթի հիմնախնդիրները, ներկայացվել Արցախի Հանրապետության դատական քննության հրապարակայնությունը կարգավորող օրենսդրության ու դատական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Բանալի բառեր՝ Արցախի Հանրապետության դատավարական իրավունք, դատական քննության հրապարակայնության սկզբունք, դռնբաց դատական նիստ, դատական ակտերի հրապարակում, դատական քննության հրապարակայնության սահմանափակում, դռնփակ դատական նիստ, լրագրողներ, դատական նիստի կամ դրա մի մասի ֆիքսում, տեղեկություններ ստանալու իրավունք:

Г. Арзуманян

ГЛАСНОСТЬ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА

В статье были раскрыты правовая природа и пределы действия принципа гласности судебного разбирательства комплексно- во всех отраслях процессуального права Республики Арцах, а также разъеснено важное значение этого принципа в деле осуществления правосудия. Был подчеркнут конвенционный и конституционно-правовой статус принципа гласности и было обосновано, что

этот припцип динамично развивается во вновь созданном и демократичном Республике Арцах.
Были показаны проблемы теоритического и практического характера и представлены предложения, направленные на усовершенствование законадательства, регулирующего глассность судебного разбирательства.
Ключевые слова: процессуальное право Республики Арцах, принцип гласности судебного разбирательства, открытое судебное заседание, оглашение судебных актов, ограничение гласности судебного разбирательства, закрытое судебное заседание, журналисты, фиксация хода судебного заседания или его части, право на получение информации.

G. Arzoumanyan

PUBLICITY OF PROCEEDINGS

The article reveals comprehensively the legal nature and limitation of publicity of proceedings principle in all the branches of procedural law of the Republic of Artsakh, as well as the importance of this principle in administration of justice.The author underlines the legal status of the publicity principle being conventional and constitutional. It was justified that this principle is being implemented and is developing dynamically in the newly independent democratic Pepublic of Artsakh. The oretical and practical problems were shown along with ptoposals aimed at improving the legislation which regulates the publicity of proceedings.
Key words: publicity of proceedings principle, open court, announcement of the judgement, limitation of publicity of proceedings, procedural law of the Republic of Artsakh, announcemevit of a judgement, ,closed proceed, publication of judicial acts, journaeists, fixation of proceedings or of its part, right to recieve information.

Դատական քննության հրապարակայնությունը պատմականորեն փոխարինել է գաղտնի (դռնփակ) դատավարությանը: Դատական քննության հրապարակայնության սկզբունքը Ռուսաստանում, որի կազմում 19-րդ դարի սկզբում հայտնվել էի նաև Հայաստանն ու Արցախը, առաջին անգամ իր օրենսդրական ամրագրումը ստացել է 1864 թվականին, Դատական կանոնագրքերում: Այդ ժամանակներում էլ դատավարագիտության մեջ տրվել է դրա հիրավի դասական բնորոշումը, այն է՝ հրապարակայնությունը հանրության համար դատական նիստերի մատչելիությունն է, ինչպես նաև անորոշ շրջանակի անձանց համար դատական ակտերին ծանոթանալու հնարավորությունը[1]: ՀՀ Սահմանադրական դատարանն իր 11.04.2012թ. ՍԴՈ-1020 որոշմամբ, անդրադառնալով հրապարակայնության սկզբունքին, արձանագրել է. «...Դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման

[1] Տե՛ս,ո ր ինակ, ***Малышев К. И.***, *Курс гражданского судопроизводства, h.1, СПб,1874, էջ 374:*

հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ» :

Դատական քննության հրապարակայնությունը Արցախի Հանրապետությունում սահմանադրական սկզբունք է: «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ, սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք[1] :

Դատական քննության հրապարակայնության սկզբունքի վերաբերյալ ընդհանուր կանոն առկա է դատական իշխանության և դրա գործունեության կազմակերպումը կարգավորող ԱՀ դատական օրենսգրքում (ընդունվել է 21.07.2017թ.), իսկ սկզբունքն առարկայացվել է դատավարական օրենսգրքերում՝ ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ընդունվել է 17.12.2008թ.), ԱՀ քրեական դատավարության օրենսգրքում (ընդունվել է 17.12.2008թ.): Սակայն այդ դատավարական օրենսգրքերը, ընդունված լինելով Սահմանադրության ընդունումից շատ ավելի շուտ, ԱՀ Սահմանադրության ու ԱՀ դատական օրենսգրքի վերոնշյալ դրույթներին որոշ դեպքերում չեն համապատասխանում(դրան կանդրադառնանք հետագա շարադրանքում):

Քրեական գործերով դատական քննության հրապարակայնությունը սահմանված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, քաղաքացիական գործերով՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ, 105-րդ, 160-րդ հոդվածներով: Հրապարակայնությունը ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն սահմանված չէ, սակայն իրացվում է. ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի (ընդունվել է *17.12. 2008թ.*) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նաև ԱՀ դատական օրենսգրքով, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

---

[1] *Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը միջազգային փաստաթղթերին միանալու հնարավորությունից զրկված է՝ դեռևս չճանաչված լինելու պատճառով: Այնուամենայնիվ, հանրապետության դատարանները՝ որպես ժողովրդավարական պետության դատարաններ, կազմավորվելուց անմիջապես հետո սկսել են կիրառել Եվրոպական կոնվենցիայի դրույթներն ու ղեկավարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներով: 2015 թվականի ապրիլի 15-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի դիմումի հիման վրա քննության առնելով Եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը, որոշել է, որ դրանք համապատասխանում են Սահմանադրությանը (ԼՂՀ Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվել է 20.04.2015թ., ԼՂՀ Նախագահի կողմից վավերացվել՝ 15.05.2015 թ.):*

Գործող օրենսդրությամբ, սակայն, որոշ հարցեր չեն լուծվել կամ թերի են լուծվել և այլն: Կարևոր է հանրային ու մասնավոր շահերի միջև հավասարակշռություն գտնելու հարցը: Առկա են խնդիրներ նաև հրապարակայնության սկզբունքի իրացման գործում: Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք քննարկել նաև արդիական այդ հիմնախնդիրները և առաջարկել լուծումներ:

Դատական քննության հրապարակայնությունն ապահովվում է դռնբաց դատական նիստի անցկացմամբ: Արցախի Հանրապետության դատարաններում դատական նիստերը դռնբաց են: Դռնբաց դատական նիստին կարող է ներկա լինել յուրաքանչյուր քաղաքացի, այդ թվում՝ զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ (լրագրողներ): Ցանկացողները դատարաններում գտնվող գործերի, գործը քննող դատարանի, կողմերի, նիստերի ժամանակացույցի, գործի շարժի մասին տեղեկությունները կարող են ստանալ ԱՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում :

Դատավարության մասնակիցները և դռնբաց դատական նիստին ներկա այլ անձինք իրավունք ունեն կատարելու գրառումներ, սղագրություն, ձայնագրություն, ինչի համար դատարանի թույլտվությունը չի պահանջվում: Դատարանի թույլտվությունն անհրաժեշտ է միայն դատական նիստի կամ դրա մի մասի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ հեռահաղորդակցության կապի այլ միջոցով կատարելու դեպքում՝ կողմերի համաձայնությամբ:

Իսկ եթե կողմերը համաձայն չե՞ն, ինչի հետևանքով լրագրողները չեն կարողանում իրականացնել, օրինակ, դատական նիստի լուսանկարահանում, տեսաձայնագրում և այլն: Դատական պրակտիկայում հազվադեպ չեն նման դեպքերը: Օրենսդիրն այդ հարցը չի կարգավորել: Գործող դատավարական օրենսդրությունը լրագրողին դատարան միջնորդություն ներկայացնելու իրավունք ընդհանրապես չի վերապահում: Մեր կարծիքով՝ եթե դատարանը գտնում է, որ դատական նիստի կամ դրա մի մասի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ հեռահաղորդակցության կապի այլ միջոցով չեն հանգեցնի դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտմանը, ապա նա չպետք է կաշկանդված լինի դատավարության մասնակիցների սուբյեկտիվ և չփաստարկված պատճառաբանություններով: Այդ հարցերն անհրաժեշտ է կարգավորել օրենսդրորեն[1]: Գաղտնիք չէ, որ լրագրողները (լրատվամիջոցները) դատաքննության հրապարակայնության ապահովման հարցում էական դերակատարություն ունեն: Մեծ է նրանց դերը դատական իշխանության

---

[1] *Այդ մասին, տե՛ս նաև Դռնբաց դատական նիստերի լուսաբանման խոչընդոտներն ու սահմանափակումները Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտություն, Երևան, 2017:*

հանդեպ վստահության ձևավորման և ամրապնդման գործում: Ժամանակը չէ՞, արդյոք, որ օրենսդիրը դիտարկի այդ անձանց դատավարական իրավահարաբերությունների սուբյեկտ ճանաչելու հնարավորությունը՝ համապատասխան իրավունքներ և պարտականություններ վերապահելով: Իսկ որ դատավարական իրավահարաբերությունների սուբյեկտներ որոշ դեպքերում կարող են լինել նաև դատավարությանն անմիջապես չմասնակցող և դատական նիստին ներկա գտնվող անձինք, նշվել է նաև գրականության մեջ[1]:

Դատական քննության հրապարակայնությունը ենթադրում է նաև դատավարության արդյունքների հրապարակում դատական նիստի ընթացքում ու պաշտոնական հրապարակում: ԼՂՀ դատական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի վերջնական (եզրափակիչ), իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են հրապարակման: Դատական նիստի ընթացքում հրապարակելու դեպքում հրապարակվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Գործը քննող դատարանի, կողմերի, գործի էության, նիստերի ժամանակացույցի, գործի շարժի մասին տեղեկությունները, վերջնական (եզրափակիչ) դատական ակտերը պարտադիր հրապարակվում են Արցախի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, ինչպես նաև երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը հրապարակվում են այդ անձնական տվյալներն ապանձնավորված: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Գերագույն դատարանի կայացրած որոշումները ենթակա են պարտադիր հրապարակման նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում (3-րդ,6-րդ,8-րդ կետեր):

Դատական նիստում դատական ակտի հրապարակման ժամանակ դատավորի հատուկ կարծիքի առկայության մասին հայտարարվում է, սակայն այն չի հրապարակվում[2]:

Ինչու՞ է անհրաժեշտ հրապարակային դատաքննությունը:

Դատական քննության հրապարակայնությունը դատավարության ժողովրդավարական ձևի բաղադրիչներից մեկն է, արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր և ապահովում է արդարադատության մատչելիություն ու թափանցիկությունը: Հանրությունը հետամուտ է դատական իշխանության բնագավառում խորապես տեղեկացված լինելուն:

Հրապարակայնությունը դատավորների անկախության սկզբունքի կարևոր երաշխիքներից է. հրապարակայնության պայմաններում դժվար է ազդել

---

[1] *Տե՛ս,օրինակ, Гражданский процесс: Учебник, под ред .М.К. Треушникова, Статут. М.-2014, էջ119:*

[2] *ՀՀ դատավարական օրենսդրությամբ նախատեսված է, որ հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հետ միաժամանակ:*

դատավորի վրա, ինչը երաշխավորում է վերջինիս անկախությունը և անձեռնմխելիությունը: Այն ունի նաև դաստիարակչական նշանակություն:

Հրապարակայնությունը դատավորների, դատավարության մասնակիցների վրա դրական ազդեցություն է ունենում նրանց կողմից օրենսդրության նորմերը պահպանելու, իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարելու առումով, ինչն իր հերթին գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտերի կայացման նախադրյալ է: Միայն հրապարակային դատաքննության ժամանակ է հնարավոր կողմերի իրական մրցակցությունը:

Հրապարակայնությունը տեղեկություններ ստանալու սահմանադրական իրավունքի երաշխիք է:

Դատական քննության հրապարակայնությունը մեծ նշանակությյուն ունի նաև բնակչության իրավագիտակցության բարձրացման գործում. քաղաքացիները հնարավորություն են ստանում հետևելու արդարադատության իրականացմանը, ծանոթանալու գործող իրավունքին և այլն:

Դատական քննության հրապարակայնությունը կարող է սահմանափակվել, անցկացվել դռնփակ դատական նիստ, որտեղ կողմնակի անձանց մուտքը չի թույլատրվում: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝ մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը[1]: Փոքր ինչ այլ ձևակերպում, սակայն ըստ էության նույն բովանդակությունն ունեն նաև ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասը և ԱՀ դատական օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչը չի կարելի ասել ԼՂՀ դատավարական օրենսգրքերի համապատասխան դրույթների մասին:

Այսպես, օրինակ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գործի քննությունը դռնփակ դատական նիստում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ միջնորդությունը դատարանի

---

[1] *Դռնփակ դատաքննությունն այս տեսանկյունից հանդես է գալիս իբրև հրապարակայնության սկզբունքի և դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջև ներդաշնակ հավասարակշռությունը պահպանելու երաշխիք:*

կողմից բավարարվելու դեպքում: Հետևում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված են դռնփակ դատական նիստ անցկացնելու նաև պարտադիր դեպքեր (որդեգրման, պետական գաղտնիք պարունակող գործերով):

Գ.Ս. Կոստանյանն իրավացիորեն նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը ամեն մի գործով դատական նիստը կամ դրա մի մասը ոչ հրապարակային անցկացնելու հարցի լուծումը թողնում է դատարանին: Վերջինս որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի պաշտպանվող սոցիալական արժեքների կարևորությունը ինչպես անհատի, այնպես էլ հասարակության և պետության համար: Ամեն դեպքում, այդ որոշումը պետք է լինի պատճառաբանված: Ոչ հրապարակային դատավարություն անցկացնելու միակ հիմքը հանգում է նրան, որ հրապարակայնությունը կարող է վնասել բարոյականությանը, հասարակական կարգին, ազգային անվտանգությանը, անչափահասների շահերին, մասնավոր կյանքին և արդարադատության շահերին[1]: Ի դեպ, 2018 թ. ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է, որ դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում: Այսինքն՝ օրենսգրքի նորմի ձևակերպումը լրիվությամբ համապատասխանեցվել է կոնվենցիոն նորմին: Անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ իրականացնել նաև ԼՂՀ դատավարական օրենսգրքերում:

Դռնփակ դատական նիստի պարագայում հրապարակայնության սկզբունքի գործողությունը դրսևորվում է նրանում, որ դատական ակտերը հրապարակվում են: Դրանցում չպետք է տեղ գտնեն այնպիսի տվյալներ, որոնք հիմք են ծառայել դատական նիստը դռնփակ անցկացնելու համար:

Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու հարցը լուծվում է դռնփակությյան պայմաններում: Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու մասին դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում:

Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է դատավարության կանոնների պահպանմամբ:

---

[1] *Տե՛ս* ***Կոստանյան Գ. Ս.****, Պետության հայեցողության հիմնախնդիրները սահմանադրաիրավական և կոնվենցիոն կարգավորումների համատեքստում, իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2017 :*

Դռնփակ դատական նիստում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումն արգելվում է:

Հրապարակայնության սկզբունքը ենթադրում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի(բանավոր լսումների) կիրառում[1]: Այն իրացվում է նաև պարզեցված վարույթներում:

Դատարանի վերջնական (եզրափակիչ), իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են հրապարակման՝ անկախ դատական քննության անցկացման ձևից:

Հրապարակայնության սկզբունքի խախտումը համարվու՞մ է, արդյոք, դատական ակտի բեկանման հիմք [2]:

ԼՂՀ դատավարական գործող օրենսգրքերի համաձայն՝ դատավարության սկզբունքի խախտումը դատական ակտի բեկանման անվերապահ հիմք չի հանդիսանում, այն կարող է միայն դատական ակտի բեկանման հիմք հանդիսանալ:

Այսպես, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասը, ի թիվս այլոց, սահմանում է, որ բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում: Նույն օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ այդ օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող են ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Ռուսական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ հրապարակային դատաքննության դրույթները խախտելը և հրապարակային դատաքննություն չիրականացնելը դատավարական օրենսգրքերում պետք է ամրագրվի որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, ինչն անհրաժեշտ երաշխիքներ կստեղծի հրապարակայնության սկզբունքի ապահովման համար[3]:

---

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 11.04.2012թ. ՍԴՈ -1020 և 02.04.2019թ. ՍԴՈ -1452 որոշումները:

[2] ԱՀ դատական պրակտիկայում դատական ակտի բեկանման նման դեպք չի արձանագրվել:

[3] Տե՛ս Вдовина Е.И. Принцип гласности в гражданском процессе, автореф.канд.наук https://www.dissercat.com/content/printsip-glasnosti-v-grazhdanskom-protsesse. Տե՛ս Петршин А.П. Нарушение конституционного принципа гласности как основание для отмены судебного решения. Ի դեպ, Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկայում 2021 թվականին առաջին անգամ

Օրինակ՝ Ն. Ստարոկադոմսկին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով, որով դատական նիստի մի մասն անցկացվել է քննչական մեկուսարանում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 13.03. 2014թ. նման դիրքորոշում է հայտնել: Այս մոտեցումը, մեր կարծիքով, ընդունելի է՝ մանավանդ քրեական դատավարության պարագայում[1]: Դատավարության սկզբունքներն իրավունքի տվյալ ճյուղի համակարգի հիմքում դրվող կենտրոնական հասկացություններ են, դատավարության համար հիմնադրական նշանակություն ունցող գաղափարներ, առանցքային հիմունքներ, նորմատիվ դրույթներ[2],սահմանադրական պահանջներ, որոնց խախտումները մյուս դատավարական խախտումների համեմատ էական են, քանի որ խաթարում են դատարանի՝ իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և բոլոր դեպքերում պետք է ենթակա լինի բեկանման. այս հարցն անհրաժեշտ է կարգավորել օրենսդրորեն[3]:

Ուշագրավ է, որ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի(2021թ.) 362-րդ հոդվածի 1-ին մասը, ի թիվս այլոց, սահմանում է, որ դատական վերանայման արդյունքով բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում(կետ 3-րդ), նույն հոդվածի 4-րդ մասն ուղղակիորեն նախատեսում է, որ քրեադատավարական օրենքի էական խախտում է դատական վարույթի ընթացքում քրեական վարույթի որևէ սկզբունքի խախտումը(արդարացման դատավճռի պարագայում նախատեսվել են բացառություններ):

արձանագրվել է դատաքննության հրապարակայնության սկզբունքի խախտման հիմքով դատավճիռների բեկանման երկու դեպք(տե՛ս http://rapsinews.ru/judicial_news/20210402/306924454.html):

[1] Քրեադատավարական իրավունքը կարգավորում է հասարակության համար հույժ կարևոր հարաբերությունների համակարգ, և դրա կարգագրերի խախտումները հղի են ծանր հետևանքներով ինչպես հասարակության և պետության, այնպես էլ առանձին քաղաքացիների համար: Ավելին, մարդու իրավունքների խախտումների վտանգավորությունը կյանքի մյուս ոլորտների համեմատ քրեական դատավարությունում ավելի մեծ է (տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս,4-րդ հրատ., հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր Գ.Ս. Ղազինյան,Երևան-2019, էջ 706):

[2] Տե՛ս,օրինակ, Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Ոսկան Երևանցի, Ե.-2012, էջ 65, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս,4-րդ հրատ., հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր Գ.Ս. Ղազինյան,Երևան-2019, էջ 124:

[3] Հայրենական քաղաքացիական դատավարությունում հրապարակայնության սկզբունքի խախտումը դատական ակտի անվերապահ բեկանման հիմք չի համարել Վ.Վ.Հովհաննիսյանը(տ՛ես Հովհաննիսյան Վ. Վ. Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղքաիական դատավարությունում, Երևան, ԵՊՀ հրատ.,2013):

Դատական նիստում ներկա լինելու, դատական քննության ընթացքի ֆիքսման իրավունքների չարաշահումները համարվում են դատական նիստի կարգի խախտումներ, որոնց դեպքում դատարանի կողմից կարող են կիրառվել օրենսդրությամբ նախատեսված սանկցիաներ:

Դատարանը պարտավոր է հարգել դատավարության հրապարակայնության սկզբունքը: Դատավորների կողմից դիտավորությամբ այնպիսի պայմաններ ստեղծելը, որոնք կսահմանափակեն կամ կբացառեն հանրության, այդ թվում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մուտքը դռնբաց դատական նիստ կամ դրա ֆիքսմանը խոչընդոտելը, հիմք են դատավորների նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու համար՝ ԱՀ դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի ուժով:

Դատական նիստի ընթացքն օրենքով սահմանված կարգով արձանագրվում է: Հարկ է նշել, որ դատահիրավական բարեփոխումների շրջանակում վերջին տարիներին ԱՀ Գերագույն դատարանի, ԱՀ Վերաքննիչ դատարանի, ԱՀ Առաջին ատյանի դատարանի նստավայրերի դատական նիստերի դահլիճներում տեղադրվել ու գործում է դատական նիստերի ընթացքի ձայնագրման համակարգ: Ցավոք, 2021թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմը և դրա հետևանքները բացասական ազդեցություն թողեցին նաև դատահիրավական բարեփոխումների ընթացքի վրա, ներկայումս Ադրբեջանի վերահսկողության տակ են գտնվում ԱՀ Առաջին ատյանի դատարանի Հադրութի և Շուշիի նստավայրերը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը:

ՀՏԴ 343

Իրավագիտություն

Տաթևիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ի.գ.թ., ԱրՊՀ իրավունքի ամբիոն

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ԸՍՏ ԱՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Մեկ անձի կողմից մի քանի հանցավոր արարքների կատարումը հատուկ ուշադրություն է պահանջում պետությունից, քանի որ յուրաքանչյուր նոր հանցագործությամբ աճում է անձի կողմից հասարակությանը պատճառվող վնասի չափը: Նման հանցավոր դրսևորումներին հակազդելու անհրաժեշտությունը պայմանավորում է հանցագործությունների բազմակիության հասկացության գիտական և գործնական մշակումը: Դրա վերաբերյալ նորամուծություն է ՀՀ նոր քրեական օրենսգրքում այդ ինստիտուտի ամրագրումը և հասկացության սահմանումը:

Բանալի բառեր՝ հանցագործությունների բազմակիություն, հանցագործությունների համակցություն, կրկնակիություն, ռեցիդիվ, քրեական օրենսդրություն, նոր քրեական օրենսգիրք:

Т.Геворгян

ИНСТИТУТ МНОЖЕСТВЕННОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ ПО УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРЦАХ И ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Совершение одним лицом нескольких преступлений требует от государства особого к себе отношения, поскольку с каждым новым преступлением растет вред, причиняемый данным лицом обществу. Необходимость противодействия таким преступным проявлениям обусловливает научную и практическую разработку понятия множественности преступлений. Новшеством в этом отношении является закрепление этого института и определение этого понятия в новом Уголовном кодексе Республики Армения.

Ключевые слова: множественность преступлений, совокупность преступлений, повторность, рецидив, уголовное законодательство, новый Уголовный кодекс.

T.Gevorgyan

INSTITUTE OF MULTIPLE CRIMES UNDER THE CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARTSAKH AND THE DRAFT NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

To tackle multiple crimes perpetrated by one person requires a different approach by the government, because the damage caused to society by the person increases with each new crime. The necessity to combat such criminal manifestations determines the scientific and practical development of the concept of multiple offences. There is an innovation connected with it. The new Criminal Code of RA fixed that institute and set the concept.

Key words: multiple offences, cumulative offences, repitition of crimes, recidivism, criminal legislation, the new Criminal code.

Հանցագործությունների բազմակիությունը սկսել են ուսումնասիրել անցյալ դարի 60-ականների վերջերից[1]: Այն հանդիսանում է քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Ո՛չ գործող, ո՛չ էլ նախկին քրեական օրենսդրությունները չեն տվել հանցագործությունների բազմակիության հասկացությունը՝ ի տարբերություն ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի:

Տեսության մեջ ընդունված է այն տարբերակը, որ հանցագործությունների բազմակիություն է միևնույն անձի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքների կատարումը, եթե չեն վերացել քրեաիրավական կամ քրեադատավարական հետևանքները. անձը չի ազատվել պատասխանատվությունից քրեական օրենքով սահմանված կարգով կամ չի մարվել կամ հանվել դատվածությունը, կատարված երկու հանցագործությունների կապակցությամբ առկա է քրեական վարույթը կամ քրեական հետապնդումը իրականացնելու քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքը:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծն առաջին անգամ ամրագրել է բազմակիության հասկացությունը՝

Հոդված 51. Հանցագործությունների բազմակիության հասկացությունը և տեսակները

1. Հանցագործությունների բազմակիություն է համարվում միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանք կատարելը:

2. Հանցագործությունների բազմակիության տեսակներն են հանցագործությունների համակցությունը և հանցագործությունների ռեցիդիվը:

3. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է, եթե նախորդ հանցագործության համար մարվել կամ վերացվել է դատվածությունը, կամ

---

[1] *Տե՛ս* ***Галиакбаров Р. Р., Фролов Е. А.*** *Множественность преступных деяний как институт советского уголовного права : учеб. пособие. Свердловск, 1967:*

անձն օրենքով սահմանված կարգով ազատվել է քրեական պատասխանատվությունից:

4. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է մեկ տևող կամ շարունակվող հանցագործության դեպքում:

5. Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում: [1]

Ուսումնասիրելով հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ տարիներով քրեաիրավական տեսության մեջ ձևավորված նույն բազմակիության հասկացությունն է, ուղղակի բաղադրիչների բաժանված: Շատ ողջունելի է վերոնշյալի օրենսդրորեն ամրագրումը, ինչը, մեր կարծիքով, առավելագույնս կլուծի բազմակիության հասկացության վերաբերյալ մասնագետների վիճաբանությունների հարցը:

Ինչ վերաբերում է հոդվածի երկրորդ մասին, որն ամրագրում է բազմակիության տեսակները, նշենք, որ սկզբնական շրջանում դրանք երեքն էին՝ հանցագործությունների կրկնակիություն, հանցագործությունների համակցություն և հանցագործությունների ռեցիդիվ, սակայն, ինչպես գիտենք, օրենսդրական փոփոխությունների արդյունքում, կրկնակիության ինստիտուտը հանվել է բազմակիության տեսակների շարքից (ՌԴ – ում՝ 2003թ., ՀՀ – ում՝ 2011թ., ԼՂՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է 2013թ., որտեղ ի սկզբանե կրկնակիությունը նախատեսված չէր):

Քրեական իրավունքի գիտության մեջ հանցագործությունների բազմակիության ինքնուրույն ձև է համարվում նաև դատավճիռների համակցությունը, ինչը դեռ խորը ուսումնասիրության կարիք ունի[2]: Այս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ գոյություն ունեն երկու և ավելի հանցանքների կատարման այնպիսի դեպքեր, որոնք ընդգրկվում են միայն դատավճիռների համակցության մեջ, օրինակ, երբ դիտավորյալ հանցագործության համար պատիժ կրող անձը կատարում է անզգույշ հանցագործություն, կամ անզգույշ հանցագործության համար պատիժ կրող անձը կատարում է դիտավորյալ հանցագործություն:

Ինչ վերաբերում է քննվող հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն՝ հանցագործությունների բազմակիությունը բացակայում է մեկ տևող կամ շարունակվող հանցագործության դեպքում, նշենք, որ հանցագործությունների որակման համար կարևոր նշանակություն ունի հանցագործության բազմակիության տարբերակումը մեկ ամբողջական հանցագործությունից: Հանցագործությունների բազմակիությունը, այսինքն՝ անձի կողմից մի քանի

---

[1] *ՀՀ քրեական օրենսգիրք, 2021թ, էջ 17:*

[2] *Տե՛ս* ***Малков В. П., Чернова Т. Г.*** *, Совокупность приговоров и применение наказания /Вопросы законадательного регулирования, теории и практики/. Казань, 2003, էջ 30-32:*

հանցագործությունների կատարումը, ծնում է մի շարք յուրահատուկ իրավական հարցեր, որոնք հարկ է լինում լուծել բազմակիության քրեաիրավական որակման ժամանակ[1]:

Հանցավոր արարքի ճիշտ որակման համար կարևոր է պարզել՝ կոնկրետ դեպքում առկա՞ է մեկ միասնական (բարդ) հանցագործություն, թե՞ հանցագործությունների բազմակիություն: Շատ կարևոր է նման դեպքերում չխախտել նաև կրկնակի դատապարտման արգելքը. խնդիր, որը ծագում է հանցագործությունների բազմակիությամբ արարքները որակելու գրեթե բոլոր դեպքերում:

Շարունակվող է համարվում այն հանցագործությունը, որը կազմված է հաջորդաբար կատարվող միաբնույթ (նույնական) հանցավոր արարքներից, որոնք ուղղված են ընդհանուր նպատակի իրականացմանը և միավորված են մեկ միասնական դիտավորությամբ:[2]

Շարունակվող հանցագործության օրենսդրական բնորոշումը տրված էր ՀՀ 2003թ. ՔՕ 21-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ շարունակվող էր համարվում միասնական հանցավոր մտադրությամբ միավորված երկու կամ ավելի արարքներից բաղկացած հանցագործությունը: «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 23.05.11թ. ՀՕ-143-Ն օրենքով քրեական օրենսգրքի նշված հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց: Հետևաբար, ՀՀ ՔՕ վերացվեց նաև շարունակվող հանցագործության օրենսդրական ձևակերպումը:

Սակայն, ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 25-րդ կետով տրվում է շարունակվող հանցագործության հասկացությունը, որի համաձայն՝ շարունակվող հանցագործություն է մեկ միասնական դիտավորությամբ, միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքներով հանցանքի կատարումը:[3]

Կարելի է առանձնացնել շարունակվող հանցագործության հետևյալ հատկանիշները.

1. Անձը կատարում է մի քանի հանցավոր արարքներ,
2. Շարունակվող հանցագործություն կազմող արարքները կատարվում են հաջորդաբար,
3. Կատարվող արարքները համարվում են իրավաբանորեն նույնաբնույթ, այսինքն՝ ուղղված են մեկ օբյեկտի դեմ, կատարվում են միևնույն օբյեկտիվ կողմով, սակայն փաստական հատկանիշներով կարող են տարբերվել,

---

[1] *Տե՛ս **Գրիգորյան Մ.Վ.**, Քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան 2007թ. էջ 331:*

[2] ***Մելիքսետյան Ա.Ս.** , <<Հանցագործությունների բազմակիություն.հասկացությունը,տեսակները,օրենսդրական կարգավորումը և դրա կատարելագործման ուղիները>> Ատենախոսություն, Երևան, 2010, էջ 18*

[3] *ՀՀ քրեական օրենսգիրք, 2021թ, էջ 3*

4. Արարքները միավորված են մեկ նպատակով և այդ պատճառով հանդես են գալիս որպես ամբողջի մասեր,

Արարքները, որոնք կազմում են շարունակվող հանցագործությունը, կարող են համարվել *ինքնուրույն ավարտված հանցագործություն:* Բայց, նույնիսկ այն դեպքում, երբ առանձին դրվագներն իրենք իրենցով հանցավոր են, դրանք չեն կարող ստանալ ինքնուրույն քրեաիրավական գնահատական, քանի որ համարվում են հանցավորի միասնական հանցավոր դիտավորության իրականացման <<փուլեր>>: Եթե հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի հասնում իր վերջնական նպատակին, ապա արարքը որակվում է որպես մտադրված հանցագործության փորձ:

Տևող հանցագործության բնորոշումը ոչ ՀՀ գործող քրեական օրենսգրքում, ոչ էլ ԼՂՀ քրեական օրենսգրքում տրված չէ: Այն պարզաբանված է քրեական իրավունքի տեսության մեջ, համաձայն որի՝ տևող հանցագործություն է համարվում գործողությունը կամ անգործությունը, որն արտահայտվում է տևական ժամանակահատվածում անձի կողմից կոնկրետ հանցավոր արարքի հանցակազմի անընդմեջ կատարմամբ[1]:

Սակայն, ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 24-րդ կետով տրվում է տևող հանցագործության հասկացությունը, որի համաձայն՝ տևող հանցագործություն է տևական ժամանակահատվածում միևնույն հանցանքի անընդհատ իրականացումը:[2]

Տևող հանցագործությունը սկսվում է գործողության (օրինակ՝ փախուստ ազատազրկման վայրից) կամ անգործության (օրինակ՝ պատիժը կրելուց խուսափելը) պահից և ավարտվում է կամ հանցավորի կողմից մեղայականով ներկայանալով, կամ իրավապահ մարմինների կողմից հանցագործի ձերբակալումով, կամ պարտականության վերացմամբ կամ այլ հանգամանքների ուժով արարքը դադարեցնելով: Տևող հանցագործությունը շարունակվող հանցագործությունից տարբերվում է նրանով, որ կատարվում է մեկ արարքով, որը տևում է երկար ժամանակ:

Քննարկվող հոդվածի 5-րդ կետն ամրագրում է, որ հանցագործությունների բազմակիությունը բացակայում է օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում: Ընդհանրապես, քրեաիրավական նորմերի մրցակցության հարցը երկար ժամանակ է, ինչ գտնվում է քրեագետների ուշադրության կենտրոնում, դրա մասին կխոսենք առանձին գիտահետազոտական աշխատանքի մեջ:

Ամփոփելով վերոնշյալը՝ նշենք ևս մեկ անգամ, որ ողջունելի է ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում բազմակիության, տևող և շարունակվող հանցագործությունների հասկացությունների օրենսդրորեն ամրագրումը

---

[1] *Российское уголовное право. Общая часть. М., 2007, էջ 281:*

[2] *ՀՀ քրեական օրենսգիրք, 2021թ, էջ 3*

(հոդված 3-ի 24, 25-րդ կետեր, հոդված 51), ինչը, մեր կարծիքով, արդյունավետ կլինի պրակտիկայում հանդիպող վիճահարույց իրավիճակների լուծման հարցում՝ հանցավոր արարքների ճիշտ որակման հետ կապված:

Գրականություն

1. ԼՂՀ քրեական օրենսգիրք, 2013:
2. ՀՀ քրեական օրենսգիրք, 2021:
3. **Գրիգորյան Մ.Վ.**, Քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2007թ.:
4. **Մելիքսեթյան Ա.Ս.**, <<Հանցագործությունների բազմակիություն. հասկացությունը, տեսակները, օրենսդրական կարգավորումը և դրա կատարելագործման ուղիները>> Ատենախոսություն, Երևան – 2010.
5. **Галиакбаров Р. Р.**, Фролов Е. А. Множественность преступных деяний как институт советского уголовного права : учеб. пособие. Свердловск, 1967.
6. **Малков В. П., Чернова Т. Г.**, Совокупность приговоров и применение наказания /Вопросы законадательного регулирования, теории и практики/. Казань, 2003.
7. Российское уголовное право. Общая часть. М., 2007.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը:

ՀՏԴ 342.7

Իրավագիտություն

Սոսի ԶԱՔԱՐՅԱՆ
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս
E-mail: sosy21@yandex.com

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉՃԱՆԱՉՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԽԱԽՏՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆ

Չնայած դեռևս 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշված իրավունքները համարվում են համընդհանուր՝ առանց որևէ խտրականության, բայց այն շարունակում է մնալ լոկ հռչակագրային ցանկություն, անհասանելի երազանք: Միջազգային հանրության կողմից քար անտարբերությունն ու անգործությունն առաջ են բերում մարդկության դեմ ուղղված նոր հանցագործություններ, այդ թվում՝ թուրքերի կողմից դեռևս մեկ դար առաջ որդեգրված՝ հայերի ցեղասպանության քաղաքականության շարունակությունը մեր օրերում…

Բանալի բառեր՝ Արցախ, Ադրբեջան, Թուրքիա, ցեղասպանություն, մարդու իրավունքներ, չճանաչված երկրներ, պատերազմ

С.Закаряан

ОБСТОЯТЕЛЬСТВА НЕ ПРИЗНАНИЯ ГОСУДАРСТВА КАК ДОПОЛНИТЕЛЬНЫЙ ФАКТОР МАССОГОГО НАРУШЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА

Хотя права, закрепленные во Всеобщей декларации прав человека, принятой ООН 10 декабря 1948 года, считаются универсальными без какой-либо дискриминации, это остается всего лишь декларативным желанием, недостижимой мечтой. Каменное безразличие и бездействие со стороны международного сообщества сегодня ведут к новым преступлениям против человечности, в том числе к продолжению политики геноцида армян, принятой турками столетие назад.

Ключевые слова: Арцах, Азербайджан, Турция, геноцид, права человека, непризнанные государства, война.

S.Zaqaryan

THE CIRCUMSTANCES OF STATE RECOGNITION AS A SUPPLEMENTARY FACTOR OF MASSIVE VIOLATION HUMAN RIGHTS

Although the rights enshrined in the Universal Declaration of Human Rights, adopted by the UN on December 10, 1948, are considered universal, without any discrimination, they remain a declarative wish, an unattainable dream. The stony indifference and inaction on the part of the international community today lead to new crimes against humanity, including the continuation of the policy of the Armenian genoside adopted by the Turks a century ago.

Key words: Artsakh, Azerbaijan, Turkey, genocide, human rights, unrecognized countries, war.

<<Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով>> հղում: Ավաղ, առաջին հայացքից այս պարզ ու աքսիոմատիկ ճշմարտությունն իրականությունից շատ հեռու է: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հեղինակները, երբ ամրագրեցին այս ու բնական այլ իրավունքներ ու ազատություններ, որպես կարևոր պայման դրեցին այդ իրավունքների համընդհանրությունը: Հռչակագրի 2-րդ հոդվածը սահմանում է. <<Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից: **Ավելին, չպետք է կատարվի որևէ տարբերակում՝ ելնելով այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ ինքնիշխանության որևէ սահմանափակումով պետական կազմավորում** /*ընդգծումը մերն է՝ Ս. Զ.*/>> **հղում:** Ահա այն գլխավոր սկզբունքը, որի մասին մոռացել կամ չեն ուզում հիշել խոշոր պետություններն ու միջազգային կազմակերպությունները, երբ խոսքը վերաբերում է չճանաչված երկրներին: Որովհետև այլ բան է, երբ կոպտագույն ձևով խախտվում են այն երկրի քաղաքացիների իրավունքներն ագրեսիվ պատերազմի հետևանքով, որը չի երևում աշխարհի քաղաքական քարտեզին, և բոլորովին այլ է, երբ պետությունն իրենից ներկայացնում է միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ՝ բոլոր իրավունքներով, պարտականություններով ու պատասխանատվությամբ: Արցախյան շարժման հենց սկզբից՝ 1988 թվականից այսդին, ներառյալ Արցախյան առաջին 1991-1994թթ., 2016 թվականի ապրիլյան քառօրյա և 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմները, մշտապես աչքի

է զարնել այն հանգամանքը, որ դեռևս 1948 թվականին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը չի վերաբերում արցախցիներին:

Արցախի Հանրապետության չճանաչվածության պարագան՝ որպես մարդու իրավունքների զանգվածային խախտման լրացուցիչ գործոն, կարող ենք դիտարկել երկու տեսանկյունից՝ խաղաղ և պատերազմական իրադրություններում:

Երբ հարցը քննում ենք խաղաղ պայմանների դեպքում, ապա անմիջապես նկատելի է, որ չճանաչված Արցախի քաղաքացիները զրկված են իրենց խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար միջազգային ատյաններին դիմելու իրական հնարավորություններից: Զրկված են առևտրային, ֆինանսական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտային լիարժեք համագործակցությունից ու զարգացումներից, դիվանագիտական կապերից: Զրկված են մարդու իրավունքների պաշտպանության ու իրավագիտակցության բարձրացման ոլորտում Եվրամիության, Եվրախորհրդի, ՄԱԿ-ի և այլ ազդեցիկ կազմակերպությունների ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունից, այդ թվում՝ կրթական, առողջապահական, էկոլոգիական, հակակոռուպցիոն և այլ ոլորտներում: Չճանաչվածության սինդրոմն իր կնիքն է թողել երկրի հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Թերևս անիմաստ է մեկ առ մեկ թվարկել բոլոր այն իրավական միջոցները, որոնցից զրկված են արցախցիները, և որոնք Արցախի միջազգային ճանաչվածության դեպքում կբարձրացնեին երկրի քաղաքացիների կյանքի որակը: Սակայն արժե գլխավոր շեշտը դնել այն իրողության վրա, որ պատերազմական իրավիճակում անհամեմատ մեծ ծավալով են խախտվում Արցախի՝ որպես չճանաչված երկրի քաղաքացիների իրավունքները: Խոսքն առավելապես վերաբերում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Արցախի դեմ սանձազերծված լայնամասշտաբ պատերազմին, որի ծանր հետևանքը եղավ նույն տարվա նոյեմբերի 9-ին կնքված եռակողմ (Ռուսաստան-Ադրբեջան-Հայաստան)՝ հայության համար դավադիր պայմանագիրը:

Հանուն օբյեկտիվ ճշմարտության պետք է նշել, որ հայկական երկու հանրապետությունների համար խայտառակ պայմաններով այդ պայմանագրի կնքման հարցում մեղքի հավասար բաժին ունեն Արցախի ու Հայաստանի իշխանությունները՝ հատկապես քաղաքական անհեռատեսության և Հայոց բանակին ոչ պատշաճ ուշադրություն դարձնելու տեսանկյունից:[1]

Քրեական գործի թվայնացումը ենթադրում է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության և հսկողության մակարդակի բարձրացում՝ բացառելով յուրաքանչյուր դեպքում քրեական գործի նյութերի տրամադրման անհարկի ձգձգումները: Նշված մարմինների կողմից նյութերը կարող են պահանջվել էլեկտրոնային հարցմամբ, տրամադրվել էլեկտրոնային թղթապանակում պահպանվող քրեական գործի նյութերի սքանավորված տարբերակով, ինչը հնարավորություն է տալիս առավել սեղմ ժամկետներում ապահովելու վարույթի մասնակիցների իրավունքների և շահերի պաշտպանություն:

Էլեկտրոնային վարույթի պարագայում նախնական քննության գաղտնիության ապահովման և քրեական գործի փաստական հանգամանքներում կեղծումներ կատարելը բացառելու հարցերը լուծելու նպատակով առաջարկվում է ստեղծել լրացուցիչ երաշխիքներ՝ քրեական պատասխանատվություն սահմանել նախաքննության կամ հետաքննության տվյալներն էլեկտրոնային եղանակով այլ անձի մատչելի դարձնելու արարքի համար, նախքան վարույթի մասնակցին էլեկտրոնային քրեական գործ մուտք գործելու հնարավորություն տալը, (մուտքանուն, գաղտնաբառ) համոզվել վերջինիս՝ համակարգչային տեխնիկային տիրապետելու հանգամանքի մեջ, իրավապահ մարմիններում ներդնել փաստաթղթերի կեղծումը, կորուստը բացառող մեկ միասնական ծրագիր և օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային ստորագրություն տրամադրել համապատասխան աշխատակիցներին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը:

UDC 330,3

Economics, Computer Science

Gagik VARDANYAN
Doctor of Sciences (Economics), Professor
Independent Expert
E-mail: gagik.v@yahoo.com,

Mher VARDANYAN
Master of Science in Computer & Information Science,
American University of Armenia
E-mail: mher.vardanyan.g@gmail.com

REFORMULATION OF AN EMPIRICAL INVESTMENT RULE IN TERMS OF ADVANCED ANALITICS AND ITS MODEL SELECTION

Գ. Վարդանյան, Մ. Վարդանյան

ԷՄՊԻՐԻԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿԱՆՈՆԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՌԱՋԱԴԵՄ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ԵՎ ԴՐԱ ՄՈԴԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներդրումներ կատարելու մասին գործնական խորհուրդներ և կանոններ պարունակող հայտնի գրքում՝ «Յուրիիյան աքսիոմներ»-ում, հեղինակը՝ Մաքս Գյունտերը նախանշում է ներդրումների կատարման երկու սկզբունք, որոնք սովորաբար շեշտադրվում են հայտնի ներդրողների կողմից։ Հոդվածում փորձ է արվել ձևակերպել այդ սկզբունքները կարճատև և երկարատև միտումների բացահայտման խնդրի շրջանակում և այդ խնդիրը հասցեագրել առաջադեմ վերլուծական գործիքների կիրառմամբ։ Հետազոտության ընթացքում մեզ հաջողվել է ուրվագծել բաժնետոմսերի կանխատեսման խնդրին անդրադառնալու նախկին փորձերը, ինչպես նաև վերլուծել մեր հետազոտության խնդրին առնչվող կոնկրետ մոտեցման առավելությունները և թերությունները։ Մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ, օգտագործելով multi-kernel learning մոտեցումը, կարող ենք պատշաճ ձևով հասցեագրել հետազոտության հարցը, ինչպես նաև նմանատիպ արդյունքների կարելի է հասնել՝ օգտագործելով միայն տեխնիկական վերլուծության մոտեցումը LSTM մոդելի կիրառմամբ։ Հետագա հետազոտության ընթացքում մենք

կշարունակենք մեր բացահայտումները՝ փորձարկելով և ավարտին հասցնելով սույն հոդվածում սկսված քննությունը:
Բանալի բառեր՝ Յուրիխյան աքսիոմներ, վերլուծական ֆինանսներ, արժեթղթերի շուկայի կանխատեսում, մեքենայական ուսուցում, խորը ուսուցում

Г. Варданян, М. Варданян

РЕФОРМУЛИРОВКА ПРАВИЛ ЭМПИРИЧЕСКОГО ИНВЕСТИРОВАНИЯ В УСЛОВИЯХ РАСШИРЕННОЙ АНАЛИТИКИ И ВЫБОРА ЕГО МОДЕЛИ

В популярной книге практических советов по инвестированию «Аксиомы Цюриха» авторвы деляет два принципа инвестирования, которые обычно подчеркиваются известными инвесторами. В этой статье мы попытались сформулировать эти принципы в виде задачи обнаружения краткосрочных и долгосрочных трендов и попытались решить эту проблему с помощью передовых аналитических инструментов. В ходе исследования мы смогли обрисовать предыдущие попытки решения проблемы прогнозирования акций, а также проанализировать плюсы и минусы конкретного подхода с точки зрения решения нашей исследовательской проблемы. Мы пришли к выводу, что с помощью многоядерного подхода к обучению мы можем решить сформулированный исследовательский вопрос, мы также указали, что аналогичные результаты могут быть достигнуты с помощью технического анализа только с учетом модели глубокого обучения LSTM. В будущих исследованиях мы продолжим проверку наших результатов и завершим обсуждение, начатое в этой статье.
Ключевые слова: *Цюрихские аксиомы, LSTM, аналитические финансы, прогнозирование фондового рынка, многоядерное обучение.*

In a popular book on practical investment tips "The Zurich Axioms", the author outlines two principles of investment that are commonly underlined by famous investors. In this paper we tried to formulate those principles into a short-range and long-range trend detection problem and tried to address that problem using advanced analytical tools. Throughout the research we were able to outline the previous attempts of addressing the issue of stock predictions as well as to analyze the pros and cons of a specific approach in terms of addressing our research problem.We have concluded that using a multi-kernel learning approach we can address the formulated research question, we also pointed out that similar results can be achieved by using technical analysis only with LSTM deep learning model in mind. In the future research we will go on with testing our findings and will finish the discussion started in this paper.
Key words: *Zurich Axioms, LSTM, analytical finance, stock market prediction, multi-kernel learning*

Introduction

There is a popular book on the topic of investment called “The Zurich Axioms” by Max Gunther. The author discusses various strategies and general principles to follow for those who want to be successful investors just like, in his opinion, the Swiss. One of those principles or “axioms” is “always take your profit soon” (Max Gunther, 1985). More specifically, he points out the tendency of “what goes up must go down” and so, waiting for a rising stock to rise higher and higher, when one considers selling it, or waiting for a plunging stock to go lower and lower, when one considers buying it - is risky with every moment that the investor waits. This principle is then followed by a corollary principle where the author suggests deciding in advance what gain the investor wants to get from the investment [15]. The author suggests not wait until it is too late, although we must point out that the book was meant for the general public, so it is not at all technical by any means. That said, it is also crucial to underline the fact that those principles were backed by real world experience and the relevant history of investment decision making of the Swiss. Thus, the question really stands: can we quantify this “axiom”? And, most importantly, how far we can get, in terms of accuracy and efficiency, with the existing advanced analytical models? Also, we shall take under consideration the corollary principle, which is more directed towards interpretability and/or long-term trend detection than prediction accuracy for a short-term decision.Now we can formulate the topic of our research in a more cohesive and rigorous manner:

“*Finding the right time of selling a rising stock using advanced analytics*”.

Let’s notice that we have mentioned only the rising stock above, but that does not mean that those same principles will not apply for the opposite case. The reason we chose this formulation is that it conveys the meaning and the idea behind research topic to a large extent.

Generally speaking, stock market prediction has been a central topic of research for several decades. Time-series-analysis, various statistical measures have been at the core in providing investors with relevant descriptive and inferential summaries for the future trends of the market or specific stocks’ performance. Advanced analytical tools such as Machine Learning algorithms, big data models, artificial neural networks etc. started to be used for financial data analysis as soon as they proved themselves worthwhile in other fields. Even the lately popularized advanced analytical models, such as deep neural networks, have been tried in the field with impressive results (Kumar et al., 2011). The tools have been getting better and better, and the levels of accuracy for the trend started to increase, for some models, for specific datasets passing 73% (Dixon et al., 2015). That said, as we have already mentioned above, we will not only be interested in accuracy but also in satisfying the corollary principle be that with a separate or integrated long-term trend detection or increased interpretability.

After a thorough literature review on the subject, we shall find the right approach for researching the topic from the three existing ones:

1) Financial data analysis (or technical analysis),
2) Investor sentiment analysis,
3) A mixture/hybrid analysis which includes the first two.

The challenges that we will face here would be involving the interpretability of the chosen models, the ability to generalize from the used models, the accuracy and efficiency of the models etc.

Depending on which approach(es) we choose, there are different advanced data analytic models to choose from. Several distinguishable models are discussed later. Most of them involve using Deep Learning methods which will be discussed in detail. Nevertheless, there is a gap for every approach, especially for the most promising one: the hybrid analysis. These gaps refer mostly to the interpretability and the ability to generalize the existing models for varying populations and samples. More specifically, it is not clear how different social and cultural dynamics are going to be dealt with in the sentiment analysis approach. The problem worsens as we try to combine the advantages of the first and the second approaches to form the third one, where the interpretability of the second approach turns into a significant impediment.

The justification of pursuing more efficient investing

Financial markets have become more efficient than ever. The transaction costs are drastically lowered due to the Internet-based financial services (Graham, 2006). This resulted in a more efficient market, as more capital can freely roam the fabric of the globalized financial world. Without a doubt, a more efficient market, in equal circumstances, has a potential of providing faster growth and development of economies worldwide. This will reduce poverty and other social issues and will make the world more prosperous. Thus, following this logic, we believe that lower risk factors for investors worldwide, will bring more efficiency to the financial system. What we mean by this is that when an investor has a functioning approach of dealing with the uncertainty of the market, as limited that approach might be, they will be keener to invest. Thus, some portion of the investment risk will be lowered, leading towards a more prosperous and developed world. The extent of the impact is not the subject of this research, although one thing is crystal clear from the above-described logic: the impact exists.

In addition, an analysis done with financial data, which is believed to be non-stationary, non-linear and noisy within the time series (Dixon, et al., 2017), will certainly have useful applications outside the financial world, as the type of data described above is not exclusive to the financial data.

The commonly accepted fact with regards to predictions of stock markets, is that financial markets are, in fact, unpredictable (Graham, 2006). Thus, we will state our hypothesis in the following manner:

Hypothesis 0: It is impossible to formulate a rule to determine the right time of selling a rising stock using advanced analytics with statistically significant accuracy, while satisfying corollary principle.

Hypothesis 1: It is possible to formulate a rule to determine the right time of selling a rising stock using advanced analytics with statistically significant accuracy, while satisfying the corollary principle.

Stock market prediction using advanced analytics

Since the advent of advanced analytical tools researchers and investors wanted to test those tools on predicting the financial markets. Financial markets were at the center of attention for a couple of main reasons. Firstly, having a better toolset for efficient and accurate predictions of financial markets, investment institutions and individuals interested

in investing their money could have cut down on the risks they usually take. Secondly, the availability of data for analysis is very appealing. Useful statistical data on prices, earnings and dividends go back to 1871 [9].

As we have discussed above,financial assets can generally be divided into two parts: risky and risk-free. Usually, the investment portfolio consists of a specific weighted combination between non-risk assets, e.g., government bonds and risky assets, e.g., company stocks [10]. What we are looking for is not a good strategy for forming an investment portfolio, as that topic is very well discussed and analyzed within the disciplines of corporate finance and, more specifically, portfolio theory. The aim of this study is to understand which advanced analytical models and strategies have been used, so far, to predict the given asset's price on the market, within the confines of the research topic. *The accuracy as well as the extent at which the corollary principle is addressedare going to be the evaluation criteria for us.*

To understand the challenges of analyzing stock market data or doing a sentiment analysis based on public sentiment we have to underline the fact that financial data is believed to be non-stationary, non-linear and noisy within the time series [7]. Thus, making an accurate and efficient prediction will likely involve non-linear-capableapproaches such as Artificial Neural Networks (ANN). These models became popular mostly because they surpass conventional Machine Learning models' accuracy when sufficient dataand computational power is available [11]. In our case, as we stated above the data sufficiency is not a problem, and with the constantly increasing computational power the ANN models seem to be the perfect tools to predict stock market data.

Furthermore, it is important to distinguish the three main strategies aimed at predicting the stock market prices. Firstly, the stock market analysis done by analyzing the historical prices using linear and/or non-linear models (we can call this "the financial data analysis approach")[1]. The second one revolves around conducting a sentiment analysis for predicting stock prices via understanding the public perception with regards to those stocks (we can call this the "sentiment analysis approach"). The third strategy can be identified as a mixture or a hybrid between the first two strategies (we can call this "the hybrid analysis approach"), which promises to bring a multi-aspect analysis of stock prices, while making use of the conventional analysis and the "wisdom of the crowds" gained through sentiment analysis [6].

The financial data analysis approach

There are several strategies to consider under financial data analysis approach. Firstly, as Shen et al. noticed the globalization and connectivity among different financial markets allows us to assume that the trends noticeable in e.g., Tokyo Stock Exchange can be present in NASDAQ stock exchange in New York. Which means, that due to time-zone differences we can predict the behavior of a particular asset or assets in a certain financial market by analyzing data taken from another market [8]. Other approaches might include using large data sets and relying mostly on a careful feature selection for the analysis.

From a large array of possible models to use for analyzing financial data most common ones are support-vector machines (SVM), back propagation trained networks (BTN), artificial neural networks (ANN), class sensitive neural networks (CSNN) etc. In terms of

[1]*In some papers this type of approach is called "technical analysis" (Shangkun Deng et al, 2011).*

short-term trend prediction CSNN proved to be the best model [1]. That said, let's understand which model choice is the best for our task.

In recent years deep neural networks have been popularized and many analysts believe that DNN models are becoming the models of choice for financial data analysis. The most appealing part about DNN is that they demonstrate robustness against over fitting. Dixon et al. implemented a DNN for financial data analysis and reached a classification accuracy of 73% [3]. To understand better why this model is so accurate we can have a look at the diagram 1. Here we can see a feed-forward neural network where inputs are processed before entering to a next layer. The depth of the layers and the functions used to map the input for the next layer are at the core of this concept.

We also must underline the fact that feed-forward deep learning algorithms are not believed to be the best choice for time-series data. Moreover, Maknickiene et al. concluded in their study that for tackling recursive non-linearity of financial data Recurrent Neural Networks (RNN) are the best choice [2]. Thus, RNN are believed to be the state-of-the-art models for conducting financial data analysis with prediction as the main objective.



Diagram 1: Multi-layer feed-forward neural network [3].

With regards to the choice of a specific RNN model there is a phenomenon that needs to be addressed. RNNs generally utilize what's called a "short-term memory". Which is created in their internal state and is dynamically updated as the neural net goes from layer to layer.The issue here is that by using standard back propagation or real-time recurrent learning the gradient values (essentially weights gained by dynamically updating the short-term memory) will either vanish or "blow-up". So, what happens is that, e.g. in the case of a feed-forward net, while advancing to the next layer, the weights of the initial layers start to vanish. With back propagation, correspondingly, as we move back layer by layer the weights start to add up and eventually "blow up" in value yielding inefficient results. To address this issue S. Hochreiter and J. Schmidhuber suggested a more complex memory cell structure which will use gate units for getting rid of excess information and not letting go useful information throughout the layers of the network [14]. The essential structure of the memory cell can be seen in the diagram 2.



Diagram 2: The generalstructure of an LSTM memory cell [14].

Here we can see a high-level depiction of how the three gates: forget, input, output control the long-term trend maintenance by filtering the data with weights for the subsequent steps. So, firstly the data is passed to the forget state, where it gets a weight ranging from 0 to 1 (getting 1 will mean that it will not "forget" or diminish anything before it). Then it is processed through the input gate, after which it is transferred to the output gate to be processed in the next memory cell. By comparing this approach, specifically for financial analysis, T. Fischer, and C. Krauss found out that it outperformed benchmark models: random forest, deep net, and logistic regression, in most cases.

Thus, this approach proves to be efficient in conducting time-series analysis, music detection and other sequential data related tasks, and, more specifically, provides the functionality for addressing our research problem.

The limitations of the financial data analysis approach

We can assume that choosing an RNN model and using it wisely we can reach high accuracy and efficiency. When it comes to choosing the right quantity of epochs, the number of neurons and groups of parameters, we can rely on existing literature and in empirical results. With regards to interpretability, we can safely say that any neural network approach is generally regarded as a black-box-approach. However, if we address the corollary principle in terms of assessing the long-term performance of a given stock, an LSTM network would be the best model of choice among technical analysis approaches, as we will not require an interpretability criterion to be present anymore. That said, all models that derive conclusions from technical data suffer, to some extent, from the presumption of efficient markets, though the LSTM model does a great job at mitigating the adverse effects of that presumption [13].

The sentiment analysis approach

Sentiment analysis approach for predicting stock prices has generated significant interest based on some key processes that happened during the recent decade. Various online services allowed public to invest in companies with relatively small transaction costs. One of the most influential factors in this sense is the investors' reactions to the news disclosures [4], which can spread countrywide and even worldwide via social networks throughout the world.

There are different models that can be used for this purpose, including the combination of regression, classification models and lexicon-based sentiment analysis [6]. A remarkable result was achieved by Guo et al., when their model achieved 97.87% prediction accuracy

for the upward trend of the stock market. An overall accuracy of 59.15% was reached by Chiong et al., with the use of Kraus and Feuerriegel's deep learning model.

The limitations of sentiment analysis approach

As we mentioned above, different accuracy figures can be noticed when we deal with upward trend vs downward trend. Which is a very interesting phenomenon to consider the limitations of this approach. You see, there are numerous factors that can affect the sentiment of an investor. Ranging from psychological, cultural, geographical etc. Moreover, the lingo-cultural differences from market to market should not be underestimated. This means that making generalizations from the sentiment analyses of investors is very challenging, if not impossible, on a global scale, across different markets. However, none of the studies reviewed addressed this problem adequately.

The hybrid analysis approach

Wang et al., proposed an interesting and promising approach of combining financial data analysis and investor sentiment analysis to predict stock prices [5]. The model they used was a two-stage multi-kernal SVR model. For all classifiers the hybrid solution had higher accuracy than the sentiment analysis by itself. Although this framework has been discussed by others, including the usage of Multiple Kernel Learning (MLK) [12], there was no emphasis put on using hybrid approach to create an interpretable, yet accurate, model. A model that will compromise financial data models within the hybrid approach to increase the interpretability while not losing accuracy with the usage of sentiment analysis. This approach will capitalize on the idea that deriving valuable inference from sentiment analysis is not that straightforward. As mentioned in the limitations of the sentiment analysis approach, any model working in this domain will not be interpretable to the extent at which the less accurate financial-data-driven models will be. Also, as we have said before this approach works best with deep learning models, which have multiple layers of neurons and are highly not interpretable.

The limitations of the hybrid analysis approach

Intuitively this approach seems to be the most promising one. On the other hand, if we take a closer look, the main two disadvantages can be spotted: finding the relevant data for different models and formulating the right model to form a more generalized approach. The problem is that although we have centuries worth of financial data, the availability of data for the sentiment analysis approach is far scarcer. This would not be a problem for specific usage of the sentiment approach for solving specific problems with regards to prediction. On the other hand, when it comes to the moment of combining the sentiment approach and the financial data approach, we might not be able to find adequate data for maximum synergy effect. Also, it is not clear which combination of various sentiment-analysis-related data should be taken for combining it with the technical analysis.

Conclusions and Areas for Future Research

We started with two, simple, industry proven, though not academically formulated principles to invest in stocks. The essential idea was that while it is important to know, guess or probabilistically evaluate when a rising stock is going to fall, it is likewise important to make sure that the long-term understanding or knowledge of the stock's performance is taken under consideration by the investor. This in mind, we formulated our research problems, accordingly,giving importance to the short-range accuracy and long-

range interpretability/integration of long-range trends in our research for a capable advanced analytical model to address the research problem. We were able to point out that the sentiment analysis combined with a highly interpretable technical analysis model within a Multi Kernel setting is a perfect choice for us. Also, we realized that an LSTM model could help solve our problems with combining short-term and long-term trends within a single model. We choose to go on with the LSTM neural network model for reasons mentioned above. Thus, our following research will conclude this discussion with testing an LSTM implementation for a specific group of indexes.

References

1. Chen, C.H., 1994, June. Neural networks for financial prediction. In *Proceedings of 1994 IEEE International Conf on Neural Networks (ICNN'94)* (Vol. 2, pp. 1199-1202). IEE
2. Maknickienė, N., Rutkauskas, A.V. and Maknickas, A. Investigation of financial market prediction by recurrent network. *Innovative Technologies for Science, Busines Education*, *2*(11), pp.3-8.
3. Dixon, M., Klabjan, D. and Bang, J.H., 2015, Nov Implementing deep neural networks for financial market pre on the Intel Xeon Phi. In *Proceedings of the 8th Workshop o Performance Computational Finance* (pp. 1-6).
4. Chiong, R., Fan, Z., Hu, Z., Adam, M.T., Lutz, l Neumann, D., 2018, July. A sentiment analysis-based m learning approach for financial market prediction via disclosures. In *Proceedings of the Genetic and Evolu Computation Conference Companion* (pp. 278-279).
5. Wang, Q., Xu, W. and Zheng, H., 2018. Combini wisdom of crowds and technical analysis for financial prediction using deep random su ensembles. *Neurocomputing*, *299*, pp.51-61.
6. Guo, X. and Li, J., 2019, October. A Novel Twitter Ser Analysis Model with Baseline Correlation for Financial l Prediction with Improved Efficiency. In *2019 Sixth Intern Conference on Social Networks Analysis, Managemer Security (SNAMS)* (pp. 472-477). IEEE.
7. Dixon, M., Klabjan, D. and Bang, J.H., 2017. Classifi based financial markets prediction using deep networks. *Algorithmic Finance*, *6*(3-4), pp.67-77.
8. Shen, S., Jiang, H. and Zhang, T., 2012. Stock forecasting using machine learning algorithms. *Departm Electrical Engineering, Stanford University, Stanford, CA*, p
9. Graham, B., 2006. *The intelligent investor*. Revised l with new commentary by J. Zweig. Harper Business, pp.23,

10. Jonathan, B., Peter M DeMarzo, 2017. Corporate fi
Fourth Global Edition. Pearson.
11. Aggarwal, C.C., 2018. *Neural networks and deep lea*
Springer International Publishing AG.
12. Deng, S., Mitsubuchi, T., Shioda, K., Shimada, T. and S
A., 2011, December. Combining technical analysis with ser
analysis for stock price prediction. In *2011 IEEE*
international conference on dependable, autonomic and
computing (pp. 800-807). IEEE.
13. Fischer, T. and Krauss, C., 2018. Deep learning wit
short-term memory networks for financial
predictions. *European Journal of Operational Research*,
pp.654-669.
14. Hochreiter, S. and Schmidhuber, J., 1997. Long sho
memory. *Neural computation*, *9*(8), pp.1735-1780.
15. Gunther, M., 1985. *The Zurich Axioms*. Unwin
Paperbacks, pp. 22-35.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

ՀՏԴ 336.77(479.243)

Տնտեսագիտություն

Արևիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱրՊՀ, Ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս
E-mail: arevik.aleksanyan@bk.ru

Արմինե ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԱրՊՀ, տնտեսագիտության ֆակուլտետ, «Կառավարում» մասնագիտության առաջին կուրսի մագիստրանտ

ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով, օրենսդրությանը համապատասխան, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են, որոնց միջոցով լուծվում են հասարակության առջև ծառացած խնդիրները: Բյուջետային եկամուտների և այլ մակրոտնտեսական ցուցանիշների միջև փոխկապվածության բացահայտման նպատակով հոդվածում իրականացված է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն: Հոդվածում ներկայացված են նաև համավարակի և Արցախյան երրորդ պատերազմի բացասական հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները:

Բանալի բառեր՝ բյուջե, բյուջետային եկամուտներ, կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն, արդյունքային ցուցանիշ, գործոնային ցուցանիշ, գծային ռեգրեսիայի հավասարում, կոռելացիայի գործակից, դետերմինացիայի գործակից, հարկեր/ՀՆԱ հարաբերակցություն:

А. Алексанян, А. Степанян

АНАЛИЗ ВЗАИМОСВЯЗИ ДОХОДОВ БЮДЖЕТА РА С ДРУГИМИ МАКРОЭКОНОМИЧЕСКИМИ ПОКАЗАТЕЛЯМИ

Доходы бюджета в соответствии с законодательством - это средства государственных органов и органов местного самоуправления, за счет которых решаются проблемы, стоящие перед обществом. Для выявления взаимосвязи доходов бюджета с другими макроэкономическими показателями в статье проводится корреляционно-регрессионный анализ. В статье также представлены меры, принимаемые Правительством Республики Армения по ликвидации негативных последствий эпидемии и третьей Арцахской войны.

Ключевые слова: бюджет, доходы бюджета, корреляционно-регрессионный анализ, индекс выпуска, факторный индекс, уравнение линейной регрессии, коэффициент корреляции, фактор детерминации, соотношение налог / ВВП.

A. Aleksanyan, A.Stepanyan

ANALYSIS OF THE RELATIONSHIP BETWEEN RA BUDGET REVENUES AND OTHER MACROECONOMIC INDICATORS

In accordance with the legislation, budget revenues are funds of state bodies and local self-government bodies, at the expense of which the problems facing society are solved. To identify the relationship of budget revenues with other macroeconomic indicators, the article carries out a correlation-regression analysis. The article also presents the measures taken by the Government of the Republic of Armenia to eliminate the negative consequences of the epidemic and the third Artsakh war.

Key words:budget, budget revenues, correlation-regression analysis, output index, factor index, linear regression equation, correlation coefficient, determination factor, tax / GDP ratio.

Բյուջեն և բյուջետային հարաբերությունները եղել և շարունակում են մնալ հայ և արտասահմանյան գիտնականների և հետազոտողների ուշադրության կենտրոնում, քանի որ վերջինս յուրաքանչյուր պետության գլխավոր ֆինանսական պլանն է, հանրային ֆինանսների առաջավոր օղակը, որի միջոցով պետությունը լուծում է իր առջև ծառացած խնդիրները:

Ըստ ռուս տնտեսագետ Մ.Պիսկոտինի՝ «բյուջե» տերմինը պետք է դիտարկել երեք տեսանկյունից՝ տնտեսական, նյութական և իրավական: Որպես տնտեսական կատեգորիա բյուջեն տնտեսական հարաբերությունների ամբողջություն է, որոնք կապված են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման հետ: Նյութական իմաստով բյուջեն դիտարկվում է որպես ֆինանսական ռեսուրսների կենտրոնացված ֆոնդ, որն անհրաժեշտ է պետական ծախսերի իրականացման համար: Իրավական տեսանկյունից բյուջեն դիտարկվում է որպես «պետական տնտեսական գործունեության պլան», «ֆինանսական ծրագիր»: Այն ծառայում է որպես պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության իրականացման համար գլխավոր իրավական ակտ:[1]

Ըստ Տ. Պոզդնյակովայի՝ բյուջեների միջոցով ձևավորվում են համապատասխան պետական կամ տեղական կազմավորման դրամական ֆոնդերը, որոնք ապահովում են վերջինիս ընդհանուր նշանակության խնդիրների լուծումը, ֆինանսական հիմք են ստեղծում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացման համար:[2]

Լ. Դրոբոզինան բյուջեն սահմանում է որպես «դրամական միջոցների հիմնական կենտրոնացված ֆինանսական ռեսուրս»:[3] Ըստ տնտեսական բովանդակության՝ պետական բյուջեն կարելի է բնութագրել որպես դրամական հարաբերություններ, որոնք ծագում են պետության և իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև ազգային եկամտի վերաբաշխման առիթով՝ պետական կառավարման համակարգի սոցիալ-մշակութային և այլ միջոցառումների ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային միջոցների ձևավորման և օգտագործման հետ կապված: Բյուջեի շնորհիվ պետությունը հնարավորություն է ստանում ֆինանսական ռեսուրսները կենտրոնացնելու տնտեսական և սոցիալական զարգացման առումով որոշիչ տեղամասերում:[4]

Ըստ Ա. Ջանջուղազյանի՝ բյուջեն պայմանականորեն առանձնացված որևէ միավորի՝ մարդու, ընտանիքի, կոլեկտիվի, կազմակերպության, համայնքի և, վերջապես, պետության ֆինանսական կամ, այլ կերպ ասած, դրամական միջոցների ձևավորման և ծախսման ծրագիր է: Այսպիսի ընդհանրական սահմանումը հիմք է տալիս ենթադրելու, որ անկախ մեր ցանկությունից կամ բյուջեի լինել-չլինելու մասին մտածելուց, մենք անընդհատ հարկադրված ենք լինում բյուջեի հետ կապված որոշումներ կայացնել:[5]

Տարբեր երկրների բյուջեներն ունեն իրենց առանձնահատկությունները, կառուցվածքը, գործունեությունը ապահովող նորմատիվ-իրավական դաշտը, այնուամենայնիվ, յուրաքանչյուր պետության բյուջեի կառուցվածքի հիմնական տարրերն են բյուջետային եկամուտները, բյուջետային ծախսերը, դեֆիցիտը կամ պրոֆիցիտը և այլն:

---

[1] *Տե՛ս* ***Бабкова Ю. Б.****, К ВОПРОСУ О СУЩНОСТИ БЮДЖЕТА https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-suschnosti-byudzheta, 340-343.*

[2] *Տե՛ս* ***Позднякова Т.*** *Финансы в системе государственного регулирования социально- экономических процессов, М., 2009, с. 97.*

[3] *Տե՛ս Общая теория финансов. Под ред. Л. Дробозиной, М., 1995, с. 32.*

[4] *Տե՛ս* ***Родионова В., Вавилов Ю., Гончаренко Л.*** *и др. Финансы, М., 1995, с. 252.*

[5] *Տե՛ս* ***Ջանջուղազյան Ա. Ս.,*** *Բյուջեների կատարման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում*

Բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով, օրենսդրությանը համապատասխան, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են:[1]

Բյուջեների եկամուտները գոյանում են հիմնականում սեփականության տարբեր ձևերին պատկանող և իրավաբանական անձ հանդիսացող բոլոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների կողմից կատարվող հարկային և ոչ հարկային վճարումների և մասամբ՝ բնակչությունից գանձվող հարկերի, տուրքերի ու վճարների հաշվին:

Քանի որ բյուջետային եկամուտների միջոցով են լուծվում հասարակության առջև ծառացած խնդիրները, ուստի իրականացրել ենք կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն ՀՀ բյուջետային եկամուտների և այլ մակրոտնտեսական ցուցանիշների միջև պատճառահետևանքային կապը բացահայտելու նպատակով: Կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությունը կարևոր նշանակություն ունի տնտեսության մեջ տարբեր երևույթների բնութագրման և իրար վրա ազդող գործոնների միջև կապի հայտնաբերման համար:

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած պաշտոնական տվյալները՝ վերլուծության համար օգտագործել ենք հետևյալ ցուցանիշները՝

1. y արդյունքային փոփոխական – պետական բյուջեի եկամուտներ,
2. x անկախ փոփոխական – պետական պարտք:

Ռեգրեսիոն հավասարման կառուցման համար անհրաժեշտ ելակետային տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ՀՀ-ում պետական բյուջեի եկամուտների կախյալ փոփոխականի վրա անկախ փոփոխականի ազդեցության գնահատման ելակետային տվյալները 2007-2020թթ. (մլրդ դրամ)

Տարիները	Պետական բյուջեի եկամուտները (y)	Պետական պարտքը (x)
2007	588,0	516,2
2008	785,4	584,6
2009	690,0	1270,7
2010	780,4	1379,3
2011	880,9	1592,7
2012	946,2	1764,4
2013	1071,4	1861,3
2014	1144,8	2109,6
2015	1167,7	2456,3

[1] *Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդ. 24.06.1997, հոդված 1,2:*

2016	1171,1	2875,6
2017	1237,8	3279,6
2018	1308,3	3348,6
2019	1496,5	3512
2020	1560,7	4164,3

Արդյունքային և գործոնային ցուցանիշի փոխկապվածությունը բացահայտելու նպատակով որոշված է կոռելյացիայի գործակիցը, որը ցույց է տալիս, որ կապը պետական բյուջեի եկամուտների և պետական պարտքի միջև շատ ուժեղ է և ուղիղ (0,958032)[1]:

Հաշվարկների արդյունքում ստացված գծային կապի ռեգրեսիայի հավասարումը ընդունել է հետևյալ տեսքը՝

$$y_{1,2,3,\dots,k} = 506{,}4 + 0{,}252x \qquad (1):$$

Կառուցված ռեգրեսիոն հավասարման փոփոխականների կշռային ազդեցությունը հետևյալն է՝ a = 0.3953, ինչը նշանակում է, որ պետական պարտքի միջին հաշվով 1 միավորով աճը պետական բյուջեի եկամուտները ավելացնում է 0.252 միավորով:

Բազմակի ռեգրեսիայի հավասարման կարևորության գնահատումն իրականացվում է Ֆիշերի վիճակագրի հիման վրա՝ ստուգելով հավասարության զրոյական որոշման գործակցի վարկածը:

Եթե $F>F_{\text{վիճակագիր}}$, ապա դետերմինացիայի գործակիցը վիճակագրական առումով նշանակալի է, և ռեգրեսիայի հավասարումը վիճակագրորեն հուսալի է (այսինքն, b_i գործակիցները համատեղ նշանակալի են).

F=134.031, իսկ $F_{\text{վիճակագիր}}$=4,75

$F>F_{\text{վիճակագիր}}$, հետևաբար դետերմինացիայի գործակիցը վիճակագրական առումով նշանակալի է, և ռեգրեսիայի հավասարումը վիճակագրորեն հուսալի է:

Բարձրորակ ռեգրեսիայի մոդել կառուցելու կարևոր նախադրյալ է բոլոր դիտարկումներում շեղման արժեքներից պատահական շեղումների արժեքների անկախությունը: Սա ապահովում է ցանկացած շեղման և, մասնավորապես, հարակից շեղումների միջև փոխկապակցվածության բացակայությունը:

Եթե ավտոկոռելյացիայի գործակիցը՝ $r_{ei} < 0.5$, ապա հիմք ունենք պնդելու, որ ավտոկոռելացիան բացակայում է:

Ավտոկոռելյացիայի աստիճանը որոշելու համար ստուգենք ավտոկոռելացիայի գործակցի նշանակությունը օգտագործելով ստանդարտ սխալի չափանիշը՝ S_{eY}=0,267:

---

[1] *Հոդվածում ներկայացված բոլոր հաշվարկներն իրականացվել են https://math.semestr.ru/regress/corel.php կայքում տեղակայված ծրագրերի և «MS Excel-ի анализ данных» գործիքի միջոցով*

Եթե առաջին կարգի ավտոկոռելյացիայի գործակից r_1-ը գտնվում է հետևյալ միջակայքում՝ $-2.56 * 0.267 < r_1 < 2.56 * 0.267$, ապա կարելի է ենթադրել, որ ավտոկոռելացիան բացակայում է:

Մեր օրինակում ավտոկոռելյացիայի գործակիցը՝ $r_1=0,059$

Քանի որ $-0.684 < r_1 = 0.0579 < 0.684$, հետևաբար ավտոկոռելյացիա չկա:

Կառուցած ռեգրեսիոն հավասարման հիմնական արդյունքերը ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության ռեգրեսիոն հավասարման հիմնական արդյունքները

Ցուցանիշը	Արդյունքը
Կոռելյացիայի գործակիցը	0,958
Հատկանիշների միջև կապը	Շատ ուժեղ
Դետերմինացիայի բազմակի գործակիցը (r^2)	0,919
Գծային կապի ռեգրեսիայի հավասարումը	$y_{1,2,3,...,k} = 0,252x + 506,4$
Ապրոքսիմացիայի միջին սխալը	7,32 %
Ստանդարտ սխալը	87,7 %
Դիտարկումների թիվը	14

(1) Գծային կապի ռեգրեսիայի հավասարման որակը գնահատվում է լավ:

Որպեսզի ցույց տանք, թե մեկ փոփոխականի աճը ինչքանով է կապված մյուսի հետ, ներկայացնենք գծային տրենդի գրաֆիկը: Կապը գծային է, քանի որ ակնկալվում է, որ մեկ փոփոխականի ֆիքսված աճը կտանի մյուս փոփոխականի ֆիքսված աճին:

Գծապատկեր 1. Գծային տրենդի գրաֆիկը[1]



[1] *Գծապատկերը կառուցվել է «MS Excel-ի анализ данных» գործիքի տվյալների հիման վրա*

Այսպիսով, կարող ենք փաստել, որ մեր կողմից կառուցված ռեգրեսիոն հավասարման որակը գնահատվում է լավ, այսինքն՝ դիտարկված ցուցանիշները սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ, ինչը նշանակում է, որ մեկի աճի դեպքում մյուսը ևս աճում է. և հակառակը, մեկի նվազման դեպքում մյուսը ևս նվազում է, մասնավորապես, պետական պարտքի միջին հաշվով 1 միավորով աճը պետական բյուջեի եկամուտներն ավելացնում է 0,252 միավորով:

Հարկ է ընդգծել, որ ՀՀ օրենսդրության համաձայն, պետական պարտքի կառավարման նպատակով յուրաքանչյուր տարվա կառավարության *պարտք/ՀՆԱ* հարաբերակցությունը չպետք է գերազանցի 60%-ը, ինչը սակայն վերջին տարիներին չի պահպանվում: Դա բացասական երևույթ է, որը խոսում է ՀՀ հանրային ֆինանսական ոլորտում առկա լուրջ հիմնախնդիրների, ինչպես նաև օտարերկրյա կրեդիտորներից մեծ կախվածության մասին:[1]

2020թ. մարտահրավերներով լի տարի էր ինչպես աշխարհի, այնպես էլ ՀՀ համար: Համավարակով առաջացած ֆինանսական և տնտեսական մարտահրավերներին գումարվեց նաև սեպտեմբերին հայ ժողովրդի դեմ սանձազերծված արցախյան պատերազմը, որի արդյունքում հայկական կողմն ունեցավ թե՛ մարդկային, թե՛ ֆինանսական ահռելի և անդառնալի կորուստներ: Արդյունքում պետական բյուջեի պլանավորված ցուցանիշները ունեցել են էական շեղումներ:

Գծապատկեր 2-ում ներկայացված են 2016-2021թթ. ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները: Նշված ժամանակահատվածում դեֆիցիտի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2021 թվականին՝ արտացոլելով արցախյան պատերազմի ազդեցությունները 2021թ. բյուջեի վրա:

2020թ. հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով փաստացի եկամուտները 5,4%-ով նվազել են նախորդ տարվա նույն ցուցանիշից: Նվազման հիմնական պատճառ են հանդիսացել համավարակի և Արցախյան երրորդ պատերազմի հետևանքով տնտեսական ակտիվության անկումը, ներմուծումների և արտահանումների կրճատումը, խոցելի տնտեսական ոլորտների իրացման շրջանառությունների և աշխատատեղերի կրճատումը, ինչպես նաև համավարակի հետևանքով սահմանված արտոնությունները:

[1] *Տե՛ս ՀՀ Օրենքը պետական պարտքի մասին, ՀՕ-78 Ն, հոդված 5.6:*



Գծապատկեր 2. ՀՀ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը 2016-2021թթ., մլրդ դրամ[1]

ՀՀ բյուջետային եկամուտների կառուցվածքում բոլոր տարիների բյուջեների եկամտային մասերի ձևավորման գլխավոր աղբյուրը եղել են հարկային եկամուտները: Գծապատկեր 3-ում ներկայացնենք ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում հինգ խոշոր եկամտատեսակները 2016-2020թթ. ընթացքում: 2020 թվականին ԱԱՀ-ի և եկամտային հարկի գծով եկամուտները ավելացել են նախորդ տարիներին համեմատ: Շահութահարկի գծով մուտքերի վրա ազդող հիմնական բացասական գործոններից է հանդիսացել COVID-19 կորոնավիրուսի համավարակի հետևանքով շահութահարկի կանխավճարների գծով արտոնությունների սահմանումը: Ակցիզային հարկի գծով ընդհանուր մուտքերի վրա բացասական նպաստումն են ունեցել մաքսային մարմինների կողմից գանձված ակցիզային հարկի մուտքերը, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով նախատեսված 2020թ. հունվարի 1-ից հետո գործող կարգավորումները: Մասնավորապես՝ 2020թ. հունվարի 1-ից ակցիզային հարկով հարկման բազան համարվում է միայն ապրանքի քանակը (ծավալը): Մաքսատուրքերի գծով ընդհանուր նվազումը հիմնականում պայմանավորված է COVID-19 կորոնավիրուսի համավարակի հետևանքով համաշխարհային տնտեսական ակտիվության նվազմամբ:

[1] *2016-2021թթ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները*



Գծապատկեր 3. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում հինգ խոշոր եկամտատեսակները 2016-2020թթ., մլրդ դրամ[1]

Քանի որ բյուջեի եկամուտների կառուցվածքում գերակշիռ մասը կազմում են հարկային եկամուտները, ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում: Հարկային համակարգի արդյունավետության կարևորագույն ցուցանիշներից է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մակարդակը : Հարկերի հավաքագրման տեսանկյունից ամենակարևոր առաքելությունը տնտեսական աճով պայմանավորված հարկային եկամուտներ ապահովելն է և ստվերի կրճատման հաշվին հարկային եկամուտների աճը :

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի վերջին տարիների էական բարելավումը պայմանավորվել է ՀՀ կառավարության ստվերի դեմ իրականացվող պայքարով, հարկային վարչարարության բարելավմամբ և 2018-2020թթ. ավտոմեքենաների ներմուծման ծավալների կտրուկ աճով: Արտակարգ իրավիճակների պայմաններում հարկային կարգապահությունը ևս անկում է ապրում, սակայն հարկ վճարողների իրավագիտակցության և պետական եկամուտների կոմիտեի իրականացրած հարկային վարչարարության շնորհիվ 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ գրանցվել է *հարկեր/ՀՆԱ* հարաբերակցության ցուցանիշի 0,1 տոկոսային կետով աճ (Գծապատկեր 4):

[1] *Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջի տվյալները, www.petekamutner.am*



Գծապատկեր 4. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2015-2020թթ. ՀՀ-ում[1]

Համեմատության համար ներկայացրել ենք նաև որոշ երկրների *հարկեր/ՀՆԱ* հարաբերակցությունը, որն արտացոլված է գծապատկեր 5-ում :



Գծապատկեր 5. 2020թ. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը տարբեր երկրներում[2]

Գծապատկերի տվյալներից երևում է, որ *հարկեր/ՀՆԱ* հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Իտալիայում, իսկ ամենացածրը՝ Չինաստանում: Հայաստանում *հարկեր/ՀՆԱ* ցուցանիշի արժեքը մոտ է ՌԴ-ում, Գերմանիայում արձանագրված ցուցանիշների արժեքին:

Համավարակի և պատերազմի բացասական հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ Կառավարությունն իրականացնում է մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժի չափը սահմանվեց 0.04 տոկոս՝ մինչ այդ սահմանված 0,075 տոկոսի փոխարեն:

---

[1] *ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվություններ՝ 2015-2020թթ.:*

[2] *Գծապատկերը կառուցվել է միջազգային Ceicdata տեղեկատվական հարթակի տվյալների հիման վրա՝ https://www.ceicdata.com, մուտք՝ 28.10.2021թ.:*

- Ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար շահութահարկի կանխավճարների չափերը սահմանվել են նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20%-ով հաշվարկվող գումարի և նախորդ եռամսյակի ընթացքում ստացված եկամուտների 2%-ով հաշվարկվող գումարի նվազագույնի չափով: Հարկ վճարողներն ազատվել են նաև 2020թ. 2-րդ եռամսյակի համար շահութահարկի կանխավճարների հաշվարկման և վճարման պարտավորությունից:
- 2020թ. հուլիսի 1-ից 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ներմուծվող կամ ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվել է հարկ վճարողի հայեցողությամբ, բայց ոչ պակաս, քան մեկ տարին:
- Հարկ վճարողի գույքի արգելադրման մասով չկատարված հարկային պարտավորությունների չափը սահմանվել է 1 միլիոն 500 հազար դրամ՝ 500 հազար դրամի փոխարեն:
- Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:
- Հարկային գործակալը եկամտային հարկը հաշվարկում է ամսական հարկվող եկամտի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով.

1. 2020 թվականի հունվարի 1-ից՝ 23 տոկոս դրույքաչափով,
2. 2021 թվականի հունվարի 1-ից՝ 22 տոկոս դրույքաչափով,
3. 2022 թվականի հունվարի 1-ից՝ 21 տոկոս դրույքաչափով,
4. 2023 թվականի հունվարի 1-ից՝ 20 տոկոս դրույքաչափով:

Այսպիսով, բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով, օրենսդրությանը համապատասխան, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են: ՀՀ բյուջետային եկամուտների գլխավոր աղբյուր համարվող հարկային եկամուտների կառուցվածքում գերաշռում են ԱԱՀ-ն, եկամտային հարկը, շահութահարկը, ակցիզային հարկը և մաքսատուրքը: Բյուջետային եկամուտների և մակրոտնտեսական այլ ցուցանիշների միջև փոխկապվածության բացահայտման նպատակով իրականացված կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվել է, որ կապը ՀՀ պետական բյուջեի եկամուտների և պետական պարտքի միջև շատ ուժեղ է, իսկ ռեգրեսիայի հավասարման որակը՝ լավ: 2020թ. տարածված համավարակը և սեպտեմբերի 27-ին սկսած Արցախյան երրորդ պատերազմը իրենց բացասական ազդեցությունն են

ունեցել ինչպես ՀՀ և ԱՀ ողջ ֆինանսական համակարգի, այնպես էլ բյուջետային եկամուտների հավաքագրման գործում: Պատերազմի բացասական հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ Կառավարությունը սահմանել է մի շարք հարկային արտոնություններ, որոնք նպատակաուղղված են ձեռնարկատիրական գործունեության աջակցությանը, ներդրումների խթանմանը, հետևաբար նաև՝ տնտեսական աճին:

Գրականություն

1. Ջանջուղազյան Ա. Ս., Բյուջեների կատարման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում:
2. **Քթոյան Ա., Խաչիկյան Ս., Մովսիսյան Մ., Հակոբյան Կ.**, Տնտեսագիտական խնդիրների վիճակագրական վերլուծությունը SPSS փաթեթի գործադրմամբ: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ, Եղեգնաձոր, 2015:
3. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդ. 24.06.1997, հոդված 1, 2:
4. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքները՝ 2010թ..-ից մինչև 2019թ.:
5. 2021-2023թթ. ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր:
6. 2021-2023թթ. ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր:
7. 2016-2021թթ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները:
8. ՀՀ օրենքը պետական պարտքի մասին, ՀՕ-78 Ն:
9. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ, www.petekamutner.am
10. ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվություններ՝ 2015-2020թթ.:
11. **Бабкова Ю. Б.,** К ВОПРОСУ О СУЩНОСТИ БЮДЖЕТА https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-suschnosti-byudzheta
12. Общая теория финансов. Под ред. **Л. Дробозиной**, М., 1995.
13. **Позднякова Т.,** Финансы в системе государственного регулирования социально- экономических процессов, М., 2009
14. **Родионова В., Вавилов Ю., Гончаренко Л.** и др. Финансы, М., 1995.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

ՀՏԴ 336.7
Տնտեսագիտություն

Արմեն ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
էլ.հասցե:armenghazaryan@mail.ru

ՎԱՐԿԱՅԻՆ ՍՔՈՐԻՆԳԻ ԵՎ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ

Հոդվածում առաջարկվել է բանկի հաճախորդների վարկունակության կանխատեսման ալգորիթմ՝ ինչպես մեքենայական ուսուցման առանձին մոդելների, այնպես էլ դրանց համադրության հիման վրա: Բացի դրանից, մշակվել են վարկային սքորինգի և անձի նույնականացման հավելվածներ՝ մեքենայական ուսուցման կիրառմամբ:

Բանալի բառեր՝ հաճախորդների վարկունակության, մեքենայական ուսուցման մեթոդներ, արհեստական բանականություն, լոգիստիկ ռեգրեսիա, արհեստական նեյրոցանց:

А. Казарян

ПРОГНОЗ КРЕДИТОСПОСОБНОСТИ КЛИЕНТОВ НА ОСНОВЕ МЕТОДОВ МАШИННОГО ОБУЧЕНИЯ

В статье был предложен алгоритм прогнозирования кредитоспособности клиентов банка как с использованием отдельных моделей машинного обучения, так и с применением их комбинации.Кроме того, разработаны приложения для кредитного скоринга и идентификации личности с применением машинного обучения:

Ключевые слова:: кредитоспособность клиентов, методы машинного обучения, искусственный интеллект, логистическая регрессия, искусственный нейросеть.

A. Ghazaryan

DESIGNING APPLICATIONS FOR CREDIT SCORING AND IDENTITY IDENTIFICATION WITH MACHINE LEARNING

The article proposes an algorithm for predicting the creditworthiness of bank customers both using separate machine learning models and using a combination of them. In addition, applications for credit scoring and identity identification using machine learning have been developed:

Key words: customer creditworthiness, machine learning methods, artificial intelligence, logistic regression, artificial neural network:

Մեր աշխատանքի նպատակն է կատարելագործելը հաճախորդների վարկունակության կանխատեսման մեթոդաբանությունն, կայացնել վարկի տրամադրման վերաբերյալ և բանկում ներդնել հաճախորդի բիոմետրիկ նույնականացման գործընթաց՝ կիրառելով արհեստական բանականության տեխնոլոգիաները:

Վարկային ծառայությունների ոլորտում, շուկայական մրցակցության աճի հետ կապված, վարկունակության գնահատման առանձին տարրերի մշակումը և վարկային ռիսկի ճշգրիտ որոշումը համարվում են արդիական խնդիր: Բացի դրանից, բանկերում առցանց ծառայությունների ներդրմանը զուգընթաց նվազում է հաճախորդի բանկ այցելելու հաճախականությունը, նպաստում սպասարկման ծախսերի կրճատմանը, ծառայությունների որակի բարելավմանը: Սակայն առցանց գործարքների մեծ մասի համար (քարտի կամ վարկի համար դիմելիս, հաշիվ բացելիս և այլն) հաճախորդից պահանջվում է անցնել բիոմետրիկ նույնականացման գործընթաց:Այս խնդիրը լուծելու համար այսօր բազմաթիվ միջազգային բանկեր արդեն կիրառում են արհեստական բանականության տեխնոլոգիաները:

Մեր կողմից մշակված՝ դեմքի ճանաչման մոդելը հնարավորություն է տալիս համեմատել հաճախորդի՝ այդ պահին արված նկարը անձնագրի նկարի հետ: Մոդելի կառուցման համար օգտագործվել են Python ծրագրավորման լեզվի dlib, openCV գրադարանները: Ստեղծված վեբ հավելվածի միջոցով օգտատերը նախ կարողանում է իր համակարգչի տեսախցիկով ինքնանկար անել, այնուհետև նաև վերբեռնել իր լուսանկարը: olib գրադարանի դեմքի ճանաչման գործիքը մարդու նկարը տեղավորում է 128 չափանի վեկտորական տարածությունում, որտեղ նույն անձի լուսանկարները միմյանց մոտ են գտնվում, իսկ տարբեր անձանցը՝ հեռու[1]: Այնուհետև հաշվարկվում է էվկլիդյան հեռավորությունը, եթե այն փոքր է 0,1–ից, կանխատեսումը դրական արդյունք է տալիս, հակառակ դեպքում՝ բացասական:

Ստորև մանրամասն քննենք նաև մեր կողմից ստեղծված մեկ այլ հավելված՝ մեքենայական ուսուցման ալգորիթմների վրա կառուցված վարկառուի վարկունակության գնահատման մոդելը:

Վարկային սքորինգը արժեքավոր գործիք է բարելավելու համար ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունն ու հասանելիությունը (ֆիզիկական անձանց, փոքր և միջին ձեռնարկություններին): Լավ մշակված սքորինգային մոդելն օգնում է ֆինանսական կառույցներին՝ նվազեցնելու ֆինանսական ռիսկերը և ճիշտ բաշխելու ֆինանսական ռեսուրսները:

Վարկային սքորինգի համար կիրառվող մեթոդները վերջին տարիներին ինչպես քանակով, այնպես էլ բարդության աստիճանով մեծ աճ են գրանցել: Դրանք ներառում են ինչպես ավանդական վիճակագրական, այնպես էլ նորարարական մեթոդներ, ինչպիսիք են՝ արհեստական բանականությունը, ներառյալ մեքենայական ուսուցումը (պատահական անտառ, gradient boosting և

[1] http://dlib.net/face_recognition.py.html

խորը նեյրոնային ցանցեր)[1]: Ի տարբերություն ավանդական մեթոդների՝ մեքենայական ուսուցման վրա հիմնված վարկային սքորինգի մոդելներն իրականացնում են տվյալների մանրազնին գնահատում և ներառում այնպիսի տվյալներ, որոնք հաճախ կարող են ավանդական մեթոդի ժամանակ թվալ անկարևոր և ընդհանրաես չներառվել: Նորարարական մեթոդները նաև ինքնակատարելագործվելու հնարավորություն ունեն տվյալների բազա նոր տվյալների մուտքագրման դեպքում. հատկանիշ, որը բացակայում է ավանդական մեթոդների դեպքում:

Ստորև կներկայացնենք մեքենայական ուսուցման վրա հիմնված վարկային սքորինգի մոդել: Որպես ուսուցման հիմնական ձև՝ օգտագործվել է անսամբլ ուսուցումը (Ensemble learning): Որպես գործիք կիրառվել է Python ծրագրավորման լեզուն, մասնավորապես՝ հետևյալ հիմնական գրադարանները՝ sklearn, imblearn, pandas, numpy: Վարկային տվյալները (493 520), որոնք օգտագործվել են մոդելի ուսուցման համար, վերցված են բաց հանրային ռեսուրսից՝ Kaggle ինտերնետային կայքից[2]: Մշակվել է վարկային սքորինգի մոդել, յուրաքանչյուր մուտքագրվող վարկառուի տվյալներին համապատասխան կայացվում է որոշում վարկի տրամադրման վերաբերյալ՝ տալով դրական կամ բացասական եզրակացություն: Արդյունքները ցուցադրելու համար մշակվել է վեբ հավելված (Web application):

Արհեստական բանականությունը ներառում է բազմաթիվ տեսություններ, մեթոդներ և տեխնոլոգիաներ: Մեքենայական ուսուցումն արհեստական բանականության ենթաբաժին է: Այն ավտոմատացնում է վերլուծական մոդելի կառուցումը: Մեքենայական ուսուցումը օգտագործում է մեթոդներ նեյրոնային ցանցերից, վիճակագրությունից, գործառնությունների հետազոտությունից և ֆիզիկայից՝ գտնելու համար տվյալներում թաքնված տեղեկատվությունը/ճշմարտությունը՝ առանց հստակ ծրագրավորված լինելու, թե որտեղ նայել, փնտրել կամ ինչ եզրակացնել[3]:

Անսամբլ ուսուցումը մեքենայական ուսուցման պարադիգմ է, որտեղ բազմաթիվ մոդելներ (որոնք հաճախ անվանում են «թույլ սովորողներ») վերապատրաստվում են նույն խնդիրը լուծելու համար և համատեղվում՝ ավելի լավ արդյունքներ ստանալու համար: Հիմնական վարկածն այն է, որ երբ թույլ մոդելները ճիշտ են զուգորդվում, ապա կարող են բերել առավել ճշգրիտ և /կամ ուժեղ մոդելների: Այն հիմնված է այն ենթադրության վրա, որ յուրաքանչյուր մոդել դիտարկում է տվյալները տարբեր տեսանկյուններից՝ վեր հանելով ճշմարտության միայն մի մասը: Այնուհետև միավորելով լավ կատարողական ունեցող մոդելները, որոնք վարժեցվել են միմյանցից անկախ, կբերեն ճշմարտության մեծ մասի բացահայտմանը առավել քան մեկ մոդելը: Ուստի, սա

---

[1] *The World Bank Group, Credit Scoring Approaches Guidelines, 2019* *http://pubdocs.worldbank.org/en/935891585869698451/CREDIT-SCORING-APPROACHES-GUIDELINES-FINAL-WEB.pdf*

[2] *https://www.kaggle.com/wordsforthewise/lending-club*

[3] *SAS, 2019, https://www.sas.com/en_us/insights/analytics/what-is-artificial-intelligence.html*

կհանգեցնի առավել ճշգրիտ կանխատեսումների և առավել քիչ սխալների: Մոդելների քանակի ավելացմանը զուգահեռ աճում է անսամբլ մոդելի կատարողականը: Եվ պետք է ընտրել մոդելներն այնքան տարբեր, ինչքան հնարավոր է: Սա փոքրացնում է մոդելների միջև կոռելյացիան և հանգեցնում անսամբլ մոդելի կատարողականի բարձրացմանը:

Տարբեր անսամբլ մեթոդները կառուցում են մոդելների համախմբությունը տարբեր կերպ: Ստորև ներկայացնենք հաճախ կիրառվող մեթոդները.

- Բլենդինգ (Blending)՝ բոլոր մոդելների կանխատեսումների միջինացում[1],
- Բագգինգ (Bugging)՝ տվյալների վարժեցվող հավաքածուի պատահական ենթաբազմությունների վրա միմյանցից անկախ մոդելների կառուցում, դրանց անհատական կանխատեսումների միջինացում՝ որպես վերջնական կանխատեսում,
- Բուսթինգ (Boosting)՝ մոդելների հաջորդական կառուցում այնպես, որ հաջորդ մոդելը սովորում է իր նախորդ մոդելից: Վերաուսուցման սխալից խուսափելու համար յուրաքանչյուր մոդել սովորում է նախորդ բոլոր մոդելների արդյունքների հիմքի վրա[2],
- Սթեքինգ (Stacking)՝ k բազային սովորողների կառուցում, դրանց արդյունքի տեղավորում մոդելում՝ վերջնական արդյունքի կանխատեսման համար[3]:

Մոդելավորման համար կիրառվել է անսամբլ մոդելում բագգինգ մեթոդի երկու դասակարգիչ՝ Bagging Classifier-ը և RandomForestClassifier-ը: BaggingClassifier-ը՝ որպես միասնական մետագնահատիչ, ընդունում է որպես մուտքային տվյալ օգտատիրոջ կողմից սահմանված բազային գնահատիչը (base estimator), ինչպես նաև այլ պարամետրեր, որոնցով սահմանվում է պատահական ենթաբազմություններ կազմելու ռազմավարությունը[4]: Որպես բազային գնահատիչ պարամետրի արժեք՝ տրվում է RandomForestClassifier-ը: Պատահական անտառում անսամբլի յուրաքանչյուր ծառ կառուցված է վարժեցման հավաքածուի ենթահավաքածուի վրա: Հիմքում ընկած գաղափարն է աճեցնել մոտավորապես անկախ ծառերի մոդելների շարք, որոնք համատեղ ավելի լավ են աշխատում, քան մեկ ծառի մոդելը: Դասակարգման լուծումները և ռեգրեսիայի արժեքները այնուհետև տրվում են համապատասխանաբար բոլոր առանձին ծառերի «ձայների» մեծամասնությամբ կամ միջին կանխատեսումով:

Մոդելի ուսուցման համար օգտագործվել են տվյալների 80%-ը, իսկ վարժեցման՝ 20%-ը: Տվյալների հավաքածուն ներառում է հետևյալ հատկանիշները (features).

---

[1] *http://www.machinelearning.ru/wiki/images/5/56/Guschin2015Stacking.pdf*

[2] *https://neurohive.io/ru/osnovy-data-science/ansamblevye-metody-begging-busting-i-steking/*

[3] *https://dyakonov.org/2017/03/10/c%D1%82%D0%B5%D0%BA%D0%B8%D0%BD%D0%B3-stacking-%D0%B8-%D0%B1%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B4%D0%B8%D0%BD%D0%B3-blending/*

[4] *https://scikit-learn.org/stable/modules/ensemble.html*

- **Նպատակ՝** վարկի նպատակը (վարկային քարտ, կոնսոլիդացիա, վերանորոգում, անշարժ գույքի ձեռքբերում, շարժական գույք, խոշոր առք, էներգետիկ, բիզնես վարկ, առողջական, հանգիստ, հարսանեկան և այլն),
- **Տոկոսադրույք՝** վարկի տոկոսադրույքը,
- **Ամսական վճարումների մեծություն՝** վարկառուի կողմից վարկի հաստատումից հետո ամսական տրվող վճարների մեծությունը,
- **Տարեկան եկամուտ՝** վարկառուի տարեկան եկամտի մեծությունը,
- **Վարկ/եկամուտ հարաբերակցություն,**
- **Վարկային գնահատական՝** վարկառուի վարկային գնահատականը ըստ FICO համակարգի[1],
- **Վարկառուի հաշվեկշիռ,**
- **Վարկառուի հաշվեկշռի օգտագործման գործակիցը,**
- **Վերջին 6 ամիսների վարկառուի՝ վարկատուներին դիմելու քանակ,**
- **Վերջին 2 տարիներին 30 և ավելի օր ժամկետանց վարկեր ունենալու դեպքերի քանակ,**
- **Վարկային գրանցամատյանի մեջ բացասական նշումների քանակ:**



Ստեղծված վեբ հավելվածում, որը պարզ ինտերֆեյս է ստեղծում օգտագործողի համար, մուտքագրելով վարկառուի մասին տվյալները, որոնք համապատասխանում են վերը նշված տվյալների հավաքածուի

---

[1] *ՖԱՅԿՈ Սքորը (FICO® Score) սքորինգային համակարգ է, որը, վիճակագրական ուսումնասիրության և վերլուծության ենթարկելով հաճախորդի վարկային պատմությունը, տալիս է վարկառուի վարկային ռիսկի (վարկարժանության) թվային գնահատականը՝ որպես սպառողական կրեդիտավորման ռիսկի մակարդակի չափորոշման առանցքային գործիք: Հայաստանում այն մշակվել է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲ և «Ֆեյր Այզաք Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերությունների կողմից:*
https://acra.am/?page_id=609&lang=hy

հատկանիշներին, օգտատերը ստանում է պատասխան վարկի տրամադրման մասին՝ դրական կամ բացասական։ Տվյալների մուտքագրումից հետո **կանխատեսել** ստեղնի սեղմամբ տվյալները փոխանցվում են Front End-ից դեպի Back End, որտեղ կանչվում է համապատասխան մոդելի կանխատեսման ֆունկցիան և որպես արդյունք վերադարձվում է արժեք՝ 1 կամ 0։ 1 արժեքի դեպքում օգտատերը տեսնում է կանխատեսման դրական արդյունք, 0 արժեքի դեպքում՝ բացասական։ Բոլոր վարկառուների տվյալները պահպանվում են տվյալների բազայում։

Այս ալգորիթմը թույլ է տալիս օգտագործել ինչպես առանձին մոդելներ, այնպես էլ դրանց համակցությունները։ Դիտարկվող մոտեցման մեջ նաև առաջարկվում է անցկացնել նախնական տվյալների վերլուծություն (դիսկրետացում, վարկառուի վիճակագրորեն նշանակալի բնութագրերի որոնում) և օգտագործել որակի ընտրության տարբեր չափանիշներ՝ օպտիմալ կառուցվածքը ստանալու համար։ Ստացված արդյունքների հիման վրա՝ բանկի հաճախորդները վարկունակության մակարդակով բաժանվում են մի շարք դասերի։ Մշակված ալգորիթմի հիման վրա ստացվել է վարկունակության կանխատեսման արդյունավետ մեթոդ, որը թույլ է տալիս գնահատել վարկի վճարման հավանականությունը՝ վարկառուի հայտնի բնութագրերի հիման վրա։

Այսպիսով, մեքենայական ուսուցման տարբեր մոդելների կիրառումը թույլ է տալիս բարձրացնել վարկունակության կանխատեսման արդյունավետությունը, վարկային ռիսկի գնահատման որակը և օպտիմալացնել վարկի տրամադրման գործընթացը։

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը։

ՀՏԴ 336.7

Տնտեսագիտություն

Ռուզաննա ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և
կառավարմանամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Մարիա ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
ԱրՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի
Կառավարում ՄԿԾ-ի առաջին կուրսի մագիստրանտ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում դիտարկվել է մարդկային կապիտալի կուտակման և զարգացման դերը ժամանակակից տնտեսությունում, նրա մրցունակության բարձրացման գործում, հիմնավորվել մարդկային կապիտալը՝ որպես տնտեսական համակարգը նորարարական տնտեսության վերափոխելու հիմք, քննարկվել մարդկային կապիտալի արժեքիբարձրացման չափորոշիչները:
Հետազոտությունում մանրակրկիտ վերլուծվել են մարդկային կապիտալի զարգացման հիմնական բնութագրիչները. բնակչության եկամուտները (կենսամակարդակը), մարդկանց կրթության մակարդակը, մարդկանց առողջական վիճակը և կատարվել հիմնավոր եզրահանգումներ: Մարդկային զարգացման համաթվի դիտարկմամբ կատարվել են համեմատական վերլուծություններ տարբեր տարածաշրջանների և երկրների բնակչության կենսամակարդակների միջև:
Հոդվածում հաշվարկվել է մարդկային զարգացման համաթվի ցուցանիշը ԱՀ-ի համար՝ 2017-2020թթ. Կտրվածքով, վեր են հանվել երկրում մարդկային կապիտալի զարգացման և արդյունավետ օգտագործման ուղիները:
Հետազոտությունում տրվել են ԱՀ-ում մարդկային կապիտալի որակական բարելավման կոնկրետ ուղիների առաջարկներ:
Բանալի բառեր՝ մարդկային կապիտալ, մարդկային կապիտալի արժեք, մարդկային կապիտալի զարգացում, մարդկային կապիտալի որակ, համախառն ներքին արդյունք,

բնակչության 1 շնչին ընկնող եկամուտ, կյանքի միջին տևողություն, կրթության մակարդակ, մարդկանց առողջական վիճակ, ներդրումներ, կենսամակարդակ, բնակչության ծերացում, տնտեսական աճ, զարգացող երկրներ, մարդկային զարգացման համաթիվ:

Р.Мангасарян, М.Манучарян

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В РАЗВИТИИ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА

В данном статье рассматривалься роль накопления и развития человеческого капитала в современной экономике и в повышении ее конкурентоспособности, обосновываясь человеческий капитал как способ трансформации экономической системы в модернизированную экономику и дискуссирует критерии повышения ценности человеческого капитала.

В ходе исследования были тщательно проанализированы основные характеристики развития человеческого капитала: доход населения (уровень жизни), уровень образования и состояние здоровья, и были сделаны существенные выводы. Наблюдая за индексом человеческого развития, был проведен анализ между уровнем жизни населений различных регионов и стран.

В статье рассчитывается индекс человеческого развития Республики Арцах на 2017-2020 годы, выявлены пути развития и эффективного использования человеческого капитала.

В исследовании предлагаются конкретные пути повышения качества человеческого капитала в Республике Арцах.

Ключевые слова: человеческий капитал, ценность человеческого капитала, развитие человеческого капитала, качество человеческого капитала, валовой внутренний продукт, доход на душу населения, средняя продолжительность жизни, уровень образования, состояние здоровья, инвестиции, уровень жизни, старение населения, экономический рост, развивающиеся страны, индекс человеческого развития.

R. Mangasaryan, M.Manucharyan

CURRENT TRENDS IN HUMAN CAPITAL DEVELOPMENT

This article observes the role of accumulation and development of human capital in the modern economy and in raising its competitiveness, substantiates human capital as a way of transforming the economic system into a modernized economy, and discusses the criteria for increasing the value of human capital.

The principal descriptors of human capital development: population income (standard of living), level of education, and health condition were thoroughly analyzed in the research and substantial conclusions were made. By observing the human development index, comparative analysis was done on living standards between populations of diverse regions and countries.

In the article, the human development index value for the Artsakh Republic for the years 2017-2020 was evaluated, and the ways of developing and efficiently using human capital were revealed.
Concrete ways of improving the quality of human capital in the Artsakh Republic are proposed in the research.
Key words: human capital, human capital value, human capital development, human capital quality, gross domestic product, per capita income, average life duration, educational level, health condition, investments, standard of living, population aging, economic growth, developing countries, human development index.

Համաշխարհային գիտատեխնիկական ու սոցիալ-տնտեսական առաջընթացի արդի փուլի համար բնորոշ է մարդկային գործոնի դերի ու նշանակության աննախադեպ աճը տնտեսության մեջ և հասարակական կյանքում: **Մարդկային կապիտալ** (այսուհետ՝ ՄԿ) հասկացությունն արդի պայմաններում ձեռք է բերում հասարակական արտադրության առաջընթացի վճռորոշ բաղադրիչի, հետինդուստրիալ հասարակության զարգացման հիմնարար գործոնի, նրա շարժիչ ուժի նշանակություն: Իր դասական բնորոշմամբ՝ ՄԿ-ն այն գիտելիքների, հմտությունների, կարողությունների ու վարպետության ամբողջությունն է, որով օժտված է աշխատողը, և որոնք նա ձեռք է բերում ընդհանուր ու մասնագիտական կրթության, պրոֆեսիոնալ պատրաստվածության, արտադրողական փորձի շնորհիվ: Ի տարբերություն կապիտալի մյուս տեսակների, մարդկային կապիտալի օգտագործումը ենթադրում է նրա արժեքի շարունակական աճ, այլ ոչ թե մաշվածություն, քանի որ տարիների ընթացքում գիտելիքներն ու աշխատանքային հմտություններն ավելանում են: Առանց ՄԿ-ի անհնար է նորարարական տնտեսության բնականոն գործունեությունը, ընդ որում, մարդու մտավոր ունակությունները, նրա ստեղծագործական հմտություններն ու նախաձեռնողականությունը առավելագույն պահանջարկ ունեն:

Ազգաբնակչության բարեկեցության ապահովման տեսանկյունից, թերևս, էական նշանակություն չունեն առկա մարդկային ռեսուրսների քանակական ծավալները: Քիչ չեն այն ազգերն ու պետությունները, որոնք տիրապետում են թվաքանակով մեծ մարդկային ռեսուրսների, այնուհանդերձ, այդ ռեսուրսների անարդյունավետ կառավարման հետևանքով կանգնել են տնտեսական և քաղաքական լուրջ հիմնախնդիրների առջև: Կրթության, գիտության ոլորտում անհրաժեշտ և համարժեք ներդրումների իրագործման հարցում պետության և հասարակության փոխհամաձայնությամբ մշակված ռազմավարությունը հնարավորություն է տալիս առկա ՄԿ-ի կիրառությունից ակնկալել որակական հետադարձ արդյունք:

Տարիների ընթացքում այլ հավասար պայմաններում աստիճանաբար աճում է ՄԿ արժեքը: Ինչպես ընդունված է ասել՝ առողջությունն ու գիտելիքները

աշխատանքի շուկայում յուրաքանչյուր մարդու մրցունակության գրավականն են: Նշենք, որ ՀՀ-ում և ԱՀ-ում ՄԿ արժեքը բարձրացնում են նաև այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են ընտանիքների սոցիալական կարգավիճակն ու սոցիալական կապերը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Միավորված ազգերի կազմակերպությունն առաջարկել է մարդկային կապիտալի զարգացման հետևյալ բնութագրիչները.

1. բնակչության եկամուտները (կենսամակարդակը),
2. մարդկանց կրթության մակարդակը,
3. մարդկանց առողջական վիճակը:[1]

Նշենք նաև, որ յուրաքանչյուր բնութագրիչի համար առաջարկվում են համապատասխան ցուցանիշներ: Այսպես.

- Եկամտի գնահատման համար՝ երկրում բնակչության մեկ շնչի հաշվով արտադրված համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), որը բնութագրում է պատշաճ կենսամակարդակ ունենալու հնարավորությունը: Ըստ Համաշխարհային բանկի 2019թ. տվյալների՝ բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշով աշխարհում առաջատար է Մոնակոն՝ 185 741$ (2018թ.), ինչը գրեթե 3 անգամ գերազանցում է ՀՆԱ ցուցանիշով համաշխարհային առաջատար ԱՄՆ-ի համապատասխան ցուցանիշին՝ 65 281$: Համեմատության համար նշենք, որ բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշներով ՀՀ-ն (4 623$) և ԱՀ-ն տարածաշրջանում բավականին զիջում են իրենց դիրքերը, առաջատարը Ադրբեջանն է (4 794$), այնուհետև Վրաստանը (4 769$) /գծապատկեր 1/:[2]



Գծապատկեր 1. 2020թ. Անդրկովկասի երկրների բնակչության 1 շնչինը ընկնող ՀՆԱ ցուցանիշները

- Կրթության մակարդակի գնահատման համար օգտագործվում են ներքոհիշյալ երկու չափանիշների կշռված մեծությունները.

[1] http://hdr.undp.org/
[2] www.vsemirnyjbank.org

- ✓ գրագիտության մակարդակի,
- ✓ համապատասխան տարիքային խմբի բնակիչներից ուսումնական հաստատություններում ընդգրկվածների թվի:

Նշենք, որ հիշյալ չափանիշների կշռված մեծությունների (առաջինը՝ 1/3, երկրորդը՝ 2/3 գործակցով) գումարը ներկայացնում է կրթության մակարդակը երկրում:

Ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացրած տվյալների՝ կրթության մակարդակի ինդեքսով աշխարհում առաջատարը Գերմանիան է (0,943), իսկ Ասիական երկրներից՝ Իսրայելը (0.883): Անդրկովկասում կրթական մակարդակի ինդեքսը ամենաբարձրը Վրաստանում (0.862) է: Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ հիշյալ համաթվով ՀՀ-ն (0.740) Ադրբեջանի (0.711) համեմատ առաջատար է: Հաշվարկները փաստում են, որ ԱՀ-ում ցուցանիշը ունի ցածր մակարդակ՝ 0,68 (հաշվարկը տրված է աղյուսակ 3-ում) գծապատկեր 2/:[1]



Գծապատկեր 2. 2020թ. կրթության մակարդակի ինդեքսը տարբեր երկրներում

- Մարդկանց առողջության գնահատման համար հաշվարկվում է կյանքի սպասվելիք միջին տևողության ցուցանիշը: Դիտարկումները ցույց են տալիս, որ 2020թ. տվյալներովկյանքի սպասվելիք միջին տևողությամբ, աշխարհում առաջատարը Հոնկոնգն է (84.9), Եվրոպայում՝ Շվեյցարիան (83,8): Ինչ վերաբերում է մեր տարածաշրջանին, ապա հիշյալ ցուցանիշով Վրաստանի (73.8) և Ադրբեջանի (73.0) համեմատությամբ ՀՀ-ն առաջատար է (75.1): Ինչ վերաբերում է Արցախի Հանրապետությանը, ապա պատերազմի հետևանքով ցուցանիշը բավականին նվազել է և կազմել 68.9 տարի /գծապատկեր 3/:

[1] http://hdr.undp.org/

Գծապատկեր 3. Կյանքի սպասվելիք միջին տևողության պատկերը տարբեր երկրներում (տարիներով) 2020թ. դրությամբ

Դիտարկումները ցույց են տալիս, որ մարդկային կապիտալի մակարդակի թերևս ամենահայտնի անուղղակի ցուցանիշը մարդկային զարգացման ինդեքսն է, որը հաշվարկվում է Համաշխարհային բանկի կողմից: Մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ) հնարավորություն է տալիս կատարել համեմատական վերլուծություններ տարբեր տարածաշրջանների և երկրների բնակչության կենսամակարդակների միջև: Համաթիվը պարունակում է չորս պարադիգմա՝

✓ **Արտադրողականություն.** դիտվում է որպես տնտեսական աճ և արդյունավետ գործառնություններից եկամտի աճ:

✓ **Հավասարություն.** ցույց է տալիս, թե որքանով սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներ հնարավորություն ունեն օգտվելու սոցիալական բարիքներից:

✓ **Զարգացում.** ցույց է տալիս, թե ինչպես է մարդկանց մասնակցությունը սոցիալական և տնտեսական գործունեությանը նպաստում կյանքի պայմանների բարելավմանը:

✓ **Կայունություն**. ենթադրում է, որ կուտակված բարիքները ժամանակի ընթացքում չեն սպառվում, և դրանց հասանելիությունը սահմանափակված չէ:

Նշենք, որ հիշյալ պարադիգմաները թվային կերպով ներկայացնելու համար օգտագործվում են երեք ենթաինդեքսներ՝ կրթական համակարգերում ընդգրկվածություն, կյանքի սպասվող տևողություն և բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտ: Ընդ, որում ՄԶՀ հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների ներկայացրած և որոշակի համապատասխանեցում անցած տվյալները:

Այսպես, մարդկային կապիտալի զարգացման համաթիվը (ինդեքս) որոշելու համար վերը շարադրված երեք գնահատումների ցուցանիշները հաշվարկվում են ներքոհիշյալ բանաձևով.

$$ԻՄԶՀ=\frac{1}{3}(ԻԿՍՏ+ԻԿՐԹ+ԻՀՆԱ),\quad ԻԿՍՏ=\frac{Ց_{փ}-Ց_{նվ}}{Ց_{առ}-Ց_{նվ}}$$

որտեղ՝ **ԻԿՍՏ-ն** տվյալ տեսակի ինդեքսն է (օրինակ՝ կյանքի սպասվող տևողության), **Ցփ-ն՝** ցուցանիշի փաստացի ձեռքբերված մակարդակը, **Ցնվ-ն՝** ցուցանիշի ընդունված նվազագույն մակարդակը, **Ցառ-ը՝** ցուցանիշի ընդունված առավելագույն մակարդակը:[1]

ՄԶՀ-ի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշների հաստատագրված նվազագույն և առավելագույն մեծությունները տրվում են են ներքոհիշյալ աղյուսակում.

Ցուցանիշներ	Նվազագույն	Առավելագույն
Կյանքի սպասվելիք միջին տևողությունը (տարի)	25	85
Չափահասների գրագիտության մակարդակը (%)	0	100
Կրթական հաստատություններում ընդգրկվածությունը (%)	0	100
Մեկ շնչին, ընկնող իրական ՀՆԱ (դոլար)	100	40000

Աղյուսակ 1.ՄԶՀ-ի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշների ընդունված նվազագույն և առավելագույն մեծությունները

ՄԶՀ-ի փոփոխման հնարավոր միջակայքն է 0≤ԻՄԶՀ≤1: Դրա իրական մեծությունը փաստորեն նշում է այն մնացյալ ճանապարհը, որը տվյալ երկիրը պետք է անցնի՝ հասնելու մարդկային զարգացման առաջին աստիճանին: Ընդ որում՝ ՄԱԿ-ի մարդկային զարգացման ցուցանիշները 1990թ-ից ի վեր ընդգրկում են մոտ 170 երկիր, որոնք բաժանվում են երեք հիմնական՝ բարձր, միջին և ցածր զարգացման խմբերի: 2019թ. տվյալներով՝ ՀՀ-ն 170 երկրների շարքում զբաղեցնում էր 81-րդ տեղը (ՄԶՀ՝ 0,776) և տարածաշրջանում գերազանցում էր Ադրբեջանին (0,756) (գծապատկեր **4**):[2]

[1] *Human Development report, 2003, էջ. 341:*

[2] *http://hdr.undp.org/*



Գծապատկեր 4. Զարգացող երկրների ՄԶՀ ցուցանիշները 2020թ. տվյալներով

ՄԶՀ-ն և երկրի դիրքի վարկանիշը կարող են փոխվել՝ կախված ինչպես տվյալ, այնպես և այլ երկրների զարգացումներից: Հետաքրքիր է ՄԶՀ-ի վերլուծությունն ըստ բաղադրիչների, որն ակնհայտորեն ցույց է տալիս, որ տնտեսական բարգավաճման և մարդկային զարգացման միջև կապը մեխանիկական չէ: Օրինակ՝ Թայլանդի և ՀՀ-ի ՄԶՀ ցուցանիշները, 2019թ. տվյալներով, կազմում են համապատասխանաբար 0,777 և 0,776: Երկրները խիստ տարբերվում են բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով՝ հօգուտ Թայլանդի: Մյուս կողմից, «տարբերությունը» լրացվում է ՀՀ-ի զարգացած մարդկային կապիտալի հաշվին: Հետաքրքիր է նաև Սինգապուրի և ՀՀ-ի ՄԶՀ ցուցանիշների կառուցվածքի վերլուծությունը, որից փաստում ենք, որ Սինգապուրի ՄԶՀ բարձր ցուցանիշը (0.938) պայմանավորված է տնտեսության զարգացման բարձր մակարդակով (1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 59 590 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ում՝ 4 680 ԱՄՆ դոլար):[1]

Հիմք ընդունելով՝ ՄԶՀ-ի հաշվարկման համար վերը ներկայացված մեթոդաբանությունը՝ ԱՀ-ում որպես 2020թ. ՄԶՀ-ի հաշվարկ ենք օգտագործելով աղյուսակ 2-ի ցուցանիշները.[2]

[1] http://hdr.undp.org/

[2] *ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալներ:*

Ցուցանիշներ	
Կյանքի սպասվելիք միջին տևողությունը (տարի)	68,9
Գրագիտության մակարդակ	129123 մարդ
Չունեն տարրական կրթություն	10469 մարդ
Սովորողների ընդհանուր քանակը	29193 մարդ
Մշտական բնակչություն	148900
Մեկ շնչին ընկնողիրական ՀՆԱ (դոլար)	3722

Աղյուսակ 2.ՄԶՀ հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշները 2020թ.

Աղյուսակում ներկայացված ցուցանիշների հիման վրա, $I_{կՍՏ}$-ի, $I_{կրթ}$, $I_{ՀՆԱ}$-ի հաշվարկը, ներկայացված է ստորև, ինչի արդյունքում ԱՀ-ում 2020թ. ՄԶՀ-ն կազմել է 0,71.

$I_{կՍՏ}=\frac{68,9-25}{85-25} = 0.731$

$I_{կրթ} = 0,919 * \frac{2}{3} + 0,196 * \frac{1}{3} = 0,68$ ($I_{գր}$=100-($\frac{10469}{129123} * 100\%$)=91,9%; $I_{ընդ}=\frac{29193}{148900} *$ 100% = 19,6%)

$I_{ՀՆԱ} = \frac{lg3722-lg100}{lg40000-lg100} = 0,6$

$I_{ՄԶՀ}$ = (0,731 + 0,68 + 0,65) / 3 = 0,71:

Համանման ձևով ԱՀ-ում ՄԶՀ-ն հաշվարկել ենք 2017-2019թթ. կտրվածքով, որը ներկայացվում է աղյուսակ 3-ում.

Ցուցանիշներ	2017	2018	2019	2020
$I_{կստ}$	0.842	0,846	0,843	0,731
$I_{կրթ}$	0,68	0,68	0,68	0,68
$I_{ՀՆԱ}$	0,6	0,6	0,65	0,6
$I_{ՄԶՀ}$	0,7	0,71	0,72	0,71

Աղյուսակ 3. 2017-2020թթ. ՄԶՀ-ն և նրա բաղադրիչ ինդեքսները ԱՀ-ում[1]

Դիտարկումներից ակնհայտ է, որ ԱՀ-ում նվազեցման միտում է արձանագրվել $I_{կստ}$-ումն $I_{ՀՆԱ}$-ում: Կարծում ենք, որ համավարակը և լայնածավալ պատերազմը ունեցան իրենց խիստ բացասական հետևանքները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համաշխարհային տնտեսության առջև կանգնած լուրջ մարտահրավերներից է բնակչության ծերացումը: Աշխարհի բնակչության ծերացման գործընթացը կտրուկ արագացել է 2010 թվականից ի վեր: Այսպես, Համաշխարհային բանկի տվյալներով՝ 2000թ-ին աշխարհում 60 և ավելի տարիք ունեցող բնակչությունը կազմում էր 600

[1] *Հաշվարկների համար հիմք են հանդիսացել ԱՀ ԱՎԾ կողմից 2017-2020թթ. տարեգրքերը և 2015թ. մարդահամարի տվյալները:*

միլիոն մարդ, ինչը 1950 թ-ի հիշյալ տարիքային խմբի բնակչության գրեթե եռապատիկն էր (205 միլիոն մարդ): 2009թ-ին այն գերազանցեց 737 միլիոն մարդ: 2019թ. դրությամբ 65 տարեկանից բարձր աշխարհի բնակչության մասնաբաժինը ռեկորդային էր՝ 9.09%:[1]

Ընդգծենք նաև, որ աշխարհի 14 տարեկանից ցածր բնակչության մասնաբաժինը հասավ գագաթնակետին 1966թ.-ին, երբ այն կազմում էր 38%, որից հետո այն կայունորեն նվազում էր՝ 2019 թ.-ի դրությամբ հասնելով 25.65%-ի: Ինչ վերաբերում է երկրի աշխատունակ (15-64 տարեկան) բնակչության մասնաբաժնին, ապա այն իր գագաթնակետին է հասել 2014 թ.-ին՝ 65,58%, որից հետո կայունորեն նվազեց՝ 2019թ. դրությամբ հասնելով 65,25%:

ՄԱԿ-ի կանխատեսումների համաձայն, մինչ 2050թ. աշխարհի բնակչության 22%-ը լինելու է կենսաթոշակառու:

Բնակչության ծերացումը տեղի է ունենում ամբողջ աշխարհում (բացառությամբ Աֆրիկայի՝ Սահարայից հարավ). ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ զարգացող երկրներում: Ամենաերիտասարդ երկիրը Ուգանդան է, որի բնակչության շուրջ 50%-ը կազմում են մինչև 15 տարեկան երեխաները: Իսկ ամենածեր երկրների շարքում են նաև զարգացած երկրները, հանձինս Իտալիայի, Ճապոնիայի, որոնց բնակչության 20%-ը կազմում են 65 տարեկանից բարձր անձինք:

Նշենք, որ ի թիվս այլ մարտահրավերների, բնակչության ծերացումը ևս կանգնած է ԱՀ տնտեսության առջև: Այսպես, 2020թ. տվյալներով Հանրապետությունում բնակչության 20,4%-ը կազմել են կենսաթոշակառուները:[2]

Մարդկային կապիտալի վերարտադրության գործընթացում բավականին էական է նաև միգրացիայի դերը: Այն դրսևորվում է թե՛ խորությամբ, թե՛ հորիզոնական շերտերով՝ ընդունող և դոնոր երկրների համար ունենալով ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքներ: Այս բազմաշերտ ազդեցությունների ոլորտում համեմատաբար շահեկան վիճակում են հայտնվում այն երկրները, որոնց հաջողվում է մակրոտնտեսական հավասարակշիռ իրավիճակ ձևավորել զուտ միգրացիայի և մարդկային կապիտալի կուտակային արժեքի փոխառնչություններում:

Այսպես, ԱՀ-ում հետպատերազմյան ձևավորված իրավիճակը ավելի քան մտահոգիչ է և անկասկած իր բացասական ազդեցությունն է թողնում երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա: Ավելանում է արտագաղթողների թիվը, ինչը պետության և ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ի թիվս այլ պատճառների, ԱՀ-ում միգրացիայի դրդապատճառներն են շարունակում հանդիսանալ

---

[1] www.vsemirnyjbank.org

[2] *Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

աշխատանք փնտրողների մասնագիտական կարողություններին համապատասխան աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը: Ըստ էության, ՀՀ-ից և ԱՀ-ից մեկնած տղամարդկանց մեծամասնությունը երկրից հեռանում է ինչպես երկրում տիրող իրավիճակից կախված, այնպես էլ գործազրկության և նյութական դժվարություններից դրդված: Նշենք նաև, որ մինչ պատերազմը ներքին միգրացիան ԱՀ-ում հանգեցրեց գյուղական շրջանների բնակչության կենտրոնացմանը շրջկենտրոններում և մայրաքաղաքում: Կարծում ենք, որ դրա հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների, հատկապես մայրաքաղաքի միջև աշխատանքային շուկայի, կրթական հնարավորությունների, կյանքի որակի անհամաչափությունն է: Այսպես, ԱՀ-ում քաղաքային բնակչության թվաքանակի գերակայությունը բնակչության ընդհանուր թվաքանակում 1989թ. մարդահամարի արդյունքներով կազմել է 51.7%: Իսկ երկրի բնակչության 56.9%-ը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ քաղաքաբնակ էր, 43.1%-ը՝ գյուղաբնակ:[1]Վերջին յոթ տարիներին քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշռի միջին տարեկան աճը կազմել է 0.6 տոկոսային կետ: Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2009-2019թթ. քաղաքային և գյուղական բնակչության արձանագրված մասնաբաժինները միջին հաշվով կազմել են համապատասխանաբար 55% և 45%:[2] Իսկ քառասունչորսօրյա պատերազմի հետևանքով, 228 համայնքից կորցնելով 120-ը, տեղահանված բնակչության մեծամասնությունը ևս կենտրոնացվել է ք. Ստեփանակերտում, ինչը երկրում մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման տեսանկյունից, առաջացնում է լուրջ մարտահրավերներ:

Վերոհիշյալ վերլուծությունները հիմք են տալիս փաստել, որ ԱՀ-ում լուրջ հիմնախնդիր է նաև որակյալ, ինտելեկտուալ ՄԿ-i կենտրոնացումները: Որակյալ ՄԿ գերակշիռ մասը կենտրոնացած է մայրաքաղաքում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ բարձրագույն կրթօջախները Ստեփանակերտում են և, կրթությունն ավարտելով, մեծամասնությունը նախընտրում է մնալ և աշխատել մայրաքաղաքում: Մայրաքաղաքում ՄԿ-ի կենտրոնացումը պայմանավորված է նաև համեմատաբար շատ աշխատատեղերի առկայությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին ամսական աշխատավարձը ամենաբարձրը Ստեփանակերտում է (2020թ. դրությամբ կազմում էր 219 189 ՀՀ դրամ)[3], ինչը ևս մայրաքաղաքում կենտրոնանալու նախապայման է:

Ինչպես նշվել է վերը, մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն պայմաններից մեկը կրթական մակարդակի մշտական բարձրացումն է: ԱՀ

[1]www.stat-nkr.am
[2]www.stat-nkr.am
[3]www.stat-nkr.am

կառավարությունը,մինչ արցախյան վերջին պատերազմը, մի շարք միջոցառումներ է ձեռնարկել կրթությունը զարգացնելու ուղղությամբ: Վիճակագրական վերլուծությունները ցույց են տալիս, որ ԱՀ-ում կրթության և գիտության գծով պետական բյուջեից կատարված ծախսերը 2020թ-ին կազմել են 14287.4 մլն դրամ՝ գերազանցելով 2010թ. ցուցանիշը շուրջ 500 մլն դրամով: Սակայն պետք է ընդգծել, որ 2016թ-ից հետո կրթության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները պետական բյուջեում նախորդ տարիների համեմատ ցուցաբերել են նվազման միտում: Այսպես, 2019թ. պետբյուջեի միայն 12,9% էր կազմում կրթության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները, 2020թ-ին՝ 11,7%-ը: Համեմատության համար նշենք, որ հիշյալ ցուցանիշը 2015թ.կազմել էին 15,6%: ԱՀ կրթական ոլորտի ծախսերի դինամիկան 2009-2020թթ. ներկայացված է գծապատկեր 6-ում:[1]



Գծապատկեր 6. ԱՀ կրթական ոլորտի ծախսերի դինամիկան 2009-2020թթ. (հազ. դրամ)

Վերոհիշյալ վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ երկրի տնտեսությունում մարդկային կապիտալի արժեքը բարձր մակարդակի վրա պահելու համար, կարևոր են կրթության ոլորտում բավարար ներդրումները: Սակայն մարդկային կապիտալում ներդրումները մի կողմից (համեմատաբար կարճաժամկետ հատվածում) դրականորեն են անդրադառնում երկրում տնտեսական ակտիվության մակարդակի վրա, բայց, մյուս կողմից (քիչ թե շատ երկարաժամկետ հատվածում) հղի են երկրի աշխատանքային ռեսուրսների մի մասի կորստյան վտանգով: Ստացվում է, որ այդպիսի ներդրումները հենց հայրենիքում կարող են պարունակել միգրացիայի բացասական ռիսկեր, քանի որ ներկայումս գլոբալացվող համաշխարհային տնտեսության մեջ, ուղեղների

[1] *Տե՛ս ԱՀ վիճակագրական տարեգիրք 2009-2020 թթ.»*

արտահոսքին զուգահեռ, նկատելիորեն ակտիվացել է զարգացող երկրներում «էժան ճանապարհով» որակավորված աշխատուժը զարգացած երկրների տնտեսության մեջ ներքաշելու միտումը: Հաճախ զարգացող երկրներում մրցունակ մասնագիտական հմտություններով օժտված անձանց արտասահմանում առաջարկում են գրավիչ աշխատանքային և կեցության պայմաններ, ինչի արդյունքում բազմաթիվ երիտասարդ մասնագետներ լքում են իրենց հայրենիքը: Հասարակության մտավոր ներուժը, լինելով տնտեսության զարգացման կարևորագույն նախապայման, տրամաբանորեն առանցքային դերակատարություն ունի նաև երկրի ֆինանսական կապիտալի ձևավորման և կուտակման գործում: Հետևաբար, երկրից «ուղեղների արտահոսքը» զրկում է տվյալ հասարակությանը ոչ միայն արժեքավոր ՄԿ-ից և, առավել ևս՝ նրա մտավոր ռեսուրսներից, այլև նպաստում է ֆինանսական ազգային կապիտալի դուրսմղմանն արտերկիր և վերջինիս ներդրմանն այլ երկրներում: Հիշյալ հիմնախնդիրը դրսևորվում է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՀ-ում:

ԱՀ-ում մարդկային կապիտալի կայուն զարգացման կարևոր բնութագրիչներից մեկի՝ բնակչության առողջապահության հարցը գտնվում է դեռևս ոչ պատշաճ մակարդակի վրա, մանավանդ գյուղական համայնքներում: Դիտարկումները ցույց են տալիս, որ գյուղական համայնքներում չկան բժիշկներ, դեղամիջոցներ, բուժկետները ապահովված չեն որակյալ կադրերով: Առողջապահական հիմնարկները և ներուժը հիմնականում կենտրոնացված են քաղաքներում, մասնավորապես ք.Ստեփանակերտում:

Ակնհայտ է, որ հետպատերազմյան արդի իրավիճակում բնակչության առողջական վիճակի բարելավումը, մրցունակ աշխատուժի և բարձրակարգ մասնագետների պատրաստումը, տնտեսական անվտանգության ապահովման հիմնական և անհրաժեշտ գործոնն են:

ԱՀ-ում վերջին 10 տարիներին (մինչև 2020թ.) ապահովվել է տնտեսական աճ, որի միջին տարեկան ցուցանիշը կազմել է մոտ 10%: 2019թ. հունվարի դրությամբ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ԱՀ-ում կազմել է 2 մլն 307,6 հազ. ՀՀ դրամ կամ շուրջ 5 հազար ԱՄՆ դոլար, որը մոտ 3 անգամ գերազանցում էր 2009թ-ի մակարդակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ տնտեսության նման հաջողությունը հիմնականում պայմանավորված էր իրականացված շուկայական բարեփոխումներով հատկապես ֆիսկալ քաղաքականության ոլորտում: Տնտեսության զարգացման գործում նաև շատ մեծ դեր են ունեցել և շարունակում են ունենալ արտասահմանից ստացվող տրանսֆերտները: Այդուհանդերձ, չնայած նշյալ ձեռքբերումներին, երկրում տնտեսական աճը ապահովվում էր հիմնականում առանց տնտեսության արդյունավետ և հեռանկարային ոլորտների զարգացման, մասնավորապես, հանքարդյունաբերության հաշվին: Այդ առումով, անհրաժեշտություն էր առաջանում տնտեսական աճի ապահովման նոր ուղիների ներդրման, որը պետք է ուղղված լինի տնտեսության մրցունակ ճյուղերի բացահայտմանը և

արտահանելի հատվածի զարգացմանը:Նման զարգացման միտումներով ԱՀ-ում մարդկային կապիտալը կարող էր ունենալ բավարար մակարդակ և որակ: 2020թ. համավարակը, այնուհետև պատերազմը խաթարեցին ԱՀ-ում տնտեսական կայուն աճը, զգալի էին կորուստները ինչպես սոցիալ-տնտեսական ոլորտում, այնպես էլ մյուս բնագավառներում: Այսպես, 2020թ. ՀՀ-ում ՀՆԱ-ն կրճատվել է 5,95%-ով (2019թ. ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ), իսկ ԱՀ-ում՝ 22,4%-ով: ԱՀ-ում ՀՆԱ-ի մակարդակի փոփոխությունները 2007-2020թթ. տրվում են գծապատկեր 7-ում:[1]



Գծապատկեր 7. ՀՆԱ-ի փոփոխությունը ԱՀ-ում 2007-2020թթ.

Կարծում ենք՝ ձևավորված իրավիճակը լուրջ սպառնալիք է ԱՀ-ում մարդկային կապիտալի զարգացման համար, քանզի կախված է առաջին հերթին կայուն տնտեսական աճի ձեռքբերման հետ:

Ամփոփելով նշենք նաև, որ ԱՀ-ում շատ կարևոր է ՏՏ ոլորտի զարգացումը:Ներկայիս մարտահրավերների ֆոնին, ՏՏ ոլորտը տնտեսությունը վերականգնելու ամենաարդյունավետ ուղին է: ԱՀ-ում պետք է գիտակցվի մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու կարևորությունը, և ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ՝ դրա որակը բարելավելու համար: Արդյունքում կբարձրանա ինչպես երկրի բնակչության որակը, այնպես էլ նրա մրցունակությունը համաշխարհային շուկայում: Ապագայում ԱՀ տնտեսական և սոցիալական զարգացումը մեծապես կախված կլինի մարդկային կապիտալի վերարտադրության գործընթացներին հասարակության վերաբերմունքից: Այդ առումով, ԱՀ-ում ՄԿ-ի որակական բարելավման հասնելու համար առաջարկում ենք.

- ✓ կարևոր դեր հատկացնել կադրային վերապատրաստումներին,
- ✓ ավելացնել կրթության ոլորտում ներդրումները,

[1] *Տե՛ս ԱՀ վիճակագրական տարեգրքեր, 2009-2020 թթ.:*

✓ իրականացնել՝ սոցիալական և կրթական ծրագրեր ՝ ուղղված կենսամակարդակի բարձրացմանը,
✓ խրախուսել մարդկային ռեսուրսների խորհրդատվության իրականացումը,
✓ խրախուսել SS ոլորտի առաջխաղացումը, քանի որ դա կլինի այն գործոնը, ինչը կներդրվի տնտեսության տարբեր ճյուղերում և կապահովի տնտեսության արդյունավետ զարգացում:

Գրականություն

1. ԱՀ վիճակագրական տարեգրքեր 2016-2020 թթ., Ստեփանակերտ, ԱՀ ԱՎԾ, 2016-2020 թթ.,
2. ԱՀ 2015թ. մարդահամարի արդյունքները», Ստեփանակերտ, ԱՀ ԱՎԾ, 2015թ.,
3. **Ճուղուրյան Ա.Գ.**, հոդված Հյուսիսափայլ. գիտական հոդվածների ժողովածու: «Հյուսիսային համալսարան» հրատ., Երևան, 2017թ.
4. **Հովսեփյան Վ.**, «Մարդկային կապիտալի զարգացումը և տնտեսական աճը», «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2015, № 2 (17), էջ 57-64:
5. **Մարզպանյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն.**, Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, ԵՊՀ հրատ., Եր., 2016, 140 էջ:
6. **Кузьминова Я.И.,Овчаровой Л.Н.,Якобсона Л.И.**, Как увеличить человеческий капитал и его вклад в экономическое и социальное развитие, Издательский дом Высшей школы экономики, Москва, 2018.
7. www.vsemirnyjbank.org
8. www.noravank.am
9. http://hdr.undp.org/

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

ՀՏԴ 314

Տնտեսագիտություն

Մանուշ ՄԻՆԱՍՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

ԿԵՆՍԱՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՀ-ՈՒՄ

Շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքի վարձատրության գործառույթը դրսևորվում է կենսական նվազագույնի հաշվարկման ճանապարհով դրա նվազագույն մակարդակի որոշմամբ: Այս նպատակով սովորաբար կիրառվում է սպառողական զամբյուղի մեթոդը:
Ճգնաժամային իրավիճակում սննդամթերքի որակի անկումը մարդու առողջության համար վտանգներ է ստեղծում, նպաստում մահացության աճին և հանգեցնում աշխատանքային ռեսուրսների որակի անկմանը: Տեսականորեն սպառման ծավալների ազդեցությունը բնակչության առողջության վրա հանդիսանում է «շուկայի ձախողումներից» մեկը, ուստի այն չի կարող լուծվել զուտ շուկայական մեթոդներով և պահանջում է արտաքին ազդեցությունների օպտիմալացմանն ուղղված պետական և հասարակական համակարգային միջոցառումների մշակում և ներդրում: Խնդրի լուծման հաջորդ բարդությունը պայմանավորված է դրա միջգերատեսչական բնույթով, տնտեսական որոշումների իրացման ժամանակ բժշկական գիտության երաշխավորությունների հաշվառման անհրաժեշտությամբ: Այս առումով աշխարհի շատ երկրներում առողջ սննդակարգի ոլորտում պետական քաղաքականության հիմնական գործիքը սպառման պարենային զամբյուղն է, որն հաստատվում է դիրեկտիվ մեթոդով, առանց հասարակական կազմակերպությունների ներգրավման ու աշխատավարձի շուկայական մակարդակի հաշվառման:
Հոդվածում հիմնավորել ենք, որ պարենային զամբյուղի ռացիոնալացումը ի զորու է փոխելու առողջ սննդի բնագավառում պետության սոցիալական պարտավորությունների կառուցվածքը և նրանից կպահանջի սննդամթերքի արտադրության ու ներմուծման կառուցվածքի

փոփոխությանն ուղղված կոնկրետ քայլեր, ինչն էլ իր հերթին կբերի երկրի բնակչության սննդի ռացիոնալացմանն ընդհանուր առմամբ:

Բանալի բառեր՝ կենսանվազագույն շեմ, նվազագույն աշխատավարձ, բնակչության կենսամակարդակ, նվազագույն սպառողական զամբյուղ, առողջ սննդակարգ

В рыночной экономике функция заработной платы выражается как определение минимальной заработной платы путем расчета прожиточного минимума. Для этого обычно используется метод потребительской корзины.

Снижение качества продуктов питания в кризисной ситуации представляет угрозу для здоровья человека, способствует росту смертности и приводит к снижению качества трудовых ресурсов. Теоретически влияние потребления на здоровье населения является одним из «провалов рынка», поэтому его нельзя решить чисто рыночными методами и требует внедрения государственных и общественных системных мероприятий направленные на оптимизации внешних воздействии.

Следующее осложнение проблемы связано с ее межведомственным характером, необходимостью учитывать гарантии медицинской науки при реализации этих решений.

В связи с этим во многих странах мира основным инструментом политики общественного здравоохранения является продовольственная корзина, которая утверждается директивным методом, без привлечения НПО и учета рыночного уровня заработной платы.

В статье мы утверждали, что рационализация продовольственной корзины может изменить структуру социальных обязательств государства в области здорового питания, потребуются конкретные шаги по изменению структуры производства и импорта продуктов питания, что, в свою очередь, приведет к рационализации питания населения в целом.

In a market economy, the function of wages is expressed by determining the minimum wage by calculating the subsistence minimum. The consumer basket method is usually used for this purpose.

The decline in food quality in a crisis situation poses a threat to human health, contributes to increase in mortality, and leads to a decline in the quality of labor resources. Theoretically, the impact of consumption on the health of the population is one of the "failures of the market", so it can not be solved by purely market methods; it requires the development and investment of state and public systemic measures aimed at optimizing external influences. The next complication of the problem solution is due to its interdepartmental nature, the need to take into account the guarantees of medical science in the implementation of economic decisions.

In this regard, in many countries around the world, the main tool of public health policy is the food basket, which is approved by the directive method, without the involvement of NGOs and the accounting of the market level of wages.
The article substantiates that the rationalization of the food basket can change the structure of the state's social obligations in the field of healthy food, and will require concrete steps to change the structure of food production and import, which in turn will lead to food rationalization in general.

Տնտեսագիտական մտքի զարգացման պատմությունը նվազագույն աշխատավարձի և կենսանվազագույն շեմի ապահովման հիմնախնդրի ուսումնասիրության և վերլուծության պակաս չունի, ըստ որում մինչև տնտեսագիտության տեսության գիտական կայացման շրջանը նվազագույն աշխատավարձի և կենսանվազագույն շեմի փոխառնչությունը մտածողները դիտարկում էին ժամանակաշրջանին հատուկ գաղափարական զարգացումների համատեքստում:

Դեռևս ժամանակին Վիլյամ Պետին հանդես եկավ աշխատավարձի նվազագույն մեծությունը օրենքով ամրագրելու առաջարկությամբ: Ըստ նրա դիտարկման, ապրանքների գների բարձրացումը հասարակության մեջ առաջ է բերում աշխատավարձի մակարդակի բարձրացման անհրաժեշտություն: Նա, սակայն, գտնում էր, որ աշխատավարձի գերազանցումն կենսամիջոցների նվազագույն մակարդակից անհանդուրժելի է, քանզի դա ի վերջո կհանգեցնի աշխատանքի ծավալի նվազեցման: Ըստ նրա համոզման, եթե աշխատավարձը ո անգամ գերազանցի կենսաապահովման նվազագույն շեմը, այդքան անգամ էլ մարդը քիչ կաշխատի, ինչն էլ ենթադրում է այդ չափով աշխատանքի կորուստ հասարակական արտադրության առումով[1]: Մեկ այլ տնտեսագետի՝ Սմիթի, եզրահանգումն այն է, որ հասարակության մեջ տարերայնորեն սահմանվում է աշխատավարձի բնական նորմա՝ պայմանավորված հասարակության ընդհանուր գոյության պայմաններով, տնտեսական զարգացման մակարդակով, աշխատանքի ու կապիտալի կիրառման բնույթով և այլ գործոններով, որը պետք է նույնացվի նվազագույն աշխատավարձի մակարդակին: Անվանական աշխատավարձի չափը, ըստ Սմիթի, կախված է աշխատողին անհրաժեշտ կենսամիջոցների գներից, այլ հավասար պայմաններում աշխատավարձի մակարդակի բարձրացումը բերում է կենսամիջոցների գների մակարդակի բարձրացում:

Ըստ Մալթուսի՝ բնակչության սահմանված կենսամակարդակի աճին համընթաց աճում են ազգի վերարտադրության հնարավորությունները, ընդ որում նա պարենի արտադրության մեծացման անհնարինությունը բացատրում է այդ ժամանակաշրջանում հայտնի <<հողի նվազող բերրիության օրենքով>>:

Քեյնսյան տեսության համաձայն տնտեսական ակտիվության ստորին մակարդակում արձանագրված սպառման նվազագույն ցուցանիշի առկայությամբ, որպես ստեղծված իրավիճակից ելք, դիտարկվում էր հարկային բեռի թեթևացումը և (կամ) պետական գնումների դեֆիցիտային ֆինանսավորումը:

Զուտ շուկայի տնտեսական մոդելում հիմնավորվում էր աշխատանքի դիմաց կատարվող վարձատրության չափի շուկայական որոշման մեխանիզմի կենսունակությունը: <<Շուկան>> մտահոգված չէր կենսանվազագույն շեմի ապահովմամբ, աշխատավարձի նվազագույն մակարդակը և կենսանվազագույն շեմը ներկա հասարակարգում պետության հոգածության առարկան է: Աշխատավարձի նվազագույն շեմի սահմանումը երբեմն կարող էր մեկնաբանվել որպես ազատական տնտեսական քաղաքականության կաշկանդում, քանզի գործարարը հնարավորություն չի ունենում վճարել ավելի ցածր աշխատավարձ՝ նույնիսկ եթե քիչ աշխատանք է կատարվում: Պարզապես պետք է ընդունել, որ պետության կողմից տնտեսությունում նվազագույն աշխատավարձի և կենսանվազագույն շեմի սահմանումը բովանդակում է սոցիալական արդարությանը հետամուտ լինելու քայլ:

Շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքի վարձատրության գործառույթը դրսևորվում է կենսական նվազագույնի հաշվարկման ճանապարհով դրա նվազագույն մակարդակի որոշմամբ: Այս նպատակով սովորաբար կիրառվում է սպառողական զամբյուղի մեթոդը: Սպառողական զամբյուղն իրենից ներկայացնում է սպառման առարկաների ու ծառայությունների ամբողջություն՝ մարդու նորմալ կենսագործունեությունն ապահովող հավաքածու:

ԱՀ-ում նվազագույն սպառողական և պարենային զամբյուղների արժեքը տևական ժամանակ որոշվում էր առողջապահական նորմաներով, համաձայն որի դրա մեջ ներառվել են մթերքների 11խումբ՝ 2412կկալ էներգետիկ արժեքով:Աղյուսակ 1-ում ներկայացված է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ հաշվարկված բժշկական նորմաներով: Արցախի Հանրապետությունում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի փոփոխությունը եռամսյակներով 2015-2020թթ դինամիկան գրեթե նույնական է. երկրորդ եռամսյակում այն աճում է, երրորդում նվազում/ Գծապատկեր 1/:

Մի շարք երկրներում, օրինակ Լեհաստանում, տարբեր նպատակների համար մշակված մի քանի նվազագույն սպառողական զամբյուղ կա, դրանցից երկուսը՝ նվազագույն սոցիալական զամբյուղը և գոյատևման նվազագույն զամբյուղը, հիմնականում տեղեկատվություն տրամադրելու նպատակ են հետապնդում: Սոցիալական միջամտության շեմի զամբյուղը և ընտանեկան եկամտի հավելումը, գործնականում կիրառվում են սոցիալական քաղաքականության նպատակների իրագործման համար: Նվազագույն սոցիալական զամբյուղը մշակվել է 1981թ-ին Աշխատանքի և սոցիալական

ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից և չի օգտագործվել սոցիալական քաղաքականության ոլորտում կիրառվող շեմային ցուցանիշների սահմանման համար, այն, որպես կանոն, համարվում է կենսապայմանների վերահսկման միջոց: Գոյատևման նվազագույն զամբյուղն ի տարբերություն նախորդի, օգտագործվում է բացարձակ և խոր աղքատության որոշման համար, հաշվարկվում է շատ աղքատ ընտանիքների բյուջեի ծախսերի հիման վրա: Աշխատանքի և սոցիալական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից, գոյատևման նվազագույն զամբյուղն մշակվել է 1995թ., իսկ սոցիալական միջամտության շեմի զամբյուղը՝ 2002թ.: Վերջինս օգտագործվում է աղքատության պաշտոնական գծի սահմանման համար, որը մարդկանց իրավունք կվերապահի նպաստներ ստանալ սոցիալական աջակցության համակարգից:

Հետաքրքիր են նաև Լատվիայում կիրառվող մոտեցումները. Այստեղ 1990թ. օրենքով հաստատվել է կենսաապահովման նվազագույն զամբյուղը, որի մեջ ներառված 39 անուն սննդամթերքի էներգետիկան գնահատվում է 2500կկալ: Ոչ պարենային ապրանքները 109անուն են, ծառայությունները՝ 26տեսակի, որոնց վերաբերյալ տեղեկությունները ստացվում են տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտություններով: Այս երկրում ներդրվել է նաև ճգնաժամային նվազագույն զամբյուղը, որն կենսաապահովման նվազագույն զամբյուղի շուրջ 60%-ն է կազմում և օգտագործվում նվազագույն կենսաթոշակի և սոցիալական նպաստների չափի սահմանման համար:

Արցախում, սկսած 2014թ., նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը հաշվարկվել է նաև Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ ԱՀ ազգային վիճակագրական ծառայության կատարած ընտրանքային հետազոտության արդյունքներից ելնելով/ Աղյուսակ 2/: Բնակչության կենսամակարդակի նյութական բաղադրիչի բնութագրման նպատակով կիրառվում են եկամուտների ու ծախսերի ցուցանիշներ: Ըստ որում, տնային տնտեսությունների եկամուտներն ուսումնասիրվում են երկու կտրվածքով՝ ընթացիկ եկամուտներ և ամբողջական եկամուտներ:

Հետազոտության տեսանկյունից տնային տնտեսությունների եկամուտների մեջ ներառվել են դրամական և բնամթերային բոլոր եկամուտները, սոցիալական աջակցության բոլոր տեսակները, բնակարանային-կոմունալ ծառայությունների վարձավճարների դիմաց ստացած արտոնություններն, նվերները, պասիվ եկամուտները, օգտագործված խնայողություններն և այլն:

Տնային տնտեսությունների ծախսերն ներկայացվում են որպես բոլոր տեսակի սպառողական ծախսերի հանրագումար՝ պարենային և ոչ պարենային ապրանքների ձեռքբերման, ծառայությունների դիմաց կատարված ծախսերը:

Իհարկե, կիսում ենք տեսակետը, ըստ որի բնակչության կենսամակարդակը բնութագրող կատարյալ ցուցանիշ գոյություն չունի. օգտագործվող

յուրաքանչյուր ցուցանիշ ունի և առավելություն, և թերություն, և կիրառման սահմանափակումներ:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունն ԱՀ-ում անց է կացվում բնակչության կենսամակարդակի, աղքատության, դրա կառուցվածքի և պատճառների ուսումնասիրության նպատակով: Աղքատության գնահատման համար Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը հիմք է ընդունել սպառման ագրեգացված ցուցանիշը, քանի որ վերջինս եկամուտների համեմատ ավելի վստահելի է(բնակչության կողմից թաքցնելու հավանականությունը փոքր է) և կարճատև տատանումների նկատմամբ այդքան զգայուն չէ: Բնակչության ընթացիկ կենսամակարդակը բնութագրող սպառման ագրեգացված ցուցանիշը ներառում է սննդամթերքի սպառումը, այդ թվում տնից դուրս, ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների դիմաց ծախսերը՝ ներառյալ անվճար ստացված, ինչպես նաև երկարաժամկետ օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը իրականացվում է ամբողջ տարվա ընթացքում՝ բնակավայրերի և տնային տնտեսությունների ամենամսյա ռոտացմամբ, ընտրանքի ձևավորման հիմք է հանդիսանում 2015թ. մարդահամարի արդյունքներով ստեղծված ԱՀ բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան: Յուրաքանչյուր ամիս հետազոտվում է 135 տնային տնտեսություն, որից 63-ը՝ քաղաքային բնակավայրերից, դաշտային աշխատանքները իրականացնում են 15 հարցազրուցավար, որոնցից յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությունը ամսական 9 տնային տնտեսություն է, ընդհանուր առմամբ 45 այց այդ տնտեսություններ:

2010-2020թթ նվազագույն սպառողական և պարենային զամբյուղների արժեքների փոփոխությունը բերված է Աղյուսակ 3-ում: Փաստորեն 2010թ համեմատ 2020թ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը աճել է 1,5անգամ, նվազագույն աշխատավարձը՝ 2.3անգամ, միջին ամսական աշխատավարձը՝ 2անգամ: Դիտարկվող ժամանակաշրջանում սպառողական գների ինդեքսը կազմել է 135.3տոկոս:

Կարևորել ենք նաև հանրապտությունում սպառողական գների ինդեքսի փոփոխության դիտարկումը /Գծապատկեր 2/: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսի ամենաբարձր աճն արձանագրվել է 2010թ՝ 110.6տոկոս, 2016թ ցուցանիշը կազմել է 98,6տոկոս, 2018թ՝ 99,8տոկոս, մյուս տարիներին ցուցանիշը պլանավորված մեծության շրջանակում է:

ԱՀ-ում աղքատության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է աղքատության ընդհանուր գիծը: Աղքատության գնահատումը ենթադրում է երեք բաղադրիչներ /տես Գծապատկեր 3/.

- Բարեկեցության կամ կյանքի պայմանների բաշխվածություն,

- Աղքատության գիծ, որից ներքև գտնվող անհատները համարվում են «աղքատ» և
- Աղքատության չափման միավոր:

Մեր համոզմամբ սպառողական զամբյուղը պետք է ծառայի չորս նպատակի.

1. Բնակչության կենսապայմանների գնահատում,

2.Պետական սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում կենսապայմանների ենթադրյալ ցուցանիշի օգտագործում,

3.նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների ու սոցիալական այլ վճարումների իրատեսական չափերի սահմանում,

4.հարկման ենթակա եկամտի չափի սահմանում:

Առաջին գործառույթը կրում է ախտորոշիչ բնույթ, հաջորդ երկուսը ընդգծում են զամբյուղի դերը եկամտի ու սոցիալական քաղաքականության ոլորտում: Անշուշտ, գրեթե անհնար է իրացնել բոլոր նպատակներն միաժամանակ, ուստի առաջնահերթության առանձնացման կարիք կա: Թերևս ճիշտ կլինի մշակել կոնկրետ զամբյուղ՝ միայն մեկ նպատակի ծառայելու համար:

Ցանկացած հասարակությունում պետության գլխավոր առաքելությունը իր երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացմանն միտված միջոցառումների կիրառումն է:

Ճգնաժամային իրավիճակում սննդամթերքի որակի անկումը մարդու առողջության համար վտանգներ է ստեղծում, նպաստում մահացության աճին և հանգեցնում աշխատանքային ռեսուրսների որակի անկմանը: Տեսականորեն սպառման ծավալների ազդեցությունը բնակչության առողջության վրա հանդիսանում է «շուկայի ձախողումներից» մեկը, ուստի այն չի կարող լուծվել զուտ շուկայական մեթոդներով և պահանջում է արտաքին ազդեցությունների օպտիմալացմանն ուղղված պետական և հասարակական համակարգային միջոցառումների մշակում և ներդրում: Խնդրի լուծման հաջորդ բարդությունը պայմանավորված է դրա միջգերատեսչական բնույթով, տնտեսական որոշումների իրացման ժամանակ բժշկական գիտության երաշխավորությունների հաշվառման անհրաժեշտությամբ: Այս առումով աշխարհի շատ երկրներում առողջ սննդակարգի ոլորտում պետական քաղաքականության հիմնական գործիքը, ինչպես արդեն վերևում նշեցինք, սպառման պարենային զամբյուղն է, որն հաստատվում է դիրեկտիվ մեթոդով, առանց հասարակական կազմակերպությունների ներգրավման ու աշխատավարձի շուկայական մակարդակի հաշվառման: Հիշյալ հանգամանքը բնակչության սննդի որակի շուկայական կարգավորման հնարավորությունը ավելի է սահմանափակում ի համեմատություն այն երկրների, որտեղ նվազագույն աշխատավարձի հաշվարկը իրականացվում է աշխատանքի վարձատրության միջին մակարդակի հիման վրա:

Հոդվածում նպատակ ունենք մշակել բնակչության առողջ սննդակարգի ոլորտում կարգավորման ժամանակակից մեթոդներ՝ պարենային զամբյուղի օպտիմալացման մոդելի հիման վրա: Այդ նպատակի միջգերատեսչական մոտեցման շրջանակում օպտիմալացման մոդելի օգտագործմամբ հետազոտվել է պարենային զամբյուղի ձևավորման բժշկական և տնտեսագիտական ասպեկտների փոխառնչությունը, բժշկագիտության նվաճումների հաշվառմամբ առողջ սննդակարգի ոլորտում առաջարկվել է տնտեսական քաղաքականության արդիական միջոցառումներ: Հոդվածում հիմնավորվել է, որ պարենային զամբյուղի օպտիմալացման սխեմայի առաջարկմամբ առողջ սննդակարգի ոլորտում բժշկագիտության երաշխավորությունները կարող են տնտեսական և սոցիալական քաղաքականության արդյունավետության վրա բարերար ազդեցություն ունենալ: Պարենային զամբյուղի օպտիմալացման խնդրի արդիականությունը առաջին հերթին պայմանավորված է սննդային կախվածության հիվանդությունների դեմ պետական ծրագրային պայքարի ցածր արդյունավետությամբ, կամ դրա իսպառ բացակայությամբ: Նախ, հաջողություններ չկան արձանագրված սոցիալական նշանակալի որոշ հիվանդությունների կրճատման ուղղությամբ, ինչպիսիք են ճարպակալումը և սրտի հիպերտոնիկ հիվանդությունները, շաքարային դիաբետը: Վերջին չորս տարիներին/արցախյան վերջին պատերազմով պայմանավորված 2020թ տվյալներն նպատակահարմար չէ օգտագործել/ առաջին անգամ հաստատված ախտորոշումով բնակչության հիվանդացության պատկերն հետևյալն է. տարափոխիկ և մակաբուծական հիվանդության դեպքերի միջին տարեկան թիվը 3075 է, ներզատական համակարգի հիվանդությունների, սնուցման և նյութափոխանակության խանգարումներինը՝ 846, իմունային մեխանիզմի ներգրավմամբ արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդություններինը՝ 605, մարսողական օրգանների հիվանդություններինը՝ 2770: Երկրորդ, բավարար չափով չի նվազել նաև երեխաների և դեռահասների շրջանում հիվանդությունների թիվը՝ կապված ոչ ճիշտ սննդակարգի կիրառման հետ. անեմիա, ճարպակալում, մարսողական օրգանների հիվանդությունները: Դարձյալ դիմելով թվերին՝ ունենք հետևյալ պատկերը. 2016-2019թթ առաջին անգամ հաստատված ախտորոշումով երեխաների հիվանդացությունը տարափոխիկ և մակաբուծական հիվանդություններով միջին տարեկան հաշվով կազմել է 2438, ներզատական համակարգի հիվանդություններ, սնուցման և նյութափոխանակության խանգարումներինը՝ 254, առանձին խանգարումներ իմունային մեխանիզմի ներգրավմամբ արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդություններինը՝ 367, մարսողական օրգանների հիվանդություններինը՝ 1373[2]: Ըստ որում, մարսողական օրգանների հիվանդությունների թիվը վերջին տարիներին աճել է: Երրորդ, լուծված չէ նաև սիրտ-անոթային հիվանդությունների բավարար չափով կրճատման խնդիրը:

Չորրորդ, լուծված չէ նաև նորագոյացություններից մահացածության դեպքերի թիվը, այսպես Արցախում այն բավական մեծ տեսակարար կշիռ ունի մահվան պատճառական կառուցվածքում. 2019թ՝ 19,7տոկոս, 2018թ՝17,0տոկոս, կայուն պահպանում է իր երկրորդ պատվավոր հորիզոնականը[3]: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ պարենային զամբյուղի ոչ լրիվությունը հանգեցնում է կենսաապահովման նվազագույնի իջեցմանը՝ հասարակության մեջ առաջացնելով եկամուտների բարձր տարբերակում և հիվանդությունների ու մահացությունների մակարդակի կտրուկ անհավասարություն:

Զարգացած երկրներում սննդի որակը համարվում է բնակչության առողջության և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության կարևորագույն կարգավորող գործոն: Այդ երկրներում սիրտ-անոթային հիվանդությունների կրճատումը անցյալ դարի 70-ական թվականներին հիմնականում նոր հիվանդությունների կանխարգելման, ոչ թե բժշկական սպասարկման որակի բարելավման հետևանք է: Այդ էտապում կառավարությունները սկսել են իրագործել հիպերտոնիայի առաջացման ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ կապված ավելցուկային ճարպերի և աղերի օգտագործման կրճատման հետ: Եվրոպայում սննդակարգով պայմանավորված հիվանդությունները կազմում են ընդհանուրի 41%-ը: Եթե վերջին 30տարիներին սիրտանոթային հիվանդություններից մահացությունները Արևմուտքում կիսով չափ նվազել են, ապա ՌԴ-ում այն պրոգրեսիվ աճ է արձանագրել և 3-5 անգամ բարձր է, քան զարգացած երկրներում[4], մահացությունների 70%-ից ավելին ՌԴ-ում պայմանավորված է սննդակարգի խախտմամբ. սիրտ-անոթային հիվանդություններ, նորագոյացությունների որոշ տեսակներ, շաքարային դիաբետ[5] :

Ցածր մահացությամբ աչքի ընկնող երկրներում սննդակարգի որակի խնդիրը քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում է գտնվում, վերջիններս մեծ ազդեցություն ունեն առողջ սննդակարգի ինստիտուտի կայացման վրա: ԱՊՀ անդամ երկրներում իրավիճակն այլ է. այստեղ պետությունը այս հարցում իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը: Հասարակության մեջ սննդի որակի շուրջ լայն քննարկումների բացակայությունը հանգեցնում է խնդրի առողջապահական հիմնահարցերն ուսումնասիրող տնտեսագետների ոչ պատշաճ ուշադրության ձևավորմանը: Նախ, անհամաչափ բարձր է մնում ալկոհոլիզմի խնդիրների տնտեսագիտական հետազոտությունների մասնաբաժինը՝ ի հաշիվ սպառողների այլ վնասակար հատկությունների վերլուծությունների նվազեցման: Երկրորդ, տնտեսագետների պատշաճ ուշադրությանը չի արժանանում առողջության համար վտանգավոր տրանսճարպերի ավելցուկային սպառումը, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում իրականացված մի շարք

հետազոտությունների համաձայն անժամանակ մահերի 10-19տոկոսը հնարավոր էր կրճատել տրանսճարպերի սպառման կարգավորման արդյունքում[6] :

Երրորդ, թույլ է առողջ սննդակարգի հիմնահարցի տնտեսական հետազոտությունների հայրենական մեթոդաբանության բազան: Չորրորդ, սննդային կախվածության հիվանդությունը հաճախ չի ներառվում բնակչության առողջության համար կարևոր գործոնների շարքում: Այսպես, ՌԴ-ում բնակվող հայազգի հայտնի տնտեսագետ Աբել Աղանբեկյանը մահացության կրճատման համար օգտագործել է ծրագրանպատակային մոտեցումը և առաջարկել 6 նպատակային ծրագիր. արյունատար համակարգի, ալկոհոլիզմի, վնասվածքների, ավտովթարների և ծխելու դեմ պայքարի ծրագրեր[7]: Մենք առաջարկում ենք հիվանդությունների նշված ցանկը լրացնել ոչ ճիշտ սսնդակարգով պայմանավորված հիվանդություններով(օրինակ ճարպակալում, շաքարային դիաբետ): Պետք է նաև հաշվի առնել հիմնահարցի կոմպլեքս բնույթը. քանզի ոչ ճիշտ սնունդը նպաստում է սիրտ-անոթային և ալկոհոլով պայմանավորված հիվանդություններին, այն նպատակահարմար է դիտարկել 2 նպատակային ծրագրերի շրջանակներում, ըստ որում հիվանդության պրոֆիլակտիկայի շեշտադրումով:

Շատ երկրներում սննդամթերքի սպառման ծավալների նվազագույն չափը կարգավորվում է անուղղակիորեն՝ նվազագույն աշխատավարձի մեխանիզմի միջոցով: Առավել պարզ մեթոդ է նվազագույն աշխատավարձի հաշվարկը որպես երկրում, ոլորտում, ճյուղում միջին ամսական անվանական աշխատավարձի որոշակի չափ: Նվազագույն աշխատավարձի մակարդակը սոցիալական իրավունքներով Եվրոպական կոմիտեի կողմից երաշխավորած կազմել է միջին աշխատավարձի 60%-ը, բայց գործնականում այն ավելի փոքր է, օրինակ՝ Իսպանիայում՝ 32%, Իսրայելում՝ 47,5%[8]: Ելենա Բուրանայի կատարած վերլուծությունը վկայում է, որ ՌԴ-ում վերոնշյալ հարաբերակցությունը կարելի է իջեցնել մինչև 40%[9]:

ՌԴ-ում պարենամթերքի սպառման նվազագույն ծավալը ուղղակիորեն կարգավորվում է պետության կողմից՝ միասնական սպառողական զամբյուղի ձևավորման միջոցով: Այս հաշվարկի օգտագործումը վարչական կարգավորման բնույթ ունի և չի ենթադրում միջին ամսական աշխատավարձի և նվազագույն աշխատավարձի չափերի միջև կախվածության սահմանում: Ըստ որում սպառողական զամբյուղը ոչ միայն նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկի հիմք չի կազմում, այլև հաստատում է պետական սոցիալական երաշխիքները բնակչության առողջ սննդակարգի ապահովման տեսանկյունից: Այնուամենայնիվ, առողջ սննդակարգի նորմատիվների հիման վրա պարենային զամբյուղի ձևավորման հիմնահարցը ստանում է միջգերատեսչական բնույթ, ինչը պահանջում է և մակրոտնտեսական, և բժշկական տարրերի համաձայնեցում: Հիմնահարցի միջգերատեսչական

բնույթը կանխորոշել է սպառողական զամբյուղի կարգավորման մեթոդի առաջարկը՝ հիմնված դիետայի հայտնի խնդրի օգտագործման վրա, որտեղ բժշկական ասպեկտները ներկայացված են կարգավորվող փախստականների սահմանափակումների տեսքով, իսկ բյուջետային տնտեսման խնդիրը ձևակերպված է զամբյուղի արժեքի նպատակային ֆունկցիայով: Զամբյուղը ներկայացված՝ x վեկտորով և բովանդակում է n տեսակի մթերքներ, xj-ն j-րդ մթերքի քանակն է զամբյուղում:Ենթադրվում է, որ հաստատված են զամբյուղի ընդհանուր բովանդակության յուրաքանչյուր օգտակար տարրի նկատմամբ բժշկական պահանջներ, ըստ որում օգտակար i-րդ տարրի երաշխավորված սահմանային քանակը հավասար են. նվազագույն –ai, առավելագույն bi : i-րդ տարրի քանակը j-րդ մթերքի միավորի մեջ հավասար է cij էկզոգեն մեծությանը: Յուրաքանչյուր օգտակար տարրի սահմանափակումը ունի դրա ծավալի նկատմամբ երկակի անհավասարության տեսք, այդժամ բոլոր բժշկական երաշխավորություններով ձևավորված զամբյուղը հանդիսանում է mհամակարգի սահմանափակման լուծումը:

$$ai\leq = \sum_{j=1}^{n} CcjXj \leq bj \qquad (c=1,\ldots,m) \qquad (1)$$

Կառավարությունը, ելնելով բյուջետային տնտեսման պահանջներից, ձգտում է նվազագույնի հասցնել պարենային զամբյուղի արժեքը այդ մթերքների Pj գների պարագայում, այսինքն դրա նպատակային ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$\min xj \sum_{j=1}^{n} PjXj \qquad (2)$$

Այսպիսով, պարենային զամբյուղի օպտիմալացման խնդիրը հանգում է բոլոր սահմանափակումների(1) պայմաններում դրա նպատակային ֆունկցիայի(2) նվազեցմանը: Ենթադրենք յ-րդ մթերքի քանակը օպտիմալ զամբյուղում(X*) հավասար է X* յ, այդ դեպքում դրա արժեք հավասար կլինի

$$P = \sum_{j=1}^{n} P_j \, x_j^*$$

Օպտիմալացման այս մեթոդի կիրառման առանձնահատկությունը պրակտիկայում կայանում է նրանում, որ յուրաքանչյուր տարրի նվազագույն և առավելագույն քանակը էկզոգեն մեծություն չի հանդիսանում, այլ հաստատվում է քաղաքացիական հասարակության ու պետության փոխգործակցության արդյունքում, ուստի սպառման սահմանային ծավալները հանդես են գալիս որպես ինստիտուցիոնալ փոփոխություններ: Այդպիսով, պարենային զամբյուղի օպտիմալացման ալգորիթմը չի հանգում խնդրի զուտ մաթեմատիկական լուծման(1)-(2): Առաջին էտապում անհրաժեշտ է լուծել մի շարք մասնավոր խնդիրներ. յուրաքանչյուր օգտակար տարրի համար որոշել ai-

i և bi-ի սահմանային նշանակությունը, որոնք գործնականում հաստատվում են պետության, հասարակական կազմակերպությունների, արտադրողների և բժշկական հանրության փոխգործության արդյունքում: Հենց այս փոխգործությունն էլ, որն ունի գերատեսչական բնույթ և տարբերվում է ըստ երկրների, հանդիսանում է մեր հետազոտության առարկան: Արտերկրներում առողջ սննդակարգի ծրագրի իրացման խնդիրները դիտարկվում են որոշ հետազոտություններում, սակայն առանց պարենային զամբյուղի օպտիմալացման խնդրի հետ ունեցած կապի հաշվառման:

ԱՀ-ում առայսօր ընդունված չէ «Սպառողական զամբյուղի մասին» օրենքը, որով պետք է սահմանվեն պարենային զամբյուղի բազային պարամետրերը: Որպես համեմատություն նշենք, որ «Ռուսաստանի Դաշնության սպառողական զամբյուղի մասին» ֆեդերալ օրենքով գործող վերջին պարենային զամբյուղն հաստատվել է 2012թ., որով էականորեն սահմանափակվում են դրա օպերատիվ կարգավորման հնարավորությունները, ասենք ենթաօրենսդրական ակտերի միջոցով: Այս սահմանափակումներից են յուրաքանչյուր պարենամթերքի խմբի համար մթերքի գումարային կշռի օրենքով հաստատումը, ինչը պահանջում է օպտիմալացման մոդելում լրացուցիչ սահմանափակում, վերջինս էլ անդրադառնում է սպառողական զամբյուղի օպտիմալացման բովանդակային նկարագրի խնդրի վրա և բերում դրա կարգավորման նորմատիվային բազայի ավելորդ պահպանողականության և անկատարողականության.

$$\sum_{j=k}^{k+t_k} xj = d_k \qquad (k=1,\ldots\ldots p) \qquad (3)$$

որտեղ dk-ն օրենքով հաստատված k-րդ պարենային խմբի գումարային կշիռն է tk-ն k-րդ պարենային խմբի մեջ այլ մթերքների քանակն է, p-ն պարենային զամբյուղում պարենային խմբերի քանակն է: Նշված (1)-(3) մոդելը արտացոլում է ռուսական օրենսդրության առանձնահատկությունը և թույլ է տալիս ենթաօրենսդրական ակտերի օպերատիվ կարգավորման միջոցով հաղթահարել զամբյուղի կազմի իներցիոն բնույթի խնդիրը, քանզի գործող մեթոդաբանությունը թույլ է տալիս դետալացված զամբյուղի մեջ ներառել նոր «մթերք-ներկայացուցիչներ» զամբյուղի ընդհանուր մթերքների կշռի պահպանմամբ և փոխել դրանց սպառման նորմաները պարենային խմբերի ներսում:

Պարենային զամբյուղի կազմի փոփոխությանը զուգահեռ անհրաժեշտ է ստեղծել երկու փոխկապակցված սոցիալ-տնտեսական նպատակներին հասնելուն միտված պայմաններ: Առաջինը պարենամթերքի շուկայի վտանգավոր համամասնության հաղթահարումն է բնակչությանը առողջ սննդակարգի օգտագործման վերաբերյալ լայն իրազեկման միջոցով: Դրա համար արտադրողներից պետք է պահանջել արտադրանքի վրա ճարպերի, տրանսճարպերի և կերակրի աղերի վերաբերյալ պարտադիր մակնշում,

ինչպես ընդունված է զարգացած երկրներում: Տրանսճարպերի արտադրության սահմանափակման առաջարկվող միջոցառումները նույնպես ազդանշան կլինեն բնակչության համար դրանց սպառման վտանգի մասին: Երկրորդ նպատակը պարենային զամբյուղի մեջ արժեքավոր սննդամթերքի ընդգրկման նպատակով դրանց արտադրության և ներմուծման նվազագույն ծավալների ապահովումն է: Այդ նպատակին կարող են ծառայել ձկնաբուծական պետական աջակցության համակարգային միջոցառումները, ինչպես նաև ձկան, մրգերի և այլ կենսական նշանակության սննդամթերքի ներմուծման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Մակրոտնտեսական քաղաքականության նպատակային կողմնորոշիչները, ինչպիսիք են ՀՆԱ-ն, արժութային կուրսը, ինֆլյացիան ու գործազրկությունը, հասարակական բարեկեցությունն արտացոլող անուղղակի գործոններ են: Մոնետար տեսություններով և տնտեսամաթեմատիկական մոդելներով տարվելը շեղում է տնտեսագետների ուշադրությունը բարեկեցության այնպիսի կարևոր ու բնական չափորոշիչներից, ինչպիսիք են հիվանդացություններն ու մահացությունները: Մեր իրողության մեջ այդ ցուցանիշները սերտորեն կապված են պարենային զամբյուղի կազմի հետ, որն հաստատագրում է պետության սոցիալական պարտավորությունները և հանդես է գալիս որպես բյուջետային հակաինֆլյացիոն քաղաքականության արժեքավոր գործոն: Տնտեսության մեջ պարենային զամբյուղի երկակի դերը պայմանավորված է երկու հակասական նպատակների բախմամբ, զարգացման սոցիալական նպատակները պահանջում են օրենքով հաստատված սպառման նվազագույն ծավալների համապատասխանեցում բժշկագիտության երաշխավորություն-ներին, իսկ բյուջետային տնտեսման նպատակը կարող է հանգեցնել սպառողական զամբյուղի արժեքի չհիմնավորված նվազեցմանը ի հաշիվ էժան ապրանքների կշռի մեծացման և կենսականորեն անհրաժեշտ տարրերի դեֆիցիտի առաջացման:

Պարենային զամբյուղի ռացիոնալացումը կփոխի առողջ սննդի բնագավառում պետության սոցիալական պարտավորությունների կառուցվածքը և նրանից կպահանջի սննդամթերքի արտադրության ու ներմուծման կառուցվածքի փոփոխությանն ուղղված կոնկրետ քայլեր, ինչն էլ իր հերթին կբերի երկրի բնակչության սննդի ռացիոնալացմանն ընդհանուր առմամբ: Ըստ որում, պարենային զամբյուղն հանդես կգա որպես պետության կողմից երկրի քաղաքացիների նվազագույն պարենամթերքով ապահովման հանրահռչակված երաշխավորություն, միաժամանակ որպես պարենային շուկաների օպերատիվ կարգավորման որոշակիորեն գիտականորեն հիմնավորված կողմնորոշիչ:

Մահացության և հիվանդությունների կրճատման բնագավառում պետական ծրագրերի ցածր արդյունավետությունը վկայում է սննդի ցածր որակի մասին,

որն հատկապես արդիական է դառնում ճգնաժամերի ժամանակ, առավելապես հետպատերազմյան սոցիալական լարվածության համատեքստում:

Գրականություն

1. Платон, Сочинения в 3 томах, том 3, Академия наук СССР, Институт Философии, Москва 1971, стр.254
2. ԱՀ սոցիալական վիճակը վիճակագրական ժողովածու 2021
3. ԱՀ ԱՎԾ ժողովրդագրական ժողովածու 2021
4. Зайцева Л.В., Транзисомеры-чумы 21 века, 2012, N13, с. 18-21
5. Тутелян В.А. Химический состав и калорийность российских пищевых продуктов: справочник. М. Де Ли плюс, 2012
6. Noraffarian D., katan M. Transs fotty acids and cardiovasculai discase. The ew england jougnalof Medicine 2006 Vol. 354 P- 1601-1613
7. Аганбекян А. достижение высшего уровня продолжительности жизни в России. Экономическая политика. 2012. N 2. С-134-156
8. Орловский Ю. П. Правовое регулиривание минимальной оплаты труда. Препринет WP 3/2013/09 М.
9. Бураева Е. В. минмальная-6 Заработная плата: роль в экономике и проблемы использования в современнов России . Вест. Орловского государственного аграрного университета. 2012 N5,645-50

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը :

Աղյուսակ 1 Արցախի Հանրապետության նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2020թ IV եռամսյակի միջին ընթացիկ գներով

(հաշվարկված բժշկական նորմերով)

Հ/Հ	Պարենամթերքի անվանումը	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Օրական սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Տարեկան սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Միա-վորի գինը, դրամ	Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ
1	**Հացամթերք**	**992.2**	**0.355**	**-**		**65 902,9**
1.1	հաց	622.5	0.25	91.3	394,1	35 981,3
1.2	ալյուր (բարձր տեսակի)	70.6	0.02	7.3	313,4	2 287,8
1.3	մակարոնեղեն	55	0.015	5.5	499,7	2 748,4
1.4	ձավարեղեն (բրինձ)	175.5	0.05	18.3	657,7	12 035,9
1.5	ընդեղեն (լոբեղեն)	68.6	0.02	7.3	1 760,2	12 849,5
2	**Մսամթերք (տավարի միս)**	**203**	**0.1**	**36.5**	**3 068,5**	**112 000,3**
3	**Կաթնամթերք**	**339.7**	**-**	**-**	-	**83 913,6**
3.1	կաթ, լիտր	122	0.2	73.0	292,3	21 337,9
3.2	կաթնաշոռ	7.5	0.01	3.7	2 350,9	8 698,3
3.3	կենդանական յուղ	143.4	0.02	7.3	5 372,6	39 220,0
3.4	պանիր	66.8	0.025	9.1	1 610,7	14 657,4
4	**Կարտոֆիլ**	**167.5**	**0.25**	**91.3**	**237,9**	**21 720,3**
5	**Բանջարեղեն (կաղամբ, գլուխ սոխ)**	**87**	**0.3**	**109.5**	**220,7**	**24 166,7**
6	**Միրգ (խնձոր)**	**96**	**0.2**	**73.0**	**423,3**	**30 900,9**
7	**Շաքար**	**193.5**	**0.05**	**18.3**	**367,0**	**6 716,1**
8	**Ձու, հատ**	**40**	**0.5**	**182.5**	**70,1**	**12 793,3**
9	**Բուսական յուղ**	**176.8**	**0.02**	**7.3**	**741,5**	**5 413,0**
10	**Մարգարին**	**72**	**0.01**	**3.7**	**1 295,4**	**4 793,0**
11	**Ձուկ**	**44.4**	**0.03**	**11.0**	**2 360,9**	**25 969,9**
	Ընդամենը	*2 412.1կկալ*				***394 290,0***

Պարենային զամբյուղի արժեքը՝

տարեկան կտրվածքով 394 290.0 դրամ ամսական կտրվածքով 32 857.5 դրամ

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝

տարեկան կտրվածքով 97 893.3 դրամ ամսական կտրվածքով 58 157.8 դրամ

Գծապատկեր 1. Արցախի Հանրապետության նվազագույն պարենային զամբյուղի արժեքի դինամիկան

2015-2020 թթ. ըստ եռամսյակների գործող միջին գներով



Աղյուսակ 2. Արցախի Հանրապետության նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը
2020թ. IV եռամսյակի միջին ընթացիկ գներով

	Պարենամթերքի անվանումը	Օրական փաստացի սպառումը 1 շնչի հաշվով, գրամ	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
1	Հացամթերք	461,1	1 355,0	6 825,5	7 576,4
2	Մսամթերք	48,3	87,6	2 973,6	3 300,7
3	Ձկնամթերք	2,5	2,4	176,1	195,4
4	Կաթնամթերք		144,3	3 127,3	3 471,4
5	Ձու	18,6	27,2	413,0	458,5
6	Յուղ և ճարպ	30,5	229,9	1 503,1	1 668,4
7	Միրգ	113,9	47,7	1 436,4	1 594,4
8	Բանջարեղեն	203,7	76,0	3 995,9	4 435,4
9	Կարտոֆիլ	145,6	109,2	1 054,4	1 170,4
10	Շաքար	24,4	94,4	270,1	299,8
11	Ոչ ալկոհոլային խմիչքներ	4,2	1,1	35,1	39,0
12	Այլ սննդամթերք	35,6	57,2	2 205,8	2 448,4
	Ընդամենը		**2 232,0**	**24 016,3**	**26 658,2**

Պարենային զամբյուղի ամսական արժեքը	**24 016.3 դրամ**	**26 658.2 դրամ**
Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը	**42 509.0 դրամ**	**47 185.0 դրամ**

ՀՏԴ 910.2

Զբոսաշրջություն

Հասմիկ ՍԱՅԱԴՅԱՆ
ԵՊՀ Սերվիսի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
E-mail: sayadyan.asmik@mail.ru

ՀՀ - ՈՒՄ ԲՈՒԺԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը մեծ ներուժ և հարուստ բնական ռեսուրսներ ունի՝ բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման և այդ ասպարեզում միջազգային շուկա դուրս գալու համար : Հոդվածում քննվել են բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգի հիմնական դրույթները, ինչպես նաև ՀՀ-ում դրանց իրականացման միջոցառումները: Վեր են հանվել բուժավերականգնողական տուրերի կազմակերպման, առկա և նոր շուկաներում նոր տուրերի ներդրման առանձնահատկու-թյունները: Գնահատվել են առկա շուկաներում նորույթների ի հայտ գալու հետ կապված ռիսկերը:

Բանալի բառեր՝ առողջարանային զբոսաշրջություն, զբոսաշրջային արտադրանք, բուժավերականգնողկան տուրեր, նորարարական մոտեցումներ, ռիսկերի գնահատում

А. Саядян

ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ЛЕЧЕБНО - ОЗДОРОВИТЕЛЬНОГО ТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Республика Армения обладает большим потенциалом и богатыми природными ресурсами для развития лечебно - оздоровительного туризма и выхода на международный рынок. В статье рассмотрены основные положения концепции развития лечебно - оздоровительного туризма, а также мероприятия по их осуществлению в Армении. В статье рассмотрены особенности организации лечебно - оздоровительных туров, внедрения новых туров на существующих и на новых рынках. Также оцениваются риски, связанные с выходом на существующий рынок нововведений и на международный рынок уже существующих турпакетов.

Ключевые слова: оздоровительный туризм, туристский продукт, лечебно- оздоровительные туры, инновационные подходы, оценка рисков

H.Sayadyan

FEATURES OF THE ORGANIZATION OF MEDICAL AND HEALTH TOURISM IN THE REPUBLIC OF ARMENIA

The Republic of Armenia has great potential and rich natural resources for the development of health tourism and entering the international market. The article discusses the main provisions of the concept of the development of medical and health tourism, as well as measures for their implementation in Armenia. The article discusses the features of the organization of medical and health tours, the introduction of new tours in existing and new markets. The risks associated with entering the existing market of innovations and the international market for existing tour packages are also assessed.

Key words: health tourism, tourist product, health-improving tours, innovative approaches, risk assessment.

Հայաստանի առողջարանային զբոսաշրջությունը հիմնված է առողջարանային մի շարք կենտրոնների վրա, որոնք տեղաբաշխված են հանրապետության տարբեր տարածքներում: Առողջարանային տարածքներն ունեն բուժիչ բնական և կլիմայական ռեսուրսներ, այդ թվում' խմելու և ջերմային հանքային աղբյուրներ, բուժական ցեխ, տորֆ, լեռնային և սոճու անտառներ, մեղմ կլիմա:

Հայաստանը ունի մեծ ներուժ վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար: Զբոսաշրջիկների շրջանում առավել հայտնի հանգստավայրերն են՝ Արզնին, Դիլիջանը, Հանքավան-Մարմարիկը, Բջնի-Արզական-Աղվերանը, Ծաղկաձորը, Ստեփանավան-Գուլագարակը, Սյունիքը, Լոռին, Սևանը, Ջերմուկը: Այս զբոսաշրջային կենտրոնները առաջարկում են կացարան և տարատեսակ ծառայություններ, որոնք թույլ են տալիս զբոսաշրջիկներին բավարարել իրենց պահանջմունքները, բարելավել առողջությունը: Բուժավերականգնողական զբոսաշրջության հիմնական շարժիչը ներքին շուկան է և այցելուները Ռուսաստանից՝ որպես հիմնական միջազգային շուկայից:

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ինդուստրիան իր բնական և կլիմայական ռեսուրսներով և ենթակառուցվածքներով կարող է մրցունակ լինել աշխարհում հայտնի կենտրոնների հետ, ինչպիսիք են՝ Կառլովի Վարին, Ժելեզնովոդսկը, Պյատիգորսկը, Վիշին և այլն:

Բուժա-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար դիտարկենք հետևյալ հայեցակարգը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգ [1]

Հայեցակարգի գործադրումը կնպաստի կուրորտային ենթակառուցվածքի զարգացմանը, առողջարանային ծառայությունների որակի և կուրորտային համալիրի մրցունակության բարձրացմանը: Հայեցակարգի հիմնական դրույթների իրականացման համար պետք է մշակել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման մարքեթինգային ծրագիր՝ նշելով անհրաժեշտ միջոցառումները, դրանց իրականացման ժամկետները, ակնկալվող արդյունքները, ֆինանսավորման աղբյուրներն ու ծավալները: Համապատասխան ծառայությունները պատշաճ կազմակերպելու արդյունքում Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները դառնալու հայտնի զբոսաշրջային կենտրոններից մեկը, իր պատմամշակութային, առողջարանային և այլ ռեսուրսների օգտագործման շնորհիվ:

ՀՀ-ում բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման համար

անհրաժեշտ է իրականացնել մի շարք հիմնական միջոցառումներ (տե՛ս աղյուսակ 1)։

Աղյուսակ 1.

Հայեցակարգից բխող անհրաժեշտ միջոցառումներ

Միջոցառումներ	Միջոցառումների նկարագիրը
ՀՀ կուրորտային զբոսաշրջության արդյունքի ներկայացում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում	1. մասնակցել միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ ներկայացնելով կուրորտային արդյունքը 2. ձևավորել և իրականացնել գովազդային ծրագրեր 3. կիրառել և զարգացնել էլեկտրոնային գովազդը
Բուժավերականգնողական զբոսաշրջության վիճակագրական հաշվառման գործընթացի և օրենսդրական դաշտի բարելավում	1. քայլեր ձեռնարկել ոլորտի վիճակագրական հաշվառման բարելավման ուղղությամբ 2. ձևավորել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտ 3. մշակել ոլորտի զարգացման ծրագրեր 4. մշակել առանձին կուրորտային գոտիների զարգացման ծրագրեր
Առողջարանային հանգստի ծառայությունների գնի և որակի ցուցանիշների բարելավում	1. բարձրացնել առողջարանային ծառայությունների որակը, սպասարկման մակարդակը 2. քայլեր ձեռնարկել առողջարանային հանգստի գների նվազեցման ուղղությամբ 3. կիրառել առողջարանային երկարատև հանգիստը խթանող գնային զեղչերի քաղաքականություն
Գործարար, ներդրումային միջավայրի բարելավում	1. նպաստել ներդրումների ներգրավմանը՝ հին առողջարանները վերանորոգելու, նոր առողջարաններ կառուցելու և ենթակառուցվածքների զարգացման նպատակով, 2. ստեղծել զբոսաշրջությունից ստացված եկամուտներից

	զբոսաշրջավայրերի զարգացմանը տրամադրվող հատկացումների մեխանիզմ
Ոլորտի զարգացման գիտականության ապահովում	1. պատրաստել ոլորտի զարգացմանն անհրաժեշտ գիտական կադրեր 2. բարձրացնել ոլորտի աշխատողների գիտական մակարդակը, կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ

Բուժավերականգնողական զբոսաշրջությունը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ առողջապահական ոլորտում իրականացվող մասնավոր և պետական ներդրումները, միջազգային չափորոշիչներին համապատասխան գործունեությունը՝ միտված որակի մակարդակի բարձրացմանն ու թափանցիկության պահպանմանը, բուժական ծառայությունների մատչելիությանը, բուժանձնակազմի պատշաճ վերաբերմունքին, զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքներին, քաղաքական և սոցիալական կայունությանը, առողջապահության բնագավառում նորույթներին, գյուտերի առկայությանը և դեպի զբոսաշրջիկը կողմնորոշված բժշկական անձնակազմին [2] :

Բուժավերականգնողական զբոսաշրջության շնորհիվ անձը, ընտրելով այլ երկիր, ստանում է և՛ որակյալ բժշկական ծառայություններ, և՛ շրջագայության հնարավորություն:

Առողջապահական զբոսաշրջության շրջանակներում ճանապարհորդությունը կարող է ունենալ տարբեր նպատակներ.

• հանգստ այն դեպքում, երբ կլիմայական և շրջակա միջավայրի հատուկ պայմանները դրականորեն են ազդում առողջության վրա,

• ունենալ բուժական բաղադրիչ՝ որպես լրացուցիչ ծառայություն,

• բուժում՝ որպես հիմնական զբոսաշրջային նպատակակետ, որը ընդգրկում է, օրինակ, հանգիստը մասնագիտացված առողջարաններում:

ՀՀ-ում առողջության բարելավմանը ուղղված բազմաթիվ տուրեր են ձևավորվել, որոնց հիմքում ընկած է սպառողների պահանջմունքների բավարարումը, այս դեպքում՝ հանգստի և առողջության բարելավման համադրման միջոցով: Համապատասխանաբար, նման զբոսաշրջային արտադրանքի մարքեթինգ - «միքսը» պետք է հնարավորինս բավարարի հաճախորդների կարիքները:

Բժշկական և հանգստի ծրագրերը կազմվում են հաշվի առնելով այն հանգամանքը, որ տուրի հիմքում պետք է լինի բուժումը, իսկ հանգիստը և կանխարգելիչ միջոցառումները որպես հավելյալ ծառայություններ: Առողջության բարելավման շրջայցերը չպետք է ներառեն տարատեսակ էքսկուրսիոն ծրագրեր, ակտիվ և ծայրահեղ սպորտային իրադարձություններ: Կարևոր է նաև հաշվի առնել, որ այդպիսի շրջագայությունների համատեղումը գործնականի հետ անընդունելի է, դրանք ռիթմով հակառակն են և բացասաբար են ազդում միմյանց որակի վրա [4] :

Բացի այդ, առողջարանային տարածքներում առաջարկվում է ձևավորել զբոսաշրջային համալիրներ, որոնց շրջանակներում տրամադրվում են բժշկական-վերականգնողական ծառայություններ, ինչպես նաև այն զբոսաշրջիկների համար ժամանցի ակտիվ հնարավորություններ, ովքեր բուժման կարիք չունեն:

Զբոսաշրջային ծրագրերը կարող են ներառել նաև բուժական տարրեր. սա կարող է լինել այցելություն ջրի և ցեխի բաղնիքներ, մերսման և ֆիզիոթերապիայի վարժություններ, էլեկտրական թերապիա, ինհալացիա և այլն: Ժամանցային ծրագրեր մշակելիս պետք է հաշվի առնել սպառողի տարիքը, հիվանդությունները և հակացուցումները:

Բուժավերականգնողական շրջայցեր կազմակերպելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել զբոսաշրջիկների տարածքային տեղաբաշխմանը: Կարևոր է, որ կացարանները տեղակայված լինեն էկոլոգիապես մաքուր, կանաչ և հանգիստ տարածքում, գերադասելի է՝ ջրային օբյեկտների մոտ:

Բուժավերականգնողական տուրի կարևոր տարրն է գինը: Զբոսաշրջային արտադրանքի արժեքը պետք է նպաստի զբոսաշրջային շուկայում դրա առաջխաղացմանը, մրցունակությանն ու շահույթ ստանալուն: Գնագոյացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել միջնորդական գործունեությունը, ծառայությունների խթանման ու կազմակերպման գործոնը. ենթակառուցվածքների, գույքի և սարքավորումների վերազինման, շահագործման և պահպանման, ինչպես նաև անվտանգության և զբոսաշրջության ոլորտի աշխատողների ծախսերը:

Բուժավերականգնողական զբոսաշրջությունը մշտապես նորարարությունների կարիք ունի, և այս առումով կարելի է առանձնացնել նոր տուրարտադրանքի հետևյալ հիմնական մակարդակները [3] .

- Նոր մոդել- երբ տուրարտադրանքը կատարելագործվում է և օժտվում նոր հատկություններով, սակայն նախատեսվում է առկա շուկայի համար, առաջարկվում է սպառողների նույն խմբին և նույն նպատակներով,
- Նորույթ- երբ մշակվում է նոր տուրարտադրանք, որը դուրս է բերվում նոր շուկա, որտեղ նմանատիպ ապրանքների առաջարկով գործում են այլ երկրներ,

- Սկզբունքորեն նոր տուրարտադրանք, այսինքն շուկա է դուրս բերվում այնպիսի նորույթ, որը սկզբունքորեն նոր և աննախադեպ է: Սկզբնական շրջանում դրա ստեղծողը շուկայում գրավում է մենաշնորհային դիրք, մինչև մրցակիցները հանդես չեն գալիս իրենց պատասխան առաջարկներով:

Նոր տուրարտադրանքի շուկա դուրս բերումը կապված է բազմաթիվ ռիսկերի հետ, որոնք կարող են լինել տարբեր բնույթի՝ տեխնոլոգիական, առևտրային, շուկայական, քաղաքական, է կոլոգիական և այլն: Ուստի, նախքան ապրանքը շուկա դուրս բերելը անհրաժեշտ են վերլուծություններ, խորհրդակցություններ, համեմատություններ, ֆինանսական հաշվարկներ, այլ շուկաների ուսումնասիրություններ և այլն:

Ըստ հետազոտությունների, որոնք անցկացվել են ամերիկյան շուկաներում, պարզվել է, որ շուկա դուրս բերվող նոր ապրանքների 70%-ը ձախողվում է:

Դրանց պատճառները ևս տարբեր են [6] .

- Չնախատեսված ծախսեր- երբ նորույթի մշակման ծախսերը ստացվում են ավելի բարձր, քան հաշվարկված էր նախապես,
- Գերագնահատված շուկայի տարողությունը - երբ կատարվում են հավելյալ ծախսեր, որոնք սակայն չեն վերադարձվում,
- Երբ մրցակիցները շուկա են դուրս բերում առավել հաջող տուրարտադրանք, վարում են ցածր գնային քաղաքականություն, վերը նշված հարցերում ավելի հետևողական են լինում:

Նորարարական գործունեության հետ կապված գործոնները բերված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Նորարարական գործունեության հետ կապված գործոնները [5]

Նորարարության գործունեության հետ կապված գործոնները	Նոր գյուտ	Նորարության բարձր մակարդակ	Նորարության միջին մակարդակ	Նորարության ոչ բարձր մակարդակ
1. Ռիսկեր	Ծայրահեղ բարձր	Բարձր են	Չափավոր են	Հարաբերական ցածր
2.Փորձագիտական գնահատական	Շատ դժվար	Դժվար	Բավականին դժվար	Դյուրին
3. Պոտենցիալ շահույթ	Շատ բարձր	Բարձր է	Չափավոր բարձր	Հարաբերական ցածր

Ըստ ուսումնասիրությունների՝ հաջողության հասնելու կարևոր նախապայմանը տուրարտադրանքի յուրահատկության ու որակի համադրումն

է: Մրցակցային շուկայում պահանջարկ է վայելում այն տուրարտադրանքը, որն ունի բարձր որակ, համապատասխանում է սպառողների պահանջներին և ճաշակին:

Բուժավերականգնողական զբոսաշրջությունն ամբողջ աշխարհում համարվում է բարձր գնային հանգստի և ժամանցի անցկացման ձև, սակայն հայրենական շուկան կոտրում է այդ կարծրատիպերը և սպառողներին է առաջարկում մատչելի տարբերակներ:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջարկվող առողջարանային հանգստավայրերի մեծ մասը չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին: Առաջարկվող ծառայությունների բարելավումը պայմանավորված է ներդրումային և մարքեթինգային ճիշտ քաղաքականությամբ: Եթե առաջարկվող ծառայությունները չեն համապատասխանում շուկայի պահանջարկին, ապա ո՛չ զեղչերը, ո՛չ էլ գովազդը չեն կարող նպաստել հայրենական բուժավերկանգնողական զբոսաշրջային շուկայի վարկանիշի բարձրացմանը [7] :

Զբոսաշրջային շուկայում հաջողության հասնելու միակ ճանապարհը նորարարությունն է՝ սպառողական պահանջմունքների բարձրացմանը և մրցակցային պայքարի սրմանը զուգընթաց նոր առաջարկներով հանդես գալը:

Մեծ է նաև գովազդի դերը, քանի որ այն ստեղծում է արտադրողի և սպառողի միջև կապ, տեղեկատվություն է հաղորդում արդեն գոյություն ունեցող արտադրանքի մասին: Բուժավերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ են համակարգված միջոցառումներ՝ բնությունը էկոլոգիապես մաքուր պահպանելու և վերականգնելու համար ՝ այն պաշտպանելով մարդածին գործոնների վնասակար հետևանքներից:

Հայաստանում բուժավերականգնողական զբոսաշրջության խթանումը կնպաստի զբոսաշրջային բազմարկիչի աճին, ՀՆԱ-ում տվյալ ոլորտի մասնաբաժնի մեծացմանը, զբոսաշրջիկների թվի ավելացմանը, կուրորտային գոտիներում բնակչության զբաղվածության աճին:

Պետք է հաշվի առնել, որ առողջարանային համակարգի զարգացմանը կարող է նպաստել զբոսաշրջության զարգացումը և այդ ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականությունը: Պետություն- մասնավոր հատված- Սփյուռք համագործակցության շնորհիվ զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին Հայաստանում արձանագրվել է թե՛ քանակական, թե՛ որակական աճ:

Այսպիսով՝ բուժավերականգնողական տուրարտանդրանքի գրագետ զարգացման և իրացման արդյունքում հնարավոր է Հայաստանի Հանրապետությունը դարձնել համաշխարհային նշանակության, իր ուրույն կոլորիտով և առաջարկներով հարուստ երկիր, որը նոր մակարդակի կբարձրացնի հայրենական զբոսաշրջային շուկան, կստեղծի նոր

աշխատատեղեր և կդառնա տնտեսության խոշոր և եկամտաբեր ճյուղ: Անհրաժեշտ ներդրումների և առողջարանային գոտիների վերականգնման դեպքում Հայաստանը կդառնա աշխարհի ամենահաճախելի առողջարանային և բժշկական զբոսաշրջավայրերից մեկը:

Գրականություն

1. **Թովմասյան Գ.**, «Առողջարանային վերականգնողական զբոսաշրջության կառավարման համակարգը և զարգացման հայեցակարգային հիմքերը ՀՀ-ում», Երևան 2013, «ՀՊՏՀ-ի Բանբեր», էջ 91-92:
2. **Александрова А.Ю.**, Международный туризм, М., Кнорус, 2016, 460 с.
3. **Ефименко Н.В., Глухов А.Н.,** Лечебно-оздоровительный туризм в России и за рубежом с позиций курортной науки // Курортная медицина, 2012, № 3, с. 51-56.
4. **Карпова Ю.И., Ходыкина А.Ф.**, «Подходы к содержанию понятий «организованный туризм», «неорганизованный туризм» и «самодеятельный туризм»» // Курортно-рекреационный комплекс в системе регионального развития: инновационные подходы, 2016, № 1., с. 206-209.
5. **Котлер Ф. и Боуэн Дж., Мейкенз Дж.,** Маркетинг. Гостеприимство. Туризм, 2002, 572с.
6. **Чуприна О.Н., Мухамедова З.Х.**, «Особенности организации лечебно-оздоровительных туров» // Молодежь. Туризм. Образование: материалы конференции, Казань: Рокета Союз, 2017, с. 240-242.

www.haycurort.info.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԾՐԱՐՎԱԾ ԳԱԼԻՔԻ

Սույն հոդվածում քննվում է հայագիտության զարգացման ընթացքը, գնահատվում անվանի գրականագետ Վանո Եղիազարյանի երկհատորյա աշխատությունը՝ նվիրված տվյալ հիմնախնդրին:
Ընդգծվում է տաղանդավոր գիտնական-մանկավարժի հարուստ փորձը, որի արդյունքում տվյալ ուսումնասիրության խորաթափանց շերտերն ու արդիական արժեքը:
Բանալի բառեր՝ հայագիտություն, Հովսեփ Օրբելի, Վիկտոր Համբարձումյան, Վանո Եղիազարյան, «Հայագիտական ուսումնասիրություններ» երկհատորյակ, հայ առասպելաբանություն, էպոսագիտություն, արդիական արժեք

С.Ханян
В данной статье обсуждается процесс развития армяноведения и дается оценка двухтомного труда знаменитого литературоведа Вано Егиазаряна, посвященного данной проблеме.
Глубина и научная ценность этого труда свидетельствует о большом опыте талантливого ученого-педагога.
Ключевые слова: Армяноведение, Овсеп Орбелло, Виктор Амбарцумян, Вано Егиазарян, двухтомник, армяноведческие труды, армянская мифология, эпосоведение, современные ценности.

S.Khanyan
This article discusses the development of Armenian studies and gives an assessment of the two-volume work of the famous literary critic Vano Yeghiazaryan, devoted to this problem.
The depth and scientific value of this work testifies to the great experience of the talented scientist and teacher.
Key words: Armenian studies, Hovsep Orbello, Viktor Ambartsumian, Vano Yeghiazaryan, two volumes book, Armenian studies works, Armenian mythology, epic studies, contemporary values.

Հայագիտությունը՝ որպես գիտությունների համակարգ, զարգացման երկար ու բեղմնավոր ճանապարհ է անցել: Այն ձևավորվել է 19-րդ դարի սկզբին: 20-րդ դարի սկզբին իր առանձնահատկություններով այն բաժանվում է երկու ժամանակաշրջանի. առաջինը մինչև 1920 թվականն է, երկրորդը՝ հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանը: Ինչպես նշում են աղբյուրները, հայագիտությունը ձևավորվել է Հայաստանից դուրս՝ հայկական

գաղթօջախներում, Ռուսաստանի, Եվրոպայի համալսարաններում և այլ հայագիտական օջախներում՝ Վենետիկում, Վիեննայում, Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում, Կ. Պոլսում, Փարիզում, Լոնդոնում, Բեռլինում, Լայպցիգում և այլ քաղաքներում: Ընդհանուր առմամբ հայագիտությունը սերտորեն առնչվում է բյուզանդագիտության, ուրարտագիտության, ասորագիտության և արևելագիտության այլ ճյուղերի հետ:

Հայագիտությունը զարգացման նոր վերելք ապրեց երկրորդ ժամանակաշրջանում, Խորհրդային Հայաստանում: Նրա զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել ականավոր գիտնականներ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտներ, ակադեմիկոսներ Հ.Ա. Օրբելին և Վ. Համբարձումյանը: Հայագիտության զարգացումը եղել է վերընթաց: Ծանրակշիռ աշխատություններ են հրատարակել Լեոն, Հ. Մանանդյանը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Ռշտունին, Ա.Կարինյանը, Մ. Ներսիսյանը, Ս. Երեմյանը, Լ. Խաչիկյանը, Բ. Առաքելյանը, Ծ.Աղայանը, Գ. Ղարիբջանյանը, Գ. Գալոյանը, Գ. Սարգսյանը և ուրիշներ: Նորագույն շրջանի հայ պատմագիտության նվաճումներն ամփոփված են ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ձեռնարկած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր աշխատություններում:

Հայագիտությունն այսօր էլ գտնվում է ականավոր գիտնականների ուշադրության կենտրոնում: Նրանց տաղանդավոր ներկայացուցիչներից է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դասախոս Վանո Եղիազարյանը՝ Արցախի պետական համալսարանի նվիրյալ բարեկամներից մեկը:

Վանո Եղիազարյանը, որպես գիտնական, հաճելի անակնկալների հեղինակ է: Ծանոթանում ես նրա աշխատությունների ցուցակին, հիանում ու զարմանում: Ինչպե՞ս կարող է մի գործիչ ստեղծել այդքան շատ և այդքան բարձրարժեք հետազոտական աշխատություններ: Նրա հրատարակած գրքերի թիվը երկու տասնյակից ավել է, որոնք հասցեագրված են հայագետներին, դասախոսներին, բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողությանը: Հայագիտական աշխարհին հայտնի են նրա «Հովհաննես Թլկուրանցու կյանքը և ստեղծագործությունը», «Մխիթար Անեցի», «Սեբեոս», «Մեսրոպ Վայոցձորցի», «Հովհաննես Սարկավագ», «Նահապետ Քուչակ», «Մխիթար Գոշի առակները» և այլ աշխատություններ, որոնք արժանացել են անվանի հայագետների բարձր գնահատականին:

Վ. Եղիազարյանի գիտական խիզախումներից են նաև «Հովհաննես Թումանյանի կյանքը և ստեղծագործությունը», «Ակնարկներ նախամեսրոպյան հայոց գրականության», «Հայ հին գրականության պատմություն», «Արդի գրականություն և գրականագիտություն» երկհատորյակը, «Գրիգոր Նարեկացին և 10-րդ դարի հայ գրականությունը» և այլ ուսումնասիրություններ:

Վանոն իր ընթերցողներին ուրախացրեց նաև «Աղավնիների վերադարձը» պատմվածքների ժողովածուով: Եվ ահա վերջերս՝ 2021-ին, նա լույս ընծայեց

«Հայագիտական ուսումնասիրություններ» երկհատորյակը, որը մի նոր խիզախում է ընդհանուր հայագիտության ասպարեզում:

Երկհատորյակում զետեղված աշխատությունները վերաբերում են բանագիտությանը և միջնադարագիտությանը:

Երկհատորյակը տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Տպագրության հովանավորը «ԼՈՒՍԱԲԵՐԴ» հիմնադրամն է: Երկհատորյակը գրախոսել են բանասիրական գիտությունների դոկտորներ Հենրիկ Բախչինյանը և Վարդան Դևրիկյանը:

Հայագիտական ուսումնասիրությունների սույն երկհատրոյակը Վանո Եղիազարյանի շուրջ քսանհինգ տարվա բանագիտության և միջնադարագիտության ոլորտում կատարած գիտական որոնումներն են: Կարևոր ենք համարում նշել, որ սույն երկհատորյակում չեն զետեղվել հեղինակի թեկնածուական (Հովհաննես Թլկուրանցի) և դոկտորական (Հայրեններ) ատենախոսությունների դրույթներն արտացոլող հոդվածները, որոնք արդեն իսկ տպագրված են առանձին գրքերով: Տպագրության են պատրաստվում նաև միջնադարագիտության մասին գրախոսական հոդվածները, գիտական բանավեճերը, ինչպես նաև արդի գրականագիտության մասին հեղինակի ուսումնասիրությունները, որոնք կլինեն առանձին գրքերով:

Գրքի «Ա» հատորում զետեղված ուսումնասիրությունների թիվը հասնում է 43-ի: Դրանք սովորական հոդվածներ չեն, գրականագիտությանը հուզող կարևորագույն հիմնախնդիրների լուրջ պատասխաններ են՝ թարմ ու հիմնավոր:

«Ա» հատորի բանագիտության բաժնում ներկայացված են հայ առասպելաբանությանը և էպոսագիտությանը հուզող արմատական խնդիրներին նվիրված հոդվածները: Այսպես, «Սաթենիկի տենչանքի առեղծվածը» գիտական աշխատանքում նա գտել է հիմնախնդրի համոզիչ պատասխանը: Հանգամանորեն անդրադառնալով առասպելում ընդգծված «բարձ», «խավարծի», «զտից» բառապատկերներին՝ գիտնականը ներկայացնում է իր մեկնաբանությունը ոչ միայն լեզվաբանական ստուգաբանությունների մակարդակում, այլև Խորենացու Պատմության ընձեռած վկայությունների հիմամբ: Գիտնականը գալիս է հետևյալ եզրակացությանը. Սաթենիկը ցանկանում էր Արտավանից ունենալ վիշապազուն զավակ: Եվ արդյունքում գիտնականը նշում է. «Կարծում ենք, այդպիսին է Արտավազդը, որն անիծվեց Արտաշեսից» (էջ 18):

«Ա» գրքում զետեղված «Զոքանչը որպես առասպելական վիշապ», «Կինը «Սասնա ծռեր» էպոսում», «Կին գուսանները Հայոց մեջ», «Գուսանը «Սասնա ծռեր» էպոսում», «Խանդութի գովքը՝ որպես դրվագ կամ «Սասնա ծռերի» ենթադիպաշարերի դրվագների համեմատության մեթոդ» ուսումնասիրությունները հայոց բանագիտության մեջ կարելի է համարել հայտնությունների շարք: Նրանցում քննարկվող բանավիճային հարցերի պատասխաններն աչքի են ընկնում խորությամբ ու համոզչականությամբ: Բացի դրանից, գիտնականը ներկայացնում է հայոց էպոսագիտության մեջ

արտահայտված հետևյալ եզրերը. «դիպաշար, սյուժետ, մոտիվ, միջադեպ կամ ենթամոտիվ», որոնք միշտ չէ, որ միարժեք են ընկալվել: «Մոտիվային ուղեցույց» տերմինը նույնպես միասնական անվանում չի ստացել. մեկ անվանում է «մոտիվային համացույց», մեկ՝ «մոտիվային հարացույց կամ ուղեցույց»:

Այս դիտարկումից հետո Եղիազարյանը մատնանշում է. «Մեր էպոսագիտության մեջ առաջարկում ենք կիրառել արդի կառուցվածքաբանական գրականագիտական մեթոդը, մասնավորապես նարատալոգիայի պատմողական երկերի կառուցվածքային վերլուծության սկզբունքները ազգային էպոսի առանձնահատկությունների հաշվառմամբ»:

Ճիշտ է վարվել գրքի հեղինակը՝ բերելով իր ընտրած եզրույթները փիլիսոփայական իմաստներով:

Նա այստեղ մեկնաբանում է «սյուժեի, ֆաբուլայի, մոտիվի, պատումի ասացող» հասկացություններն ըստ էության:

Նա մեթոդապես նշում է էպոսին հատուկ երանգները, որոնք են. 1. գործառույթների մակարդակ, 2. գործողությունների մակարդակ, 3. պատումի մակարդակ: Այնուհետև բացատրում է «տիպաբանական պատում», «համահավաք պատում», «ենթադիպակաշար» հասկացությունները:

Տվյալ հոդվածի արդիականությունը «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրման նպատակով գիտնականն առաջ է քաշում ենթադիպակաշարերի դրվագների համեմատության մեթոդը: Իբրև տեսական նորույթ՝ առաջարկում է «ենթադիպակաշար» և «դրվագ» եզրերը՝ որպես չկրկնող միավորներ: Գործնականում նա համեմատել է խնդրո առարկա դրվագը էպոսի 96 պատումներում:

Հեղինակը հոդվածում առաջնորդվել է միֆոլոգիական, պատմահամեմատական, հերմետիկայի և կառուցվածքաբանական, վերլուծության, համեմատության և համադրման ընդհանուր գիտական մեթոդներով:

Հայ բանագիտությունը, անընդմեջ զարգանալով ու հարստանալով հանդերձ, չի հարստացրել ու գիտականորեն բացահայտել պատմական արժեք ունեցող մի շարք հիմնահարցեր: Վ. Եղիազարյանը մտել է նաև խաչմերուկված խնդիրների այդ աշխարհը և հասել նպատակին: Այդ են վկայում «Երվանդակերտի գովերգը՝ «Նախամաշտոցյան գրականության նմուշ», «Թեմինայի և կամ Թահմինեի կերպարը «Շահնամե»-ում և նրա առասպելաբանական զուգահեռները «Սասնա ծռեր»-ում», «Թումանյանի «Անուշ» պոեմի ծիսական շերտը», «Հովհաննես Թումանյանը՝ Խորենացու ավանդած մի առասպելի մեկնիչ» ուսումնասիրությունները:

Հայոց պատմության չափազանց հետաքրքիր ու բազմերանգ շերտերից է հայ միջնադարյան մշակույթը: Պատահական չեն անվանի գիտնականի տասնյակ հետազոտական հոդվածները, որ պարբերաբար տպագրվել են մամուլի էջերում, որոնց մի մասը զետեղված է Ա հատորի «Միջնադարագիտություն» բաժնում: Վ. Եղիազարյանը, լինելով միջնադարյան հայ գրականության պատմության

մասնագետ, տարիների ընթացքում ուղղակի մտել է այդ աշխարհը՝ լուսաբանելով կնճռոտ մի շարք հարցեր:

Այդ ուղղությամբ ուսանելի են «Նախամաշտոցյան շրջանում գրի և գրականության գոյության հարցը», «Նախամաշտոցյան շրջանի նախաքրիստոնեական պատմագիրները՝ Մովսես Խորենացու աղբյուր», «Ագաթանգեղոսը ո՞ր դարի պատմիչ է», «Փավստոսի Պատմության հավանական պատվիրատուն», «Մեսրոպ Մաշտոցը՝ Մամիկոնյան տոհմի ազնվական», «Սեբեոսի Պատմության հավանական պատվիրատուն», «Սյունեցիները և հայ հին գրականությունը», «Աղվանից աշխարհի պատմության հեղինակների հարցի շուրջ», «Գրիգոր Նարեկացու «Վարդավառի տաղը» և այլ գիտական հոդվածներ:

Հայագիտության կարևորագույն հիմնախնդիրների ծանրակշիռ պատասխաններ են «Ստեփանոս Մոկացի», «Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» պատվիրատուի հարցը», «Գագիկ Բագրատունին և նրա «Հավատոյ գիր»-ը, «Մխիթար Գոշի աղվան լինելու հարցը և դրա հակափաստարկները հայագիտության մեջ» և այլ ուսումնասիրություններ:

Վ. Եղիազարյանը ուշի-ուշով հետևում է վերջին տարիներին ադրբեջանական վայ գիտնականների ստահոդ ելույթներին՝ ուղղված հայ մշակույթի անվանի գործիչների սեփականացմանը:

Այդ կապակցությամբ Վ. Եղիազարյանը գտնվում է արդարության դիրքերում: Ուշագրավ խոսք է նրա «Պատասխան ադրբեջանցի պրոֆեսորին» հոդվածը, որը դեռևս 2018թ. տպագրվել է «Գրական թերթ»-ի մարտի 23-ի համարում:

Վ. Եղիազարյանի պատասխանն ուղղված է Ադրբեջանի ԳԱԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Ֆարիդա Մամեդովային, որի հետ մի հարցազրույց զետեղվել է «Վեստնիկ Կավկազա» կայքէջում, որտեղ նա հայտարարել է, թե Մխիթար Գոշն աղվան է, ծնվել է Գյանջայում, իսկ նրա «Դատաստանագիրք»-ը հայերն անվանել են «Դատաստանագիրք Հայոց», որի մասին էլ իր գրքում գրել է պատմության զեղծարար Զիա Բունյաթովը: Ֆարիդա Մամեդովան պնդում է, թե Մովսես Կաղանկատվացին իբր աղվան է, որի պատմության մեջ տեղ է գտել աղվան պոետ Դավթակի «Զևանշիր իշխանի մահվան մասին» ողբը:

Իր պատասխանում Վ. Եղիազարյանը խստորեն քննադատում է ադրբեջանցի պրոֆեսորի կեղծ պնդումները՝ ապացուցելով, որ Մխիթար Գոշը հայ ժողովրդի հարազատ զավակներից է, հայ առակագրության մեծագույն ներկայացուցիչը, «Դատաստանագիրք հայոց»-ի անմահ հեղինակը:

Վ. Եղիազարյանը վկայում է անվանի գրականագետ Ասատուր Մնացականյանի և մեծանուն Պ. Սևակի պատասխանը նման կեղծ պնդումներին՝ ապացուցելով Մովսես Կաղանկատվացու՝ հայ ժողովրդի տաղանդավոր զավակը լինելու փաստը:

«Ֆրիկի «Գանգատ»-ը» հոդվածում, անդրադառնալով հայ միջնադարյան պոեզիայի հավերժաթև ստեղծագործությանը Վ. Եղիազարյանը անժխտելի փաստերով ապացուցում է, որ «Գանգատ» ստեղծագործության հեղինակը Ֆրիկն է, որին «Հուզում էր հայոց ազգի ճակատագիրը, և իբրև միջնադարի ներկայացուցիչ, նա իր խոր հիասթափությունն էր հայտնում այլադավանների և

այլ քրիստոնյաների նկատմամբ, որոնք խոտորվում են Աստծո պատվիրաններից: Եվ այս ամենի պատճառը Աստվածն է, որը կարծես անգթաբար տանջահարում է հայոց ազգին, և ինչպես հետո կտեսնենք, Ֆրիկը նախ դժգոհում է, ապա արդարացնում Աստծուն՝ գտնելով, որ Նա յուրաքանչյուրին իր արժանին է տալիս» (էջ 515-516):

Վ. Եղիազարյանը որոնող գրականագետներից է: Եվ նշենք, որ նա գտնում է իր որոնածը՝ նոր մնայուն էջեր ավելացնելով հայ գրականագիտական հունձքի մեջ: Մեր դիտարկած խոսուն վկայություններից է «Երկու անտիպ տաղ Հովհաննես Թլկուրանցուց»: Հեղինակը, փաստում է, որ Թլկուրանցին՝ որպես միջնադարյան ամենանշանավոր դեմքերից մեկը, շարունակելով նախորդների բանաստեղծական ավանդները, շահեկանորեն առաջ է մղել միջնադարյան քնարերգությունը՝ ստեղծելով թեթև ու թարմ, ինքնատիպ ու գունագեղ մի պոեզիա, որն ակնառու կերպով տարբերվում է իրենից առաջ և հետո եղած պոեզիայից:

Նման գնահատականի արժանացնելով Թլկուրանցուն՝ Վ. Եղիազարյանը Երևանի Մաշտոցի անվան մատենադարանի արխիվից հայտնաբերել է Թլկուրանցու «Նորին Յովանիսի է տաղս» և «Թագավորիտ միշտ անվաղճան» տողով սկսվող տաղերը՝ դրանք դարձնելով ընթերցող լայն զանգվածների սեփականությունը:

Ուշադրության արժանի գործ է գրականագետի «Տառայպուլ» բառի իմաստի հաղորդումը: Նշված բառին շատերն են անդրադարձել՝ տալով նրա ոչ ճիշտ բացատրությունը: Վանոյի պրպտուն միտքը և սրատես աչքը նկատել են այն նկարը, ուր, լարային նվագարանը ձեռքին գուսանի նկարի տակ գրված է.«Կին մի, որ տարապուլայ կու զարներ»:

Ժողովուրդն ասում է՝ «Որոնողը գտնում է»: Վստահորեն շեշտենք, որ այս դեպքում ևս Վանոն իր որոնման երթից դատարկաձեռն չի վերադարձել:

Նշանառու որոնող Վանոն իրեն հատուկ սրատեսությամբ է հայտնագործել Հովհաննես Թլկուրանցու մի ուրիշ անտիպ տաղ՝ նվիրված Քրիստոսի մանկությանը:

Միջնադարյան հայ պոեզիայի անմահ ներկայացուցիչ Նահապետ Քուչակին նվիրված հակասական կարծիքների համապատկերին փայլուն մի խոսք է Վանոյի «Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը» հոդվածը:

Հայ իրականության մեջ գուսանական և աշուղական երգարվեստի մասին քիչ չեն գրել: Վ. Եղիազարյանի «Նահապետ Քուչակին վերագրված հայրենների և նրա անունով մեզ հասած աշուղական երգերի տաղաչափության համեմատական քննություն» ուսումնասիրությունը ոչ միայն Քուչակի մասին է, այլև երգարվեստի այդ երկու տեսակների ժանրային առանձնահատկությունների և զարգացման ընթացքի ու ժամանակաշրջանի մասին:

Աշուղական արվեստի ուսումնասիրության գործընթացում համոզիչ մասնագիտական խոսք են գիտնականի «Մի նորահայտ թուրքերեն» և «Ղուլօղլի Երզնկացի աշուղի ժամանակի խնդիրը և ստեղծագործությունները», «Նաղաշ

Հովնաթանի «Լուսնի նման պայծառ երես բոլորած» տաղը» գիտական հոդվածները:

Գրականագետ Վ. Եղիազարյանի հետաքրքրությունների աշխարհը սահմաններ չունի: Որպես գրականագետ՝ նա գալիս է 5-րդ դարից: Ուսումնասիրելով հայ հին գրականության մեծերի գեղարվեստական գրքերն ու գիտական աշխատությունները՝ ծանրակշիռ եզրակացությունների է հանգում: Թերթում ես նրա «Հայագիտական ուսումնասիրություններ»-ի Բ ժողովածուն ու հպարտանում, որ արդի հայ մշակույթն ունի նման մտախոհ ու լուրջ գրականագետ: Հատորում զետեղված գրախոսությունները, բանավեճերը, հոբելյանական և մահախոսական հոդվածները բարձրաձայնում են այն կարծիքը, որ Վանոն ոչ միայն նրբանկատ գրականագետ է, այլ նաև ազգային հաջողությունների և կորուստների հպարտությունն ու ցավը կրող սրտացավ գործընկեր ու որդի: Այդ են վկայում «Սարգիս Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքները» գիրքը», «Հայագիտական բարձրարժեք մի գիրք՝ «Մովսես Խորենացու դարը» (Ա. Մուշեղյանի ուսումնասիրության մասին), «Հայ հին բանաստեղծության նոր գանձարան» (Պողոս Խաչատրյանի և Վարդան Դևրիկյանի կազմած ժողովածուի մասին), «Պողոս Խաչատրյանի կազմած հայագիտական մատենագիտությունը», «Պարույր Սևակ միջնադարագետի նորովի հայտնությունը», «Գրիգոր Նարեկացու գանձարանը՝ Հենրիկ Բախչինյանի վերլուծությամբ», «Գրախոսություն Գրիգոր Նարեկացու մատենագիտության աստվածահաճո գրքի մասին», «Գրախոսություն «Մամիկոնյաններ, առասպել և իրականություն» գրքի մասին» և մյուս գիտական աշխատանքներն ու գրախոսությունները, կրկին ու կրկին համոզվում ու հպարտանում ես, որ արդի հայ գրականագիտության ծանրակշիռ բեռան մի զգալի մասը Վանոյի ուսերին է:

Ուշադրության արժանի է գրականագետի հոդվածների գիտական թթխմորը, որի շնորհիվ Վանոն ոչ միայն հիացած գրականագետ է, այլև գրականագիտության կնճռոտ հարցերը նորովի լուսաբանող հմուտ մասնագետ:

Գրականագիտական բանավեճի հմուտ վարպետ է Վանոն: Գրքում զետեղված նրա բանավիճային մեկ տասնյակ հոդվածները լույս են սփռում հայ դասական հեղինակների ստեծագործական խիզախումների խաչմերուկներում՝ Գ. Նարեկացուց մինչև Վ. Տերյան:

Վ. Եղիազարյանի հոբելյանական հոդվածներն ու մահախոսականները գալիս են հաստատելու, որ նա լուրջ գրականագետ լինելուն զուգահեռ սրտացավ գործընկեր է, ազգային մշակույթը հարստացնողների ազնվասիրտ բարեկամ: Ընթերցելով «Սերգեյ Սարինյան» և «Հրաչյա Թամրազյան» մահախոսականները՝ զգում ես, որ դրանք գրված են ոչ թե թանաքով, այլ աստղագույն արցունքների կաթիլներով:

Վ. Եղիազարյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» երկհատորյա ժողովածուն բարձրարժեք նվեր է ապագա սերունդներին:

Զարինե ՍԱՌԱՋՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: zsarajyan@mail.ru

«ՀՆՉՈՂ ՁԱՅՆԵՐ» ԳՐՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊՈԼԻՖՈՆԻԱՆ

Սույն հոդվածը նվիրված է «Հնչող ձայներ» գրքին, որտեղ զետեղված են հանուն հայրենիքի պաշտպանության պատերազմում նահատակված հերոսների ստեղծագործությունները: Հոդվածում «Հնչող ձայներ» գրքի գրական բազմաձայնությունը դիտարկել ենք միանգամայան նոր մոտեցմամբ. գրքում մենք տեսնում ենք ձայների միաժամանակյա առկայություն ժամանակային տարբեր տարածություններից. ձայներ արցախյան երեք պատերազմներից: Այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք տարաժամանակյա և համաժամանակյա բազմաձայնության հետ, որոնք գաղափարա - բովանդակային առումով ստեղծում են մեկ ամբողջական միասնություն:

Բանալի բառեր՝ *գեղարվեստական գրականություն, բազմաձայնություն, ստեղծագործություն, հերոս, պատերազմ, խաղաղություն, Արցախ, հայ, զինվոր, սխրանք, հնչող ձայներ:*

З.Сараджян

ХУДОЖЕСТВЕННАЯ ПОЛИФОНИЯ КНИГИ «ЗВУЧАЩИЕ ГОЛОСА»

Эта статья посвящена книге «Звучащие голоса», в которой собраны произведения героев, погибших на войне за защиту Родины. В статье мы применили совершенно новый подход в рассмотрении литературной полифонии книги «Звучащие голоса».
В книге мы видим одновременное присутствие голосов разных временных пространств: голоса трех арцахских войн. Другими словами, здесь мы имеем дело с асинхронной и синхронной полифонией, которые с точки зрения идеологии и содержания создают полное единство.

Ключевые слова: Художественная литература, полифония, творчество, герой, война, мир, Арцах, армянин, солдат, подвиг, звучащие голоса.

Z.Sarajan

ARTISTIC POLYPHONY OF THE BOOK “SOUNDING VOICES”

This article is dedicated to the book "Sounding Voices", which contains the works of heroes who died in the war for the defense of the Motherland.

In the article we have used a completely new approach in considering the literary polyphony of the book "Sounding Voices".
In the book we see the simultaneous presence of voices from different temporal spaces: voices of three Artsakh wars. In other words, here we are dealing with asynchronous and synchronous polyphony, which in terms of ideology and content create complete unity.
Key words: Fiction, polyphony, creativity, hero, war, peace, Artsakh, Armenian, soldier, heroism, sounds.

Պետությունների ու ժողովուրդների կյանքում յուրաքանչյուր բախտորոշ իրադարձություն, անշուշտ, ի թիվս բազմաթիվ ոլորտների, իր արտացոլումն է գտնում նաև գեղարվեստական գրականության մեջ: Արցախյան շարժումը, ապա նաև պատերազմները՝ 90-ականների, ապրիլյան և 44-օրյա, արտացոլվել են հայ գեղարվեստական գրականության էջերում՝ արձակ և չափածո: Արցախյան առաջին պատերազմին նվիրված չափածո գործերը լայն առումով եթե բնորոշելու լինենք, ապա կարող ենք ասել, որ այն մեծ մասամբ ձոն են ու փառաբանում՝ նվիրված հայ զինվորին, հաղթանակին ու հայրենիքին, հանուն հայրենիքի ազատության ու սահմանների պաշտպանության անձնվիրաբար մարտնչող հային, և Արցախը՝ որպես հայի հայրենիք, Հայաստանի անբաժանելի մաս ու դա՝ որպես պատմական փաստ ընկալող գաղափարի գեղարվեստական խտացում: Արցախյան պատերազմներին նվիրված գեղարվեստական գործերում վերոնշյալ բնորոշումը, ինչպես նաև հայի խաղաղասիրությունը, գրեթե բոլոր ստեղծագործություններում ձգվում են որպես գերակա, դոմինանտ գաղափար:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմը խոսույթի մեջ սկսեց շրջանառվել որպես 44-օրյա պատերազմ: 44-օրյա պատերազմից չանցած մեկ տարի՝ Համազգային հայ կրթական և մշակութային միության շնորհիվ ընթերցողի սեղանին դրվեց հանուն հայրենիքի պաշտպանության պատերազմին իրենց կյանքը նվիրաբերած բանաստեղծ-մարտիկների ստեղծագործություններն ամփոփող «Հնչող ձայներ» ժողովածուն՝ գրականագետ Դավիթ Գասպարյանի խմբագրությամբ:

Գիրքը բացվում է Հովհաննես Թումանյանի «Ինչքա՞ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին...» տողերով բնաբանով, որը բնորոշում է գրքի ողջ տրամադրությունը[1]:

Կյանքի գարունն ապրող հազարավոր երիտասարդներ դարձան հավերժի ճամփորդներ՝ կրծքով ու կյանքի գնով պաշտպանելով հող հայրենին՝ Արցախը, իրենց սխրանքով հավերժ գծելով քաջերի սահմանը և կերտելով ճշմարիտ ապրելու բանաձևը:

Կիսատ մնացած երազանքներ, չապրած օրեր, կիսատ թողած գարուններ, կյանքի իմաստի բանաձև, պատերազմների ծնած արհավիրքներ, աշխարհի քար

[1] *Տե՛ս Հնչող ձայներ, Երևան, «Արմավ» հրատ., 2021, էջ 1:*

լռության ու անտարբերության դեմ ըմբոստացում, հայրենիք, սեր, խաղաղություն, խաղաղասիրություն, անձնվեր խիզախում՝ այս և բազմաթիվ այլ ձայներ են գեղարվեստական պատկերներով հնչում «Հնչող ձայներ» գրքում, որոնք իրենց գեղարվեստական պոլիֆոնիայով (բազմաձայնությամբ) խտանում, միասնականանում են՝ դառնալով մեկ ամբողջական կոմպոզիցիա, որտեղ գերիշխողը հանուն հայրենիքի հավերժի ճամփորդ դարձած բանաստեղծ-զինվորն է՝ հայրենիքը սիրելու իր գործած սխրանքի հավերժական դաս-պատգամով և որը կարելի է համարել յուրահատուկ գրական-գեղարվեստական հուշակոթող:

Ուշագրավ մի հանգամանք ևս. գրքում տեղ են գտել ոչ միայն 44-օրյա պատերազմում անմահացած զինվոր-նվիրյալների ստեղծագործությունները, այլ նաև՝ արցախյան առաջին և ապրիլյան պատերազմներում: Պատահականությա՞մբ, թե՞ գրականագետ խմբագրի միտումնավոր որոշմամբ՝ խորհրդանշական այս հանգամանքը «Հնչող ձայներ» գրքում միավորում է ոչ միայն 44-օրյա պատերազմի հավերժի ճամփորդների ձայները, այլ նաև արցախյան երեք պատերազմների ձայները՝ պոլիֆոնիան դարձնելով գաղափարական ու բովանդակային առումով բազմաշերտ ու բազմաձայն:

Առհասարակ Polyphony «բազմաշերտություն», «բազմաձայնություն» կամ «պոլիֆոնիա» տերմինը հիմնականում օգտագործվում է երաժշտության մեջ, երբ երկու և ավելի ձայներ միաժամանակ ձևավորում են մեկ երաժշտական կոմպոզիցիա, անհատի և անկախության ձայներից յուրաքանչյուրը, բայց այն հաճախ օգտագործվում է նաև գրականության մեջ՝ գեղարվեստական գործի բազմազանությունը, բազմաշերտությունը նշելու համար[1]:

Միլան Կունդերան իր «Վեպի արվեստ» մշակութաբանական էսսեում, խոսելով գրականության պոլիֆոնիայի (բազմաձայնության) մասին, նկատում է. «Երաժշտական բազմաձայնությունը, ըստ էության, միաժամանակյա զարգացումն է երկու կամ ավելի ձայների /մեղեդային գծերի/, որոնք չնայած սերտագույնս կապված են իրար, համենայնդեպս պահպանում են իրենց հարաբերական անկախությունը: Բազմաձայնություն եզրույթը այլաբանական իմաստով կիրառվում է գրականության նկատմամբ»[2]: Կունդերան միաժամանակ ընդգծում է նաև այդ ձայների հարաբերական անկախ լինելու և միասնական ամբողջություն կազմելու հանգամանքը ինչպես երաժշտության, այնպես էլ գրականության մեջ:

Բախտինը իր գրաքննադատական հոդվածներից մեկում «երկխոսություն»-ը և «պոլիֆոնիա»-ն (բազմաձայնություն) դիտարկում է իբրև գրեթե համարժեք հասկացություններ, որտեղ «երկխոսությունը» ձայների, հերոսների միջև հաղորդակցությունն է արտահայտում, «պոլիֆոնիան»՝ ձայների միաժամանակյա

---

[1] *https://cuti.cc/W2krB*

[2] ***Միլան Կունդերա**, Վեպի արվեստը: Էսսե, Երևան, «Անտարես» հրատ., 2019, էջ 94:*

առկայությունը տվյալ ստեղծագործությունում, որոնց միջև առկա կապը ստեղծում է աշխարհայացքային փոխազդեցության, փիլիսոփայական մտահանգում[1]:

«Հնչող ձայներ» գրքում գրական բազմաձայնությունը դիտարկել ենք միանգամայան նոր մոտեցմամբ. ձայների միաժամանակյա առկայություն, որոնք հնչում են ոչ միայն մեկ պատերազմի մասնակցած մարտիկների ստեղծագործություններից, այլև արցախյան երեք պատերազմներից: Այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք *տարաժամանակյա* և *համաժամանակյա* բազմաձայնության հետ, որոնք գաղափարաբովանդակային առումով ստեղծում են մեկ ամբողջական միասնություն:

Գրքի ընդարձակ առաջաբանում գրականագետ Դավիթ Գասպարյանը գեղարվեստական պատկերներով պատմական ակնարկ է կատարում հայ և համաշխարհային պատմության էջերին՝ շեշտելով ձայնի գեղագիտական, փիլիսոփայական, առանցքային այն նշանակությունը, որը սիմվոլացնում է որպես մարդկության պատմության մեջ բախտորոշ իրադարձությունների կրող՝ դեպի իր հայրենիք Իթակե նավարկող Ոդիսևսից, որը լսում էր կանչող ձայներ, մինչև Դեր Զորի անապատ, մինչև երկրաշարժ, Արցախյան 44-օրյա պատերազմ. ձայներ, որոնք «պետք է կարողանալ լսել քամու հառաչի մեջ, ծովի շառաչի մեջ, անապատային ավազամրրիկի հևոցի մեջ, քարի ծանր շնչառության մեջ...»[2]:

Շարունակելով կանչող ու հնչող ձայների սիմվոլացման պատկերը՝ գրականագետն այն հասցնում է փիլիսոփայական եզրահանգման, հերոսների աշխարհայացքային ընկալման ու կյանքի իմաստի վերագտնելուն՝ մահվան միջոցով վերադարձ կյանք:

«Կան հեռացած, հեռու ու մոտիկ կանչող ձայներ, որոնք շարունակ հնչում են տիեզերքում: Այդ ձայները հնչում են ծովերի խորքերից, անտառներից, անապատներից, հողի ընդերքից: Հողը ինչու՞ է տնքում՝ կենդանի-կենդանի խոշտանգվածների ձայնն է...Այդ ձայները լսվում են հողի ընդերքից, ուր հանգչում են պատերազմում զոհված տղաները: Այդ ձայները կենդանի արձանագրվել և պահպանվել են վերջին պատերազմի հերոսների օրագրերում, գրառումներում, բանաստեղծությունների մեջ ու պատմվածքներում: Մաքուր, անարատ ապրումներ, որոնք բացում ու բացահայտում են նրանց էությունը և երբեմն, ճակատագրական վերջին պահից շատ առաջ, մարգարեացնում նրանց՝ նվիրումը մահվան միջոցով վերածելով վերադարձի: Իրենք էին իրենց նվիրական միակ ես-ով, երկու ես չունեին, որ մահվան հետ բանակցեին, նրանք, ահա, անկախ հանգամանքներից, հերոսաբար այդ ես-ը զոհաբերեցին...»,-գրում է Դավիթ Գասպարյանը[3]:

---

[1] *Տե՛ս* ***Бахтин М.****, Литературно-критические статьи, Москва, «Худ. лит-а», 1956, ст. 186:*

[2] *Հնչող ձայներ, Երևան, «Արմավ» հրատ., 2021, էջ 6:*

[3] *Նույն տեղում, էջ 6-7:*

Արցախյան առաջին պատերազմի (90-ականների պատերազմ) ձայնը հնչում է ազատամարտիկ բանաստեղծ, առաջին պատերազմում հերոսաբար նահատակված Կոմիտաս Հակոբյանի բանաստեղծություններում, որտեղ բանաստեղծ մարտիկը, չնայած երիտասարդ տարիքին, տաղանդին բնորոշ պոետական արդեն իսկ իր ինքնատիպ ձեռագրով գեղարվեստական խտացումներով ընդգծում է պայքարի նպատակը՝ հանուն պատմական արդարության վերահաստատման, ահավասիկ՝

Տանկերը հոնդում են
Բիրտ կուսակցությունների
Մեղքերը քավելու համար։
Հայ կարոտ ձեռքը
Կիսալուսնաձև կեռերն է ջնջում
Հայոց հայատառ-հայ-խաչքարերից։[1]

Կոմիտաս Հակոբյանը Արցախի պետական համալսարանի բանասիրական բաժնի 2-րդ կուրսի ուսանող էր՝ ծնունդով Արցախի Մարտունու շրջանի Քերթ գյուղից։ Երբ Արցախյան շարժումը վերաճեց պատերազմի, 19-ամյա Կոմիտասը, կիսատ թողնելով ուսումը, նետվեց մարտի դաշտ՝ դառնալով իր հայրենիքի խրամատի համառ զինվորը և անմահանալով 1994 թ-ին, երբ դեռ 22-ն էլ չէր լրացել։ Չնահանջող ու անվախ մարտնչող Կոմիտասի տողերում սակայն խտացված են հումանիզմն ու խաղաղասիրությունը, որը բնորոշ է հային ու քրիստոնյային առհասարակ։ Լինելով խաղաղասեր, սակայն, հայը պարտադրված է զենք վերցնել՝ պաշտպանելու ինքնորոշման, ազատ, անկախ հայրենիքում ապրելու իր իրավունքը, սանձելու հակառակորդի կողմից սանձազերծված պատերազմը։ Բանաստեղծն իր տողերում ընդգծում է նաև փաստը, որ հային պարտադրել են պատերազմ.

Թող թագավորի լռություն մի պահ,
Արկ ու հրթիռներ, լռեցե՛ք, բա՛վ է։
Պետական այրեր միլի-մեջլիսի,
Հասկացեք, բա՛վ է։ Իզու՛ր է։ Զու՛ր է։[2]

Իզուր են հակառակորդի արկերն ու հրթիռները, միևնույն է, հայը համառ է պատմական արդարության հաստատման հարցում, նրա զինվորը հանուն գաղափարի, հանուն հայրենիքի պաշտպանության չնահանջող մարտիկ է իր երկրի խրամատում.

. . . Սև անգղերը շանթահարում են
Քո կապույտ լռությունը,
դարավերջի արկ ու հրթիռները
քրքրում են քեզ.

---

[1] *Նույն տեղում, էջ 76։*
[2] *Նույն տեղում, էջ 75։*

բայց, երկիր իմ,
խրամատում համառ է զինվորդ։[1]

Կոմիտաս Հակոբյանը մարգարեաբար տվել է բոլոր ժամանակների հայ զինվորի գոյի բանաձևը։ Այդ բանաձևը եղավ առաջնորդողը նաև Ապրիլյան պատերազմում, որը դարձյալ հակառակորդը սանձազերծեց 2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը։

Ապրիլյան պատերազմի ձայնը գրքում հնչում է բանաստեղծ-մարտիկ Հայասեր Հովսեփյանի ստեղծագործություններով, որը գրել էր ապրիլյան պատերազմի տպավորություններով։ Հայասերը ծնունդով Արցախի Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղից էր։ Դասավանդում էր նույն գյուղի դպրոցում։ Ապրիլյան քառօրյային նա կամավորագրվել և հերոսաբար մարտնչել էր ամենաթեժ կետերում։ Խաղաղությունը շուրթին, խաղաղասիրությունը հոգում, մարտնչեց հակառակորդի պարտադրած պատերազմում, հաղթեց ապրիլյանում, սակայն Արցախը պաշտպանելիս, ցավոք, անմահացավ 44-օրյա պատերազմում։

Գրքում լսում ենք Հայասերի ձայնը, որը երկխոսում է «խաղաղության» հետ՝ հրամայելով նրան չլքել հային, հայ զինվորին, որովհետև «զինվորի թիկունքում մանուկներ կան», հանուն նրանց պաշտպանության է հայ զինվորը ելել մարտի՝ իր մարմինը զրահ դարձնելով արկերի դիմաց.

Դու վախկոտ ես, խաղաղություն։
Տեսել ես կարմիր արյունը
ընկած զինվորի
և անամոթաբար միշտ
լքում ես ինձ,
երբ ես կանգնում եմ
այս արյունոտ խրամատում...

Պատերազմի ժամանակ երկիրը, հային լքած խաղաղության հետ անհաշտ է մարտիկ-բանաստեղծը, երբեմն նրան դիմում է «անամոթ», «դավաճան» բնորոշումներով.

Կա՛նգ առ, դավաճա՛ն...
Մնա իմ թիկունքում,
Այնտեղ մանուկներ կան՝
Անմեղ, անհոգ...
Կա՛նգ առ, անամո՛թ...[2]։

Շարունակելով Կոմիտաս Հակոբյանին՝ ժամանակային մեկ այլ տարածությունից գոյաբանական նույն բանաձևը հնչում է Հայասերի ձայնով՝ Արցախը հայկական լինելու և հայի՝ իր հայրենի հողին կառչած լինելու մասին.

---

[1] *Նույն տեղում, էջ 77։*
[2] *Նույն տեղում, էջ 147։*

«այստեղ ամեն գետ հայերեն է կարկաչում», «ամեն թռչուն հայերեն է երգում», «այս հողի վրա օտարերկրացին անգամ հայերեն է քայլում»

Ես կառչել եմ այս սուրբ հողին
Իմ գոյությամբ. . .
համբուրում եմ ես նրա մեջ
այն արյունը,
որ փրկության համար երկրի
թափվել է հայ զինվորների ջահել սրտից:[1]

Արցախյան 44-օրյա պատերազմի ձայնը «Հնչող ձայներ» գրքում իրենց ստեղծագործություններով հնչեցնում են այդ պատերազմում հանուն հայրենիքի հավերժի ճամփորդներ դարձած հերոսներ Վարդան Ամալյանը, Արտակ Բարսեղյանը, Շիրակ Գասպարյանը, Ավետիք Կարճիկյանը, Տիգրան Հարությունյանը, Արեն Հովհաննիսյանը, Վաչագան Մանուկյանը, Սուրեն Մելիքբեկյանը, Շանթ Նավոյանը:

«Եկեք օգտագործենք այս անհայտ ժամանակով մեզ տրված հրաշք խաղաղությունը և երկիր կառուցենք: Մի՛ անտեսեք այս պահը: Մի՛ դարձրեք ձեր անձերը ատելությունից, չարությունից ծնված թույնի գերին:

Գնալուս բան չմնաց, բայց իմ պատմությամբ պիտի փորձեմ կոտրել յուրաքանչյուրիդ մեջ ապրող ու ձեզ խանգարող, նպատակներից կտրող թուլությունը: Հիշեք՝ հաղթողներին պաշտում են անգամ իրենց երբեմնի թշնամիները: Արդար հաղթանակը հզորության վառ զույների ամբողջությունն է: ՀԱՂԹԻ՛Ր, և կպատվեն քեզ, երբ փշրես դժվարություններից հյուսված արգելքները»[2],-սա 44-օրյա պատերազմում անմահացած Վաչագան Մանուկյանի ձայնն է, որ իր կենսապատումով ու ստեղծագործություններով ապրողներին պատգամում է բոլոր ժամանակներում արժանապատիվ ապրելու բանաձևը: Վաչագանը՝ ծնունդով Էջմիածին քաղաքից, 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմին կամավորագրվեց անմիջապես: Նրա սխրանքները բացահայտվել են հատկապես Մատաղիսի և Շուշիի համար մղվող կատաղի մարտերում, որտեղ պայքարել է մինչև վերջին շունչը՝ անմահանալով նոյեմբերի 8-ին:

Վաչագանի ու իր զինակից ընկերների ձայնը՝ որպես պատգամ ապրողներին է ուղղված, պատգամ՝ հայրենիքին, ազգային արժեքներին հավատարիմ մնալու, պահպանելու, ինչն իրենք արեցին իրենց կյանքի գնով:

«Տիգրան Մեծի Հայաստանը սրտումս պատկերված եմ գնում, ինձ հաղթել չի լինի, էն էլ՝ Նժդեհի ոգով. . .Բայց եթե մի չար հրաշքով այլևս չլինեմ, իմ ընտանիքից, հարազատներից սկսած, ուզում եմ, որ ամենքդ ձեր ներսում կրեք

---

[1] *Նույն տեղում, էջ148:*
[2] *Նույն տեղում, էջ 160:*

ԼՈՒՅՍԸ. դա շատ կարևոր է, հենց խաղաղության ժամանակ»[1],-«Հնչող ձայներ»-ից լսվում է հերոս Վաչագան Մանուկյանի ձայնը։

44-օրյա պատերազմում իր սխրանքով անմահացած Վարդան Ամալյանը վերջին անգամ հոր հետ հեռախոսազրույցում ասել է. «Գիտե՞ս, պապ, ողջն էլ մեռածն էլ նույնն են...մահվանը հաղթել ենք...»[2]։ Վարդանը՝ ծնունդով Երևանից, պատերազմն սկսվելուն պես կամավորագրվեց և կռվեց ամենաթեժ կետերում։ Իր «Ինքնաբնութագիրս» վերտառությամբ ստեղծագործությունում խոստովանում է. «Դավաճանություն չեմ սիրում, զզվում եմ թուլամորթ տղաներից, և, ընդհանրապես, թուլամորթ մարդկանցից։ Չեմ առարկում՝ լինում են դեպքեր, երբ անգամ քաջերը սաստիկ վախենում են, բայց պետք չէ դա իմաստավորել...Անզիջում եմ, պարտվել չեմ սիրում»[3]։

«Հնչող ձայներ» գրքի առաջաբանում Համազգային հայ կրթական և մշակութային միության Երևանի գրասենյակի պատասխանատու Ռուզան Առաքելյանի ձայնը ճշմարիտ արժեքներ դավանող ապրողների կողմից գալիս է լրացնելու հերոս տղաների հնչող ձայները. «Այսօր առավել, քան երբևէ, պարտավոր ենք հավատալ հայի այն տեսակին, որը շարունակում է պայքարը՝ հանուն Արցախի ու Հայաստանի։ Շարքի առջևում կանգնում են նվիրյալները, հեռանում են լավագույնները...Հավատանք տղաներին, որոնց արյամբ է՛լ ավելի սրբացավ մեր հողը։ Չդավաճանենք նրանց մեր երերացող կամքով և պղտորված հավատով»[4]։

Պարտվել չսիրող, հաղթելու և արդարությունը վերահաստատելու կամքը գերակա կրող տեսակի շնորհիվ են իրենց գոյության ու հարատևության հիմքերը պահում պետությունը, ազգային ինքնությունն ու արժանապատվությունը, և այս հնչող ձայներն՝ իրենց ուղերձ-պատգամներով՝ անկախ ձևից ու բովանդակությունից, սեռաժանրային պատկանելությունից, արձակ կամ չափածո տարազավորումից, որ առկա են «Հնչող ձայներ» գրքում, պետք է լսելի լինեն յուրաքանչյուր ապրողի, յուրաքանչյուր ոլորտում՝ լինի բանակ, մշակույթ, կրթություն, գրականություն, թե մեկ այլ բնագավառ։

---

[1] *Նույն տեղում, էջ 162։*
[2] *Նույն տեղում, էջ15։*
[3] *Նույն տեղում, էջ17։*
[4] *Նույն տեղում, էջ 5։*

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ.
Էլ. հասցե՝ nare-luys@mail.ru

ՍԱՍՈՒՆՈՒՄ ԵՎ ՍԱՍՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ. ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆԻ «ԷՐԳՐԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ» ԳԻՐՔԸ

Դեպի էրգիր ձգվող հոգևոր ճանապարհը վիպական անկաշկանդ տարածության մեջ արձանագրում է Սասնա ոգու ասքը՝ ընթերցողի դիմաց միանգամից բացելով այդ աշխարհի փակ դռները: Հիշողությունների շղթա՝ ժառանգած տոհմից ու էրգրից, ներզգացողություններ՝ ջղով ու արյամբ փոխներթափանցված, երևակայություն, որ բնավ անհող չէ, այլ մտքի ճառագայթով Միհերի դուռը ճեղքող ու անդին հայտնաբերող ոգեղեն աչք:

Կյանքն ու գրականությունը այս պարագայում ոչ միայն կողք կողքի են, այլև միևնույն երևույթի դարձերեսները: Գրողն ինքը ավանդական ու նորագույն վիպասքերից սերած Սասնա մի ճյուղ է՝ տոհմածառի արմատներով խոր կառչած էրգրին, միտքը՝ «էրգրի աստվածներով» առլեցուն, որ կտրում անցնում է ժամանակային ու տարածական շրջաբաժանները, վերագտնում ենթագիտակցորեն իրեն հայտնի կորուսյալ մասունքները:

Սասնա բնավորություն ունի նաև Շառոյանի գրականությունը. ամուր ու ջլապինդ, ինչպես էրգրի քարակոփ ժայռերը, զուսպ ու լրջախոս, որպես լեռնաշխարհիկ բարոյականությունը, սրընթաց ու խորահայաց, ինչպես երկինքներին մոտ ճախրող Սասնա արծիվները, առնական ու հպարտ, որպես էրգրի աստվածները:

Էրգրի իրական աստվածները մշտառկա գոյություն են Շառոյանի կյանքում և գրականության մեջ, որոնք ժամանակ ու տարածություն չեն ճանաչում, տարրալուծում են անցյալը, ներկան ու ապագան, դառնում կյանքի վերտառություն և գրքի խորագիր:

Ռ. Շառոյանի «Էրգրի աստվածները» գիրքը լույս է տեսել 2017 թ. Երևանում: Գիրքը Սասնա վիպասանությունը համալրող նորօրինակ դրսևորում է, ուր ի մի է բերված գրողի արձակ ստեղծագործությունների վիպասքային տեսակը, որոնք, առանձին և ինքնակա արժեք լինելով հանդերձ, միավորվում են ընդհանուր մի լարով: Դա Սասնա ներքին լարն է, որ հոսանքի պես անցնում է ստեղծագործությունից ստեղծագործություն, ուր խառնվում են երևակայականն ու առարկայականը, ուր առասպելը դառնում է իրականություն, իրականությունը՝ առասպել: Դա այն աշխարհն է, ուր արու ժառանգի ծնունդն օրհնաբանվում է հրացանի պայթյունով՝ ռազմի գիրը ճակատին դրոշմելով՝ որպես անշրջանցելի գոյապայման, որովհետև «Կռիվների քմահաճ Աստվածը միայն հերոսներին է լսում և զորավիգ դառնում»[1], որովհետև «մեր երկրի աստվածները» պատգամում

[1] ***Ռ. Շառոյան,*** *Էրգրի աստվածները, Ե., 2017, էջ 36:*

են մեզ «մահ կամ ազատություն»[1], ու մարդկանց համար անպատիվ ստրկության փոխարեն նախընտրելի է արժանապատիվ մահը՝ որպես մի այլ ազատություն: Այդպես են ինքնադաստիարակվել Սասնա սերունդները՝ այր, թե կին՝ գաղափարատիպ ունենալով էրգրի կենդանի աստվածներին, որոնցից Շառոյանի վիպական աշխարհում կենտրոնական ու գերագույն է դառնում Գևորգ Չաուշը:

Գևորգ Չաուշի ասքը Շառոյանի ստեղծագործական համակարգում բազմադեմ է ու բազմաժանր՝ ուսումնասիրություն, մանրապատում, վիպասք: Հայդուկապետի կերպարը մշտապես գրողի ստեղծագործական ճանապարհին ոգեղեն ներկայություն է, ում հանդեպ գիտական հետաքրքրությունն ու գեղարվեստական ոգեշնչվածությունը ավարտ չունեն, ու «Էրգրի աստվածները» վիպասքը՝ շարունակություն ենթադրող իր ավարտով, բազմախոսուն է և բազմախորհուրդ:

«Էրգրի աստվածները» վիպասք է բոլոր առումներով՝ բովանդակային ու կառուցաբանական, ոճական ու գաղափարական, ինչպես՝ Սասնա հերոսների ազատապաշտ ոգին, կոփածո կամքը, հանդուգն վարքն ու մտածողությունը, պատումի ուղիղ, անկաշկանդ եղանակը, վիպական անխառն ասքը՝ առանց քնարական բաղադրիչի, խորհրդաշատ ու անավարտ կառուցվածքը: Գործողությունների անընդհատական հոսքը, գեղարվեստական փոքր տարածության մեջ դեպքերի գերխիտ վիպականացումը նույնպես «Էրգրի աստվածները» վիպասքի հատկորոշ տարրերից են: Առանձնանշելի են նաև ֆիդայիներին կերպագծող տարերային պատկերները, երգ ու պարի և կռվի համադրությունը, ֆիդայիների շուրջ թշնամու կողմից հյուսվող ահասաստ պատմությունները և այլն: Սուլթան Համիդը նմանօրինակ զրույցներից «սկսել էր տառապել տեսլախտով»[2], կամ՝ «Սասունցիները պարով ու երգով սրտապնդում էին մեկմեկու, ասես իրենց մահ չէր սպասվում, այլ մի նոր, ազատ կյանք»[3]: Ահավասիկ նաև հայդուկներին տիպավորող մի քանի պատկերներ. «Նրանց կրծքերը ուր որ է կպայթեին անհանգիստ շնչառությունից», «Ֆիդայիների դեմքերին ընդգծված ցասումն էր միայն խոսում»[4]:

Սասնա դիմագծի ցայտուն հատկությունը Շառոյանի վիպասքում հանդգնությունն է, ինչպես Սասնա ծռերի խենթ քաջությունը էպոսում: Երբ հայրը տասնվեցամյա Գևորգին տանում է Առաքելոց վանք՝ ուսումնառության, Հովհաննես վարդապետի հարցին՝ ինչ կարող է անել, պատանի Գևորգը անշփոթ պատասխանում է. «-Լավ նշանառու եմ, ավելի լավ, քան մեր գյուղի տարեցները, կարող եմ քուրդ ու թուրք լամուկների գլուխները ջարդել իրենց պես:

Հովհաննես վարդապետը թույլ ժպտաց…. Ժպիտից զգացվում էր, որ հանդուգն տղայի պատասխանը նրա սրտով էր: Նա հայացքն ուղղեց Ադամի կողմը:

---

[1] *Նույն տեղում:*
[2] *Նույն տեղում, էջ 16:*
[3] *Նույն տեղում, էջ 28:*
[4] *Նույն տեղում, էջ 11:*

-Տղադ գայլի սիրտ է կերել, նրանից ավելի շուտ ֆիդայի դուրս կգա, քան քահանա: Խունկ ծխելը վախենամ թե նրա փեշակը չլինի, խոսքերից վառոդի հոտ է փչում: Ես հոժարակամ կվերցնեմ մեր դպրոցը, բայց կխորհիմ, թե նրա հանդուգն հոգին չկարենանք զսպել»[1]:

Շառոյանական Սասնա աշխարհում վարդապետ ու ֆիդայի, կին և տղամարդ նույն առաքելությունն ունեն: Զինապարտ են բոլորը՝ հանուն մի ուխտի. «Պատրաստ եմ անձս զոհել, միայն թե ծագի Հայաստանի անկախության արևը»[2],- ասում է Գևորգը: «-Պետք է անտեսենք մահը, իսպառ մոռանանք մահվան վախի մասին, մեր հույսն ու ապավենը այժմ զենքն է՝ դարիս աստվածը»[3],- կոչ է անում Գաբրիել քահանան:

«Էրգրի աստվածները» գրքի երկրորդ դուռը, որ տանում է Բսանք գավառի Գոմք գյուղը՝ «Հիշողության դարձ» խորագրով, ծագումնաբանորեն թեև կապված է նախորդին, բայց գեղարվեստական խոսքի ուրիշ որակ է: Նախորդ վիպասքից եկող պարզ ու հստակ, սեղմ ու տարողունակ պատումն այստեղ համալրում են զուսպ հուզականությունը, Սասնա լեզվամտածողությամբ ու բառագանձով թեթև թև առնող խոսքի պատկերավորությունը, վերհուշի մեղմաթախիծ եղանակը կամ, ինչպես հեղինակն է պատկերավոր խորագրում, «հիշողության դարձը»:

Հարյուր տարեկան սասունցի Ավոյի հիշողության դարձը ուրվագծում ու կերպավորում է անցյալի դեպքերն ու դեմքերը: Պաշարման մեջ գտնվող վանքի հերոսների հոգեբանությունը, կենսահայացքը գրողը պատկերում է այնպես, որ անմիջապես զգում ես Սասնա տեսակի յուրահատկությունը: Տպավորիչ է իշխան Շառոյի՝ ակնթարթի մեջ մանրաքանդակվող կերպարը՝ որպես Սասնա պատվական մի զարմ: Կոփածո կերպարներ են նաև որդին՝ Արթենը, Տեր Ստեփանը, Աղջեն. «Չգիտես ինչու, Շառոն ոգևորվել էր, թեև նրա անհանգիստ սիրտը զգում էր, որ սա իր վերջին կռիվն էր լինելու….

-Ժողովուրդ,- ասաց,- մեզանից յուրաքանչյուրը երբեք էնքան շատ հարկավոր չի եղել հայրենիքին, որքան հիմա: Մահ՝ կնշանակե հայրենիքի կորուստ, էլ զոհվելու տեղ չունենք, մենք վերջին սերունդներն ենք, ուրեմն պահպանեք ձեզ: Մեզանից առաջ շա՛տ-շատերն են փառավոր մահով, դավաճանությամբ, նենգ գնդակից ընկել՝ կյանքը ձեզ,- Շառոն գավաթը տարավ շուրթերին ու մի ումպ առավ….

Ծղրտաց զուռնան, ու թնդաց դհոլը: Համբարձումը զուռնայի շրթունքն ուղղել էր թուրքերի կողմն ու ինքնամոռաց նվագում էր, ինքն էլ էր կարոտել զուռնային և իր կարոտի վրեժն առնելու չափ թոքերն ուռցրած՝ փչում էր, Սիմոնը դհոլի զարկին համաչափ խաղացնում իր մարմինը: Ի՞նչ շոգ, ի՞նչ մահ: Վանքի բակը թնդում էր պարողների ոտքերի տակ»[4]:

---

[1] *Նույն տեղում, էջ 7:*
[2] *Նույն տեղում, էջ 36:*
[3] *Նույն տեղում, էջ 11:*
[4] *Նույն տեղում, էջ 61:*

Վիպասքից վիպասք Շառոյանի ստեղծագործության պատկերային համակարգը գեղարվեստական նոր հատկանիշներ է ձեռք բերում, միաժամանակ ավելի է բացվում սասնա հերոսների հոգեբանությունը: Երրորդ դուռը՝ «Ամպշող արև» վերնագրով, արդեն Սասնա վերապրողների աշխարհն է: Աստիճանաբար որոշակիանում է սասունցիների երկրորդ եզերքի՝ Աշնակ գյուղի պատկերը, ուր հաստատվել են ցեղասպանությունից փրկված և բռնագաղթի ճանապարհը մաքառումներով հաղթահարած Սասնա վերջին բեկորները: Հոգեբանական միակ սփոփանքը մնում է այն, որ ինչպես գրողն է պատկերում, էրգրի ու տոհմի ջիղը չի փոխվել, Սասնա մնացորդաց սերունդը ծննդավայրից հեռու էլ իր էրգրի ու տոհմի շառավիղն է:

«Ամպշող արև» վիպասքում ի մի են բերվում ժամանակային երկու փուլերը. ներկան միջարկվում է անցյալի դրվագներով՝ կամուրջ կապելով Աշնակից մինչև Սասուն: Դա մահվան ու Գողգոթայի ճանապարհից մինչև փրկության ափ ու վերածնություն ձգվող կամրջակապն է, որով անցել են Սասնա բեկորները. «-Մեր տուն ու տեղ շան բաժին դարձավ,- մերթընդմերթ կրկնում էր Օսանը՝ լացը կոկորդում չորացնելով, և պահ գտնում՝ մեջքին շալով խաչկապ արած գեղգեղացող երեխային խրատելու:

-Քո ոսկորներն էլ, Գևորգ տղա, վրեժով թող սնվեն ու ամրանան, վրեժով զորանաս»[1]: Միաժամանակ շարունակվում է նախորդ վիպասքի հետ հոգևոր կապը՝ երևան բերելով ֆիդայիներ Արթենի ու Աղջենի առաքելությունը:

Հոգեբանական տիպավորմամբ, պատկերակերտման արվեստով, կյանքին ուղղված խորհրդածություններով, որ հաճախ գաղափարի արժեկշիռ ունեն, առանձնանում է նաև «Մառախուղ» վիպակը: Այստեղ ներկան, որ Քարուտ գյուղի առօրյան է, սասունցիների՝ քարից ծաղիկ ստեղծելու կենսակերպը, խորանում է բացվող անցյալով, ավելի բազմաշերտ է դառնում գեղարվեստական տարածությունը: Ծննդավայրից զրկված սասունցիներ, Հայրենական պատերազմ, կորստի ցավ ու վերապրում, հետպատերազմյան առօրյա ու այդ ամենի մեջ, թվում է, անվերադարձ կորցրած, բայց վերագտած աներկրորդ սեր:

Քարուտ գյուղը հիսունութ զոհ է տվել պատերազմում, հետո պարզվում է, որ Սերոբի «սև թուղթը» թյուրիմացություն է եղել, և տասնհինգ տարի հետո Սերոբը վերադառնում է գյուղ՝ ասես մահից հարություն առած. «-Չէ, դավաճանություն չի եղել: Վիրավոր, անուշք գերի ընկա, էնտեղ էլ կռվեցի, շներից էլ փախա, հասա մինչև Փարիզ, էլի կռվեցի, հետո էլ… երևի պիտի մեռած գերի ընկնեի, չէ, դավաճանություն չի եղել,- Սերոբը ձախ ձեռքի մատները խրեց մազերի մեջ, սանրեց: Ձեռքը երեսին թեթև հով անելով՝ թույլ թրմփաց ծնկին,- քո ուզածի պես կռվել եմ, բաբո, հանգիստ քնի: Էս սադափե մուշտուկն էլ Փարիզից նվեր եմ բերել, մի պարտիզպան տվեց: «Հանգիստ քնի»:

Վերջին բառերն ասելիս Սերոբը չդիմացավ, և կոկորդը մրմռաց: Գլուխը փոքր-ինչ շարժելով՝ նա կուլ տվեց կոկորդում կուտակված մրմուռը, բերանքսիվայր ընկավ թախտին: Գլուխը խրվեց բմբուլե փափուկ բարձի մեջ, լացը խեղդվեց….

---

[1] *Նույն տեղում, էջ 80:*

Այդտեղ պառկում էր նրա հայրը, հենց գլուխը դիպչում էր բարձին, նա ննջում էր՝ վառված ծխախոտը բերանին»[1]:

Շառոյանի գեղարվեստական խոսքը համարժեք է իր էրգրին ու էրգրից անդին երկրորդ ծննդավայր դարձած լեռնաշխարհին, հայի սասնա տեսակին. «Մարդու որդին որ զինվոր չլինի, ո՞ւմ է պետք, ամեն մարդու մեջ որ զինվորություն չլինի, ի՞նչ մարդ, էլ ինչի՛ վրա հպարտանաս»[2],- մտածում է սասնա հերոսներից մեկը՝ Ղուկասը («Սելավ»): Սեղմ ու դիպուկ ոճ, խոսքի ընթացքի հավասարակշռություն, կուռ կառուցվածք ու առնական ոգի:

Սասունցիների աշխարհը բացող ինքնատիպ պատումներ են նաև գրքի վերջին երեք գործերը՝ «Հարյուր կռունկ», «Հովն ընկավ», «Սելավ»: Էրգրի մարդկանցից ու նրանց կյանքից կուտակված տպավորություններն ու հիշողությունները Շառոյանը գրական աշխարհ է բերում անմիջականորեն՝ բոլոր դեպքերում պահպանելով բնականն ու իրականը: Կարելի է ասել, որ սասունցին Շառոյանի գրական աշխարհում նախևառաջ իրական բնորդ է, հետո միայն՝ գեղարվեստական կերպար: Իրական կերպարը, իրական պատկերը, իրական պատմությունը չգունազարդված արվեստով գեղարվեստական տարածություն բերելը Շառոյանի գրքում դառնում է գեղագիտական սկզբունք և զարգացման միտում: Այդ անմիջականությունն ու վավերականությունը նա իր ստեղծագործական ճանապարհին նախ վերածեց ակնարկների, որոնց նախադրյալի վրա հետո վերաճեցին մանրապատումները, պատմվածքները, վիպակները: Այդ անմիջականությունն ու անկաշկանդ բնականությունը նա պահպանեց նաև չափածո գրվածքներում, որ հետո ի մի բերեց «Բառերի խրխինջը» խորագրի ներքո:

«Էրգրի աստվածները» գիրքը այդպես էջ առ էջ բացում է հին ու նոր սասունցիների աշխարհը: Սասնա հին սերնդի մահով հեռանում է նաև էրգրի առարկայական հիշողությունը, վերանում հոգևոր երկփեղկվածությունը՝ Սասունից անդին և Սասունում: Սասնա վերապրող սերունդների երակներում շարունակվում է տոհմիկ արյան եռքը, տոհմի ջիղն անփոփոխ է մնում, բայց էրգրի հիշողությունն այլևս չկա: Հիշողությունը ժամանակի հետ դառնում է ավանդություն, ավանդությունն էլ՝ առասպել՝ երազանքի ու վերացական կարոտախտի երանգներով:

---

[1] *Նույն տեղում, էջ 111:*

[2] *Նույն տեղում, էջ 229:*

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

2/2021

Հանձնված է տպագրության՝ 18.11.2021 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 21.12.2021 թ.:
Ծավալը՝ 29 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան,
Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀիրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am– Գիտական հրապարակումներ–
Գիտական տեղեկագիր

Учредитель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am– Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru, website:
www.asu.am– Scientific publications – Proceedings.

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am